

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

X V
2 0 1 2

Երևան 2013

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Գ 602

**Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:**

Խմբագրական խորհուրդ՝
Աշոտ Մելքոնյան, Խաչիկ Բաղիկյան, Արամ Քոսյան, Սարգիս Պետրոսյան,
Լարիսա Եզանյան, Համազասպ Խաչատրյան, Արմեն Հայրապետյան,
Կարինե Բազեյան, Կարինե Սահակյան, Հասմիկ Հարությունյան

**Խմբագրությամբ բան. գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի**

Գ - 602 Գիտական աշխատություններ / ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն;
Խմբ.՝ Ս. Հայրապետյան.- Եր.: Գիտություն, 2013
Հատոր 15 / Խմբ. խորհուրդ՝ Ա. Մելքոնյան և ուրիշներ.-
188 էջ:

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-5-8080-1016-1
© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2013

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
XV
EDITION

RESEARCH PAPERS

Shirak Centre of Armenian Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Издательство "Гитутюн" НАН РА "Gitutyun" Publishers NAS RA

Ереван 2013 Yerevan

**Публикуется по решению Ученого совета
Ширакского центра арменоведческих исследований НАН РА.**

Редакционная коллегия:

**Ашот Мелконян, Хачик Бадилян, Арам Косян, Саргис Петросян,
Лариса Еганян, Амазасп Хачатрян, Армен Айрапетян, Карине
Базеян,
Карине Саакян, Асмик Арутюнян**

**Под редакцией доктора фил. наук,
профессора Серго Айрапетяна**

**Published by arrangement of the Scientific Council
of Shirak's Research Centre NAS RA.**

Editing stuff:

**Ashot Melkonyan, Khachik Badikyan, Aram Qosyan, Sargis Petrosyan,
Larisa Eganyan, Hamazasp Khachatryan, Armen Hairapetyan, Karine Bazeyan,
Karine Sahakyan, Asmik Harutunyan**

Edited by Doctor of Philology, professor Sergo Hayrapetyan

Մարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔՍԵՆՈՓՈՆՅԱՆ «ՀՆԴԻԿ»-Ի ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՍԵՊԱԳՐԱՅԻՆ ԷԹԻՈՒՆԻՆ

Քսենոփոնի «Կյուրոպեդիա» երկը թեպետև լիովին արժանահավատ պատմական սկզբնաղբյուր չի համարվում, այսուհանդերձ որոշ արժեքավոր տեղեկություններ է պարունակում Առաջավոր Ասիայում մ.թ.ա. VII դ. վերջերից մ.թ.ա. VI դ. վերջերն ընդգրկած ժամանակաշրջանում տեղի ունեցած քաղաքական անցուղարձի վերաբերյալ: «Կյուրոպեդիա»-ի նկատմամբ դրսևորվող թերահավատության պատճառներից մեկն էլ եղել է նրանում «Հնդիկ» թագավորի հիշատակումը՝ որպես ժամանակաշրջանի իրադարձությունների մասնակից:¹ Կարծում ենք, որ «Հնդիկ»-ի և «Հնդկաց» երկրի վերաբերյալ Քսենոփոնի հաղորդումներն իզուր են թերագնահատվել՝ մասնավորապես հայագիտության տեսանկյունից: Բանն այն է, որ դրանցից միայն մեկն է, որ վերաբերում է իրական Հնդկաստանին, ավելի ճիշտ, նրա Սինդ նահանգին՝ Ինդոս գետի ստորին հոսանքի շրջանում:

Քսենոփոնի այդ հաղորդումը Կյուրոսի նվաճումները նկարագրող դրվագից է, որն սկսվում է հետևյալ կերպ. «Նա տիրեց բակտրիացիներին և *հնդիկներին* և կիլիկեցիներին, ինչպես նաև սակերին և պափլագոնացիներին և մագդիդներին և բազում այլ ազգերի»:² Իրականում այս հաղորդման մեջ ի նկատի է առնված Քսենոփոնի ժամանակաշրջանի Աքեմենյան աշխարհակալությունը: Հայտնի է, որ մ.թ.ա. Vդ. վերջերի և մ.թ.ա. IVդ. սկիզբների Աքեմենյան աշխարհակալության արևելյան շատ ժողովուրդների ոչ թե Կյուրոսն էր նվաճել, այլ նրա հաջորդները: Դրանք թվում էին նաև իրական հնդիկները՝ Սինդ (պարսկերեն՝ Հինդ) երկրի բնակիչները: «Հնդիկ»-ի («Հնդիկ» թագավորի), նրա մարդկանց և նրա երկրի վերաբերյալ Քսենոփոնի մյուս հաղորդումները մեր ուշադրությունն ուղղորդում են ոչ թե դեպի Հնդկաստան, այլ Առաջավոր Ասիա:

Ասորեստանի թագավորի հակամարական գործունեության սկիզբը Քսենոփոնը ներկայացնում է այս կերպ. «Ուստի նա սուրհանդակ ուղարկեց իր բոլոր հպատակներին, զույգ փռյուզացիներին, պափլագոնացիներին, *հնդիկներին*, կարիացիներին և կիլիկեցիներին՝ մեղացիների և պարսիկների դեմ զրպարտիչ մեղադրանքներով»:³ Ինչպես տեսնում ենք, «հնդիկ»-ների հետ միասին հիշատակված բոլոր ժողովուրդները բնակիչներն են Առաջավոր Ասիայի: Դրանք Ասորեստանի թագավորին հպատակ Միջագետքի և Ասորիքի (լայն առումով) ժողովուրդներն են և բնակիչները Փոքր Ասիայի և

¹ «Կյուրոպեդիա»-ն արևելահայ գրական լեզվով թարգմանած Ս. Կրկյաշարյանը համամիտ է շատ հայագետների, ովքեր այն համարել են բարոյախոսական-քաղաքական վեպ, այդուհանդերձ նրա հիմքում տեսնում են պատմական հավաստի դեպքեր: Նա ավելացնում է. «Հատկապես Հայկական լեռնաշխարհի բնակիչներին և քաղաքական դեպքերին վերաբերող մասերը հիմնված են պատմական ստույգ տվյալների վրա և միանգամայն արժանահավատ են: Անկասկած, Քսենոփոնը Հայաստանին վերաբերող տեղեկությունները քաղել է 10 հազարի հետ Հայաստանի միջով նահանջելիս»: (Քսենոփոն, Կյուրոպեդիա, թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, այսուհետև՝ Կյուրոպեդիա, Եր., 2000, էջ 403-404):

² Xenophon, *Cyropaedia* (այսուհետև՝ *Xen., Cyr.*) with an English transl. by W. Miller, The Loeb Classical Library, vol. I-II, London, 1914, I, 1, 4 (Կյուրոպեդիա, էջ 5):

³ *Xen., Cyr., I, V, 2* (Կյուրոպեդիա, էջ 35):

արևմտյան Իրանի: Բնականաբար, սրանց շարքում հայտնված «Հնդիկ»-ները ևս, սրանց նման, լինելու էին ոչ թե Հնդկաստանի, այլ Առաջավոր Ասիայի բնակիչներ: Աչքի է զարնում այն հանգամանքը, որ թվարկված երկրների շարքում բացակայում են առաջավորասիական մեկ այլ երկրի՝ Հայկական լեռնաշխարհի բնակիչները, մանավանդ որ սա այն միակ երկիրն էր, որը անմիջական հարևան էր թե՛ Ասորեստանի թագավորությունը կազմած Միջագետքին ու Ասորիքին, թե՛ Փոքր Ասիային ու Իրանին: Ըստ այսմ, հարց է ծագում. արդյոք հենց այստեղ՝ Հայկական լեռնաշխարհում չէի՞ն բնակվում «Կյուրոպեդիա»-ի այս և հաջորդ հաղորդումներում հիշատակված «Հնդիկ»-ները և «Հնդիկ» թագավորը:

Հ.Մանանդյանը, հավատ չընծայելով քսենոփոնյան «Հնդիկ»-ին Հնդկաստանի թագավոր համարող տեսակետին, կարծում էր, որ այն «աղճատված» ընթերցված է: «Ավելի քան հավանական է, - գրում է նա, - որ Դոսոթ-ը պետք է ուղղել և կարդալ Σίνδοϛ, որ նշանակում է սինդ կամ սինդերի թագավոր... Կյուրոպեդիայի վերոհիշյալ հատվածի մեջ հիշատակված են, ըստ իս, ոչ թե հնդիկները, այլ սինդերը, որոնք ինչպես հայտնի է, հենց Կյուրոս Մեծի ժամանակ (550-529 մեր թվ. առաջ) հզոր և հարուստ ժողովուրդ էին և ապրում էին այժմյան Անափայի շրջանում»:⁴ Որ «Հնդիկ»-ի թագավորությունը հեռու Հնդկաստանում գտնվել չէր կարող, տեղին է նկատել Հ. Մանանդյանը: Բայց այն սինդերի երկրում՝ սևծովյան Անապայի շրջանում ևս գտնվել չէր կարող: Քսենոփոնի հաղորդած տեղեկությունները Հայկական լեռնաշխարհում բնակված խաղայների և «Հնդիկ»-ի փոխհարաբերությունների մասին դա են վկայում: Ըստ Քսենոփոնի՝ խաղայները «մշտապես կա՛ն կողոպուտով են զբաղվել, կա՛ն վարձով ծառայել են երբեմն Հնդկաց թագավորի մոտ, որի մասին ասում են, թե շատ ոսկիներ ունի, երբեմն նաև Աստյուագեսի մոտ»:⁵ Աստյուագեսը Մարաստանի (Մեդիա) թագավորն էր, բայց իրականում ոչ թե նախորդել է, այլ հաջորդել է Կիաքսարեսին:

Խաղայները Հայկական լեռնաշխարհից սինդերի երկիր հասնելու համար նախ պետք է դուրս գային Սև ծովի հարավարևմտյան ափ, այնուհետև ծովի արևելյան ափով շարունակելով ճանապարհը՝ պետք է անցնեին Կովկասյան գլխավոր լեռնաշղթան, նրանից այն կողմ՝ Սև ծովի հյուսիսարևելյան ափին գտնվող Անապայի շրջան մտնելու համար: Դժվար թե խաղայները նպատակադրվեին սինդերի երկիր գնալ վարձով ծառայելու համար, որովհետև թե՛ այնտեղ հասնելիս, թե՛ այնտեղից վերադառնալիս ստիպված կլինեին անցնելու մի շարք բարբարոս ցեղերի՝ վտանգներով լի երկրներով: Ի նկատի առնենք, որ վարձկաններն ի վերջո նախատեսում էին տուն վերադառնալ, ուստի կնախընտրեին ծառայել մի այնպիսի երկրում, որը մոտ էր իրենց երկրին, իսկ այնտեղ տանող ճանապարհները քաջ հայտնի էին և համեմատաբար անվտանգ:

Խաղայների և հնդկաց թագավորի փոխհարաբերությունների մասին Քսենոփոնը խոսում է նաև մարական զորավար պարսիկ Կյուրոսի (ապագա Կյուրոս Մեծի) և «Հնդկաց» թագավորի դեսպանների հանդիպման առիթով: «Կյուրոպեդիա»-ի համապատասխան հատվածն է. «Կյուրոսը երբ լսեց, թե խաղայները հաճախ գնացել են հնդկաց թագավորի մոտ և հիշելով, որ նրա մոտից դեսպաններ են եկել Մեդիա՝ այստեղի իրավիճակին ծանոթանալու համար, որից հետո նրանք մեկնել էին թշնամու (ասորեստանցիների-Ս.Պ.) մոտ, նրանց դրությամբ ևս ծանոթանալու համար, ցանկացավ, որ հնդիկը լսի իր մոտ կատարված դեպքերի մասին»:⁶

⁴ Հ.Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Եր., 1944, էջ 28:

⁵ Xen., Cyr., III, II, 25 (Կյուրոպեդիա, էջ 114):

⁶ Xen., Cyr., III, II, 27 (Կյուրոպեդիա, էջ 114):

Ըստ Քսենոփոնի՝ Ասորեստանի և Մարաստանի միջև ծագած առճակատման առթիվ Մարաստանի Կիաքսարես արքայի մոտ ժամանած «հնդիկ» պատվիրակները նրան ասում են. «Ինչի՞ց սկսվեց պատերազմը մեղացիների և ասորեստանցիների միջև: Քեզ լսելուց հետո,- շարունակեցին նրանք,- արքան («հնդիկ»-ը - Ս.Պ) պատվիրեց մեկնել Ասորեստանի քազավորի մոտ և նույնը հարցնել նրան: Վերջում նա մեզ պատվիրեց կողմերին ասել, որ հնդկաց արքան որոշելուց հետո, թե ով է արդարացի, կմիանա անիրավված կողմին»:⁷ Իսկ Կյուրոսը, դիմելով «հնդիկ» պատվիրակներին, ասում է. «Հաղորդե՛ք Հնդկաց արքային..., որ եթե Ասորեստանի քազավորը համարում է, որ մենք նրա հանդեպ անարդար ենք, ապա մենք՝ որպես դատավոր, ընտրում ենք հնդկաց արքային»:⁸ Այստեղ բերված վկայություններից պարզվում է, որ «հնդիկ»-ը՝ «հնդկաց» քազավորը, իշխել է մի երկրում, որը բավականին մոտ է գտնվել ոչ միայն Մարաստանին, այլև Ասորեստանին և խալդայների երկրին, իսկ ինքը՝ «Հնդիկ»-ը, եղել է հարուստ (շատ ոսկիներ է ունեցել), ունեցել է ուժեղ բանակ՝ բաղկացած ոչ միայն տեղական ուժերից, այլ նաև վարձկան խալդայներից:⁹

Խալդայները բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում, որտեղ նրանց հիշատակն են պահել Ճորոխի միջին հոսանքի շրջանի *Խաղտոյ ձոր* և Կարին գավառի *Խաղտոյ առիճ* տեղանունները:¹⁰ Ընդ որում, խալդայների երկրին մոտ գտնված «Հնդիկ»-ի երկիրը հարևան էր նաև մեղացիների երկրին (Մարաստանին), որովհետև այստեղ այցելելուց հետո էին «Հնդիկ»-ի պատվիրակներն անցել Ասորեստան:¹¹

Ուշագրավ է հետևյալ հանգամանքը ևս: Խալդայները վարձով ծառայում էին ոչ միայն «հնդիկ»-ի երկրում և Մեդիայում (Մարաստան), այլև Արմենիայում՝ նախկին Ուրարտու/Արմինայում: Իր «Անաբասիս»-ում հունական 10000-անոց զորքի նահանգը նկարագրելիս Քսենոփոնը հաղորդում է, որ Սիջագետքից Հայկական լեռնաշխարհ մտած հույները, երբ հասել էին Կենտրիտես (Արևելյան Տիգրիս) գետին, «Լուսաբացին գետի այն կողմը նրանք նկատեցին սպառազինված հեծյալների, որոնք պատրաստ էին խոչընդոտելու գետանցը, իսկ հեծյալներից վերև բլուրների վրա շարվել էին հետևակ զորքեր, որոնք պետք է արգելեին հեղեմներին Արմենիա դուրս գալ: Սրանք Օրոնտասի (Երվանդ սատրապի-Ս.Պ) և Արտուխասի արմեններն էին և մարդերն ու խալդայները վարձկան: Ասում էին, թե խալդայները ազատ են և խիզախ...»:¹²

Եթե խալդայները որպես վարձու զինվոր կարող էին ծառայել ոչ միայն «հնդկաց» երկրում և Մարաստանում, այլև Արմենիայում, որը հունական Բյուրի նահանգի ժամանակ Արմենիայի աշխարհակալության XIII սատրապությունն էր (Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան կեսում)¹³, ուրեմն, «հնդկաց» երկիրը, Մարաստանի, Արմենիայի և Խալդայների երկրի հետ միասին գտնվել է նույն տարածաշրջանում:

⁷ Նույն տեղում, էջ 86:

⁸ Նույն տեղում, 87:

⁹ Նույն տեղում, III, II, 25; III, II, 27:

¹⁰ *Н.Адоми, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 52, 63; Ն.Ադոնց, Հայաստանի պատմություն. Ակունքները. X-VI դդ. մ.թ.ա., Եր., 1972, էջ 64-66: Ս.Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 55:*

¹¹ *Xen., Cyr., III, II, 27; VI, II, 9:*

¹² *Xenophon, Anabasis (այսուհետև՝ Xen., Anab.) with an English transl. by L.Carleton, The Loeb Classical Library, Browson, London, 1998, IV, III, 1-4 (Քսենոփոն, Անաբասիս, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970, այսուհետև՝ Անաբասիս, էջ 88-89):*

¹³ *Herodotus, The Persian wars (այսուհետև՝ Her.) with an English transl. By A.D.Gogley, The Loeb Classical Library, vol. I-IV, London, 1925, III, 94 (Հերոդոտոս, պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս.Կրկյաշարյանի, այսուհետև՝ Հերոդոտոս, Եր., 1986, էջ 197):*

նում և, ամենայն հավանականությամբ, հարևան էր նրանց բոլորին: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ ոչ միայն «հնդիկ»-ի երկրում վարձկաններ եղած խալդայները, այլև արմենները գիտեին այնտեղ տանող ճանապարհները:¹⁴ Ուրեմն, այն կարելի է տեղորոշել Հայկական լեռնաշխարհի այն մասում, որտեղ գտնվում էր սեսագիր արձանագրությունների էթիունի ցեղամիությունը: «Հնդիկ»-ի թագավորության այսպիսի տեղորոշմամբ է հասկանալի դառնում այնտեղ ոսկու առատությունը, որով հետաքրքրվում էր Կյուրոսը:¹⁵ Ըստ երևույթին, այդ ոսկին արդյունահանվում էր Սևանա լճից հարավ-արևելք գտնվող Սոտքի ոսկեհանքից: Այն շահագործվում էր շատ վաղ ժամանակներից,¹⁶ իսկ ուրարտական դարաշրջանում իր ամուսնով ՄՏկա (կարդա Os-kia/«ոսկյա») կոչվում էր համապատասխան լեռնաշղթան:¹⁷

Եթե «հնդիկ»-ի թագավորությունը նախկին էթիունի էր՝ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան կեսը ներառած XVIII Աքեմենյան սատրապությունը, ապա նրա «հնդիկ»-ները լինելու էին այդ սատրապության բնակչության մեծամասնությունը կազմած սասայեյրները: Սասայեյրների վերաբերյալ Հերոդոտոսի հաղորդած տեղեկություններից առավել ուշագրավ են հետևյալ երկուսը. 1.«Կոլխիսից Մեդիա ավելի չէ ճանապարհը, քայց նրանց միջև բնակվում է մի ազգ՝ սասայեյրները, սրանց միջոցով անցնելուց հետո կարելի է հասնել Մեդիա»:¹⁸

2. «Պարսիկները բնակվում էին մինչև Հարավային ծովը (Պարսից ծոց - Մ.Պ.), որը կոչվում է Կարմիր: Նրանցից վերև դեպի հյուսիս բնակվում են մեդացիները, մեդացիներից վերև սասայեյրները, սասայեյրներից վերև՝ կոլխերը, տարածվելով մինչև հյուսիսային ծովը (Սև ծովը-Մ.Պ.),որտեղ թափվում է Փասիս գետը: Ահա այս չորս ազգերն են բնակվում մեկ ծովից մյուսը»:¹⁹

Գրեթե յոթ տասնամյակ առաջ Հ.Մանանդյանը ցույց էր տվել, որ սասայեյրների բնակեցրած տարածքը ներառում էր Կողքիսից Մարաստան տանող Ջավախք-Աշոցք-Շիրակ- Արարատյան դաշտ-Շարուր-Նախճավան ճանապարհը,²⁰ իսկ Ի.Մ.Դյակոնովը սասայեյրներին տեղադրում էր ուրարտական սեսագիր արձանագրությունների էթիունի երկրում:²¹ Ավելի քան երեք տասնամյակ առաջ հրատարակած մեր հոդվածներից մեկում մենք, համամիտ լինելով հեղինակավոր այս պատմաբաններին, նաև ցույց էինք տվել, որ *սասայեյր* հնդեվրոպական ծագումով ցեղանունը ոչինչ ընդհանուր չունի այլ ստուգաբանություններ և տեղորոշումներ ունեցող *Սպեր* գավառանվան (Ճորոխի մեծ գետազալարի շրջանի անունն է՝ ծագած հ.-ե. *sper- «գալարել» արմատից) և *իրեր* ցեղանվան ու *Իբերիա* երկրանվան (հմմտ. հայերեն *Վիրք* < **իվեր-ք*) հետ:²²

Ինչպես հայտնի է հողագործության անցած ցեղախմբերն սկսեցին կրել այնպիսի անվանումներ, որոնք շեշտում էին իրենց տնտեսամշակութային տարանջատվա-

¹⁴ Xen., Cyr., III, II, 28; III, II, 29; III, II, 30. «Հնդիկ»-ի, նրա թագավորության և սրա բնակիչների մասին Քսենոփոնը տեղեկություններ կարող էր ստանալ «Հնդիկների երկրի ճանապարհն իմացող» և իրենց մոտ գերի եղած արմեններից՝ ամենայն հավանականությամբ, արմեն գեղջավազից և նրա որդուց (Xen., Anab., IV, V, 24; IV, V, 28-30; IV, V, 34-35; IV, VI, 1-3):

¹⁵ Նույն տեղում, VI, II, 1-3:

¹⁶ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. III, Եր., 1977, էջ 697-698:

¹⁷ Մ. Պետրոսյան, Մարդուրի II-ի անդրսևանյան արշավանքի երթուղու շուրջ, Պատմաբանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 1984, թիվ 2, էջ 178-179:

¹⁸ Her., I, 104 (Հերոդոտոս, էջ 46):

¹⁹ Նույն տեղում, IV, 37 (Հերոդոտոս, էջ 234):

²⁰ Հ.Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, էջ 25:

²¹ И. Дьяконов, Предыстория армянского народа, Ер., 1968, стр. 192, 240.

²² Մ. Պետրոսյան, Հացագիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, ՊԲՀ, 1981, թիվ 3, էջ 193-197:

ծուրությունը շրջակա տարածքների ոչ հողագործ ցեղախմբերից:²³ Այդպիսի պայմաններում է ստեղծվել *սասպեյր* (Σάσπειρες, Σάσπειροι) ցեղանունը, որի հիմքում, մեր կարծիքով, հ.-ե. *sas-per- կամ *sas-puer- նախաձևն է: Մրա առաջին բաղադրիչի համար հմմտ. հին հնդկ. sasa «սնունդ, ուտելի բույս», sasya «ցանք, սերմ, հացահատիկ, ցորեն», ավեստ. hahya «հացահատիկ, արմտիք», գալլ. (s)asia «աշորա, հաճար», իսկ երկրորդ բաղադրիչի համար հմմտ. հ.-ե. *per- «ծին, ծնունդ» կամ *puer- «որդի, զարմ» արմատները:²⁴

«Մարդ»/«հացարույս» առասպելաբանական համադրման²⁵ հետևանքով հացահատիկի մշակութայամբ զբաղված հողագործական հանրությունների (տոհմեր, ցեղեր, դասեր, ցեղախմբեր) կրած «հացային» անուններից հիշենք սեպագրային Աժեսինի-ն և հետագա *Աշարունիք*//*Աշորնիք*//*Աշորնէք* գավառանունը:²⁶ Մրանցից առաջինի աժեբաղադրիչը նույնն է *սաստուն*//*աշտուն* «ցամաք հաց» բառի արմատի հետ²⁷ (վերջածանցի համար հմմտ. բրդուն, պասկուն, պարկուն), երկրորդի հիմքում *աշարա*//*աշորա* «տարեկան, հաճար» բառն է:²⁸ Ասվածները թույլ են տալիս քսենոփոնյան «հնդիկ»-ը համարել վերոհիշյալ անունների կազմած իմաստային դաշտի և մեկ ներկայացուցիչը, մասնավորապես նույն իմաստային դաշտին պատկանող *սասպեյր* ցեղանվան հետագա համարժեքը: Մեր կարծիքով, Ինծոս-ի հիմքում հայերեն **ընդիկ* < **ունդ-իկ* կամ **ընդի* < **ունդ-ի* նախաձևերից մեկն է: Ծագում ու պատկանելություն ցույց տվող -իկ վերջածանցի համար հմմտ. *գռեհիկ*, *մարտիկ*, *ռազմիկ* բառերի, հայակազմ *խափշիկ*, *պարսիկ*, *կայսիկ* ցեղանունների, բայց հատկապես հայության տարբեր հատվածներին տրված *գեղնիկ*, *գոզիկ*, *վոշիկ* անունները:²⁹ Որ **ընդիկ*-ի կողքին կարող էր գոյություն ունենալ **ընդի* ձևը՝ կազմված -ի (<հ.-ե. *-(i)ā/*-(i)io)³⁰ վերջածանցով, ցույց են տալիս *գեղնիկ*-ի *գեղնի* և *գոզի* տարբերակները:³¹ Բացառված չէ նաև **ընդի* / **ընդիկ*-ի **ընդի* / **ընդիկ* տարբերակների գոյությունը ևս, որովհետև նրա հիմք *ունդ* «ուտելի սերմ, հատիկ» արմատն ուներ իր *հունդ* տարբերակը: Դժվար է գուշակել, թե Քսենոփոնի հայ տեղեկատուն այդ ձևերից որն է գործածել, բայց հույն պատմիչի ականջին այն հնչել է իրեն ծանոթ Ինծոս / «հնդիկ»-ի նման:

Էթիմոնի ցեղամիությունը, ամենայն հավանականությամբ, ունեցել է երկմիասնական կառուցվածք՝ բաղկացած «Շարայի ցեղամիություն»-ից՝ արևմուտքում և «Գե-

²³ Я. Чеснов, О социальной мотивированности древних этнонимов, "Этнонимы", Сб. Института этнографии им. Н.Н.Миклухо-Маклая АН СССР, М., 1970, стр. 48-49.

²⁴ Ս. Պետրոսյան, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 295:

²⁵ Հմմտ. մարդկանց վերաբերող անունը առնել «սերմը՝ ցեղը ջնջել» բառակապակցությունը (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. III, Եր., 1977, էջ 601) և ածու բառը՝ կիրառված ոչ միայն բույսերի համար, այլև «ազգ սակալաթիւ» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Եր., 1979, էջ 21) և «ազգ» իմաստներով (Մովսիսի Խորենացույ պատմութիւն հայոց, Եր., 1981, Ա, գ):

²⁶ Ս. Պետրոսյան, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 281-285:

²⁷ Նույնը, էջ 285, ծան. 175:

²⁸ Նույնը, էջ 281-283:

²⁹ Վերջիններիս մասին տե՛ս Հ. Մնձուրի, Երկեր, Եր., 1986, էջ 339:

³⁰ Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 331:

³¹ «Բառագիրք Հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Ամալյանի, Եր., 1975, էջ 64, 67, ծան. 210:

դամի ցեղամիություն»-ից՝ արևելքում:³² Առաջինի բնակիչները եղել են իրենց Հայկազն Շարայից սերած համարող ցեղերը (հմմտ. «Շարայի ծնունդը»), իսկ երկրորդինը՝ նույնպես Հայկազն Գեղամից իրենց սերած համարող ցեղերը (հմմտ. «ծովեզերեայան..., որք ի Գեղամայ»):³³ Ցեղամիության երկու մասերի միասնությունն է արտացոլված նրանց երկուսի համար կիրառված *Etiumi/hi* անվան մեջ՝ *Etiumi* և *Ueduri-Etiumi*: Ըստ երևույթին, Էթիունիի երկմիասնական կառուցվածքը նկատի առնելով էր, որ Արարատյան դաշտի ձախափնյակին տիրացած Ուրարտուի Արգիշտի I թագավորը (մ.թ.ա. 786-764 թթ.) այստեղ երկու հենակետային ամրոց էր կառուցել: Դրանցից Արգիշտիխիսիլին, գտնվելով արևմուտքում, ուղղված էր բուն Էթիունիի (Էրիսխի-Շիրակով) և նրա բնակիչ «Շարայանների» դեմ, իսկ Էրեբունիին, գտնվելով արևելքում, ուղղված էր Վեդուրի-Էթիունիի (Սևանի ավազանով) և նրա բնակիչ «Գեղամյանների» դեմ: Ուշագրավ է, որ Ուրարտուի այս թագավորն իր արձանագրության մեջ հիշատակում է «Դիուծինի Իգանեցի թագավոր՝ արքա երկրի Էթիունյան» (*Ḫušini Ḫganieḫi LUGAL^{KUR}Etiumi*)³⁴ կոչված մի անձի: Այս տիտղոսից բխում է, որ Էթիունի երկմիասնական ցեղամիության մեջ գոյություն է ունեցել համաէթիունյան բարձր մի պաշտոն, որի կրողը վերադաս է եղել մյուս բոլոր ցեղապետ-արքաների նկատմամբ:

Ի տարբերություն Ճորոխ գետի ավազանում գտնված իր արևմտյան հարևան Դիաուխի ցեղամիության՝ Էթիունին Ուրարտուի արքաներից կրած ծանր հարվածներից հետո էլ շարունակել էր գոյատևել, իսկ Ռուսա I-ի (մ.թ.ա. 735-713 թթ.)՝ կիմերներից և Ատրեստանի թագավոր Սարգոն II-ից կրած պարտություններից, ապա և սկյութների՝ Առաջավոր Ասիայում հայտնվելուց հետո հնարավորություն էր ունեցել ոտքի կանգնելու և ամրապնդվելու: Ռուսա II-ի օրոք (մ.թ.ա. 685-645թթ.), երբ Ուրարտուն կորցրել էր հսկողությունը Արարատյան դաշտին հյուսիսից հարող շրջանների վրա,³⁵ Էթիունի ցեղամիությունն սկսել էր ընդարձակվել՝ ընդգրկելով նախկինում իրեն պատկանած հարավային տարածքները: Ուրարտուն ի գորտ չէր կանխելու Էթիունիի հետագա հզորացումն ու ընդարձակումը: Ըստ Ե.Գրեկյանի՝ հնագիտական տվյալների և ուշ ուրարտական պատկերագրության որոշ օրինակների հիման վրա կարելի է ենթադրել, որ անգամ Ուրարտական թագավորության անկման գործում իրենց դերակատարումն են ունեցել էթիունցիները («թերևս իրենց՝ սկյութների հետ միասին»):³⁶ Կարծում ենք, թե Արարատյան դաշտի ուրարտական ամրացված կենտրոնները գրավելու գործում գլխավոր դերում լինելու էին էթիունցիները, ոչ թե հեծյալ սկյութները:

Էթիունիի աստիճանական ընդարձակման մասին են խոսում նախ ուրարտական արձանագրությունների տվյալները: Պարզվում է, որ Հրազդան քաղաքի շրջակայքը զբաղեցրած Քիելսունի երկիրն ավելի վաղ դուրս էր եկել Ուրարտուի կազմից և ընդգրկվել էր Վեդուրի-Էթիունի ցեղամիության մեջ:³⁷ Ըստ երևույթին, Էթիունիի ընդարձակումն ուղեկցվում էր հյուսիսից հարավ ցեղային տեղաշարժերով, որոնցով էլ պետք է բացատրել հյուսիսային ծագումով տեղանունների գոյությունը Արարատյան դաշտին հարող տարածքներում և բուն դաշտում: Դրա վկայություններից է Աղվերան բնակա-

³² Հմմտ. նույնպես երկմիասնական կառուցվածք ունեցած Հայաստ-Ազի ցեղամիության հետ (տե՛ս *С.Петросян, Племенной союз Хайаса-Аззи в системе двоичных противопоставлений, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, թիվ 3, էջ 77-78*):

³³ *Խորենացի, Բ, Դ:*

³⁴ *Г. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960, N 155 С.*

³⁵ *Н. Арутюнян, Биайнили (Урарту), Ер., 1970, стр. 325.*

³⁶ *Ե. Գրեկյան, Վանի թագավորության անկման շուրջ, «Հայկազունիներ. առասպել և պատմություն», ԳԱԱ և ԵՊՀ միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Եր., 2012, էջ 59:*

³⁷ *Н. Арутюнян, Биайнили (Урарту), стр. 433-435.*

վայրի անունը: Աղվերան<*աղուեր-ան. հմմտ. -ան տեղանվանակերտ վերջածանցը Ալեւան, Դերջան, Երեւան, Մեւան և այլ տեղանուններում, իսկ *աղուեր<*աղուեր//*ալուեր (ա հավելվածական ձայնավորով) հիմքի համար հմմտ. Սևանա լճի հարավային ափին տեղորոշվող սեպագրային Lueruni (<*Luer-uni) ցեղանուն-երկրանունը:³⁸ Այս տեսանկյունից ուշագրավ են նաև ներկայիս Նախիջևանի երկրամասի Վանանդ տեղանունը (հմմտ. ներկայիս Կարսի նահանգի մոտ կեսը զբաղեցրած հին հայկական Վանանդ գավառի անունը), Շարուր գավառանունը (հմմտ. Շիրակի անվանադիր Շարայի անունը),³⁹ Արփա/Արփանեալ գետանունն ու տեղանունը (հմմտ. Աշոցք-Շիրակում Արփա լճանունը և Արփա գետանունը):⁴⁰ Այս տեսանկյունից պատահական չէ նաև, որ հին հայկական ավանդությունը խոսում է Գեղամ նահապետի՝ Գեղարքունիքից Արարատյան դաշտ վերադառնալու և Արմավիրում վախճանված լինելու մասին:⁴¹

Էթիմոնիի՝ դեպի հարավ ընդարձակված լինելու մասին է վկայում նաև հետևյալ փաստը: Ռուսա II-ի օրոք Կիլիկիայի երկրի դիմացի սրբավայրից Խալդիի կուռքը «վերաբնակեցվել» էր Ռուսասիանիլի (Թուրակ-կալե), որովհետև իշքուգույան թագավորի ավագ որդին՝ Շազան, մտել էր Մանա թագավորության կազմում գտնվող այդ երկիրը և զբաղեցրել «Աքայայի տեղը» (ըստ երևույթին, ցեղապետ-արքայի գահը): Այդ երկիրը գտնվելու էր Ուրմիա լճից արևելք կամ հյուսիս-արևելք՝ հյուսիսից Մանայի հարևանությամբ, իսկ Իշքուգույլ/Իշքուգույլ(խ)ուն՝ հետագա Աշոցքում՝ ներկայիս Շիրակի մարզի հյուսիսում էր:⁴² Իրարից բավականաչափ հեռու գտնված ցեղային երկրների անցված այդ փոփոխությունը կարող էր տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ ծագումով իշքուգույցի թագավորը ներկայացներ ամբողջ Էթիմոնին (ինչպես ավելի վաղ իգանիական ծագումով Դիոմիդին էր) և լիներ սկյութների դաշնակիցը:

«Հնդիկ» արքայի կերպարը նախատիպ էր ունենալու մ.թ.ա. VIIդ. կեսերից մինչև մ.թ.ա. Vդ. կեսերը Էթիմոնիում իշխած թագավորների, որոնք ժամանակակիցներն են եղել Մարաստանի Կիսքսարես ու Աստյուագես թագավորների, Աքեմենյան աշխարհակալության հիմնադիր Կյուրոս Մեծի և Արմենիայի (Հարավարևմտյան Հայաստանի) թագավորներ «Արմեն»-ի⁴³ ու նրա որդի Տիգրան Երվանդյանի: «Հնդիկ»-ի թագավորությունն իր գոյությունը շարունակել է Աքեմենյան աշխարհակալության ստեղծումից հետո ևս: Ըստ Քսենոփոնի՝ «Հնդիկ»-ի պատվիրակները եղել էին Լյուդիայի թագավոր Կրեստսի մոտ և լրտեսել էին հօգուտ Կյուրոսի:⁴⁴ Իսկ Կրեստսը պարտություն էր կրել և Կյուրոսի կողմից գերեվարվել մ.թ.ա. 546 թվականին:

Թե երբ էր անկախությունից զրկվել հայկական այս թագավորությունը, դժվար է ասել: Միայն ենթադրել կարելի է, որ հետագայում այն ենթարկվել էր հզորացած պարսիկներին, իսկ Դարեհ I-ի օրոք ընդգրկվել Աքեմենյան տերության XVIII սատրապետության մեջ՝ կազմելով սրա հիմնական մասը: Արմենիա անունը տարածվել էր նաև նրա վրա այն պարզ պատճառով, որ Արմինա/Արմենիայի մնան նրա բնակչությունը

³⁸ Ս. Պետրոսյան, Մերձսևանյան ցեղերի միությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ.թ.ա. VI-V դդ), «Պատմա-բանասիրական հանդես», 1976, թիվ 1, էջ 190, ծան. 21:

³⁹ Գր. Կանանյան, Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, стр. 121-122.

⁴⁰ Ս. Պետրոսյան, Դասերը և եռադասության դրսևորումները Հին Հայաստանում, էջ 301-302:

⁴¹ Խորենացի, Ա, Ժբ:

⁴² Н. Арутюнян, Топонимика Урарту, Ер., 1985, стр. 94.

⁴³ Քսենոփոնի «Կյուրոսպեդիա»-ում Արմեն (Արմենիոս), այսինքն՝ «Հայ», կոչված Հայոց թագավորը Երվանդ Սակավակյացը չէ, այլ պատմիչներին Հայկակ կամ Մյուս Հայկ անունով հայտնի Հայոց նահապետը (Ս. Պետրոսյան, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 348-354):

⁴⁴ Xen., Cyr., VI, II, 9; VI, II, 13.

ևս կազմում էր միասնական հայություն՝ հայախոս էթնոսի բաղկացուցիչ մասը: Բացառված չէ, որ քսենոփոնյան «Հնդիկ»-ի ժառանգորդները եղել են Մեծ Հայքի քաղաքորեներին ենթակա «երկրորդական գահ»-ի տիրակալները:⁴⁵

КСЕНОФОНТСКОЕ “ЦАРСТВО ИНДОСА” И КЛИНОПИСНАЯ СТРАНА ЭТИУНИ

___ Резюме ___

___ С. Петросян ___

В “Киропедии” Ксенофонт сообщает, что халдаи - жители Армянского нагорья, иногда в качестве наемников служили у “Индийского царя”//”Իνδοϑ, что как они, так и армены имели постоянные сношения с “индийцами”. Это и побудило Кира просить халдаев и арменов дать ему проводников для сопровождения мидийско-персидского посла, который должен отправиться в страну “индийцев”. Эти обстоятельства говорят о том, что ”Իνδοϑ и “индийцы” имели отношения с халдаями и арменами. Значит, они не были жителями Индии (в Южной Азии), а жили на Армянском нагорье. По нашему мнению, эти “индийцы” населяли северо-восточную часть Армянского нагорья, которая находилась между страной халдаев (с запада), арменов (с юго-запада) и мидийцев (с юго-востока). Это- территория “страны Этиуни” урартских клинописных надписей, которая позже стала XVIII саспейрой Ахеменидской державы. Здесь вместе с алародиями и матиенами жили саспейры (Σάσπειρες, Σάσπειροι). Последний этноним состоит из компонентов *sac-* (<и.-е. *sas- “зерно, урожай”) и *пейр-* (<и.-е. *per- “рождать, производить” или *рцег- “сын”). Из того же хозяйственно-культурного круга и из того же региона происходит и этноним ”Իνδοϑ. Этот этноним, вероятно, следует считать возникшим от имени *րնդի/*րնդիկ или *h(ը)նդի/*h(ը)նդիկ: Ср. арм. րնդ/հրնդ “зерно” и суффиксы -ի, -իկ. Приведенные этнонимы семасиологически идентичны и обозначают общность оседлых земледельцев, которые занимались культивацией зерновых культур.

⁴⁵ Խորենացի, Բ, խդ, խէ, ծա:

ԳԼԽԻ ԶՈՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂԲՐՈՆՁԻԴԱՐՅԱՆ ՄԵԾ ՄԵՊԱՍԱՐՈՒՄ

Վաղբրոնզիդարյան Մեծ Մեպասարում իրականացված գայլերի զոհաբերության ծեսից հետո սրբարանի արևմտյան կողմում թողնվել են միայն գլուխները¹, որոնց ստորին ծնոտները հայտնաբերվել են սրբարանի հատակի տարբեր մասերում: Գայլերի այլ ոսկորներ չեն գտնվել:

Մեծ Մեպասարի պաշտամունքային համալիրի մեջ մտնող մեկ այլ կառույցի՝ տաճարի զոհասեղանի հյուսիսային եզրին՝ հատակին մատած մոտ 18սմ տրամագծով փայտյա սյան մոտ՝ սալահատակին, հայտնաբերվեց մանկան կառավի: Կմախքի այլ ոսկորներ չեն հայտնաբերվել, թաղման կառույցի որևէ հետք նույնպես չկա: Ենթադրվում է, որ կատարվել է մանկան զոհաբերություն:

Զոհաբերված կենդանու գլուխը մարմնից անջատելը փաստված է տարածամանակյա հուշարձաններում: Փոքրասիական Ալաջա-Հյույուկի, Ալիշարի, Հորոգ-թեփեի, Մահմատլարի հուշարձաններում զոհաբերված են ցլեր, որոնց հատած գլուխները (ուղղված դեպի արևելք) և վերջույթները կաշվի հետ միասին զետեղվել են դամբարանում²: Մեզինում հայտնաբերվել է ցլի գանգ, մեջը՝ կնոջ երկու արձանիկ³: Լռոի բերդում ևս հատված են խոշոր եղջերավոր անասունների գլուխները⁴: Հայտնի են նաև ձիու և շան գլխի ծխական թաղումներ: Ձիու գլխի թաղում հայտնի է Օդեսայի մերձակա „Золотая балка“, տեղանքում բացված կուրգանից⁵: Ձիու գլխի ուղեկցությամբ թաղումներ փաստված են Ոսկեհասկի⁶, Տիրաշենի⁷ (մ. թ. ա. 9-8-րդ դդ.), Ազատանի⁸, Շիրակավանի⁹ (մ.թ.ա. I հազ.), Վարդրադի¹⁰ և Բենիամինի անտիկ ժամանակաշրջանի դամբարանադաշտերում¹¹: Ծխական անոթների մեջ թաղված շան կամ շների գլուխ-

¹ **Լ. Եզանյան**, Գայլերի զոհաբերության ծեսը. Յոթի խորհրդանշական դերը Մեծ Մեպասարում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.13, Եր., 2010, էջ 33-41: Նույնի՝ Жертвоприношения волков в раннебронзовом Мец Сепасаре, Международная научная конференция "Археология, этнология и фольклористика Кавказа,, Сбор — ник кратких содержания докладов, Тбилиси, 2011, стр. 119.

² **Մ. Դևեջյան**, Լռոի բերդ, II, (միջին բրոնզ), Եր., 2006, էջ 105:

³ **Ա. Դեմիրխանյան**, **Բ. Փրոլով**, Ритм и символ в первобытном искусстве, Պատմա-բանասիրական հանդես /հետալստ՝ ՊԲՀ/, 1986, №3, էջ 154:

⁴ **Մ. Դևեջյան**, նշվ. աշխ., էջ 104:

⁵ **Լ. Կլեյն**, Ранние индоевропейцы на Кавказе и Северопонтийских степях. в кн: Междисциплинарные исследования культурогенеза Армянского Нагорья и со — предельных областей. Ер., 1990, стр. 170.

⁶ **Լ. Սեդրոսյան**, Раскопки памятников Кети и Воскеаска, Ер., 1989, стр. 69, 70.

⁷ **Մ. Հարությունյան**, Տիրաշենի պեղածո ծխաարարողական նյութերը, ՀԽՍՀ ԳԱ ՀԱԻ, հանրապետական գիտական նստաշրջան 1986-1988թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 1990, էջ 38:

⁸ Նյութերը հրատարակված չեն:

⁹ **Փ. Թեր-Մարտիրոսով**, **Գ. Կարահանյան**, Раскопки поселения и некрополя античного Ширакавана, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» հ.1, Գյումրի, 1998, էջ 21:

¹⁰ **Սո. Տեր-Մարգարյան**, Կոմայրի-Վարդրադի տարածքի անտիկ դամբարանադաշտի պեղումները, ՀՀ 1989-1990թթ. դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1991, էջ 94:

¹¹ **Լ. Եզանյան**, Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, Շիրակի հնագիտական և պատմագագարական ուսումնասիրություններ, պր.1, Երևան-Գյումրի, 2010, էջ 120:

ներ հայտնի են Բակտրիայի և Սոգդի 1-ին հազարամյակով թվագրվող թաղումների¹², Նախիջևանի Մոխրաբլուրի¹³: Շան գլխի ուղեկցությամբ թաղում բացվել է Արթիկում¹⁴, Բենիամինում¹⁵, Արեգմադենում¹⁶, Շիրակավանում¹⁷ և այլ հնավայրերում: Չոհաբերված ձիու գլխի և շան համատեղ թաղում հայտնի է Դերեխվկա հնավայրից¹⁸ և Բենիամինից¹⁹:

Չոհաբերված կենդանիները ձոն էին տարբեր աստվածներին²⁰: Խեթական ծիսակարգում զոհի գլուխը դիտվում էր ծիսականորեն մաքուր և նախատեսված էր միայն աստվածության համար, մարդուն այն արգելված էր²¹: Գլխի ծիսական առանձնակի կարևոր դերից բխում են զոհաբերության ծեսի ժամանակ մարմնից անջատելն ու նաև առանձին թաղելը: Հնդեվրոպացիների և հարևան ժողովուրդների մոտ պահպանվել են սպիտակ ձիու, հատկապես նրա գլխի պաշտամունքի հետքեր, պաշտամունք, որի նպատակը թագավորական իշխանությունը սրբացնելն էր. խեթերը ձիու գլուխը թագավորի հետ դնում էին դամբարանում²²: Մեծ Մեպասարի սրբարանում գայլերի միայն գլուխների առկայությունը աստվածությանը զոհի գլուխը հատկացնելու հնագույն ծեսի հավաստումն է:

Չոհաբերվող կենդանու գլուխը կտրելու ծեսն անցել է նաև քրիստոնեությանը. մատաղվող կենդանու գլուխը ևս կտրվում է (առօրյա-խոսակցական ոճում օգտագործվում է նաև «մատաղ կտրել» ձևը): Ե. Լալայանը վկայում է Շուշիի մոտ գտնվող «Օռտտո խաչ» սրբատեղիում աքաղաղների կողք կողքի շարված հարյուրից ավելի կտրված գլուխների մասին²³: Այսօր էլ Մեծ Մեպասարի վրա գտնվող «Դարի սուրբ» սրբատեղիում զոհաբերվող աղավնիների գլուխները կտրում են մատուռի դռան մոտ թեք ընկած մի սալի վրա և թողնում տեղում*:

Գայլերի զոհաբերությունն ուղեկցվել է նաև ծնոտների անջատմամբ: Ծեսը հայտնի է մ. թ. ա. III հազարամյակից (Լճաշեն, դամբ. 123), փաստված է նաև Միսիանի միջին բրոնզի դամբարաններում²⁴, իսկ Լոռի բերդում տարածված է հատկապես երկաթի դարում²⁵: Դեռևս վաղագույն թաղումներից գանգի և ստորին ծնոտի առանձ-

¹² Б.Литвинский, А.Сегов, *Культы и ритуалы Кушанской Бактрии, Погребальный обряд, М., 1984, стр. 161-162:*

¹³ О.Абибуллаев, *Энеолит и бронза на территории Нахичеванской АССР, Баку, 1982. стр. 46, 49.*

¹⁴ Т.Хачатрян, *Артикский могильник, Ер., 1979, стр. 34.*

¹⁵ Լ.Եզանյան, *Շունը և ձիւն անտիկ Բենիամինի թաղման ծիսակարգում, ԳՄԱ ՇՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I, Գյումրի, 1998, էջ 44-56:*

¹⁶ Հ. Խաչատրյան, Լ. Եզանյան, *Հնագիտական հետախուզություն Շիրակում, ՀՀ 1989-1990թթ. դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Եր., 1991, էջ 84-86: Լ. Եզանյան, 1998, նշվ. աշխ., էջ 45: Նույնի՝ Շիրակի անտիկ դամբարանադաշտերը, էջ 119:*

¹⁷ Փ.Թեր-Մարտիրոսով, Գ. Կարահանյան, նշվ. աշխ., էջ 19:

¹⁸ Ա.Կլեյն, նշվ. աշխ., էջ 170:

¹⁹ Լ.Եզանյան, 1998, էջ 44:

²⁰ О.Гернни, *Хетты. (По следам изучения культуры Востока), М., 1987, стр.147.*

²¹ В.Аргзунба, *Ритуалы и мифы Древней Анатолии, М., 1982, стр.66.*

²² Е.Кузьмина, *Распространение коневодства и культа коня у ираноязычных племен Средней Азии и других народов Старого Света в кн.: „Средняя Азия в древности и средневековье,, М., 1977, стр. 28-52.*

²³ Ե.Լալայան, *Ծիսական կարգերը հայոց մեջ, ԱՀ, գ. XXI, Թիֆլիս, 1911, էջ 181:*

* Մեծ Մեպասարը վաղ բրոնզի դարաշրջանից սկսած եղել է պաշտամունքի վայր և իր դերը պահպանել է մինչև օրս:

²⁴ О. Խնկիկյան, *Մյունիքի մ.թ.ա. IV-I հազ. թաղման ծեսի մեկնության փորձ, Բանբեր Երևանի համալսարանի/հետախուզ. ԲԵՀ/, 1993, թիվ 3, էջ 131: Ս. Դևեջյան, նշվ. աշխ., էջ 98:*

²⁵ Ս.Դևեջյան, նշվ. աշխ., էջ 98:

նացումը ոմանք կապում են «մեռյալների», «նախնիների», «առաջնորդների և հերոսների» պաշտամունքի հետ: Դիամասնատումը կամ միայն ստորին ծնոտի անջատումը ընդունված ծես էր մինչև ուրարտական ժամանակաշրջանը: Ծեսի արձագանքները պահպանվել են հայոց «գելկապի աղոթքներում»²⁶:

Մարդու գոհաբերության մասին հնագույն գրավոր աղբյուրը խեթական «թագավորական օրենքների» մասին պատմող տախտակներն են, որտեղ պարտություն կրած զորքի համար գոհաբերում էին նաև մարդուն՝ այծի, շան ձագի և խոճկորի հետ երկու մասի բաժանելով²⁷:

Հերոդոտոսի վկայությամբ Քսերքսեսի կին Ամեստրիսը, «հասած լինելով ծերունական տարիքի, հրամայում է կենդանի թաղել անվանի պարսիկների տասնչորս տղաների՝ ի շնորհակալություն աստծու, որը բնակվում է գետնի տակ»²⁸: Կամբոյսեսը՝ Կյուրոսի որդին, ինչպես հաղորդում է Հերոդոտոսը, «...առանց որևէ պատճառի բռնում է տասներկու մեծատոհմիկ պարսիկների և կենդանի թաղում՝ գլուխն ի վայր»²⁹:

Մարդու գոհաբերության մասին հունական առասպելները և լեգենդները կապված են տարբեր կերպարների հետ: Արիստիկ շրջանում հույները երեխաներ էին գոհաբերում 'Hlos անունով աստծուն, որը հավանաբար հետագայում դարձավ Helios³⁰: Արքայի դարաշրջանում Դիոնիսոսին մարդկային գոհեր էին մատուցում (հետագայում՝ միայն կենդանիներ)³¹: Երեխաների գոհաբերությունը համարվում էր աստվածներին ամենահաճոն: Քրոնոսն աղետի պահին իր միակ զավակին գոհաբերում է իր հորը՝ Ուրանին³²: Մարդացու կամ ցլամարդ Միմոտավրոսին³³ և Մոլոքին³⁴ մարդկային գոհաբերություններ էին մատուցվում, հատկապես երեխաներ: Ենթադրվում է, որ Մոլոք էր կոչվում մարդկանց կամ կենդանիներին այրելու ծեսը, որն էլ հետագայում ընդունվել է որպես աստծու անուն³⁵: Հունական դիցաբանության մեջ Թալոսը մարդկային գոհեր պահանջող քսոնիկ հրեշ է³⁶: Մինչև մ.թ. 2-րդ դար Լիկեա լեռան վրա ամենագեղեցիկ աղջկան գոհաբերում էին գայլի մորթի հագած սև մարդու տեսքով, մեռածների աշխարհը ներկայացնող Լիկաս հրեշին³⁷, իսկ Լիկեա և Լիկաս անունները ծագում են lupus-գայլ բառից: Մարդկային գոհաբերության արձագանքներ կան նաև Տավրիկյան Իֆիգենիայի մասին առասպելում, որտեղ փորձում են Օրեստեսին գոհաբերել³⁸: Հունական դիցաբանության մեկ այլ հերոս՝ Թանթալոսը, ցանկանալով իմանալ, արդյոք աստվածներն ամենիմա՞ց են, նրանց կերակրել էր իր որդի Պելոպասի մսով³⁹: Մանուկների գոհաբերման վկայություն է նաև Լիկոպոլիոսի կողմից իր զավակի

²⁶ Լ.Եզանյան, Գայլերի գոհաբերության ծեսի գաղտնագիրը հայոց «գելկապի աղոթքներում», ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XII, Գյումրի, 2009, էջ 81:

²⁷ В.Аргзунба, նշվ. աշխ., էջ 67:

²⁸ Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմանությունը՝ Միմոն Կրկյաշարյանի), Եր., 1986, գ. VII, 114, էջ 419-420:

²⁹ Նույն տեղում, գ. III, 35, էջ 173:

³⁰ А.Голан, Миф и символ, М., 1992, стр. 46.

³¹ Նույն տեղում, էջ 54:

³² Նույնը:

³³ А.Лосев, Минотавр, Мифы народов мира, (այսուհետև՝ МНМ) т. 2, М., 1992, стр. 153.

³⁴ И.Шуфман, Молох, МНМ, т. 2, М., 1992, стр. 169.

³⁵ Նույնը:

³⁶ А.Лосев, Античная мифология в ее историческом развитии, М. 1957, стр.127; Э.Петросян, Боги и ритуалы Древней Армении, Ер., 2004, стр.101.

³⁷ F.J.Dölger, Die Sonne der Gerechtigkeit und der Schwarze. München, 1918, p. 69:

³⁸ Գիգարանական բառարան, Եր., 1985, էջ 89:

³⁹ В.Ярхо, Тантал, МНМ, т.2, М., 1992, стр. 493. Գիգարանական բառարան, Եր., 1985, էջ 230:

փորձաքննության կերակուրով Ջևահին հյուրասիրելը⁴⁰: Առասպելական այս պատումները, որոնք տեղ են գտել նաև Աստվածաշնչում, հուշում են մի ժամանակ եղած մարդկային զոհաբերության մասին. պատերազմում չպարտվելու համար Մեշան զոհաբերում է իր անդրանիկ որդուն՝ Կեմոշին⁴¹: Ենթադրվում է, որ մինչևաստվածաշնչյան սովորույթներում Յահվեին նույնպես մարդկային զոհեր էին մատուցում⁴²:

Մարդկային զոհաբերության մասին վկայություն գտնում ենք նաև Խորենացու մոտ՝ Արտաշեսի թաղման նկարագրության մեջ. «... եթե որչափ ամբոխությունը մեռան ի մահուանն Արտաշեսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք...»⁴³ եւ շուրջ զգերեզմանան լինելին կամատր մահունք...»⁴⁴: Բերվածը հայոց մեջ ևս թագավորի աստված լինելու և աստծուն զոհ մատուցելու հնագույն ծիսակարգի վկայություն է: Թագավորն աստված էր դառնում ոչ միայն իր մահից հետո, այլ նաև աստծո դեր ուներ կյանքում, հատկապես ծիսակարգում⁴⁵: Խորենացին մարդու զոհաբերության վերաբերյալ բերում է նաև հետևյալը. «Չոր և քուրմք ոմանք ի դիւաց ... հրամայեցին բազմութիւն տղայոց զենուլ յաւագանս և ջերմ արեանք լուանալ և ողջանալ»⁴⁶: Չոհաբերության ծեսի արձագանքները պահպանվել են հայ բանահյուսական նյութերում, ինչպես շինության, բերդի կամ կամուրջի հիմքերի տակ երիտասարդ աղջիկ դնելու մասին հեքիաթներն ու զրույցները⁴⁷: Հնդկաստանում մարդուն զոհաբերելու սովորույթը պահպանվել է մինչև XIX դար⁴⁸: Մշեցիների «հերիք է միսրսի ծամիք»⁴⁹ արտահայտության մեջ, որ նշանակում է բամբասել, մարդու զոհաբերության և հանիքալիզմի հնագույն սովորույթի հետավոր արձագանք կա:

Մարդու զոհաբերությունը նույնպես ուղեկցվում էր գլուխը կտրելով: Ծեսը փաստված է հնագիտական նյութերում, ինչպես թաղման ծեսում, այնպես էլ ուղեկցող պաշտամունքային իրերի պատկերազարդումներում: Չոհի գլուխը կտրելու վկայություններ պահպանված են գրավոր աղբյուրներում և բանագիտական նյութերում:

Պարտված ռազմիկների գլխատման, երկու զորահրամանատարների զոհաբերության տեսարան է դրվագված Քարաշամբի մ.թ.ա. XXII-XXI դարեր թվագրվող արձաթե գավաթի վրա: Գավաթի երրորդ զոտու վրա կան գալի պատկեր, ինչպես նաև գալի պոչեր կրող ռազմիկների գլխատված մարմիններ, որոնց անդրաշխարհ է ուղեկցում առյուծագլուխ արծիվ Անգուղը⁵⁰: Չոհին գլխատելու ծիսակարգ հայտնի է Շիրակավանից, որտեղ մ.թ.ա. 8-7-րդ դարերի թիվ 1 և 4 մանկական թաղումներում փաստվել է կմախքի գանգին կիպ դրված մեկ այլ մանկական գանգ*: Երկու դամբարանում էլ, բացի գանգից, երկրորդ կմախքի որևէ այլ ոսկոր չի գտնվել:

⁴⁰ В.Ярхо, Ликаон, Мифологический словарь, М., 1990, стр. 312.

⁴¹ И.Шуфман, Кемош, Молох, МНМ, т. 1, стр. 637.

⁴² Ш.Шуфман, Молох, МНМ, т. 2, стр.169.

⁴³ Մ. Խորենացի, Հայոց Պատմություն (Աշխարհարար թարգմանությունը և մեկնաբանությունները՝ Ստ. Մալխասյանի), Եր., 1981, Գ II, Կ:

⁴⁴ Նույնը:

⁴⁵ A Kammenhuber. Die hethitischen Vorstellungen von Seele und Leibesinnerem, Kopf und Person, 1-2. Teil - ZA. N.F. Bd. 22-23, 1964-1965, p. 199.

⁴⁶ Մ. Խորենացի, Գ, ձդ:

⁴⁷ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, թիվ 571, 572, 578, 581, 585...:

⁴⁸ Վ. Բրդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 489:

⁴⁹ ԴԱՆ, հեղինակի գրառումներից, Աշոցք (գ.Ղազանչի):

⁵⁰ Ա. Փիլիպոսյան, Քարաշամբի գավաթի տեսարանները որպես հնագույն առասպելի խորհրդանշանային դրսևորումներ, Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ (միջազգային երկրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածու), Եր., 2007, էջ 51:

* Նյութերը հրատարակված չեն:

Մարդուն գլխատելը կատարվել է որոշակի ծիսակարգով: Հերոդոտոսի վկայությամբ սկյութները «զոհվելիք մարդկանց գլուխները զինով ցողելուց հետո նրանց մորթում են մի անոթի վրա»⁵¹, իսկ «Պատերազմում իր սպանած բոլոր թշնամիների գլուխները սկյութը բերում է թագավորին», որի համար վարձատրվում է բերած ավարի մի մասով: Գլուխը մաշկազերծվում էր: Կաշին մսից անջատելուց հետո այն տրորվում էր ձեռքերով և այդ եղանակով մշակված կաշին օգտագործվում էր որպես թաշկինակ՝ կապելով ձիու սանձից: Ով առավել շատ այդպիսի կաշվե թաշկինակներ ունենար, նա կհամարվեր բոլորից քաջ⁵²: Կտրված գլուխներ հավաքելու սովորույթը կապում են նախնիների պաշտամունքի և մարդակերության հետ կամ դիտում են մարտական թանկ ավար: Թշնամու կամ ցեղակցի գլուխը կտրելուց հետո տարբեր արարողակարգեր էին կատարում. չորացնում էին, փափուկ հյուսվածքները թողնում նեխվելու, մյուսները՝ եփում, այնուհետև մաքրված զանգի հետ ևս ծիսական գործողություններ կատարում: Սկյութներն ամենակատաղի թշնամիների հետ այսպես էին վարվում. եթե սկյութն աղքատ էր, կառավար դրսից պատում էր միայն եզան անմշակ կաշվով և այդպես օգտագործում այն, իսկ եթե հարուստ էր, սպա եզան կաշվով պատելուց հետո ներսից ոսկեգօծում էր և օգտագործում որպես գավաթ: Նույն կերպ էին վարվում նաև ազգականների հետ, որոնց հետ վեճի մեջ էին եղել և թագավորի ատյանի առաջ նրան հաղթել⁵³: Կելտերի և Պոնտոսի ժողովուրդների ծեսի մեկ այլ տարբերակի մասին վկայում է Պլինիոս Ավագը. «Պոնտոսում կարգ կա ուղեղը հանելով մաքրել տղամարդկանց գլուխները և պահպանել երկար ժամանակ...իսկ կելտերը ուղեղից մաքրված զանգը պատում են ոսկով և նման գավաթները պահում են խնջույքների համար»⁵⁴: Ալանները ոչ մի բանով այնքան չէին պարծենում, որքան սպանվածի գլխի մաշկը մարտական ձիերի վրա որպես փառապանծ ավար-գարդ կախելով⁵⁵: Գանգամաշկը հանելու սովորույթի վերապրուկ պահպանված է օսեթական էպոսում / Երթագանի գլխի մաշկը ոսկյա էր⁵⁶: Գլուխը կտրելով մարդու զոհաբերության ծեսի հետքեր պահպանվել են Արտեմիսի պաշտամունքում, որի վկայությունն է խորհրդանշական ծեսը, երբ տղամարդիկ թեթևակի կտրում էին իրենց վզի մաշկը⁵⁷: Դիակների ծիսական մաշկազերծում կատարում էին Արտեմիսի աղեղնակիր քրմուհիները, որով, ըստ հավատալիքի, վնասազերծում էին սպանված թշնամու հոգին:

Չոհին գլխատելու մասին տեղեկություն գտնում ենք նաև Աստվածաշնչում. Աբրահամը իր որդուն՝ Իսահակին, զոհաբերելու էր գլուխը կտրելով. «Աբրահամն առավ որջակեզ փայտը եւ իր որդի Իսահակի վերայ դրաւ, եւ ինքն իր ձեռքն առաւ կրակը եւ դանակը...Աբրահամն այնտեղ սեղան շինեց, եւ փայտերը շարեց, եւ և իր որդի Իսահակին կապեց՝ սեղանի վրայ դրաւ նորան փայտերի վրայից, և դանակն առաւ, որ իր որդուն մորթէ»⁵⁸: Հովհաննես Սկրտչին նույնպես սպանեցին գլուխը կտրելով⁵⁹: Գլուխ կտրելը հաճախադեպ է «Տարոնի պատմության» մարտի տեսարանների նկարագրություններում. Վահան իշխանը, պարսիկ գերիներին ծաղրելով, մախաղի մեջ է նետում պարսից զորավար Միհրանի գլուխը, Տիրան Կամսարականը կտրում է

⁵¹ Հերոդոտոս, նշվ. աշխ., IV, 62:

⁵² Նույն տեղում, 64:

⁵³ Նույն տեղում, 65:

⁵⁴ *Плиний Старший, Естественная история, Кавказ и Дон в произведениях античных авторов, Ростов – на –Дону, 1991, стр. 398.*

⁵⁵ *Аммиан Марцелин, Римская история, СПб: 1994, стр. 558.*

⁵⁶ *В. Миллер, Осетинские этюды. ч. 1, Осетинские тексты, М., 1881, стр. 167.*

⁵⁷ Դիցարանական բառարան, էջ 39:

⁵⁸ Աստվածաշունչ, Գիրք Ծննդոց, գլ. իր, 6, 11:

⁵⁹ Նոր կտակարան, Լիզպոն, 1994, Ավետարան ըստ Մատթեոսի, 14:

պարսիկ Վարդուհրի գլուխը և նետելով ստրուկին՝ ասում. «Պահիր, երբ հասնենք Մատրավան, գնդակ կխաղանք Սբ Կարապետի առաջ»⁶⁰: Սբ Կարապետի վանքի առջև սպանվածի գլուխը որպես գնդակ օգտագործելը ոչ միայն մարդու զոհաբերության հնագույն ծեսի արձագանք է, այլ նաև ամպրոպամարտիկի հատկանիշներ ունեցող քրիստոնեական սրբին վաղբրոնգիդարյան նախորդին նվիրված ծիսակարգի փոխանցման վկայություն:

Պարտված թշնամու գլխի հետ տարաբնույթ գործողություններ կատարելու նպատակը նրա ուժին տիրելն է: Գլուխը կտրելը դիտվում է հանգուցյալին վնասազերծել⁶¹: Կտրված գլուխը դառնում էր անվտանգ: Բացի այդ, սպանված թշնամու մասնիկը մշտապես կրելը հավանաբար ակնկալվել է որպես սպանվածի ուժին տիրել: Այսինքն՝ զոհին գլխատելու ծեսը լրացուցիչ ուժ ստանալու մոգական գործողություն է:

Նմանօրինակ վնասազերծումներ փաստված են տարբեր ժողովուրդների մոտ, արտացոլված են բանահյուսության մեջ և հավատալիքներում: Օրինակ, Հինդիքուշի կաֆիրները կարծում էին, թե դևին կամ վիռլին սպանելու համար անհրաժեշտ է մասնատել⁶²: Շատ ժողովուրդների մոտ տիրակալի կամ նշանավոր այլ մարդկանց աճյունի մասնատումը (այդ թվում նաև՝ քրիստոնեական սրբերի) կատարվում էր, որպեսզի այնուհետև պահվելին տարբեր տեղերում՝ երկրի տարբեր մասերի բարեկեցությունն ապահովելու համար⁶³: Հայոց սրբերի մասունքները նույնպես թաղված են տարբեր եկեղեցիներում: Բերենք միայն մեկ օրինակ. Վասպուրականի Անձևացյաց գավառում Պաղատ (Պաշատ) լեռան վրա էր «տուն Արամազդայ և Աստղկան», որ ասել է՝ մեհյան⁶⁴: Ըստ Ալիշանի՝ այստեղ էր գտնվում Փութկու (Բութկի) Սբ Գևորգ եկեղեցին: Սբ Գևորգը, ըստ մի զրույցի, յոթ տարվա հովիվ էր և ականավոր գորավար: Պատերազմների ժամանակ երեք անգամ սպանվում, մարմինը կտրատվում և տարբեր երկրներ է ցրվում, բայց վերստին հարություն է առնում: Չորրորդ անգամ ևս մարմինը կտրատվում և տարվում է տարբեր երկրներ: Նրա գուշակ-օգնական հավքը հերոսի գլուխն ամփոփում է պուտուկի մեջ: Պուտուկը թաղվում է, գերեզմանի վրա եկեղեցի կառուցվում⁶⁵:

Տիպաբանորեն այս մոտիվը հասնում է քթոնիկ դեմոնի հետ թշնամանքի մեջ գտնվող մեռնող և հարություն առնող աստվածության վաղ առասպելներին, երբ հակամարտության արդյունքում աստվածությունը կամ զոհվում է կամ կորցնում կենսական որևէ օրգան: Արամազդն ամպրոպի աստվածն է, և մեհյանի տեղում կառուցված եկեղեցու հովանավոր սրբին՝ Սբ Գևորգին են փոխանցվել նրա հատկանիշները:

Բացի զոհաբերված կենդանիների գլուխներն առանձին թաղելու ծեսից, կա նաև միայն աճյունների թաղում՝ առանց գլխի: Վիկինգների թաղման նավակներում շները հաճախ առանց գլուխների են⁶⁶: Հնդեվրոպական դիցաբանական տարբեր սովորույթներում գայլերը կարող են շուն կոչվել կամ հակառակը: Դա հատկապես ակնառու է գերմանական սովորույթներում, երբ Օդին-Ոտանի սրբազան երկու կենդանիները՝ եր-

⁶⁰ Հովհան Մամիկոնյան, *Տարնի պատմություն (թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Վ. Վարդանյանի)*, Եր., 1989, էջ 57, 65, 71:

⁶¹ И. Васильев, Г. Матвеева, *У истоков Самарского Поволжья, Куйбышев, 1986, стр. 232.*

⁶² К. Йеттмар, *Религии Индикуша, М., 1986, стр. 524.*

⁶³ М. Бойцов, *Живая власть мертвого тела. Комментарии к повествованию старшего коллеги. Казус: индивидуальные и уникальные в истории. вып. 5, М., 2003, стр. 167–253; Д. Фрезер, Золотая ветвь, Исследование магии и религии, М., 1983, стр. 703.*

⁶⁴ Ղ. Ալիշան, *Հին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ, էջ 48:*

⁶⁵ Գ. Հովսեփյան, *Փշրանքներ, ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892, էջ 38-46, ԱՀ, XXV, 15 45-46, XXVI, էջ 207: Վ. Բրդյան, Հայկական աղանձներ, Եր., 1986, էջ 29:*

⁶⁶ Նույն տեղում, էջ 163-164:

կու գայլեր, շներ են անվանվում, իսկ պատերազմի աստված Օդինի զինվորները՝ գայլ, շուն կամ հաչում են ինչպես շները⁶⁷: Հնդեվրոպական մի շարք լեզուներում *շուն* նշանակությամբ բառն արտահայտում է նաև *գայլ* իմաստը, որը բացատրվում է շան և գայլի արտաքին նմանությամբ և նրանով, որ գայլերի տարատեսակն ընտելացված շների նախնին է⁶⁸: Կարելի էր ենթադրել, որ գայլերի զոհաբերության ժամանակ ևս մարմինները կարող էին թաղվել առանձին: Մակայն մոտ 1մ հզորությամբ, փայտի մնացորդներով լի այրված շերտի տակ գայլերի զանգերի հայտնաբերումը, ինչպես նաև Մեծ Մեպասարի տաճարում, որտեղ հայտնաբերվել է երեխայի կառափը, ծիսական խարույկից նույնիսկ սալահատակի քարերի այրված լինելը և կրակի մնացորդների մեջ նաև այրված ոսկորների մնացորդները թույլ են տալիս ենթադրել, որ զոհերի մարմինները հավանաբար այրվել են: Մեր ենթադրությունը հիմնված է նախ հետևյալի վրա. աստվածների կերակուր զոհի միսը կա՛ն եփում էին թաղարներում, կա՛ն խորովում կրակի վրա⁶⁹: Բացի այդ, անտիկ հեղինակների վկայությամբ՝ արխաիկ դարաշրջանում, ի պատիվ Վուլկանի, մարդկանց էին այրում⁷⁰: Ենթադրվում է, որ Վուլկան անունը ծագում է *գայլ* իմաստն արտահայտող բառից⁷¹: Taranis-ը ամպրոպի կելտական աստվածն էր (*taranis* կելտերեն նշանակում է ամպրոպ), և նրան զոհաբերվող կենդանիներին այրում էին⁷²:

Գայլի զոհաբերությունը կապված է հին տարվա ավարտին և նոր տարվա գալստյանը նվիրված խորհրդածեսերի հետ, որի նպատակը Տիեզերական կարգուկանոն հաստատելն ու բնության բնական ընթացքը շարունակելն է⁷³: Վիշապի դեմ Ամպրոպամարտիկի հաղթանակով է կարգավորվում բնությունը, բացվում ջրերի հունը՝ կենարար անձրև պարզևելով երկրին: Ամպրոպի աստծուն նվիրված ծիսակարգերում մարդու զոհաբերության հնագույն արձագանք և գլխի զոհաբերության ծիսական դերի կարևորման վկայություն է հայոց մեջ անձրև առաջացնելու նպատակով կատարվող ծեսը: Գերեզմանից մի զանգ էին հանում, զցում գետը, ոչխար էին զոհում և գլուխը մեծ շուքով տանում և նույնպես զցում էին գետը, որպեսզի անձրև գար⁷⁴: Վ.Բոդյանը բերում է հետևյալը. Աղձնիքում կատարված նման մի ծեսից հետո, երբ գերեզմանից հանում են զանգերը և զցում ջուրը, սակայն անձրև չի տեղում, «*խորհած էին քահանայի մը կամ կարդացողի մը գլուխ կտրել, ջրոց նվիրել. աստված տվավ, որ առատ անձրև եկավ և կենդանի զոհն ազատեցավ*»⁷⁵: Այսինքն՝ գլուխը կտրելով մարդկային զոհաբերության եզակի փաստեր եղել են նույնիսկ XIX դարում:

Այսպիսով, Մեծ Մեպասարում գայլերի գլուխների և մանկան կառափի հայտնաբերումը վկայում է իրականացված ծիսակարգի մասին, որի բաղադրիչներից մեկը զոհին գլխատելն էր: Գայլերին գլխատելը և գլուխները սրբաբանում թողնելը վկայում են մատուցված զոհաբերության և հատկապես ամպրոպի աստվածությանը զոհի կարևորագույն մասի՝ գլխի հատկացման մասին: Նույն նպատակով է կատարվել նաև

⁶⁷ Т.Гамкрелидзе, В. Иванов, *նշվ. աշխ.*, էջ 590:

⁶⁸ Նույնը:

⁶⁹ Л.Вулли, У халдеев, М., 1961, стр. 110.

⁷⁰ Նույն տեղում, էջ 213:

⁷¹ В.Абаев, Осетинский язык и фольклор. М. – Л., 1949, стр.592 – 594.

⁷² С.Шкунаев, Таранис, Мифы народов мира, т. 2, М., 1992, стр. 495.

⁷³ А.Еганян, Памятник раннебронзового периода Мец Сепасар в контексте индо-европейских верований и ритуалов // Труды Маргианской археологической экспедиции. Институт этнологии и антропологии им. Н. Н. Миклухо-Маклая РАН, т.4, М., 2012, стр. 288.

⁷⁴ Մ.Արեղյան, *նշվ. աշխ.*, էջ 168:

⁷⁵ Վ.Բոդյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972, էջ 490:

մանկան զոհաբերությունը, և նրա կառավիճը թողնվել է զոհասեղանից ոչ հեռու՝ ծխական սյան մոտ:

Հնագիտական փաստերի համադրումը հնագույն ծեսերին, հավատալիքներին և սովորույթներին ցույց է տալիս, որ վաղ բրոնզի դարաշրջանում հնդեվրոպական ցեղերով բնակեցված Մեծ Մեպասարում Ամսրոսյի աստվածությանը նվիրված ծխակարգում առանձնակի է կարևորվել գլխի զոհաբերությունը:

ЖЕРТВОПРИНОШЕНИЕ ГОЛОВЫ В РАННЕБРОНЗОВОМ МЕЦ СЕПАСАРЕ

___ *Резюме* ___

___ *Л. Еганян* ___

При раскопках святилища раннебронзового периода Мец Сепасара было зафиксировано жертвоприношение волков, и их отрубленные головы были оставлены в святилище как приношения. В другом помещении ритуального комплекса - в храме, у алтаря, под ритуальным столбом, был найден череп ребенка. Других костей скелетов ни волков, ни ребенка не найдено. Археологический материал указывает, что жертвоприношения совершались как характерная особенность ритуалов, что местному индоевропейскому населению были не чужды человеческие жертвоприношения, и имел место особый вид расчленения-отчленения головы от тела.

Специфическое обращение с головой, принесенного в жертву животного или человека, является характерной особенностью многих индоевропейских народов. Тот факт, что именно голова жертвы подвергалась особому „обращению,“ свидетельствует о роли этой части тела в верованиях индоевропейских племен, которыми в III тыс. до н.э. был населен Мец Сепасар.

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԴԻՑԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԵՌՅԱԿԸ ԵՐՎԱՆԴԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՇԻՍՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մ.թ.ա. 331թ. Գավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանի անկախությունը վերականգնած Օրոնտես-Երվանդը (մ.թ.ա. 4-րդ դարի երկրորդ կես)՝ Հայաստանի նախկին արքեմենյան սատրապը, հայ հին պատմագրությանը հայտնի ավանդական Վաղարշակի կերպարի պատմական առաջին նախատիպն է: Մի շարք այլ հանգամանքների հետ միասին¹ դրա մասին են խոսում ներքոշարադրյալ նյութում բերված փաստերը ևս: Մովսես Խորենացու վկայությամբ Վաղարշակը, «Արմավիրում մեռյալ շինելով, արձաններ է կանգնեցնում Արեգակին, Լուսին և իր նախնիներին»:² Խոսքը Արեգակ աստծո, Լուսին դիցուհու և աստվածացված նախնիների մասին է: Արեգակ աստվածը, ինչպես կոտեսները ստորև, նույն Վահագնն է, Լուսին դիցուհին՝ Անահիտը, իսկ աստվածացված նախնիների շարքը սկսվելու էր նախնի աստվածով՝ ամպրոպային Արամագրով:

Ագաթանգեղոսի վկայություններից պարզվում է, որ հեթանոս հայոց Արամագր աստվածը կրել է նաև *արի* մակդիրը:³ Սա գալիս է դեռևս այն ժամանակներից, երբ Արամագրը նաև ռազմիկ աստված էր, հաղթական ու հաղթանակներ շնորհող ամպրոպային աստված: Իսկ այդպիսին նա ըմբռնվել է Երվանդունյաց դարաշրջանի Մեծ Հայքում: Արտաշիսյան դարաշրջանում իր այդ դերը նա զիջել էր նախապես Արևի աստված եղած Վահագնին: Ինչպես տեսանք, Մովսես Խորենացին ավանդական Վաղարշակ արքայի մասին խոսելիս Վահագն աստծուն ուղղակի *Արեգակ* է կոչում: Մ.թ.ա. 5-4-րդ դարերի սահմանագլխին Հայաստանում եղած Քսենոփոնը այս նույն աստծուն *Հելիոս*, այսինքն՝ «Արև, Արեգակ» է կոչում և վկայում, որ նրան ձիեր էին զոհաբերում:⁴ Արեգակի անձնավորում նույն աստվածությանը Մովսես Խորենացին արդեն *Ապոլոն* է կոչում, երբ խոսում է Տիգրան Միջինի հայր Արտաշեսի, իրականում՝ Տիգրան Մեծի պապ Արտաշես 1-ինի (մ.թ.ա. 189-160թթ.) Հայաստան բերած հունական աստվածների արձանների մասին: Ըստ նրա՝ Արտաշեսը «Արտեմիդի, Հերակլի և Ապոլոնի պղնձաձույլ արձանները բերել է տալիս մեր աշխարհը, որպեսզի կանգնեցնեն Արմավիրում: Քրմապետերը, որոնք Վահունիների ցեղիցն էին, Ապոլոնի և Արտեմիդի արձաններն առնելով՝ կանգնեցրին Արմավիրում, իսկ Հերակլեսի արձանը... իրենց նախնի Վահագնը համարելով, կանգնեցրին Տարոնում, իրենց սեփական Աշտիշատ գյուղում»:⁵ Ինչպես տեսնում ենք, մեկ Արեգակ աստվածը այս դեպքում ունի իր երկու համարժեքները՝ Ապոլոն և Հերակլես: Եթե Ապոլոնի արձանը դրվել է Արմավիրում, ապա այն ընկալվել է ճիշտ այնպիսին, ինչպիսին էր Վաղարշակի Արեգակ

¹ Լ. Պետրոսյան, *Ավանդական Վաղարշակի պատմական ու վիզյակական նախատիպերի շուրջ*, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. V, Գյումրի, 2002, էջ 136-142:

² Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց, Քննական բնագիրը Մ.Աբեղյանի և Ս.Հարությունյանի (աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ.Սալխայանի), Եր., 1981, Բ, ք:

³ Ագաթանգեղայ պատմություն Հայոց, Քննական բնագիրը Գ.Տեր-Սկրտչյանի և Ս.Կանայանցի (աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի), Եր., 1983, Ե, 53, 2, 68, ԺԲ, 127:

⁴ Xen., *Anab.*, IV, V, 35 (Քսենոփոն, *Անաբասիս*, Թարգմանությունը՝ Ս.Գրիկյաշարյանի, Եր., 1970, էջ 98, 262 ծան. 26):

⁵ Խորենացի, Բ, Ժք:

աստվածը: Նորություն էր Հերակլեսի ներկայությունը՝ այն էլ Աստղիկ/Ափրոդիտեի տարփավորի դերում: Դա արեգակնային Վահագնի դերն էր, որն իր այդ դերում համարվում էր քրմապետական Վահունի տոհմի նախնին:⁶ Եթե երվանդունիական Արեգակ-Վահագնը արքայատոհմի նախնի աստված չի համարվել և պատերազմի աստված չի եղել (այդպիսին համարվել է ամպրոպային աստված Արամագրը), ապա այլ էր Հերակլեսի հետ նույնացված Վահագնը, որը Արտաշես 1-ինից սկսած, ստանձնել էր թե՛ նախնի աստծու՝ արքայատոհմի առաջին հովանավորի դերը, թե՛ պատերազմի աստծու:

Վահագնին Արտաշեսյան նախնի աստվածների շարքը դասելը, նրան ռազմական գծեր վերագրելը հասկանալի են դարձնում Տիգրան Միջինի հետագա գործողությունների դրոշմատեսությունը ևս: Տիգրան Մեծին (մ.թ.ա. 95-55թթ.) նույնացվող Հայոց թագավոր Տիգրան Միջինը, ըստ Խորենացու, «Ափրոդիտեի՝ (Աստղիկ-Լ.Պ.), իբրև Հերակլեսի (Վահագնի - Լ.Պ.) տարփածուի, արձանը հրամայում է կանգնեցնել հենց Հերակլեսի արձանի մոտ՝ Հաշտից տեղում (Աշտիշատում - Լ.Պ.): Եւ գայրամալով Վահունիների վրա, որոնք իրենց սեփական (գյուղում) համարձակվել էին կանգնեցնել իր հոր ուղարկած Հերակլեսի արձանը, գրկում է քրմության (պաշտոնից) և արքունիք է գրավում այն գյուղը, որտեղ արձանները դրվել էին»:⁷ Այստեղ ուշադրության արժանի են երկու հանգամանք: 1. Տիգրան 2-րդը հրաժարվել է Վահագնի մեջ Վահունիների նախնուն տեսնելուց, երբ քրմական այդ տոհմը իրեն ծագած էր համարում հենց Վահագնից:⁸ 2. Դրանով նա շեշտում էր Վահագնի՝ Արտաշեսյանների աստվածային նախնին լինելու հանգամանքը և նրա մեջ արևային քրմի փոխարեն տեսնում էր արևային զինվորին:

Վահագնի՝ հետագայում միայն ամպրոպային գծեր ձեռք բերած լինելու առթիվ Գր.Ղափանցյանը գրում է, որ այսուհանդերձ «Մովսես Խորենացու ավանդած Վահագնի ծննդի երգը ավելի շուտ վկայում է նրա արեգակնային բնույթի առաջնային լինելը՝ որպես լուսնի և ցուրքի ոգու»:⁹ Փոփոխությունը, որ տեղի է ունեցել նախնական Վահագնի կերպարի մեջ, գալու էր Արտաշես 1-ինի իրագործած վերափոխումից: Այս վերջինիս հետևանքով է, որ հաջորդ հայոց թագավորներն իրենց հպատակներին դիմելիս կարող էին ասել. «բաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ», իսկ միջնադարյան «Բարզիբը հայոց»-ը *Արեգ* բառը բացատրելիս գրեր. «*Արեգ* - մեծ, կամ առաւել, կամ լոյս, կամ խիստ, կամ քաջ», «*Արեգ* - խիստ, կամ քաջ»:¹⁰

Արտաշես 1-ինի և նրա հաջորդ - ժառանգորդ Արտաշեսյանների կողմից Վահագնի պաշտամունքի վերածումը նախնի աստծու պաշտամունքի, երևում է նաև նրանց թագի կենտրոնական զարդաքանդակներից՝ ճառագայթող արև՝ Վահագն աստծու խորհրդանշանը և գույգ թռչուններ՝ Աստղիկ դիցուհու խորհրդանիշ Արուսյակ մուրրակի դրսևորումները (որպես արևի առավոտյան ուղեկից՝ Լուսաբեր և որպես նրա երեկոյան ուղեկից՝ Գիշերավար):¹¹ Անկասկած, այդ թռչունները աղավնիներ են: Այս

⁶ Խորենացի, Ա, լա, Բ, ժբ:

⁷ Նույն տեղում, Բ, ժդ:

⁸ Նույն տեղում, Ա, լա, Բ, ժբ:

⁹ Գր.Ղափանցյան, *Историко-лингвистические работы. К начальной истории армян, Ер., 1956, էջ 320-321:*

¹⁰ Ազարթանզեղու, ԺԲ, 127, «Բարզիբը հայոց», Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հ.Ամայանի, Եր., 1975, էջ 37, 371, ծան. 892:

¹¹ Ս.Պետրոսյան, Գյումրիի պեղածո գոտու զարդանախշերի շուրջ, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը», հանրապետական առաջին գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994, էջ 30-32:

տեսանկյունից արժևորվում է Գ.Մրվանձտյանցի հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Եփրատը, երբ Մշո դաշտը կը մտնե, Կնճան սարերու մեջ զարնվելով քարերուն՝ մեղ կիրճով մը տղմվելով գո՛ւտ գո՛ւտ ձայն մը կ'արձակե. և այդ տեղը կկոչվի Գ-ուռգուռա, ուր Աստղիկի լողարանն է եղեր»:¹² Գ.Մրվանձտյանցը Գ-ուռգուռա անվան ժողովրդական ստուգաբանությունն է բերում: Դիշտ է, որ այս անունը բնաձայնական ծագում ունի, սակայն, Մ.Պետրոսյանի կարծիքով, այստեղ արտացոլվածը նույնպես բնաձայնական ծագում ունեցող գուրգուր բառն¹³ է, որը «աղավնիի նման մի թռչուն» է նշանակում:¹⁴ Մրանից են ծագում գուրգուրել «խանդաղատանք զգալ, սիրել, փայփայել, փաղաքշել» և գուրգուրանք «խանդաղատանք, սեր, փաղաքշանք» բառերը:¹⁵ Ի հաստատումն այս կարծիքի՝ նկատենք, որ Աստղիկի գուգահեռ ասորական Դերկեստո սիրո դիցուհու սրբազան թռչունը ևս աղավնին էր: Այս առթիվ Մ.Աբեղյանը գրում է. «Ջրի դիցուհի Դերկեստոյի տոնի օրերը ջուր էին սրկում, և նրա նվիրական թռչունն էր աղավնին, Ափրոդիտեինը՝ նաև վարդը: Շատ բնական է, ուրեմն, որ Աստղիկի՝ Հայկական Դերկեստոյի տոնի օրը՝ Վարդավառին, ջուր ցրեին իրար վրա, աղավնի թոցնեին և այդ դիցուհուն՝ հայկական Ափրոդիտեին, վարդ նվեր բերեին»:¹⁶

Հայտնի է, որ Մովսես Խորենացին մեր հեթանոսական աստվածների մասին խոսելիս նախընտրում է գործածել նրանց հունական գուգահեռների անունները:¹⁷ Բայց Վաղարշակի առնչությամբ, ինչպես տեսանք, պատմահայրը հիշատակում էր աստվածությունների հին հայկական անունները՝ Արեգակն և Լուսին: Սա ևս վկայում է, որ Հայաստանի անկախությունը վերականգնած ավանդական Վաղարշակի պատմական առաջին նախատիպը չէին կարող լինել ո՛չ Արտաշեսյան, ո՛չ էլ պարթև կամ հայ Արշակունի թագավորներ, որովհետև նրանց ժամանակաշրջանում արևի և լուսնի աստվածությունները Արեգակ ու Լուսին չէին կոչվում, այլ առաջինը հանդես էր գալիս իրանական ծագումով Վահագն, Սիհր, Տիր և հունական Ապոլոն անուններով, իսկ երկրորդը՝ իրանական Անահիտ և հունական Արտեմիս անուններով:¹⁸

Մայր դիցուհու և լուսնի նույնացումը մի շարք առասպելաբանական հիմնավորումներ ունի: Դրանցից մեկն ուղղակի առնչություն ունի հղացումից մինչև ծնունդ ընկած ժամանակահատվածը լուսնային ամիսներով հաշվարկելու հետ: Ըստ Արիանոսի, օրինակ, երբ Արևելքում գտնվող Ալեքսանդր Մակեդոնացին տեղեկանում է, թե իր մայրն ինչպես է միջամտել իր կողմից Մակեդոնիայի և Հունաստանի կառավարիչ կարգված Անտիպատրոսի գործերին, ասել է, որ «տասն ամիսների համար մայրը չափազանց մեծ բնակվարձ է վերցրել»:¹⁹ Խոսքն այն տասը լուսնային ամիսների մասին է, որի ընթացքում լույս աշխարհ դեռ չէկած Ալեքսանդրին մայրը կրել է իր կրծքի տակ: Մայր դիցուհու լուսնային գծերը հայ իրականության մեջ իրանական Անահիտ և

¹² Գ.Մրվանձտյանց, Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 71:

¹³ Մ.Պետրոսյան, Տարբանի կերպարի պատմական հենքն ու միջավայրը, «Քրիստոնեության 1700-ամյակին նվիրված ԳՊԻ հանրապետական գիտ. նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ», Եր., 2001, էջ 32-33:

¹⁴ Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. I, Եր., 1971, էջ 598:

¹⁵ Մտ. Մայխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. I, Եր., 1944, հ. I, էջ 471:

¹⁶ Մ.Աբեղյան, Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 159:

¹⁷ Գ.Սարգսյան, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Եր., 1966, էջ 37-38:

¹⁸ Նույնը, էջ 43, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 577, 665, 675, 677, 902: Տե՛ս նաև Գ.Տիբալյան, Вопросы преемственности официального культа в Античной Армении, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, թիվ 10, էջ 58, 60:

¹⁹ Arrian., III, 12, 6 (Ալեքսանդր Մակեդոնացի, Եր., 1987, էջ 255):

հունական Արտեմիս անուններով հանդես գալու իրողությանը հանդերձ, մաս տեղական արմատներ²⁰ ունի: Ինչպես Անանիա Շիրակացին է գրում. «Լուսինի հետ կապված փոփոխություններից է, որ անասունները լիություն են առնում և տունկերը օգնակալություն են գտնում իրենց սննդի աճման մեջ»:²¹ Իսկ այդ երևույթները մտնում էին Մայր դիցուհու գործառույթների մեջ՝ որպես պտղաբերության և բերրիության անձնավորում դիցուհու: Ուշագրավ է, որ Երվանդ Վերջին թագավորը (մ. թ. ա. 3-րդ դ. վերջին տասնամյակներ) իր հրամանով ստեղծված անտառը կոչել էր «Ծննդոց անտառ»:²² Երվանդակերտ ձեռակերտի խորենացիական նկարագրությունը կասկած չի թողնում, որ նրան կից ստեղծված այս սրբավայր-անտառը ձևավորվել է եղել բուսաշխարհի անձնավորում Մայր դիցուհուն: Ահա այն. «Որովհետև (Երվանդը) մեծ հովտի միջին մասը լցնում է բնակչությանը և պայծառ շինություններով, լուսավոր, ինչպես աչքի բիրը, իսկ բնակչության շուրջը կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես բբի շուրջը աչքի մյուս բոլորակը: Իսկ այգիների բազմությունը նմանում էր խիտ արտևանուների գեղեցիկ գծին, որի հյուսիսային կողմի կամարածն *դիրքը իսկապես համեմատվում էր գեղեցիկ կույսերի հոնքերին*: Իսկ հարավային կողմից հարթ դաշտերը (հիշեցնում էին) ծնոտների գեղեցիկ ողորկությունը: Իսկ գետն իր երկու ափերի բարձրություններով պատկերացնում էր մի բերան, իր երկու շրթունքներով»:²³

Երվանդունիների մայրաքաղաք Արմավիրը մաս Մեծ Հայքի կրոնական կենտրոնն էր: Այն կրոնական բնույթ ուներ ի սկզբանե: Հայոց հին ավանդազրույցները նրա հիմնադիրն են համարում Արամանյակի որդի Արամայիսին:²⁴ Կրոնական կարևոր կենտրոնի իր դերը Արմավիրը՝ Արգիշտի 1-ինի կառուցապատած Արգիշտիիսինիլին (մ.թ.ա. 776թ. սկսած), պահպանել էր մաս ուրարտական դարաշրջանում:²⁵ Գ.Տիրացյանը նշում է, որ Երվանդունյաց դարաշրջանում Հայաստանում կային մեծ քանակությամբ տաճարային համայնքներ, գյուղեր, ավաններ կամ քաղաքներ, որոնք մեծ մասամբ ամրացված էին, այնուհետև ավելացնում է, որ դատելով անուններից՝ նրանց մեծ մասն առաջացել էր աքեմենյան և մույնիսկ նախաաքեմենյան ժամանակաշրջանում:²⁶ Նշելով հին հայկական պաշտամունքային կենտրոնների ունեցած կարևոր դերը երկրում՝ Հ.Մանանդյանը դրանց մեջ առանձնացնում էր Արմավիրը, որը, անգամ մայրաքաղաքը Երվանդաշատ փոխադրվելուց հետո, մնում էր թագավորության կրոնական կենտրոն²⁷: Հին հայկական պաշտամունքային կենտրոններն իրենց կարևոր դերն են ունեցել մաս քաղաքների առաջացման գործընթացի մեջ:²⁸

Մայրաքաղաքից դուրս կառուցված սրբավայր-քաղաքը, այսուհանդերձ, նրանից հեռու գտնվել չէր կարող, որովհետև դրանում նախ և առաջ իրագործվում էր թագավորի տոհմական աստվածների և աստվածացված նախնիների հեղինակական

²⁰ Գ. Մելիք-Փաշայան, *Անահիտ դիցուհու պաշտամունքը*, Եր., 1963, էջ 66-71; Գ.Վարդույան, *Дохристианские культуры армян, «Հայ ազգագրություն և բանահյուսություն. նյութեր և ուսումնասիրություններ»*, 18, Եր., 1991, էջ 107-111:

²¹ *Անանիա Շիրակացի*, *Տիեզերագիտություն և տոմար*, Եր., 1940, էջ 43:

²² Խորենացի, Բ, խա:

²³ Խորենացի, Բ, իբ:

²⁴ Խորենացի, Ա, ժբ:

²⁵ Բ.Պյոտրովսկի, *Ванское царство (Урарту)*, М., 1959, стр. 73.

²⁶ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Եր., 1971, էջ 459:

²⁷ Հ.Մանանդյան, *Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ*, Եր., 1946, էջ 15:

²⁸ Ս. Գրկյաշարյան, *Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ*, Եր., 1970, էջ 197:

պաշտամունքը: Բնականաբար, նրանց պաշտամունքն իրագործվելու էր սրբավայր-քաղաքի գլխավոր տաճարում: Այդ պաշտամունքի հելլենիստական տարբերակի Հայաստան, մասնավորապես Մեծ Հայք թափանցելու ժամանակաշրջանի վերաբերյալ ուշագրավ դիտարկում են կատարել մեր պատմաբանները: Հ.Մանանդյանն այն կարծիքին էր, որ Արմավիրի հունարեն արձանագրությունները կարող են մոտավորապես որոշել այդ ժամանակը, որովհետև դրանք ցույց են տալիս, որ հելլենիզմը մուտք էր գործել և տարածվել Երվանդյան Հայաստանում դեռևս մեր թվագրությունից առաջ երկրորդ դարում, երբ այստեղ գոյություն են ունեցել հունական տիպի տաճարներ:²⁹ Եթե Գ.Սարգսյանը թագավորական աստվածացված նախնիների հելլենիստական պաշտամունքը Մեծ Հայքում համարում էր սկզբնավորված Արտաշես 1-ինի ժամանակ,³⁰ ապա Գ.Տիրացյանի կարծիքով, դրան այդ մակարդակին հասցրել էին մեր Երվանդունի թագավորները:³¹

Թագավորական նախնիների և աստվածների կուռքերի համատեղ գոյությունը միևնույն սրբավայրերում խոսում է դրանց պաշտամունքների՝ պետական կրոնի անբաժան մասերը լինելու մասին: Երվանդունյաց դարաշրջանում այդպիսի սրբավայրեր գոյություն են ունեցել Մեծ Հայքի առնվազն հետևյալ երեք քաղաքներում՝ Արմավիրում, Բագարանում, Բագավանում: Տեսնենք, թե ինչ տեղեկություններ են դրանց վերաբերյալ հասել Մովսես Խորենացուն: 1. Վաղարշակը, «Արմավիրում մեռյալ շինելով, արձաններ է կանգնեցնում Արեգակին, Լուսնին և իր նախնիներին»,³² 2. Երվանդը «Ախուրյան գետի վրա շինեց մի փոքր քաղաք նման իր քաղաքին և կոչեց Բագարան... և այնտեղ փոխադրեց Արմավիրում եղած բոլոր կուռքերը»,³³ 3. Արտաշեսը Արտաշատում «մեռյալ է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը»,³⁴ 4. Հայաստանը գրավելուց հետո պարսիկ Արտաշիրը «հրամայում է անշեջ պահել Որմզդական հուրը Բագավանի բազիլիկի վրա: Բայց այն արձանները, որ Վաղարշակը շինել տվեց իր նախնիների պատկերներով, ինչպես և Արեգակի և Լուսնի պատկերներն Արմավիրում, որոնք Արմավիրից փոխադրվեցին Բագարան և նորից Արտաշատ՝ Արտաշիրը հրամայում է փշրել»,³⁵ 5. Երվազի սպանությունից հետո Սմբատ Բագրատունին «ավար է առնում Երվազի գանձերը և հինգ հարյուր հոգի ծառաներ... Այն ժամանակ Սմբատը Երվազի ծառաներին, որ գերել էր Բագարանից, տանում բնակեցնում է Մասիսի թիկունքում (իր) ձեռակերտում, որը միևնույն անունով կոչեց Բագարան»:³⁶

Մասիսի թիկունքում գտնված այս Բագարանը Բագրևանդ գավառի Բագավանն է՝ նախաքրիստոնեական Հայաստանի խոշորագույն կրոնական կենտրոններից մեկը:³⁷ Եթե Երվազ քրմապետի «ծառաներին» Սմբատը վերաբնակեցրել էր այստեղ,

²⁹ Հ.Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Եր., 1946, էջ 23:

³⁰ Գ.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 71, 73, 76:

³¹ Գ.Տիրացյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի տվյալներ Հայաստանի ն.մ.թ. III-II դարերի պատմության մասին, «Բանբեր Մատենադարանի», 6, 1962, էջ 13, Նույնի, Вопросы преемственности официального культа в Античной Армении, էջ 60:

³² Խորենացի, Բ, ր:

³³ Խորենացի, Բ, ր, Բ, խ:

³⁴ Նույն տեղում, Բ, խթ:

³⁵ Նույն տեղում, Բ, հէ:

³⁶ Նույն տեղում, Բ, խը:

³⁷ Մ.Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 42:

ուրեմն այստեղ ևս զոյություն է ունեցել նույնպիսի մի սրբավայր, նույնպիսի պաշտամունքով, ինչպիսիք որ կային Բագարանում: Դրա կողմնակի վկայությունն է Խորենացու վերոհիշյալ հաղորդումը, թե հետագայում Մասանյան Արտաշիրը ինչեր է փշրել, որը անմիջապես հաջորդում է Բագարանի բազիլի մասին հաղորդմանը: Ուշագրավ է Գ.Սարգսյանի կարծիքը հիշյալ վկայություններում արձան-կուռքերի և նրանց տեղափոխության վերաբերյալ: Ըստ նրա՝ դա կարող է ինչ-որ չափազանցություն լինել: Իսկ իրականում՝ դրանցում ներկայացված են եղել աստվածների և թագավորական աստվածացված նախնիների նույն խումբը կամ նույնատիպ խմբեր:³⁸

Օրոնտես-Երվանդին նույնացվող, Վաղարշակի կողմից կանոնավորված արմավիրյան դիցական գլխավոր եռյակի պաշտամունքը, հետագայում արտաքուստ հելլենականացմամբ և ներքին վերադասավորմամբ հանդերձ, հիմնականում պահպանվել էր նաև Արտաշես 1-ինի օրոք և անգամ Տրդատ 3-րդի (298-330թթ.) զահակալության առաջին տարիներին: Թե այդ եռյակի պաշտամունքն ինչքան խոր արմատներ էր նետել հայի կրոնական պատկերացումներում, վկայում են հետագա բազում դարերի իրողությունները: Ինչպես Գր.Ղափանցյանն է նկատում. «Հայոց մեջ ամենասիրված քրիստոնեական սրբերն էին Սարգիսը, Աստվածածինը և Կարապետը (Հովհաննես Սկրտիչը), որոնք արտապատկերումներն էին պատերազմի հեթանոսական աստծու (Սարգիսը), աստվածների մեծ մոր (Աստվածածինը...) և Վահագնի (Կարապետը)»:³⁹

ГЛАВНАЯ БОЖЕСТВЕННАЯ ТРИАДА ЕРВАНДИДСКОЙ И АРТАШЕСИДСКОЙ АРМЕНИИ

___ Резюме ___

___ Л. Петросян ___

В древней Армении в эпоху Ервандидов и Арташесидов широкое распространение имел культ той триады, которая возглавляла эллинистическо-языческий пантеон государства. Социальное деление главной триады государственного пантеона Ервандидов обнаруживает тесное соотношение с социальной структурой древнеармянского общества, которое состояло из сословий воинов, производителей и жрецов. До религиозной реформы царя Арташеса I (189-160 гг. до н.э.) покровителем сословия воинов считали бога Громовержца (Арамазд), покровительницей сословия производителей – Мать богов (Анаит), а покровителем сословия жрецов – бога Солнца (Ваагн). Во главе государственного пантеона Арташес I хотя и оставил Арамазда, но лишил его воинских полномочий, которые передал Вахагну - династическому богу Арташесидов, кто стал покровителем сословий воинов и богом Войны. Село Аштишат, где был возведен идол Ваагну, Арташес I отнял у жреческого рода Вауни, представители которого считали себя потомками Ваагна. Оно стало частью домена Арташесидов. Род Вауни лишился также должности главного жреца.

³⁸ Գ.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 45:

³⁹ Գր.Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 324, ծան. 1:

ՊԱՏՄԱԿԱՆՆ ՈՒ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆԸ
ՎԱՐԴԳԵՍ ՄԱՆՈՒԿԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՅՈՒՄ

Վարդգես Մանուկն ու իր հիմնադրած Վարդգեսավան բնակավայրը հիշատակված են պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» այն հատվածում, ուր խոսվում է Հայոց Վաղարշ թագավորի ծավալած շինարարության և Վաղարշապատի մասին: Նա գրում է. «Մա պատեաց պարսպաւ եւ զհօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ. գորմէ յառասպելն ասեն.

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն

Ի Տոհաց գաւառէն, գՔասաղ գետով,

Եկեալ նստաւ զՇրէշ բլրով,

զԱրտիմէդ քաղաքաւ, գՔասաղ գետով,

Կռել կռփել զդուռնն Երուանդայ արքայի:

Այս Երուանդ՝ առաջինն է, Սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ զքոյրն կին առեալ Վարդգէսի շինեաց գաւանս զայս»¹:

Բերված հատվածից պարզվում է, որ ապագա Վաղարշապատի տարածքում զոյություն ունեցած Վարդգեսավան բնակավայրը՝ «հօր աւանն Վարդգէսի», ունեցել է իր նախորդը՝ «Արտիմէդ քաղաք»-ը: Մի պահ կարող է թվալ, որ խոսքը քարաշեն պարիսպով պատված իսկական քաղաքի մասին է: Բայց եթե Արտիմէդը այդպիսին է եղել, ապա նրա հետևորդ Վարդգեսավանը ինչո՞ւ ոչ թե քաղաք, այլ *աւան* է կոչվել, իսկ եթե Արտիմէդ-Վարդգեսավանի քարաշեն պարիսպը կար, ապա Վաղարշ թագավորը ինչո՞ւ էր պարսպապատել բնակավայրը և այն վերանվանել *Վաղարշապատ*: Կարծում ենք, որ գործ ունենք տարբեր որակի՝ փայտաշեն և քարաշեն պարիսպների հետ: Արտիմէդն ունեցել է, ըստ երևույթին, փայտաշեն և արդեն իր դարն ապրած պարիսպ, որը Վաղարշ թագավորի (հավանաբար, Վաղարշ I-ի՝ 117-140-ական թթ.) կողմից փոխարինվել էր քարաշեն պարսպով: Եթե Շրէշ բլրի վրա գտնված Արտիմէդ-Վարդգեսավանը առհասարակ անպարիսպ լիներ, ապա պատմահայրը այն կկոչեր պարզապես «աւանն Վարդգէսի», այլ ոչ թե «հօր աւանն Վարդգէսի»:

Հայտնի է, որ հնագույն բնակավայրերը կառուցվում էին բարձունքների վրա, ուստի «զիտենք, որ «քաղաք» նշանակող բառերը բուն «բարձունք կամ ամրություն» նշանակությունն ունեն»²: Հմնտ. հնդեվրոպական նախալեզվի միևնույն արմատից ծագած ազգակից լեզուների այն բառերը, որոնց մի մասը «բարձունք» է նշանակում, իսկ մյուս մասը՝ «քաղաք» (օրինակ, հայ. *բարձունք*, *բարձրավանդակ*, հին գերմ. *bërg* «լեռ», բայց նույն այդ լեզվում *burg* «քաղաք»)՝³: Նույն կերպ, Շրէշ բլրի վրա գտնված հնագույն բնակավայրը *Արտիմէդ* անունը կարող էր կրել ինչպես բարձունքի վրա գտնվելու, այնպես էլ փայտաշեն պարիսպ ունենալու պատճառով: Դա ապացուցվում է *Արտիմէդ* տեղանվան ստուգաբանությամբ: Առաջին հայացքից կարող է թվալ, թե *Արտիմէդ* տեղանունն առնչվում է հունական *Արտեմիս/Արտեմիդա* դիցուհու անվանը: Սակայն, քանի որ այն շատ ավելի վաղ ժամանակներում է ստեղծվել, քան հելլենիզմի դարաշրջանը, ապա նրա ստուգաբանությունը պահանջում է հայոց լեզվի հնագույն ժամանակաշրջանի բառապաշարի վերհանում:

¹ Մովսիսի Խորենացույ Պատմութիւն Հայոց. Եր., 1981, Բ, կէ:

² Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. IV, Եր., 1979, էջ 542:

³ ՀԱԲ, հ. I, Եր., 1971, էջ 413-414:

Արտիմեդ <*արտի-մեդ տեղանվան առաջին բաղադրիչը նույնական է Վանա լճի *Արտի* կղզու անվանը, իսկ դրանց *արտ-* հիմքը առկա է նաև սեպագրային Ardini քաղաքի անվան (Մուծածիթի լեռնային քաղաքաբանիստն էր), արաբական աղբյուրներին հայտնի Սասուն-Խուրթի լեռնցիների artan (արաբերեն՝ al-artan) անվան և հայերեն *արտեան* «լեռան գագաթ» բառի մեջ: *Արտիմեդ* տեղանվան *արտի* բաղադրիչի և *Արտի* կղզանվան մեջ հիմքային *արտ-ին կցորդված է *-ի* վերջածանցը, Ard-ini տեղանվան մեջ *-ին* կամ *-նի*, իսկ artan անվան մեջ *-ան* վերջածանցները: *Արտեան* < արտ-եան բառի կազմության տեսանկյունից հմմտ. *երկեան, իջեան, հոտեան, օթեան* բառերի համապատասխան մասերը: **Արտ-* արմատի, նրանով կազմված *Արտի-մեդ* տեղանվան առաջին բաղադրիչի, *Արտի* կղզանվան զուգահեռներին կարելի է հանդիպել նաև հնդեվրոպական այլ լեզուներում. հմմտ. հին հնդկ. adri- «սար, ժայռ» և իլյուր. adri « ժայռ, խութ» բառերը:⁴ Այս առթիվ պետք է ի նկատի առնել ինչպես հ.-ե. d>հայ. տ հնչյունափոխությունը, այնպես էլ հայերենին բնորոշ հ.-ե. -dr->հայ. -րտ դրափոխությունը (հմմտ. *արտի/արտիկ, արտորալ, արտօսը*): Այսպիսով, Շրեշ բլուրի վրա կառուցված *Արտիմեդ* տեղանվան *արտի-* բաղադրիչը նշանակել է «բլուր, բարձունք» (թերևս նաև «լեռ, խութ, կղզի»):

Արտի-մեդ բաղադրիչներից բաղկացած տեղանվան երկրորդ բաղադրիչը՝ *մեդ-ը*, ևս հնդեվրոպական-հայկական ծագում ունի: Մենք այն համարում ենք *մոյթ* «մույթ, նեցուկ, հենարան, մի բան հաստատ պահելու համար տակը դրված *ցից*» բառի արմատակիցը: *Մոյթ-ը* ծագում է հ.-ե. *meuthi- նախաձևից, որի հիմքում հ.-ե. *mei- «ցից տնկել, ցցով ամրացնել» արմատն է:⁵ Այս նույն արմատից են ծագում ազգակից լեզուների հետևյալ բառերը. հին հնդկ. methi «մույթ, ցից», mita «հաստատված», mit «տնկած ցից», լատին. meta «սահման, ծայր», muno «պարսպել, պատ քաշել», murus «պատ», լիտվ. miėtas, լատիշ. miets «ցանկապատի ցից» և այլն:⁶ *Արտիմեդ* տեղանվան դեպքում, բնականաբար ի նկատի ենք առնելու հնդեվրոպական ծագումով *մեդ* բաղադրիչի ոչ թե «ցից» նշանակությունը, որն արդեն իսկ ուներ *մոյթ* արմատակից բառը, այլ այնպիսի մի ընդգրկում նշանակություն, որպիսիք ունեին իրենց հնդեվրոպական ազգակիցներից լատիներեն murus «պատ» և muno «պարսպել, պատ քաշել» բառերը: Ըստ այսմ, *Արտիմեդ* տեղանվան իմաստը լինելու էր «ցցապատնեշ ունեցող բլուր, փայտաշեն պարիսպով բնակավայր»: Այդպիսին էր լինելու Շրեշ բլրի վրա կառուցված նախնական բնակավայրը, որի հետևորդ Վարդգեսավանի հիմնադրումը ժողովուրդը վերագրել էր առասպելաբանական-վիպական Վարդգես Մանուկին:

Հայոց հին բանահյուսության այս կերպարի սերտ առնչությունը Քասաղ գետի հետ, իր անվան *Վարդ-* (<*վարդ < հ.-ե. *ued- «ջուր, գետ») բաղադրիչը և անվանը կից *մանուկ* մակդիրը հուշում են, որ նա ըմբռնվել է այնպիսի մի թուխմանուկ՝ ջրային պաշտելի ոգի, ինչպիսիք ավելի վաղ ըմբռնվել են նաև Սևանա լճին առնչված *Վեդուրը (*Վեդ-ուր* հմմտ. հ.-ե. *ued- «ջուր, գետ» և *ուր «որդի»), որի անունից է առաջացել սեպագրային *Վերդուրի-Էթիունի* մերձսևանյան ցեղամիության անունը, և Ախուրյան գետին առնչված *Ախուրը (*Ախ-ուր* հմմտ. հ.-ե. *ak^u- «ջուր» և *ուր «որդի»), որի անու-

⁴ Գ.Ջահուկյան, *Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները*, Եր., 1970, էջ 13, ծան. 8: Ս. Պետրոսյան, «Շարայի ցեղամիությունը» *Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում* (մ.թ.ա VI-V դդ.), *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1979, թիվ 12, էջ 71, ծան. 42:

⁵ *ՀԱԲ*, հ. III, Եր., 1977, էջ 343:

⁶ *Նույնը*:

նից ունենք *Ախուրեան* գետանունը և սեպագրային *Ախուրիանի* բնակավայրի անունը:⁷ Հայոց պաշտելի այս ոգիները ազգակիցներն են եղել հին իրանցիների և հին հնդկների *Ասյամ-Նասպատ* կոչված (բառացի՝ «ջրերի գավակ») աստվածությունները: Դեռևս բնապաշտական հեռավոր ժամանակներում սկիզբ առած ջրային ոգիների պաշտամունքը մեր հավատալիքներում հարատևած լինելու մասին Մ.Արեղյանը գրում է. «Շատ աղբյուրներ, հատկապես գետեր ու լճեր համարվում են բնակատեղիներ առասպելական մարդակերպ և կենդանակերպ էակների, որոնք ունեն հրեղեն բնույթ և *հրեղեն* էլ կոչվում են»:⁸ Այդ հրեղեն էակները մաս լուսեղեն են համարվել և *լուսեղեն* կոչվել: Հայ ժողովրդական հեքիաթներից մեկում «հուրնիկ *հրեղեն*» աղջիկը⁹ իր ապագա փեսացուին ասում է. «Չը լսե՞ր իս, ընձի *Լուսեղեն* կրսին, ես Ջրերու թագավորի աղջիկն իմ, հրտ իմ մամուն ու պապուն կը բնակոյիմ մըջ յաղբրական»:¹⁰

Ջրային ոգիների հրեղեն-լուսեղեն ըմբռնումը ի նկատի առնելով՝ փորձենք ստուգաբանել Վարդգես Մանուկի հայրենի եզերքի և նրա բնակիչների անունները: Հնդեվրոպական մախալեզուն ուներ *dei- «փայլել, լուսավորել» արմատը, որի *diu- ածանցյալից է ծագում մեր լեզվի *տիւ* «օր, օրվա լուսավոր մասը» բառը: Նույն *dei- արմատից -ey մասնիկով ստեղծվել էին *deieyo «լուսավոր», իսկ -yo մասնիկով՝ *deiyos «աստված, երկինք» բառերը: Այս արմատին հանգող բառերից են. հին հնդկ. divyn «երկնային», devá «աստված», ավեստ. daēvō «ղև», հուն. Διός/Ζεύς «Չևս», լատին. deus «աստված» և այլն:¹¹ Սրանց արմատակիցներն են ոչ միայն մեր *Տիւր* (<*տիւ-ր)¹² դիցանունը՝ մտավոր և հոգևորփու լույսն անձնավորած աստծու անունը, այլև *տիւ (<*deieyo) բառը՝ որպես լուսեղեն էակներին տրված ընդհանրական անուն: Վերջինս պետք է տարբերել արմատակից և նույնահնչյուն *տիւ* «օր» (<*diu-) բառից: Լուսեղեն էակների *տիւ անվանումը ուղղական հոլովի հոգնակի թվով կունենար *տիւք, իսկ սեռականի հոգնակի թվով՝ *տուաց տեսքը (հմմտ. *տիւ* «օր», որից՝ *տուրնջեան*, և *Սստուած* <*աս-տիւ-ած): Իսկ *տուաց > *Տուաց*՝ *հ* հնչյունի հավելումով՝ այնպես, ինչպես *գիհի* բառի մեջ: Ըստ Հ.Աճառյանի՝ մախնական *գի-ն «ստանալով ծառ կամ բույս նշանակող *ի* մասնիկը, դարձել է *գիհ, ուր հորանջի պատճառով ներմուծելով *հ*, ստացվել է *գիհի*»:¹³ Ուրեմն, *տիւք՝ նշանակում է «լուսեղեններ», *տուաց՝ «լուսեղենների», իսկ *Տուաց գաւառ*՝ «Լուսեղեն էակների գավառ»:

Տուաց գավառը տեղորոշվել է Քասաղ գետի ավազանում, որովհետև Վարդգես Մանուկը այս գետով էր հասել Արտիմեդ: Քասաղի վտակներից մի քանիսն սկիզբ են առնում Արագած սրբազան լեռան լանջերից: Որ այս լեռը սրբազան է համարվել թե՛ բնապաշտ, թե՛ հեթանոս, թե՛ քրիստոնյա հայերի կողմից, պարզում է հայոց հին տոմարը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա 20-րդ օրը ձոնված էր այս լեռան պաշտամունքին, ուստի և կրում էր *Արագած* անունը: Արագածի՝ սրբազան լույսի աղբյուր համարվելու փաստն են արձանագրել ինչպես նրան առնչվող Լուսավորչի մշտավառ կանթեղի մասին ավանդագրույցը, այնպես էլ լեռանը կից գավառի *Նիգ* (Նիգատուն) անունը: Հմմտ. *նիգ* բառը, որը նշանակում է մաս «ձողաձև կամ գերանաձև լույս, որ երևում է

⁷ Մ. Պետրոսյան, Մ. Պետրոսյան, Լ. Պետրոսյան, «Ջրերի գավակի» պաշտամունքի արտացոլումը սեպագրային մի քանի տեղանուններում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», պրակ I, Գյումրի, 1998, էջ 78-80:

⁸ Մ. Արեղյան, Երկեր, հ. VII, Եր., 1975, էջ 82-83:

⁹ Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. X, Եր., 1967, էջ 20:

¹⁰ Նույն տեղում, էջ 17:

¹¹ ՀԱԲ, հ. IV, էջ 410:

¹² Բ. Աղայան, Ակնարկներ հայոց տոմարների պատմության, Եր., 1986, էջ 61 – 62:

¹³ ՀԱԲ, հ. IV, էջ 627:

ամպերում»:¹⁴ Սրանցից բացի, Վարդգես Մանուկի հայրենիք տանող ճանապարհն է ցույց տալիս նաև Քասաղ գետի՝ Արագածից սկիզբ առնող Շաղվարդ վտակը:¹⁵ Գր.Ղափանցյանը *Շաղվարդ/Շաղվերդ* գետանվան *վարդ*-**վաղր* բաղադրիչը նույնն է համարում *Եղվարդ*, *Թաղավարդ* տեղանունների և *Վարդաւառ* տոնանվան համահունչ բաղադրիչների հետ՝ խեթերենի հետևությանը դրանց վերագրելով «ջուր» նշանակությունը:¹⁶

Այդ նույն բաղադրիչն ունեն նաև *Վարդամարզ* (<*վաղր-ա-մարզ) գետանունը, *Նուարդ* (<*նու-վաղր) և *Վարդգես* (<*վաղր-գես) դիցանունները:¹⁷ Վերջինս ջրերի պաշտամունքին է առնչվում ոչ միայն իր առաջին՝ *Վարդ*-, այլև երկրորդ՝ *գես*, բաղադրիչով: Այն նույնն է լինելու, ինչ *Գիսանէ* դիցանվան *Գիս*- < *գես* բաղադրիչը (Գիսանեի պաշտամունքի վայրն հայտնի էր *Իննակնեան*՝ «ինն ակունք ունեցող» անունով): Եթե *Շաղվարդ* գետանվան *վարդ*-**վաղր* բաղադրիչն առնչվում է Վարդգես Մանուկի ջրային բնույթին, ապա իր *շաղ* բաղադրիչով էլ գետանունը, մեր կարծիքով, պետք է, որ առնչվի նրա լուսեղեն էությանը: Հայերեն շող «արևի ճառագայթ, նշույլ, ցուր», «լուսավոր, փայլուն» բառը¹⁸ ունեցել է իր *շաղ* տարբերակը, որի երբեմնի գոյության մասին են խոսում *շաղաղ* «շողացող, փայլուն, պսպղուն»,¹⁹ *շաղաւար* «եթեր կամ եթերային մասերից մեկը» և *շաղաւարիլ* «լուսնի կամ աստղերի շարժվելը» բառերը:²⁰ *Շող*-ի ձայնադարձով *շաղ* տարբերակն էլ, ամենայն հավանականությամբ, դարձել է առաջին բաղադրիչը *Շաղավարդ* (<*շաղ-վաղր) գետանվան, որն այսպիսով նշանակել է «լուսավոր ջուր, լուսե գետ»: Հմմտ. հայոց ուշ հավատալիքների սրբազան աղբյուրների *լուսաղբյուր* անվանումը և այդպիսիք ունեցող տեղանքի ու բնակավայրերի *Լուսաղբյուր* անունները:

Անկասկած, բուն առասպելում Վարդգես Մանուկն ընկալվել է այնպիսի մի ձկնամարդ (մարդաձուկ), ինչպիսիք, հայոց հավատալիքների համաձայն, բնակվում էին մեր լեռնաշխարհի առանձին գետերում և լճերում: Արարատյան դաշտում, Էջմիածնի շրջանում գտնվող Մեծամոր (Ակնա, Այդր) լճի²¹ վերաբերյալ պատմում էին, որ «Այս լիճը լիքն է հրեղեն ձիերով, սպիտակ գոմեշներով, *մարդաձկներով* և ուրիշ կենդանիներով»:²² Իսկ Էջմիածինը նույն Վաղարշապատն է՝ Վարդգես Մանուկի հիմնադրած Վարդգեսավանը («առանն Վարդգեսի»): Վարդգես Մանուկն իր ջրային բնույթով և լուսեղեն էությանը նաև հայ ժողովրդական մի շարք հեքիաթներից հայտնի ձկնամարդու գուգահեռ կերպարն է: Հեքիաթային այս կերպարը նախ ձուկ է, ապա լուսերես մի պատանի կամ երիտասարդ, որն իր մերաշխարհային բարի գործերն ավարտելուց հետո վերադառնում է դառնում և խորասուզվում իր հարազատ տարերքը:

Սրանց ընդհանուր առասպելաբանական հենքը եղել է ձկնամարդ առասպելաբանական էակի և նրա իրական նախատիպ ձկան տոտեմական պաշտամունքը՝ իր նյութական արտահայտությունը գտած ի դեմս վաղ էթիունյան «վիշապ» կոչված

¹⁴ ՀԱԲ, հ. III, էջ 450:

¹⁵ Ա. Ասլանյան, Հ. Գրգեարյան, Հայկական ՍՍՀ աշխարհագրական անունների համառոտ բառարան, Եր., 1981, էջ 149:

¹⁶ Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Եր., 1961, էջ 152; Գր. Կանաչյան, *Историко-лингвистические работы к начальной истории армян*, Եր., 1956, стр. 287-288.

¹⁷ Ս. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 71- 72:

¹⁸ ՀԱԲ, հ. III, էջ 529:

¹⁹ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. III, Եր., 1944, էջ 495:

²⁰ ՀԱԲ, հ. III, էջ 489:

²¹ Ա. Ասլանյան, Հ. Գրգեարյան, նշվ. աշխ., էջ 22:

²² Ա. Ղանալանյան, *Ավանդապատում*, Եր., 1969, էջ 79:

ձկնակերպ քարակոթողների: Վարդգես Մանուկի նախատիպ ձկնամարդ աստվածության պաշտամունքի նյութերն արտահայտությունները մասնավորապես լինելու են Արագածի ձկնակերպ քարակոթողները: Ի տարբերություն իր գուգահեռ կերպարների՝ մյուս ձկնամարդ էակների, Երվանդունյաց արքայադստեր նկատմամբ տաճած սիրո պատճառով առասպելական-վիպական Վարդգես Մանուկն իր հարազատ ջրային միջավայր չէր վերադարձել, այլ «հատուած գնացեալ» (ըստ երևույթին, մահ մահկանացու դարձած) ամուսնացել էր արքայադստեր հետ և, ժողովրդի պատկերացմամբ՝ որպես իրենց սիրո առհավատչյա, Քասաղ գետի ափին կառուցել էր Վարդգեսավանը:

ОБ ИСТОРИЧЕСКОМ И МИФОЛОГИЧЕСКОМ В ЛЕГЕНДЕ ВАРДГЕС-МАНУКА

___ Резюме ___

___ С. Петросян ___

В недрах общиндоевропейской мифологии зарождались образы индоиранского божества Апам-Напам (дословно – “сын вод, отпрыск вод”) и древнейшего армянского божества “сын воды”. В разных районах Армянского нагорья “сын воды” носил разные имена. В бассейне реки Ахурян он назывался *Ahur. От этого теонима происходят потамоним *Ахурян* (Ախուրեան) и клинописный урбоним *Ahuriani*. В бассейне озера Севан “сын воды” назывался *Uedur. От этого теонима происходят клинописный этноним *Ueduri* и хороним *Ueduri-Etiuni*. По древнеармянским эпическим сказаниям, Вардгес-Манук является основателем Вардгесавана (впоследствии – город Вагаршапат) у реки Касах. Прототип эпического Вардгес-Манука также божество, связанное с водой. Вероятно, *Вардгес* (Վարդգես) один из вариантов имени “сына воды”. Компонент *Вард* в теониме *Вард-гес* одного происхождения как с компонентом *вард* в потамониме *Шагвард* (Շաղ-վարդ приток Касаха), так и с компонентом *Вард* в имени праздника *Вардавар* (Վարդ-ա-վար). В основе этих компонентов лежит слово индоевропейского происхождения *вард<*uadr- “вода, река”.

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ՔՈՒՌԱՐԱՔՍՅԱՆ ՄԻ ԿԱՐԱՍԻ ՁԱՐԴԱԳՈՏՈՒ ՄԻՄՎՈԼԻԿԱՅԻ ՇՈՒՐՁ

Մեծ Մեպասարում իրականացված գայլերի զոհաբերության մ.թ.ա. XVIII-XVI դդ. թվագրվող ծեսից պահպանված նյութական մնացորդները հնագիտական եզակի փաստեր են հնդեվրոպական ցեղերի հոգևոր մշակույթի՝ հավատալիքների, պաշտամունքի և ծեսերի ուսումնասիրման համար: Խտթական գրավոր աղբյուրների, հնդեվրոպական ժողովուրդների հավատալիքների զուգադրումները ցույց են տալիս, որ *Šintas huitar՝ աստվածների կենդանի* գայլի զոհաբերությունը կատարվել է զարմանը և խորհրդանշել է հին տարվա ավարտն ու նոր տարվա սկիզբը, այսինքն՝ տիեզերական կարգուկանոնի վերականգնմանը նվիրված ծիսակարգի կարևոր տարրերից է¹:

Հայտնաբերված ծիսական խեցեղենը հիմնականում ներկայանում է վարդագույն աստառ և սև փայլեցված արտաքին ունեցող անոթներով²: Գայլերի զոհաբերության ծեսի նյութական մնացորդների հետ հայտնաբերվեց նաև բերանքսիվայր դիրքով մի կարաս, որի տակ վեց ամբողջական գավաթներ էին: Տափակ նստուկով, փքուն իրանով, բարձր վզով, շուրթն իրանին միացնող հակադիր գույգ ունկերով կարասը բարձրորակ է, պատրաստված է ձեռքով և լավ թրծված է: Անոթը եռամաս է, ծեփվել է կավի երեք լայն ժապավեններից՝ ձևավորելով նստուկը, ապա իրանը և վիզը՝ շուրթերով: Կարասը զարդանախշված է միայն մի կողմում՝ ունկից ունկ ընկած հատվածում: Նախշերն արված են միջին գոտու վերին մասում: Անոթի վիզն իրանից բաժանող հատվածով անցնում է գծազարդերի նեղ ժապավեն: Չարդանախշերը, որ արվել են թաց կավի վրա, լայնակոս են, ռելիեֆ, ռելիեֆ-ներձկված, ներձկված և գծային: Չարդագոտու առանցքը՝ զուգահեռ գծերի միջև ընկած հատվածը, մանր օղակներով մի մեծ զիզգագ է, որը աջ կողմում նեղ է, այնուհետև աստիճանաբար լայնանում է և ավարտվում զուգահեռ վեց գծերով՝ ձևավորելով վիշապի փոքր-ինչ և ետ ընկած, կարծես երախը լայն բացած գլուխը: Զիզգագի յուրաքանչյուր անկյան մեջ խորհրդանշական նշաններ են: Չևավորված տասը անկյուններից ինը լրացված են տարբեր նախշերով, իսկ առաջին անկյունն ազատ է թողնված: Նշված դաշտերում արված պատկերների մեջ հատակ են պարույրները, ոճավորված թռչունները և խոյի եղջյուրները: Անկյուններից վեցում խորհրդանշանները մի քանիսն են, իսկ երեքում միայն մեկական պարույր է: Մի խորհրդանշան նաև աջից առաջին դաշտում է, որտեղ միավորված են պարույրն ու թռչնազարդը: Չարդագոտու կենտրոնական պատկերի աջ և ձախ թևերում պտույտով իրար հակադիր մեկական պարույր է:

Քննարկվող կարասը զոհաբերության ծեսի նյութական մնացորդներից է, և ինչպես ձևը, այնպես էլ զարդագոտու խորհրդանշանները կարևոր են նույն այդ ծեսի տարրերի բացահայտման համար:

¹ Տե՛ս **Լ. Եգանյան**, Գայլերի զոհաբերության ծեսը. Յոթի խորհրդանշական դերը Մեծ Մեպասարում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր., 2010, էջ 33-41: Նույնի՝ Жертвоприношения волков в раннебронзовом Мец Сепасаре, Международная научная конференция "Археология, этнология и фольклористика Кавказа", Сборник кратких содержания докладов, Тбилиси, 2011, стр. 119.

² **Լ. Եգանյան**, Մեծ Մեպասարի վաղբրոնզիդարյան հուշարձանի պեղումները, ՇՊՄԺ հանրապետական վեցերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2004, էջ 8: Նույնի, Մեծ Մեպասարի մ.թ.ա. III հազարամյակի բնակավայրերը (պեղումների նախնական արդյունքներ), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 8, 2005, էջ 5-21:

Ըստ խեթական տախտակներում պահպանված «*թագավորական*» ծեսերի նկարագրությունների՝ որոշ աստվածություններ նույնացվում էին անոթին³: Կելտական հավատալիքներում պտղաբերության կամ բերքատվության շտեմարան էր համարվում առասպելական «*cauldron-ը՝ աշխարհի մոր անոթը*»⁴: Հնդկաստանում այժմ էլ անոթը զուգադրվում է կանացի սկզբի հետ⁵: Հայոց պատկերացումներում անոթի և Մեծ մոր զուգադրման մասին վկայում են ինչպես հնագիտական և ազգագրական կանացիակերպ աղանանները, այնպես էլ XX դարի սկզբներին Հայաստանի որոշ շրջաններում դեռևս պահպանվող, թրծված, բայց չօգտագործված կճուճը կնոջ երկունքի հովանավոր համարելու հավատալիքը: Մառնադրյուրում «թղալի» համարվող կնոջ ծննդաբերությունը տեղի էր ունենում գլխատան հատակի մեջ թաղված կճուճի վրա, որի շուրջը լողոլող՝ գետնի մեջ, չարահալած գամեր էին խրված⁶:

Հավատալիքների զուգադրումները ցույց են տալիս, որ եռամաս անոթը դիտվել է Համաշխարհային ծառ կամ *Տիեզերական սյուն*, իսկ զարդագոտին մարդկանց և կենդանիներին հատկացված *Միջին աշխարհի* տիրույթում է: Չարդագոտին անոթի միջին գոտում պատկերելը հնդեվրոպական պատկերացումների արտացոլումն է, իսկ խորհրդանշաններն արդյոք գայլերի զոհաբերության ծեսի բովանդակությունն են արտահայտել:

Խորհրդանշանը գաղտնագիր է կամ ծածկագիր, տեղեկատվություն, որ առաջին հերթին հավանաբար ստեղծվել է որպես հաղորդակցման միջոց և ունեցել է հոգևոր արժեքները միասնական պատկերի ձևով փոխանցելու նպատակ: Յուրաքանչյուր խորհրդանշան ամփոփում է պաշտամունքի թանձր քողով պարուրված և գաղտնագրված որոշակի միտք: Վերծանել խորհրդանշանը նշանակում է բացահայտել պատկերի տակ թաքնված կամ գաղտնագրված իմաստը: Նույն խորհրդանշանը կարող է ունենալ տարբեր կիրառություն, նաև ինչպես ծածուկ (եզոթերիկ), այնպես էլ հրապարակային (եկզոթերիկ) բնույթ: Թեև խորհրդանշանների ընկալումը նաև ինչ-որ չափով անհատական է, սակայն դրանց վերծանման և մեկնաբանման համար անհրաժեշտ բազմաբնույթ նյութերի՝ հավատալիքների, սովորույթների, ծեսերի համադրումները կարող են որոշակի ընդհանրական պատկեր տալ:

Որպես հետևանք՝ տնտեսական և հասարակական կյանքի դանդաղ զարգացման կայուն և հաստատուն են մնացել ծեսերը, հավատալիքներն ու սովորույթները, որոնք, կատարվող գործողություններին ուղեկցելով, բանավոր ձևով փոխանցվել են սերնդեսերունդ: Այդ կայունությունն էլ թույլ է տալիս մեզ հասած բանագիտական նյութերի, սովորույթների և ծեսերի օգնությամբ փորձել բացահայտել այն նախնական իմաստը, որ արտահայտվել է դրանցում:

Չիզգագ-գալարը: Կարասի զարդագոտու կենտրոնական նախշն է (տախտ. 1, նկ. 1): Կարասի վզի տակ և տարբեր չափերի խառնիխառն զիզգագներ են արված:

Փաստերը ցույց են տալիս, որ Առաջավոր Ասիայում, Կովկասում և Եվրոպայում, սկսած նեոլիթից մինչև մեր օրերը, զիզգագը՝ որպես գրաֆիկական պատկեր, ունեցել է որոշակի իմաստ. այն խորհրդանշել է օձ կամ ջուր, ընդ որում, այդ երկու խորհրդանշներն էլ փոխկապակցված են: Չիզգագ-գալարը օձի իրատեսական պատկերի խիստ ոճավորման հետևանք է և տարբեր ժողովուրդների հավատալիքներում ներկայացնում է ջուր-օձ-վիշապ դիցաբանական կապը: Գալարը՝ որպես դրույթ (գրաֆեմա), հայտնի է տարբեր մշակույթներից և, սկսած պալեոլիթից, բնորոշ է բոլոր դարաշրջաններին:

³ В. Ардзинба, Ритуалы и мифы древней Анатолии, М., 1982, стр. 63.

⁴ А. Голан, Миф и символ, М., 1992, стр. 13.

⁵ Նույնը:

⁶ Վ. Բրդյան, Հայկական աղանանդներ, Եր., 1986, էջ 60:

Գալարն օձի իմաստաբանական պատկերն է, պարույրը՝ սխեմատիկ: Հաճախ զիզգագը, գալարը կամ պարույրը կարող են պատկերվել նաև այլ նախշերի հետ: Այսպիսի մի խորհրդանշան քննարկվող իրի վրա ներկայացնում է թռչնի և պարույրի զուգակցումը (տախտ. 1, նկ. 5):

Օձի և ջրի դիցաբանական կապվածության մասին է վկայում հին հնդկական առասպելաբանության մեջ գետի առաջացման մասին առասպելը. Ինդրան, հաղթելով Վրիթրու օձին, ազատում է ջրերը, որոնք վերջինս պահում էր կալանքի տակ⁷:

Հայաստանի «վիշապներ» կոչվող, հարթաքանդակ մակերես ունեցող և հարուստ պատկերներով պաշտամունքային կոթողները «... վերաբերում են ջրի մի աստվածության պաշտամունքի»⁸: Վիշապների պատկերազարդումներում արտացոլված դիցաբանական հնագույն ընկալումների վկայություն են ցույլ բերանից հոսող ջուրը⁹ կամ ջուր խորհրդանշող ալիքավոր գծերի հետ պատկերված օձը¹⁰: Վիշապների վրա տարբեր կենդանիների (ցուլ, թռչուն, օձ) պատկերները խորհրդանշորեն ներկայացնում են վիշապի և այդ կենդանիների կապը՝ առասպելաբանական մակարդակում ըստ յուրաքանչյուրի ունեցած պաշտամունքային դերի և նշանակության: Չարդագոտու գլխավոր ֆիգուրի հետ կապված են մյուս սիմվոլիկ նշանները:

Խոյանախշը: Չարդագոտու վրա խոյը ներկայացված է կենդանու գլուխը խորհրդանշող, դեպի ներս հակված ոլորում զույգ եղջյուրների ոճավորված պատկերով (տախտ. 1, նկ. 3): Քուռարաքայան մշակույթի հուշարձանների նյութերում խոյազուլիս են պայտածև պատվանդանները, խոյի ոճավորված գլխի ձև ունեն կարասների ունկերը, իսկ անոթների նախշազարդումների մեջ խոյի խորհրդանշական պատկերը ներկայացված է ոճավորված եղջյուրներով:

Հնդեվրոպական դիցաբանության մեջ խոյը «աստվածության կառքին» լծված կենդանի է¹¹: Խոյը համարվում էր հին հնդկական Ագնի աստվածության մարմնավորումներից մեկը¹²: «Էդդայում» ամպրոպի աստված Թորը շրջագայում էր երկու խոյերով լծված կառքով, սլավոնական առասպելական կերպարները նստում են խոյի վրա, և հատկապես հին հնդկական սովորույթներում խոյերը՝ որպես աստվածներին տեղափոխող միջոց, հավասարեցվում են ձիերին¹³:

Խոյը հիշատակվում է զարմանալի ծեսերում՝ բուսականության աստվածության հարության կրոնադիցաբանական գաղափարի առնչությամբ: Գարմանալի օրահավասարից երկու շաբաթ հետո ողջ Եգիպտոսը ցնծում էր ուրախությունից, որ եկել է Խոյի տիրապետությունը: Ժողովուրդը կենդանուն զարդարում էր ծաղիկներով և հանդիսավորությամբ տանում թափորի հետ¹⁴: Մեռնող և հառնող Օսիրիսը Հին Եգիպտոսում հաճախ մարմնավորվում էր խոյի կերպարում և երբեմն նույնացվում էր արևի աստված Ամոնին և հոգեհանգստյան տեքստերում հիշատակվում էր կան Օսիրիս, կան Ամոն¹⁵: Ամոնի սրբազան կենդանին խոյն է, որը պատկերվում էր մարդու տեսքով, երբեմն՝ ոչխարի գլխով¹⁶: Խոյի պաշտամունքը կապված էր նաև նախնիների պաշտա-

⁷ В.Топоров, Индра, Мифы народов мира (այսուհետև՝ МНМ), Энциклопедия, т.1, М., 1991, стр. 533.

⁸ Մ. Արեղյան, Երկեր, հ.Է, Եր., 1975, էջ 165:

⁹ Նույն տեղում, նկ. 7, էջ 175:

¹⁰ Նույն տեղում, նկ. 2, էջ 172:

¹¹ Т.Гамкрелидзе, Вяч.Иванов, նշվ. աշխ., էջ 586:

¹² А.Голан, նշվ. աշխ., էջ 64:

¹³ Т.Гамкрелидзе, Вяч.Иванов, նշվ. աշխ., էջ 586:

¹⁴ А.Голан, նշվ. աշխ., էջ 65:

¹⁵ М.Коростовцев, Религия Древнего Египта, М., 1976, стр.21; А.Голан, նշվ. աշխ., էջ 66:

¹⁶ Э.Кормышева(Миньковская), Амон, МНМ, 1991, стр. 70.

մուցքի հետ¹⁷: Սասնա կիսաստված դյուցազունները կոչվում են նաև «Խոյ» ընդհանուր մակդիրով, որը, ըստ Հ.Մարտիրոսյանի, «կապ ունի ոչ այնքան սերնդի հարատևման, որքան կենդանականարի «Խոյ» համաստեղության հետ», հավանաբար Սասնա հերոսները «Խոյ», «Ցուլ», «Երկվորյակներ» համաստեղությունների միջոցով առնչվում էին «տիեզերական երևույթների և պտղաբերման գաղափարի հետ»¹⁸:

Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III հազարամյակում լայն տարածում է ստանում խոյի պաշտամունքը: Հնդեվրոպական պաշտամունքային համակարգում լեռների աստվածացումը, կապված անհաս երկնքին մոտ գտնվելու հետ, չէր կարող շրջանցել նաև լեռներում ապրող կենդանուն, որն իմաստավորելու էր պաշտամունքը, իսկ պատկերը դառնալու էր խորհրդանշի: Հայաստանի ժայռապատկերներում մ. թ. ա. III հազարամյակից սկսած խոյը ներկայացված է «մեծ շղթայի մեջ, արդեն նշանագրի ձևով»¹⁹ Բազմաթիվ ժայռանկարներում խոյի ամբողջական ֆիգուրը փոխարինված է նրա գլխով, որը, հետզհետե ոճավորվելով, նույն հիմքից ելնող, աջ և ձախ կեովող կիսաշրջաններով ձևավորում է կենդանու մոտիվ ու հզոր եղջյուրները: Ժայռապատկերներում և վաղբրոնզիդարյան նյութերում խոյը չի պատկերվում որպես որսի կենդանի: Ժայռապատկերներում հաճախ հանդիպող խոյանշանները «լուսատուների ամբողջ համաստեղության արժեք ունեն...և խոյը խորը նախնադարում ներկայացնում էր տիեզերական պաշտամունքի առարկա»²⁰: Վերջինիս փաստումն է նաև Քեթիից հայտնաբերված, մ.թ.ա. III հազարամյակի վերջերով թվագրվող, խոյազուլիս ունկերով քրեդան-օրացույցը²¹: Մ.թ.ա. IV-III հազարամյակներում գարնանային գիշերահավասարի ժամանակ արեգակը գտնվել է Ցուլ համաստեղությունում և մ.թ.ա. III հազարամյակի վերջերին մտել է Խոյ համաստեղություն²²:

Թռչնագաղղ: Կարասի զարդագոտու վրա ամենաշատ կրկնվող խորհրդանշանը ներկայացնում է թռչուն՝ պարույրի և խոյի նշանի համադրություններով (տախտ. 1, նկ. 4): Քուռարաքսյան խեցեղենի սիմվոլիկ նշանների մեջ հաճախ հանդիպող թռչունը հիմնականում երկարակտուց է, երկար ոտքերով և եռանկյունաձև իրանով:

Բոլոր ժողովուրդները թռչուններին համարել են աստվածային էակներ: Հնդեվրոպական ընդհանրության հոգևոր պատկերացումներում Համաշխարհային ծառի «Վերին» աշխարհը կամ ծառի սաղարթը հատկացված էր թռչունների²³: Թռչունի և օձ-վիշապի պայքարը իբրև հակամարտություն կամ «տիեզերական աղետի առասպել», ներկայացնող հնագույն դրվագներ հանդիպում են Գեղամա լեռների մ.թ.ա. III հազ. թվագրվող ժայռանկարներում, որտեղ գրեթե մշտապես պայքարն ավարտվում է թռչունի հաղթանակով²⁴: Օձ-վիշապի դեմ պայքարի հետ կապված են տարբեր թռչուններ: Խեթական ամենավաղ տեքստերից սկսած՝ արծիվը ծիսակարգում հաճախ ծառայում է աստվածներին, թռչում է մինչև ծով և այնտեղից լուրեր բերում²⁵: Հնդկական և իրանական առասպելներում արական հատկանիշ կրող աստվածությունը երբեմն արծ-

¹⁷ Э.Темкин, В. Эрман, Мифы древней Индии, М., 1985, стр. 49–50.

¹⁸ Հ. Մարտիրոսյան, 1981, նշվ. աշխ., էջ 75:

¹⁹ Հ. Մարտիրոսյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները 11, Ժայռապատկեր, պրակ III, Եր., 1981, էջ 72:

²⁰ Նույն տեղում, էջ 73:

²¹ Հ. Խաչատրյան, Հին հայկական օրացույցի մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1, Գյումրի, 1998, դջ 14-16:

²² Նույն տեղում, էջ 8:

²³ Т.Гамкрелидзе, Вяч.Иванов, նշվ. աշխ., էջ 490 :

²⁴ Հ.Մարտիրոսյան, 1981, նշվ. աշխ., էջ 67:

²⁵ Т.Гамкрелидзе, Вяч. Иванов, նշվ. աշխ., էջ 538

վի կերպարանքով է²⁶: Արծիվը Չևսի խորհրդանիշ թռչունն է²⁷: Հին գերմանական սովորույթներում արծիվը գայլի և արջի հետ հանդերձյալ աշխարհի երեք սրբազան կենդանիներից մեկն է²⁸:

Հնդեվրոպական, հատկապես գերմանական որոշ սովորույթներում, ագռավը ծիսական նշանակությամբ մոտենում է արծիվին, մասնավորապես որպես Վալխալի սրբազան թռչուն²⁹: Ագռավը Միհրի-Միթրայի հավատարիմ ուղեկիցներից մեկն է և միթրայական պատկերագրության մեջ սերտորեն կապված է արևի խորհրդանիշի հետ³⁰: Ագռավը պատգամաբեր է («Սասնա ծռեր»-ում աստվածների լրաբեր- սուրհանդակ), իմաստուն և խոսելու ունակությամբ օժտված («Ենչ էն խոսող ագռավ մտավ էնտեղ, էն դիմաց կասին Ագռավու քեար»³¹) և Փոքր Սիեթին Ագռավաքար ուղեկցող: Ագռավը կապվում է կրակի հետ, որն արտացոլված է ոչ միայն բերված գրույցներում, այլ նաև հետևյալ ասացվածքում. «Ագռավն արին գեղին քեհյա, մոխիր տվեց գեղին վրա»³²: Մոխիրը տնօրինելու իրավունքով ագռավին հավասարեցնում են Սբ Կարապետ վանքի Կաղ դևին: Հայկական գրույցներում ագռավը մարդկանց օձից փրկելու համար իֆքնագոհության է գնում³³:

Հեթանոսական կրոնի մերժմամբ վերաիմաստավորվեցին նաև հնագույն աստվածների խորհրդանիշ և ուղեկից թռչունների կերպարները: Դա լավագույնս արտահայտված է աստվածաշնչյան լեզենդում՝ ագռավին հատկացրած չարագուշակի դերով, որ անհամատեղելի է մարդկանց կյանքը փրկելու համար ինքնագոհության գնացողի կերպարին:

Հնդեվրոպական դիցարանության մեջ օձի հետ պայքարում հաղթող, ավետաբեր և հանդերձյալ աշխարհի հետ կապված թռչուն է նաև արագիլը: Խեթական դիցարանության մեջ Տելեայինայինոս-Տելեբինուին փնտրելու ուղարկված լրաբեր *harana* թռչունը, ըստ Գ.ր. Ղափանցյանի, կռունկն է, և Տելեայինոս աստծու խորհրդանիշ թռչունը կարող էր լինել նաև արագիլը³⁴: Հին Հունաստանում արագիլ սպանողին պատժում էին այնպես, ինչպես մարդասպանին³⁵: Հայաստանի «վիշապներ» կոչվող կոթողների վրա արագիլի պատկերը հավաստում է նախնական հավատալիքների հետ թռչնի կապը: Արագիլը օձի հետ պայքարում հաղթող է (Օձի գերեզմանը լազլազի փորն ա, կամ Օձի փուշը լազլազը կմարսի)³⁶: Հայկական մի գրույցում ամեն տարի արագիլը խեղդում է իր ձագերից մեկին՝ աստծուն մատաղ անելու համար³⁷, մյուսում՝ արագիլներն իրենց երկրում մարդ են և թռչունի փետուրներ են հագնում, ճանապարհ ընկնում մեր երկիր³⁸: Արագիլը մեռնող և հառնող Արա Գեղեցիկի թռչունն է³⁹: Թռչունը հաճախ մարմ-

²⁶ Բ.Առաքելյան, Հայկական պատկերաբանությունները IV-VII դարերում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Եր., 1949, էջ 93:

²⁷ Ն.Կուն, Հին Հունաստանի լեզենդներն ու առասպելները, Եր., 1956, էջ, 506:

²⁸ Т.ГамкRELИДЗЕ, Вяч. Иванов, նշվ. աշխ., էջ 538:

²⁹ Նույն տեղում, էջ 540:

³⁰ Գ.Քոչարյան, Անտիկ դարաշրջանի գոհասեղանի Գ-վիճից, ՊԲՀ, 1977, թիվ 2, էջ 282:

³¹ Սասնա ծռեր, հայ ժողովրդական վեպ (աշխատ. Ս. Հարությունյանի), Եր., 1977, էջ 506:

³² Ա.Ղանալանյան, Առածանի, Եր., 1960, էջ 223:

³³ Ա.Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 224, էջ 262-263, էջ 269, էջ 97:

³⁴ Գ.ր. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Եր., 1944, էջ 144:

³⁵ А.Голан, նշվ. աշխ., էջ 73:

³⁶ Ա. Ղանալանյան, 1960, էջ 156:


³⁷ Ա. Ղանալանյան, 1969, էջ 137-138:

³⁸ Նույն տեղում, թջվ 366 բ, էջ 137-138:

³⁹ Н.Шаншашвили, Знаки и символы глиняной посуды куро — аракской культуры /к интерпретации знаков на миске из Озни/ Сообщения Академии наук Грузинской ССР, 133, № 1. Тбилиси, 1989, стр. 210.

նավորում է հանգուցյալի հոգին⁴⁰, և զարմանն արագիլի զալը ոչ թե վերադարձ է նախնական հայրենիք, այլ անդրաշխարհ, հավերժական կացարան, որտեղ նրանք մարդու կերպարանքով են⁴¹:

Տախտակ 1



Այսպիսով, քրոնարաքայան մշակույթի իրերն ունեն օգտապաշտական (ուտիլիտար) բնույթ, միաժամանակ անոթների վրա արված խորհրդանշական պատկերներն արտացոլում են գերբնական ուժերի պաշտամունքի հետ կապված հավատալիքները:

⁴⁰В. Иванов, *Метаморфозы, Мифы народов мира, т. 2, М., 1992, стр. 148.*

⁴¹Н.Шаншавили, *նշվ. աշխ., էջ 210:*

Կարասի զարդագոտու վիշապ, խոյ և թռչուն խորհրդանիշերի քննությունը բերում է այն համոզման, որ վաղբրոնզիդարյան խեցեղենի խորհրդանշանները *պատմող* են կամ *խոսող*: Հնագիտական փաստերի, գրավոր աղբյուրների վկայությունների և բանագիտական նյութերի համադրումները ցույց են տալիս, որ վաղբրոնզիդարյան ծիսական խեցեղենի զարդանախշերը հավատալիքների և պաշտամունքի գաղտնագրված բարդ համակարգի գծապատկերային յուրատեսակ տղագրումներ են, իրենց մեջ ունեն պայմանական նախշերով ֆիքսված մտքեր, յուրաքանչյուր գաղափար արտահայտված է խորհրդանշանով:

Մեծ Սեպասարի սրբարանում գայերի զոհաբերության մնացորդների մոտ գտնված կարասի զարդագոտու սիմվոլիկան հաստատում է պատկերազարդման բովանդակության կապը ծիսակարգի հետ. զարդանախշումների մեջ արտացոլված է զարման գալստյանը՝ հին տարվա ավարտին և նոր տարվա սկզբին, այսինքն՝ տիեզերական կարգուկանոնի վերականգնման համար մղած պայքարում վիշապամարտիկի տարած հաղթանակին նվիրված ծեսի բովանդակությունը:

ОБ ИНТЕРПРЕТАЦИИ СИМВОЛОВ НА ОДНОМ КАРАСЕ КУРО-АРАКСКОЙ КУЛЬТУРЫ

___ *Резюме* ___

___ *Л. Еганян* ___

Изучение символов и знаков на ритуальном карасе из раскопок святилища ранне-бронзового периода Мец Сепасара и сопоставление археологического материала с индоевропейскими верованиями и ритуалами указывают на следующее. Стилизованные изображения дракона, птиц, и оленов на ритуальном карасе - отображение верований, связанных с ритуалами, которые производились весной и символизировали конец Старого года и рождение Нового. Изображения с символическими знаками тесно связаны с основным ритуалом-жертвоприношением волков, приуроченном достижению основной цели-поддержания естественного порядка в природе.

ՇԻՐԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ Ք.ա. VIII-VI դդ.

Շիրակի վարչական բաժանման մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ սկզբնաղբյուրներին, որոնց մեջ առանձնահատուկ դեր է կատարում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Հայկից սերած ցեղերի¹ և զավակների մասին խոսելիս Մովսես Խորենացին գրում է. «...Արամանյակը բոլոր բազմությունն առնելով չվում է դեպի հյուսիսային արևելք և զնում իջնում է մի խոր դաշտավայր, բարձրագագաթ լեռներով շրջապատված, որի միջով մի կարկաչասահ գետ էր անցնում արևմտյան կողմից. և դաշտը կարծես թեքված էր դեպի արևելք և երկարությամբ ձգվում էր արեգակի կողմը, իսկ լեռների ստորոտներում բխում էին բազմաթիվ ականակիտ աղբյուրներ, որոնք միանալով, գետեր կազմելով, հեզաբար հոսում էին նրանց սահմանների մոտ, լեռների ստորոտներով և դաշտի ավերով, որպես թե պատանիներ շրջեին երիտասարդուհիների մոտերը: Իսկ հարավային արեգակնաճեմ լեռը, սպիտակափառ գագաթով, ուղիղ բուսել էր երկրից՝ պինդ գոտևորված մարդու երեքօրյա ճանապարհի շրջապատով, ինչպես ասաց մերոնցից մեկը, և հետզհետե սրվում էր դեպի վեր. իսկապես մի ծերունի լեռ՝ երիտասարդացած լեռների մեջ: Արամանյակը այս խոր դաշտում բնակելով՝ շենացնում էր մի մասը դաշտի հյուսիսային կողմում և լեռան ստորոտը նույն կողմում, լեռն իր անվան հարմարեցնելով կոչում է Արագած, իսկ կալվածը՝ ուն Արագածո»²: Ապա Քերթոզահայրը շարունակում է. «Բայց սքանչելի մի բան է ասում պատմագիրը [Մար Աբասը՝ Ի.Ա.], թե շատ տեղերում ցիրուցան բնակում էին սակավաթիվ մարդիկ մեր երկրում նախքան մեր բնիկ Հայկի գալուստը»³: Մովսես Խորենացին Հայկական լեռնաշխարհում Հայկյանների տարածման մասին պատմելիս խոսում է նաև Շարային ու նրա տոհմին հանձնված գավառների մասին. «Նրա [Արամանյակի՝ Ի.Ա.] որդին՝ Արամայիսը իր բնակության համար տուն է շինում գետի ավիին մի բլուրի վրա և իր անունով կոչում է Արմավիր, իսկ գետը կոչում է Երասխ՝ իր թոռան Երաստի անունով: Իսկ իր որդուն, բազմազավակ և շատակեր Շարային ամբողջ աղխով ուղարկում է մի արգավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան՝ Արագածի թիկունքում, որտեղ շատ ջրեր են հոսում. նրա անունով, ասում են, գավառը կոչվեց Շիրակ»⁴: Շարան ու իր հետնորդները բնակվում ու իրենց իշխանությանն են ենթարկում Այրարատի Արշարունիք⁵,

¹ Այս առումով ուշագրավ է Բարկեն Հարությունյանի հետևյալ կարծիքը. «Թորգոմյանների տեղաբնիկությունը կասկածներ չի հարուցում, քանի որ խեթական սեպագրերում Թորգոմա երկիրը հիշատակվում է մինչև «Ծովի ժողովուրդների» գաղթը: Մակայն Հայկական լեռնաշխարհի շրջանակներում ցեղային տեղաշարժերը իրողություն են, որոնց մասին Հայկի և Բեյի պատմությունն ունի մի քանի վկայություններ, որոնք հավաստում են բնակչության առկայությունը մինչև Թորգոմյանների գալուստը» (Հայկի և Բեյի առասպելի, հայ ժողովրդի ծագման և Այրարատյան թագավորության առաջացման հարցի շուրջ, ՇՊՄԺ հանրապետական 3-րդ գիտա-ժողովի նյութեր, Գյումրի, 1998, էջ 5-6):

² Մովսես Խորենացի, ԺԲ:

³ Նույն տեղում, ԺԲ:

⁴ Նույն տեղում, ԺԲ:

⁵ Արշարունիք գավառը Գաբեղեանք գավառի հետ կազմում էր Երասխի խորածոր կիրճը, ուստի երկուսը միասին կոչվում էին Երասխածոր: Արշարունիք անունը կապվում է Կամսարականների, իսկ դրանից առաջ՝ Երուսանդունիների տոհմական անուն՝ Արշաիրի հետ: Այս գավառը ըստ երևույթին գտնվել է Շիրակից իբրև Երվանդաշատի քաղաքային տարածք: IV դ. և հետո Կամսարականներին պատկանում էր Շիրակի հետ նաև Արշարունիքը: Այստեղ էր գտնվում Արտագերս հռչակավոր ամբողջ /այժմ՝ Քերս/։ Ս.Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհագրության»-ի, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Եր., 1963, էջ 40:

Շիրակ, Աշոցք⁶ գավառներն ու Գուգարքի հարավային մեծ մասը⁷: Այս էթնոքաղաքական միավորը հայագետներին հայտնի է «Շարայի ցեղամիություն» անվամբ⁸: Ուրարտական տվյալների համաձայն՝ նույն տարածքում Ք.ա. IX դ., արդեն ձևավորված էր «Վիտերուխի-Լուշա-Քաթարգա» անվանված մի միավորում, որն Էթիունի համադաշնության հյուսիսարևմտյան թևն էր կազմում: Հայտնի է, որ Վիտերուխից է ծագում Գուգարք տեղանունը /Վիտերուխի ցեղը ժամանակին բնակվել է Արաքսի հարավային ավազանում, Ալաշկերտի շրջանում և ավելի ուշ է տեղաշարժվել դեպի Գուգարք/: Լուշան համադրվում է Լոռիին, իսկ Քաթարգան՝ Կղարջքին⁹: Այսինքն՝ «Շարայի ցեղամիությունը» ձևավորված էր արդեն վաղ երկաթի դարում և որպես քաղաքական միավոր հարատևել է մինչև Գուգարաց բղեշխության կազմավորումը: Ուսումնասիրելով այս դաշնության կազմը՝ կարելի է ընդհանուր գծերով վերակազմել Էթիունի ունեցած քաղաքական կառուցվածքը՝ համայնքներ-ցեղապետություններ-քրմապետություններ-դաշնություններ-համադաշնություն /Էթիունի/, որը հիշեցնում է Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանումը՝ համայնքներ-գավառներ-աշխարհներ-բղեշխություններ-թագավորություն¹⁰: Ք.ա. VIIդ. բիայնիլի-էթիունյան սահմանն անցնում էր Արաքս գետից հարավ ընկած շրջաններով ու Հայկական պարով:

Ըստ Ս.Երեմյանի՝ Արաքս, Արախս, Երասխ գետի անվանումը ծագել է բիայնական սեպագրերում հիշատակված Էրիախի ցեղամիության անունից¹¹: Ըստ ամենայնի, պատմական Հայաստանի այս՝ դեռևս վաղ երկաթի դարում ձևավորված աշխարհագրական-քաղաքական սահմանագիծն իր արտահայտությունն է գտել նաև ավելի ուշ Արեւմտյան ժամանակաշրջանում, երբ Հայաստանը բաժանվեց երկու՝ հետագայում «Հայկական անվանված» սատրապությունների. համաձայն Հերոդոտոսի՝ 13-րդ սատրապության կազմում էին ընդգրկված Պակտյուիկեն, արմեններն ու նրանց հարևանները մինչև Եվքսինյանը [Մ. ծով], իսկ 18-րդում՝ մատինները, սասպեյրները և ալարոդները¹²: Ընդ որում, այստեղ հիշատակված մատինները թերևս այլ են Փոքր Չար գետի ակունքների մոտ բնակվողներից և տեղորոշվում են Արաքս գետի վերին հոսանքների շրջանում:

Ք.ա. IXդ. վերջին քառորդում Հայկական լեռնաշխարհում ձևավորվել էին երեք խոշոր քաղաքական միավորումներ՝ հարավայինը, արևմտյանը և հյուսիսայինը¹³: Հարավայինը Ուրարտուն էր՝ Վանի թագավորությունը, որի կազմում էին ընդգրկված պատմական Հայաստանի հինգ նահանգները՝ Մուկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Տուրուբերան: Հարավային միությունը գրավում էր մոտ 94000 քառ. կմ տարածք: Հյուսիսայինը Էթիունին էր. այս միության կազմում էին ընդգրկված պատմական Հայաստանի վեց նահանգները՝ Սյունիք, Արցախ, Այրարատ, Տայք, Գուգարք, Բարձր

⁶ Աշոցք-Ղալդուխ: Ուրարտական արձանագրություններում կոչվում է *Išqigulu*: Նույն տեղում, էջ 36:

⁷ Նույն տեղում, էջ 36, 40, 48, 73-74:

⁸ Ս.Հմայակյան, Էթիունե երկիրը և «Վիտերուխե-Լուշա-Քաթարգա» դաշնությունը, ՇՊՄԺ հանրապետական III գիտաժողովի թեզիսներ, Գյումրի, 1998, էջ 16-17: Ս.Պետրոսյան, «Շարայի ցեղամիությունը» Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում /Մ.թ.ա. VI-V դդ./, Լրաբեր հասարակական գիտությունների /այսուհետ՝ ԼՀԳ/, Եր., 1979, թիվ 12, էջ 65-75: Ս.Պետրոսյան, Հագագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդազրույցում, Պատմաբանասիրական հանդես /այսուհետ՝ ՊԲՀ/, ՀՄՍՀ Գ-Ա հրատ., Եր., 1981, թիվ 3 /94/, առանձնատիպ, էջ 190-192:

⁹ Ս.Երեմյան, նշվ. աշխ., էջ 59:

¹⁰ Ս.Հմայակյան, նշվ. աշխ., էջ 16:

¹¹ Ս.Երեմյան, նշվ. աշխ., էջ 73-75:

¹² Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը՝ Միմոն Կրկյաշարյանի, ՀՄՍՀ Գ-Ա հրատ., Եր., 1986, III, 93:

¹³ Ս.Հմայակյան, Շիրակը Լուշա-Կատարգա-Վիտերուխե դաշնակցության կազմում, ՇՊՄԺ հանրապետական I գիտաժողովի թեզիսներ, Գյումրի, 1994, էջ 21-23:

Հայքի մի մասը: Այն գրավում էր մոտ 98000 քառ. կմ տարածք: Էթիունի-Էթիուխի երկիրը հիշատակվում է Մենուայի և Իշպուհինի համատեղ արձանագրությունում, որը գտնվել է Վանի Ս. Պողոս եկեղեցու շարվածքում¹⁴: Արձանագրությունում խոսվում է քիայնացիների և Ուխտերուխի, Լուշա, Քաթարգա մարզերի միջև տեղի ունեցած ռազմական բախման մասին, որոնց Էթիուխի երկրի արքաները օգնություն էին տրամադրել¹⁵: Այա Խորխորյան տարեգրության երրորդ տարվա /Ք.ա. 784թ./ տեղեկությունների համաձայն՝ դեպի հյուսիս արշավելիս Արգիշտի I-ը նվաճել էր Էթիունին ու հասել մինչև Ուտուրի-Էթիուխի երկիրը: Տարեգրության մեկ այլ հատվածից պարզ է դառնում, որ ուրարտացիները, արշավելով դեպի Էթիունի, նվաճել էին Էրիախի, Քաթարգա երկրները՝ հասնելով Իշկիգուլու երկիրը:

Հայկական լեռնաշխարհի արևմտյան տարածքները կողմնորոշված էին դեպի երրորդ քաղաքական միավորումը՝ Խաթեն: Ուսումնասիրելով Ասորեստանյան և ուրարտական սեպագրերը՝ Ն.Հարությունյանը եզրակացնում է, որ Խաթ/թ/ե Խաթ/թ/ի Խաթինիլի¹⁶, երկիրը տեղադրվում էր Ալզի-Աշշա /հին հայկական Աղձնիք/ և Ծուփանի-Սոֆենե-Ծոփքա, Մելիտեա-Մելիդ /որը շատ հաճախ Խեթերի մեծ տերության կազմում է հանդես գալիս/ և Կումմուխ-Կումմագենե երկրներից ոչ այնքան հեռու: Այսինքն՝ Ք.ա. XIII դ. վերջ-VII դ. առաջին կեսերին սեպագիր աղբյուրներում հիշատակված Խաթ/թ/ե Խաթ/թ/ի երկիրը թատերաբեմից հեռացած հզոր Խեթական թագավորության քաղաքական հաջորդն է, որը տեղադրվում է Եփրատի աջակողմյան մասում՝ Արածանիի և Եփրատի միախառնման վայրից դեպի հարավ /հարավ-արևմուտք/, Մելիտեա-Մելիդ-Մալաթիայի մարզում և հարավ-արևմուտքում մինչև Կումմուխ-Կումմագենեի հյուսիսային սահմանը: Անդրեփրատյան այս պետության հզորության ժամանակաշրջանում հարավում նրա սահմաններն է տարածվել մինչև Գարգամիշ-Կարքեմիշ /ժամանակակից Ջերաբրուս/, Արիադա/ժամանակակից Թեյ-Եփրատ/¹⁷:

Այս քաղաքական կազմավորումներից յուրաքանչյուրը, ելնելով իր աշխարհագրական դիրքից, քաղաքական իրադրությունից ու տնտեսական զարգացման մակարդակից, ուներ տարբեր, երբեմն հակադիր նպատակներ: Էթիունին քաղաքականապես ավելի թույլ զարգացած միություն էր: Էթիունին հեռու էր Ասորեստանից, առևտրական բանուկ ճանապարհներից և մայրուղիներից. բնականաբար, ցանկություն և նպատակ կար տիրանալու այդ ուղիներին, որը կարելի էր իրականացնել միայն հաղթելով Վանի արքաներին: Խաթեն Մելիտենեի գլխավորությամբ գտնվում էր հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք ձգվող ճանապարհների խաչմերուկում, տնտեսական առումով ավելի զարգացած էր իր հյուսիսարևելյան և հարավարևելյան հարևաններից և կարծես ուներ մեկ նպատակ՝ պահպանել իր գոյությունն ու անկախությունը՝ չենթարկվելով ո՛չ Ասորեստանին, ո՛չ Ուրարտուին: Ք.ա. IX դ. վերջին քառորդին Էթիունիի և Ուրարտուի ուժերը, ըստ Ս. Հմայակյանի կարծիքի, գրեթե հավասար էին: Ընդհարումը, սակայն, անխուսափելի էր. սկսված պատերազմը սկզբում հաջող էր Էթիունիի, հետո Ուրարտուի համար: Հաղթողին բաժին էր հասնելու Խաթեն, ինչպես էլ եղավ հետագայում, երբ Ք.ա. VIIIդ. այն ենթարկվեց Վանի թագավորությանը:

¹⁴ Н.Арутюнян, Корпус урартских клинообразных надписей; КУКН—31, изд. «Гитутюн» НАН РА, Ер., 2001.

¹⁵ Н.Арутюнян, Бийнили (Урарту), военно—политическая история и вопросы топонимики, Изд. АН Арм.ССР, Ер., 1970, էջ 20; Н.Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Изд. АН Арм.ССР, Ер., 1964, էջ 262-263. Б.Пиотровский, Ванское царство /Урарту/, Изд. Восточной литературы, М., 1959, էջ 70:

¹⁶ Н.Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 226-227:

¹⁷ Նույն տեղում, էջ 226-227:

Հարավային և հյուսիսային միությունների ընդհարումների առաջին նկարագրությունները հայտնի են Մենուա /Մինուա/ և Իշպուիների արքաների միասնական գահակալության տարիներից, երբ Էթիունի դաշնակցության հյուսիսարևմտյան թևը կազմող իշխանությունները արշավում են Վանի թագավորություն: Գրանցից խոշորագույններն էին Լուշան /Լոռի/ ¹⁸, Քաթարգան /Կողարջք/, Վիտերուխեն /տեղադրվում է Արաքսի և Ալաշկերտի միջև ընկած տարածքում/¹⁸: Վճռական ճակատամարտը տեղի է ունենում Անաշե /Ալաշկերտ/ քաղաքի մոտ. դաշնակցության զորքերը ետ են շարտվում: Անաշեի ճակատամարտը կանխորոշեց լեռնաշխարհի հետագա ճակատագիրը, և Վանի թագավորությունը դարձավ լեռնաշխարհի միակ առաջատարը: Ելնելով արձանագրություններում պահպանված տեղեկություններից՝ կարելի է ասել, որ Էթիունին այն ցեղամիությունն էր, որի ներքո միավորվել էին Էթիունի, Աբիլիանի, Էրիախի, Ազա և այլ ցեղեր: Ակնհայտ է, որ Էթիունի ցեղամիության սահմանները Ք.ա. VIII-VI դդ. երբեմն ընդարձակվում էին, երբեմն կրճատվում: Այդ մասին են վկայում Արգիշտի /Արգիշթե/ I և Սարգուրի II տարեգրություններում Էթիունիի դեմ կատարված արշավանքների ժամանակ թվարկված դաշնակից ցեղերի, երկրների ու քաղաքների անվանումները: Այս ժամանակ ամենահզորը Էթիունիում հյուսիսարևմտյան դաշնակցությունն էր, և այս ուղղությամբ Վանի արքաները երկար ժամանակ չէին համարձակվում առաջ շարժվել: Ք.ա. 780 թ. Արգիշտի I արքայի գահակալության երկրորդ տարում ամրացնելով իրենց թիկունքն ու թևերը մի շարք նվաճումներով, ուրարտացիները համարձակվեցին շարժվել դեպի հյուսիս-արևմուտք: Ս.Հմայակյանը գրում է. «Այս արշավանքի նկարագրության մեջ Արգիշտին առանձնացնում է մեզ հետաքրքրող դաշնակցությունը հետևյալ նկարագրությամբ. «Արքաներին, որոնք եկան Դիաուխեի¹⁹ արքային օգնելու, ես ջախջախեցի: Մեկ տարում գրավեցի Լուշան, Քաթարգան, Էրիախին, Գուլութախին, գրավեցի Վիտերուխին, հասա մինչև Աբունի»²⁰: Այսպիսով, ակնհայտ է, որ այս դաշնակցության կարևոր անդամներից են եղել Շիրակի գավառները, մասնավորապես Էրիախին և Գուլութախին: Վերը բերված սեպագիր տեքստի վրա հենվելով՝ կարելի է եզրակացնել, որ Արգիշտին այս նվաճումները կատարել է Դիաուխիից վերադառնալու ճանապարհին, ընդ որում, բիայնացիները նախ շարժվել են դեպի արևելք, Լուշա և Քաթարգա մարզերով հասել են Էրիախի՝ Արփաչայ-Ախուրյանի ձախափնյա տարածք, ապա շարժվելով հարավ-արևմուտք՝ պարտության մատնել Գուլութախին և Ուիտերուխին՝ հասնելով մինչև Աբունի²¹ (17, էջ 65-66): Գուլութախին պետք է փնտրել Էրիախիի և Վիտերուխիի միջև, այսինքն՝ վերին Արաքսի հյուսիսային՝ ձախ ափին, հավանաբար Արփաչայ-Ախուրյանի և Արաքսի միախառնման վայրից արևմուտք, Աբունիից հյուսիս-արևելք²²: Արգիշտիի թերի արձանագրություններից մեկի հիման վրա, որտեղ Գուլութախին հիշատակվում է Անիշթերգայի հետ, իսկ Անիշթերգան Խորխորյան տարեգրության երրորդ տարում /Ք.ա. 784թ./ հիշատակվում է Աբիլիանիի հետ /այս դեպքում խոսքը գնում է գլխավոր հռչակագրի մասին/: Այս և մեկ ուրիշ դեպքում Անիշթերգան հիշատակվում է հյուսիսային մարզ Գուլութախիի հետ, վերջինս էլ՝ Աբունիի հետ²³: Այս ամենը հաշվի առնելով՝ Ն.Հարությունյանը Գուլութախին տեղայնացնում է վերին Արաքսի հյուսիսային՝ ձախ ափին, հավանաբար Արփաչայ-Ախուրյանի և Արաքսի միախառնման վայրի մի կողմից և մյուս կողմից Աբիլիանի և Անիշթերգայի մի-

¹⁸ Ս.Հմայակյան, նշվ. աշխ., էջ 22:

¹⁹ Н.Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, էջ 70-71, 73:

²⁰ Ս.Հմայակյան, նշվ. աշխ., էջ 22: Н.В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 65-66:

²¹ Н.Арутюнян, նշվ. աշխ., էջ 65-66:

²² Նույն տեղում, էջ 65-66:

²³ Նույնը:

ջև՝ Վիտերովսիից հյուսիս: Հնագետները, ուսումնասիրելով վերը նշված Իշպուինիի և Մենուայի «Ս.Պողոսի արձանագրությունը» և Արգիշտիի Խորխորյան տարեգրությունը, Վիտերովսի-Ուիտերովսի երկիրը տեղադրում են Էրիախի երկրից հարավ-արևմուտք, Արունիից արևելք, Արփաշայ-Ախուրյանի միախառնման վայրից հարավ-արևմուտք, Արաքսի աջափնյակում: Հարավ-արևմուտքում Վիտերովսիի սահմանը հասնում էր քիայնական սեպագրերից հայտնի Անաշե քաղաքը՝ ժամանակակից Ալաշկերտ²⁴: Մեզ հետաքրքրող Էրիախի երկրի տեղադրության մասին կարելի ասել հետևյալը. Խորխորյան տարեգրության համաձայն՝ Էրիախի երկիրը /ցեղը/ գտնվել է Իգա/նի/ և Արունի երկրների միջև և Էթիունի տանող ճանապարհին: Նույն աղբյուրի կրկնօրինակում Էրիախին դուրս է գալիս մի կողմից՝ Քաթարգա երկրի, մյուս կողմից՝ Գուլութախի և Ուիտերովսի մարզերի միջև: Սարդուրյան տարեգրության համաձայն՝ Էրիախին մի դեպքում տեղադրվում է Արիլիանի-Աբեդյանք, մյուս դեպքում Էթիունիի հարևանությամբ /կազմում/: Մերք այն հիշատակվում է Արունի և Արիլիանի երկրներից ինչ-որ հեռավորության վրա: Բոլոր դեպքերում Էրիախի և Արունիի, Արիլիանիի միջև այստեղ հիշատակվում են Իշթելուանի և Կադիաինի մարզերը: Էրիախիի տեղադրության համար անգնահատելի արժեք ունի Արգիշտի I-ի հաղթական արձանագրությունը, որը հատվել է ժայռի վրա Գյումրուց 8 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Մարմաշեն գյուղի մոտ: Արձանագրությունում պատմվում է Էրիախի երկրի, Իրդանիունի քաղաքի նվաճման և Իշկիզուլու երկիրը հասնելու մասին: Այսպիսով, Էրիախի երկիրը անհրաժեշտ է փնտրել Իգանի և Արունի կամ Քաթարգա և Գուլութախի, Վիտերովսի երկրների միջև, Արիլիանիից ոչ հեռու, Էթիունիի հարևանությամբ /Էթիունիի կազմում/, նախկին Գյումրու և նրան հարևան տարածքներում: Էրիախին մոտավորապես համապատասխանում էր հին հայկական Շիրակ գավառին²⁵: Ինչ վերաբերում է Էրիախիի հարևան և դաշնակից երկրների տեղադրությանը, ապա կասենք հետևյալը:

Լուշա երկրի տեղադրության հարցում մասնագետների կարծիքները տարբերվում են: Ըստ Հ.Կարազյոզյանի՝ քիայնական Լուշան նույնացնում է Լոռիին,²⁶ իսկ Ն.Հարությունյանը Լուշա երկիրը տեղադրում է Ախուրյանի և Արաքսի գետախառնմանց դեպի հյուսիս, հարավ /հարավ-արևելքում/ Վիտերովսիի և հյուսիսում /հյուսիս-արևմուտքում/ Քաթարգա երկրների միջև, Էրիախիից ոչ այնքան հեռու²⁷: Քիայնական Քաթարգան²⁸ տեղադրվում է պատմական Կղարջքից քիչ հարավ՝ շարժվելով Դիաուխի-Դայանեի կողմից, հյուսիսից /հյուսիս-արևմուտքից/ այն պետք է փնտրել չհասնելով Էրիախի՝ Շորոխի հովտում և դրան հարող շրջաններում, հարավից դեպի Էթիունի շարժվելիս Կաթարգան պետք է փնտրել Էրիախիից հյուսիս: Հենվելով Խորխորյան տարեգրության վրա՝ Կաթարգան տեղադրվում է Էրիախիից արևմուտք /հյուսիս-արևմուտք/, Դիաուխի-Դայանեի /տեղակայվում է Էրզրումից հյուսիս և հյուսիս-արևելք, Եփրատի վերին հոսանքում, ակունքից ոչ հեռու և Շորոխ գետի միջին հոսանքում՝ Սարիղամիշից հարավ-արևմուտք/²⁹ և Էրիախիի միջև³⁰: Ելնելով Սարդուրյան տարեգրությունից³¹, որտեղ արքան գրում է այն մասին, որ Արիլիանի է մտել Էրիախիից վերադառնալու ճանապարհին, իսկ ըստ Արգիշտի I-ի Մարմաշենի հաղթական ար-

²⁴ Н.Арутюнян, *նշվ. աշխ.*, էջ 27, 201-203:

²⁵ Նույն տեղում, էջ 258-259: Н.Арутюнян, *Биайнили*, 147-148: Б.Пиотровский, *նշվ. աշխ.*, էջ 68, 71:

²⁶ Ս.Հմայակյան, *նշվ. աշխ.*, էջ 22:

²⁷ Н.Арутюнян, *Земледелие и скотоводство Урарту*, стр. 131:

²⁸ Ս.Երեմյան, *նշվ. աշխ.*, էջ 59:

²⁹ Н.Арутюнян, *նշվ. աշխ.*, էջ 70-71, 73:

³⁰ Նույն տեղում, էջ 105-106:

³¹ КУКН—241С:

ձանագրության, Աբիլիանի երկրի տեղադրության մասին կարելի ասել հետևյալը. Էրիախի երկիրը տեղադրելով Գյումրու և հարևան շրջաններում, Աբիլիանին տեղադրել ավելի հարավ, քանի որ ուրարտացիները այստեղ են հայտնվել տուն վերադառնալիս: Այս առումով ավելի ուշագրավ է սարդուրյան տարեգրության այն հատվածը, որտեղ Աբիլիանի երկիրը հիշատակվում է Արունի /Հավնունի-ք/ երկրի հետ: Ակնհայտ է, որ Արաքսի վերին հոսանքներում պահպանված հին հայկական Աբեդյանք /Աբեդեան-ք/ անվանումը կապված է Աբիլիանի երկրի անվան հետ³²: Ինչ վերաբերում է Իգանի երկրի տեղադրությանը, ապա մասնագետները, հենվելով Խորխորյան տարեգրության վրա, այս երկիրը և նրա կենտրոն Մակալտու/նի/-ն տեղադրում են Էրիախի և Կուրիանի երկրների հարևանությամբ³³: Իգանի երկրի տեղադրության համար առաջնային է Մարդուրի II-ի Չլըր լճից հարավ-արևմուտք հայտնաբերված Թաշքյուփրուի արձանագրությունը, որտեղ արքան խոսում է Իգանիի կենտրոն՝ Մակալտու/նի/ քաղաքի նվաճման մասին³⁴: Ելնելով ասվածից՝ Իգանին տեղադրվում է Չլըր լճի՝ բիայնական Խալդիրիուվխի³⁵, հարավային ափին և դրան հարող շրջանում: Մարդուրյան տարեգրության մի հատվածում հյուսիսային արշավանքները նկարագրելիս արքան Իգա/նի/ և Էրիախի երկրների հետ հիշատակում է նաև Կուրիանի երկիրը, որը մասնագետներից Ի.Դյակոնովը տեղադրում է Վանի թագավորության ծայր հյուսիս-արևմուտքում, Իգանիի հարևանությամբ³⁶: Մակայն Էրիախի և Իգանիի հարևան այս երկիրը Ս.Հմայակյանը տեղադրում է Շիրակում և համապատասխանեցնում այժմյան Շիրակի մարզի Անիի շրջանին³⁷: Այս առումով կարևոր է նաև Էթիունի համադաշնության մեջ մտած Ագա-Ուագա-Վագա ցեղամիության տեղայնացումը: Ուրարտական աղբյուրների համաձայն՝ Վագայի հյուսիսարևմտյան հարևաններն էին Էրիախի, Կուրիանի (Գյումրիի շրջանում, Արագածի հյուսիսային լանջերին) մարզերը³⁸ հարավայինը՝ Էրիկուախին Լուխիունի կենտրոնով /Ցոլակերտի³⁹, Գյուգակի⁴⁰, Բերկրիի⁴¹, և Չորավանքի⁴², արձանագրությունների հիման վրա տեղադրվում է Մենուախիբիլի-Թաշքուռուն և Արաքսից հարավ ընկած հարակից շրջանում⁴³: Էրիքուախի անվան մեջ Ն.Արոնցը հակված է տեսնելու անվանումը վաղմիջնադարյան Որկովի՝ «Մասյաց ուն» գավառի, որը տեղադրվում է Իգդիրից հարավ, Մասիսի հյուսիսարևմտյան լանջին⁴⁴: Ուրարտական սեպագիր տեքստերում հիշատակված Էրիքուախի երկիրը, որը ինքնուրույն ցեղային կազմավորում էր, Ա. Փիլիպոսյանի կողմից նաև դիրքորոշվել է Արաքս և Ախուրյան գետերի միախառնման շրջանում և դրանից հյուսիս⁴⁵ փաստորեն տեղայնացվելով Շիրակում նույնացվելով Էրիախիին:

Անդրադառնալով Էրիքուախի և Էրիախի «երկրների» տեղանվանական վերլուծությանը՝ անհրաժեշտ է նշել, որ ուրարտական սեպագրերում վկայված այս երկու

³² Н.Арутюнян, *նշվ. աշխ.*, էջ 8-9; Н.Арутюнян, *Бийнили*, *նշվ. աշխ.*, էջ 200, 253, 271.

³³ Н.Арутюнян, *Земледелие и скотоводство Урарту*, էջ 84-85.

³⁴ КУКН— 248.

³⁵ КУКН— էջ 220.

³⁶ КУКН, էջ 67, 123.

³⁷ КУКН— 241, F, 4-7: Ս.Հմայակյան, *նշվ. աշխ.*, էջ 22:

³⁸ Н.Арутюнян, *Земледелие и скотоводство Урарту*, *стр.* 73.

³⁹ КУКН - 47,48.

⁴⁰ КУК- 49, 50.

⁴¹ КУКН- 51.

⁴² КУКН- 52.

⁴³ Н.Арутюнян, *նշվ. աշխ.*, էջ 13, 260-261: Н.Арутюнян, *Бийнили*, *стр.* 420-427.

⁴⁴ Н.Арутюнян, *Земледелие и скотоводство Урарту*, *стр.* 260-261.

⁴⁵ Ա. Փիլիպոսյան, Էրիքուախի և Էրիախի «երկրները» տեղանվանական վերլուծությունների համատեքստում, ՇՊՄԺ հանրապետական IV գիտաժողովի թեզիսներ, Գյումրի, 2000, էջ 7:

ռում նաև այն, որ Կուլիանին Բիայնական սեպագրերում լավ հայտնի Էրիախի մի մասն է կազմել⁴⁷:

Այսպիսով՝ Շիրակի վարչական բաժանման մասին անհրաժեշտ է նշել հետևյալը. Զ.ա. VIII դ. Շիրակում վկայված են վեց իշխանություններ⁴⁸. Էրիախին, որը տեղադրվում է Ախուրյանի ձախ ափին, այժմյան Ախուրյանի շրջանի և Գյումրի քաղաքի գրաված տարածքում: Այդ վեց իշխանություններից, ըստ երևույթին ամենագորեղն էր և կենտրոնականը: Ենթադրվում է, որ Էրիախիում իշխել է տեղական մի դինաստիա, որի «արքային» Արգիշտիի արշավանքից մի քանի տասնամյակ անց պարտության մատնեց նրա հաջորդը⁴⁹: Կուլիանին, որը տեղադրվում է Արթիկի շրջանում, Կուրիանին, որը տեղադրվում է այժմյան Անիի շրջանում, Գուլուքախին, որը տեղադրվում է Արաքսի հյուսիսային և Ախուրյանի արևմտյան ափին, Անիշթերգան, որը նույնպես Արաքսի հյուսիսային ափին է՝ Գուլուտախիի հարևանությամբ, պատմական Արշարունիքում, որը մինչև Զ.ա. IV դ. մասն էր Շիրակի, Աշտուխիին, որը տեղադրվում է Ախուրյան գետի արևմտյան ափին՝ Սարիղամիշից հյուսիս: Բացի սրանցից անհրաժեշտ է հիշատակել նաև Իշկիզուլու-Իշկիզուլխի երկիրը, որը, ըստ Արգիշտիի Մարմաշենի արձանագրության, մասնագետները տեղադրում են Շիրակի հյուսիսում⁵⁰ ^{Կարճ-գի-գու-լու-ս-ի առավել ճշգրիտ տեղորոշմանը կօգնի Իրդանիու/նի/ քաղաքի տեղադրության հարցը, որը մինչև օրս վերջնականապես պարզ չէ:}

Արգիշտի I-ի Զ.ա. 780թ. արշավանքը ծանր հետևանքներ չունեցավ հյուսիս-արևմտյան դաշնակցության անկախ գոյության վրա: Միայն տասնմեկ տարի անց Արգիշտին ստիպված կրկին արշավանքի է ելնում այս դաշնակցության դեմ: Զ.ա. 768 թ. ձեռնարկված այս արշավանքից հետո է միայն կազմալուծվում Լուշա-Քաթարգա-Վիտերուխի դաշնակցությունը: Մակայն Շիրակի իշխանությունները համառորեն շարունակում են պայքարել իրենց անկախության համար: Այս մասին է վկայում Արգիշտիի որդի՝ Սարդուրի I-ի տարեգրությունը, որի տվյալների համաձայն՝ արքան ութ անգամ արշավել էր Էրիախի:

Էրիախիի /Էրիանի ձևով/ և Կուրիանիի /Գուրիախիի ձևով/ մասին վերջին տեղեկությունները գտնում ենք Զ.Ա. VIII դ. վերջին քառորդին փորագրված Ռուսա I-ի «Ծովինարի» արձանագրությունում /տող 8,11/⁵¹: Այստեղ էլ Էրիախին և Կուրիանին հիշատակված են Ուրարտուի դեմ մարտնչող իշխանությունների թվում: Ինչ վերաբերում է Eria-hi/Eria-ni⁵² ձևերի hi/ni վերջավորություններին, ապա այս առումով ուշագրավ է Ի.Գ.յակոբովի հատուկ անունների ձևի մասին հետևյալ կարծիքը, որտեղ նա հատկապես կանգ է առնում պետությունների կամ քաղաքների վերջում պարտադիր հանդիպող -ni/e- ածանցի վրա. Ի.Գ.յակոբովը կարծում է, թե այս ածանցը չի պատկանում այլալեզու անվանմանը, այլ կարելի է համարել ուրարտական դետերմինատիվ ցուցանիշ, որը հեշտությամբ կարելի է փոփոխել՝ օգտագործելով -hi- ֆորմատիվը, որը կազմում է

⁴⁷ *Н.Арутюнян*, նշվ. աշխ., էջ 116-117:

⁴⁸ *Ս.Հմայակյան*, նշվ. աշխ., էջ 22: *Ա.Փիլիպոսյան*, Կրոնա-քաղաքական ընդհարումները Վանտոսայի /Ուրարտու/ թագավորությունում և Իշկիզուլու-Իշկիզուլխի երկիրը, *ՇՊՄԺ հանրապետական III գիտաժողով*, Գյումրի, 1998, էջ 17-18:

⁴⁹ *Ս.Հմայակյան*, Էրիախեն՝ աստվածապետություն, *ՇՊՄԺ հանրապետական II գիտաժողով*, Գյումրի, «Կոմսայրի» հրատ., 1996, էջ 12-13: *Տ.Գալայան*, *Իճ-գի-գու-լու երկիրը և սկյութները*, Խաղթյան գործընթացը... Հողվածների ժողովածու նվիրված Բորիս Պիտտովսկու 100-ամյակին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Եր., 2010, էջ, 34-50:

⁵⁰ *Տ.Գալայան*, նշվ. աշխ., էջ 35: *Н.Арутюнян*, նշվ. աշխ., էջ 94:

⁵¹ *КУКН* -389.

⁵² *Մ.Իսրայելյան*, Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն /ըստ արձանագրական ու հնագիտական տվյալների/, «Հայաստան», հրատ., Եր., 1971, էջ 6:

ստացական անական⁵³: Նա մի շարք պետությունների և քաղաքների անվանումներ տալիս է առանց -ni-, -hi-ածանցի, օրինակ՝ Էրերու-Էրերունիի, Կեխու-Կիեխունիի, Վելիկու-Վելիկուխիի փոխարեն⁵⁴:

Ելնելով ասվածից՝ կարելի է եզրակացնել, որ Էրիախի անվան Էրիա-ի ուշ ձևը ստանալով -ni ածանցը Ռուսա I-ի «Ծովինարի» արձանագրությունում հանդես է գալիս «Էրիանի» ձևով:

Այսպիսով, Ջ.ա. VIII-VI դ. Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասի ցեղերը, հետզհետե համախմբվելով, ստեղծել էին բավականին ուժեղ ցեղամիություններ: Դրանցից մեկի կենտրոնն էր հետագա Շիրակը, որի բնակչության էպոնիմ-նախնին, նրա հավաքական կերպարի բանահյուսական անձնավորումն էր հայկազն Շարան: Պատմահորը հասած հայկական հին ավանդազրույցների համաձայն՝ Շարայից և նրա սերունդներից էին սերած վաղ միջնադարյան Հայաստանի Շիրակում, Արշարունիքում և Գուգարքում իշխած հայկական ծագմամբ նախարարական տոհմերը:

АДМИНИСТРАТИВНОЕ ДЕЛЕНИЕ ШИРАКА В VIII-VI вв. до р.Х.

____ *Резюме* _____

____ *И. Авагян* _____

В статье рассмотрены вопросы административного деления и местоположения исторического Ширака в VIII-VI вв. до р. Х., частью которого являлись “страна” Эриахи и сопредельные территории. Впервые составлена карта Административного деления Ширака в VIII-VI вв. до р.Х., на которую нанесены “страны” Эриахи, Кулиани, Куриани, Гулутахи, Анишперга, Ашпухини, входящие в состав конфедерации Эриахи, а также “страна” Ишкигулу, входящая в состав конфедерации Луша.

⁵³ Б.Пиотровский, *Աշխ.*, էջ 34:

⁵⁴ Նույնը:

Հրայրա ՓԱՆՈՍՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԹՈՒՄԱՆ-Ե ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԱԶԱՏ-ՋԻՐԱՆԻ ՈՒ ԴԱՐԱՇԱՍՔԻ ՄԱՀԼԱՆԵՐՈՒՄ (XVII դ. առաջին կես)

Նախիջևանի երկրամասի ժողովրդագրական խնդիրների լուսաբանման գործում չափազանց մեծ նշանակություն ունի երկրամասում հայ բնակչություն տեղաշարժերի ուսումնասիրությունը: Այս տեղաշարժերի հիմնական պատճառը տարածաշրջանում անընդհատ ընթացող պարսկա-թուրքական պատերազմներն էին:

XVII դ. սկզբներին Նախիջևանի երկրամասը էթնիկ տեսանկյունից Հայաստանի միատարր կազմ ունեցող շրջաններից էր, որտեղ բնակչության ճնշող մեծամասնությունն հայեր էին: Վերոհիշյալի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում եվրոպացի ճանապարհորդ միսիոներ Վիլյոդը, որի վկայությամբ Նախիջևանն ուներ 40 հազար ծովա հայ բնակչություն¹: Նախիջևանի բնակչության թվաքանակը, էթնոկրոնական նկարագրի մեջ որոշակի փոփոխություններ կատարվեցին XVII դ. սկզբներին՝ պայմանավորված շահ Աբաս I-ի կազմակերպած բռնագաղթով, որի ընթացքում Նախիջևանի երկրամասից տեղահանվեց և Պարսկաստանի խորքերն ուղարկվեց ավելի քան 160 հազար հայ²: Այս բռնագաղթերն ու տեղահանությունները շարունակվեցին մինչև պարսկա-թուրքական հակամարտության ավարտը՝ 1639 թ.:

Էլթանության օրոք կազմավորված Թուման-ե Նախիջևան վարչական միավորը, որ XV դ.՝ թուրքմենական քոչվոր ցեղերի տիրապետության ընթացքում, դարձավ Հայաստանի վարչաքաղաքական կենտրոն, XVI դ. կեսերին կորցրեց իր ազդեցությունն ու մտավ Ատրպատականի բեկլարբեկիության մեջ³: Այն ենթարկվում էր Թավրիզում նստող Ատրպատականի կառավարչին՝ ամիր-ուլ-ումարային (իշխանաց իշխան)⁴: Վարչական այս բաժանումը պահպանվեց մինչև XVII դ. կեսերը:

Թուման-ե Նախիջևանն ընդգրկում էր Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Նախնավան և Գողթն, Սյունիքի՝ Վայոց ձոր, Ճահուկ, Երնջակ ու Ծղուկ գավառները: Այն հյուսիս-արևմուտքից սահմանակից էր Երևանի, արևելքից՝ Արցախի նահանգներին: Երկրամասի բնական սահմաններն անցնում էին արևմուտքում՝ Արփա գետով, հյուսիսում՝ Վարդենիսի լեռնաշղթայով, արևելքում՝ Սյունյաց լեռնաշղթայով, հարավում՝ Արաքս գետի երկարությամբ ձգվող հարթավայրով⁵: Թուման-ե Նախիջևանը բաժանվում էր երկու մեծ շրջանների՝ Ջուղայի և Շահապունիքի, որոնց գլխավոր քաղաքներն էին՝ Օրդուբադն ու Նախիջևանը⁶: Սրանք իրենց հերթին տրոհվում էին մահալների, Ջուղան՝ Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի, Շահապունիքը՝ Դարալազյազի մահալի ու Սիսականի օլթայի⁷: Ազատ-Ջիրանի մահալը տարածվում էր Գեղան գետի ավազանում՝ ընդգրկելով Մեծ Հայքի Վասպուրական ու Սյունիք նահանգների Գողթն ու Երև-

¹ *Voyages d'un missionnaire de la compagnie de jesus en Turquie, en Perse, en Armenie et en Barbarie, Paris, 1730, p. 192.*

² *Միաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր N 1294:*

³ *Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, սյրակ I, (ԺԳ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Եր., 1968, էջ 96:*

⁴ *Մատենադարանի պարսկերեն վավերագրեր, հ. Ա, (ԺԳ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Եր., 1956, էջ 97:*

⁵ *J. Chardin, Voyages en Perse, etautreslieux de l'orient, tom II, Amsterdam, 1735, p. 303.*

⁶ *Relation dv voyage d'AdamOlearivs en Moscovie, Tartarie, etPerse, tom I, Paris, 1679, p. 362.*

⁷ *Մատենադարանի պարսկերեն հրովարտական, սյրակ III, կազմեց՝ Զ. Կոստիկյան, Եր., 2005, էջ 47, 77:*

ջակ գավառները, արևելքում սահմանակցում էր Սյունյաց լեռնաշղթային: Մրան արևմուտքից սահմանակից էր Դարաշամբի մահալը, որից բաժանվում էր Երնջակ գետով, ընդգրկում էր Վասպուրականի Նախճավան ու Սյունիքի Ճահուկ գավառները: Դարաշամբի մահալը փոխված էր Նախիջևան գետի ավազանում: Այն արևելքից սահմանակից էր Երնջակ գետին, հյուսիսից՝ Վայոց ձորի լեռներին, արևմուտքից՝ Արփա գետին, հարավային սահմանը հասնում էր մինչև Արաքս գետ:

Ցանկանալով վերահաստատել 1555թ. թուրք-պարսկական սահմանագիծը՝ շահ Աբասը, 1603թ. սկսում է իր արշավանքը: Հայաստանում ռազմական քատերաբեմի էր վերածվել Նախիջևանի արևելյան սահմաններից մինչև Շիրակ ընկած տարածքը: Կրոնավոր-ճանապարհորդ Անտուան Գուվեայի վկայությամբ ռազմական գործողությունների մեջ ընդգրկված այդ շրջանները խիտ ազգաբնակչություն ունեին, որտեղ հաշվվում էին քսանից ավելի քաղաքներ և հազարավոր գյուղեր⁸: Շահ Աբասը, զորքից անջատելով առաջապահ ջոկատ՝ Չուլֆիզար խանի գլխավորությամբ, ուղարկում է Նախիջևանը գրավելու: Օսմանյան զորքերն սկզբում փորձեցին դիմադրություն ցույց տալ և չէին ցանկանում թողնել քաղաքը, բայց երբ իմացան, որ շահը շարժվում է դեպի Նախիջևան ու արդեն հասել է Ջուղա, թողնում են Նախիջևանն ու նահանջում Երևան. «Իսկ այն զորքն օսմանցուց, գրում է Առաքել Դավրիժեցին, - փախեան ի Թավրիզու և եկին ի Նախչուան, ոչ կարացին մնալ անդէն՝ և կալ ընդդէմ, այլ երկիւղիւ մեծաւ ըմբռնեալ ի սիրտ և յոգի, հապճեալ տազնապաւ ելին ի Նախչուան՝ և ժամանեալ անկանէին ի քաղաքն Երևան»⁹:

Թուրքերը պարսկական այս հարձակումներին պատասխանեցին Երևանը գրավելուց երկու ու կես ամիս անց, երբ շահ Աբասը գրավել էր Կարսը: Դեպի Երևան ու Նախիջևան արշավող թուրքական մեծաթիվ բանակի հրամանատար էր նշանակված Ջղայօղլի մականունով Մինան փաշան: Մթափ գնահատելով, որ ուժերի քանակական հարաբերությունն իր օգտին չէ, և որ բաց ճակատամարտում թուրքերին դիմադրելն անհնար կլինի, շահ Աբասը նահանջում է՝ որոշելով ամայացնել ու բռնազաղթի ենթարկել թուրքական բանակի առաջխաղացման ճանապարհին ընկած Նախիջևանի քաղաքներն ու գյուղերը:

Առաքել Դավրիժեցու վկայությամբ՝ շահ Աբասը դեռ վաղուց էր մտադրվել հայ բնակչությանը տեղահանել ու գաղթեցնել Պարսկաստան. «Եւ զոր ի վաղ ժամանակաց ունէր ի մտի զքշելն ազգին քրիստոնէից՝ և զաւերելն աշխարհն Հայոց՝ անդ յայտնեաց խորհրդակցաց իւրոց»¹⁰:

Բռնագաղթն սկսվում է 1605թ. օգոստոսի 11-ին*¹¹: Շահ Աբասը նահանջելով ամայացնում է իր նահանջի ճանապարհին ընկած բոլոր քաղաքներն ու գյուղերը, տեղահան անելով բնակչությունը. «սկսեալ ի կողմանցն Նախիջևանոյ՝ զՇիրակ, զՆիզ, զԵղեզնաձոր, զԳեղամ, զԼոռի, զՀամազիման, զՇարապխանայ, զՋարիշատ, և զղաշտն Արարատու, զԵրևան քաղաք, զԿոտէս գաւառ, զԾաղկնուձոր, զԳառնուձոր...»,- գրում է Չաքարիա սարկավազ Քանաքեռցին¹²:

Ականատես պատմագիրների վկայությամբ՝ իրանական զորքերը Պարսկաստան էին գաղթեցնում հսկայական հայ բնակչություն, և պարզ էր, որ այդքան ստվար

⁸ Г. Эзов, *Сношения Петра Великого с армянским народом*, СПб, 1868, с. 468.

⁹ Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 21:

¹⁰ Նույն տեղում, էջ 35-38:

¹¹ Նույն տեղում, էջ 46:

* Տես Խաչատուր արեղայի *Չուղայեցոյ պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 102: Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)*, հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1974, էջ 182, 270:

¹² *Չաքարեայ սարկավազի Պատմագրութիւն*, հ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 19-20:

ազգաբնակչության միանգամից զաղթեցնել հնարավոր չէր, Առաքել Դավրիժեցին հաղորդում է. «Եւ զայս գործ, որ զագոն Հայոց քշեաց և տարաւ, ոչ թէ մի անգամ կամ երկիցս և երիցս արար և եկաց, այլ գտի հաւաստեալ բազում արս՝ որք ինքեանք իսկ քշածք էին, յորոց հարցեալ տեղեկացայ, նա և ի յիշատակարանաց գրոց՝ գորս ընթերցայ, զի եօթն և ութն անգամ որիշորիշ զկնի միմեանց քշեալ և տարեալ է»¹³: Նախիջևանի երկրամասի մեծ մասն ամայացաւ: Այս բռնագաղթը ժամանակակիցների վրա մեծ տպավորություն բողեց: Այս տարագրությունը, որը ժամանակակիցներն անվանեցին «մեծ սուրգուն», ահավոր էր իր չափերով ու հետևանքներով: Այն սկիզբ դրեց Նախիջևանի ժողովրդագրական պատկերի դիմախեղման գործընթացին:

Թուման-ե Նախիջևանից բռնագաղթի ենթարկված հայ բնակչության ընդհանուր թվի վերաբերյալ ժամանակի ակամատես պատմագիրների մոտ տեղեկություններ չկան: Այս բացը լրացնելու են գալիս Մաշտոցի անվան մատենադարանում պահվող ձեռագրերի հիշատակարանների բավականին արժեքավոր տեղեկությունները: Համաձայն այդ տեղեկությունների՝ Թուման-ե Նախիջևանի Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի մահալներից տեղահանվել ու բռնագաղթի էր ենթարկվել մոտ 21 հազար տուն հայ բնակչություն*¹⁴, այսինքն՝ Թուման-ե Նախիջևանի բնակչության կեսից ավելին: Երկրամասի մնացած բնակչությունը զերծ մնաց բռնագաղթից՝ գտնվելով շահ Աբասի մահանջի ճանապարհից հեռու, մասնավորապես Դարալագյազի մահալի ու Միսականի օլթայի հայկական այն բնակավայրերը, որոնք տեղագրվում էին Վայոց ձորի ու Սյունիքի լեռնային գոտիներում: Թուման-ե Նախիջևանի Ազատ-Ջիրանի մահալի Ագուլիս քաղաքից տեղահանվում է 2500 ընտանիք¹⁵ մոտ 15 հազար մարդ, Օրդուբադից՝ 1200 ընտանիք՝ 8 հազար մարդ¹⁶ և Ջուղայից՝ 2000 ընտանիք մոտ 12 հազար մարդ¹⁷ (Ջուղայի բռնագաղթի մասին մանրամասն կխոսվի ստորև), իսկ Դարալագյազի մահալի ու ամբողջ երկրամասի վարչական կենտրոն՝ Նախիջևան քաղաքից 5300 ընտանիք՝ 31800 մարդ¹⁸:

Աղյուսակ 1. Թուման-ե Նախիջևանի Ազատ-Ջիրանի և Դարաշամբի մահալներից բռնագաղթի ենթարկված գյուղերի ու բնակչության թիվն ըստ Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերի հիշատակարանների տվյալների

Ազատ-Ջիրանի մահալ	Ընտանիք	Մարդ
1. Հանդամեջ (Անդամեջ)	300	2190
2. Անապատ	450	3240
3. Քիլիք	10	80
4. Զոթամ	15	110
5. Վերին գետ	70	560
6. Ունիս	150	1110
7. Զաղաքիկ	80	640

¹³ Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 148:

¹⁴ Մաշտոցի անվան մատենադարան, ձեռագիր N 4521:

¹⁵ Նույն տեղում, ձեռագիր N 6496:

¹⁶ Նույն տեղում, ձեռագիր N 4120:

¹⁷ Նույն տեղում, ձեռագիր N 2494:

¹⁸ Նույն տեղում, ձեռագիր N 3138:

*Նախիջևանի երկրամասում հայ ընտանիքների միջինթիվը բավական բարձր է եղել: Համաձայն կաթոլիկ միսիոներ Պետրոս Պետիկի զեկույցի՝ Թուման-ե Նախիջևանի Դարաշամբի մահալի Ապարաներ ավանում կային մոտ 300 տուն կաթոլիկ հայեր, և յուրաքանչյուր տանը ապրում էր 20, 15, կամ 10, իսկ ամենաքիչը 5 հոգի (տե՛ս Bedik Petrus, Cehil Sutan, Vienna, 1678, p. 379):

8. Տրունիս	400	2920
9. Սալ	20	180
10. Տանակերտ	340	2516
11. Դիսար	30	300
12. Վաղավեր	50	375
13. Վանանդ	420	2980
14. Դաստակ	110	820
15. Աղրի	20	200
16. Ռամիս	140	1160
17. Ստուպին	130	1070
18. Նորակերտ	220	1850
19. Խուրստ	60	450
20. Ազնամիր	70	580
21. Ողոհին	160	1240
22. Աղահեցիկ	110	1100
23. Մեսրոպավան	500	4000
24. Շրջու	200	2200
25. Բիստ	180	1490
26. Յաղբին	100	850
27. Խառց	130	1060
28. Տևի	140	1400
29. Բոհրուտ	120	1200
30. Փառակա	400	2830
31. Բելև	100	820
32. Բեղև	20	200
33. Թեյվազ	130	1300
34. Փորադաշտ	200	1750
Ընդամենը	5505	44771
Դարաշամբի մահալ	Ընտանիք	Մարդ
1. Մազրա	30	300
2. Շահկերտ (Վազանչի)	500	3750
3. Տիզեն	80	930
4. Աստապատ	500	3700
5. Շամբու ձոր (Խրամ)	250	2300
6. Տամբատ	220	1950
7. Եամխանա	50	410
8. Շմբան	60	460
9. Ազնաբերդ	250	2100
10. Ճահուկ	48	480
11. Նորս	25	300
12. Օծուփ (Ածուպ)	320	2760
13. Կուքի	260	1910
14. Արմավաշեն	110	1500
15. Ակոռի	170	2040
16. Բջնաղ	120	850

17. Եզատունք	250	2050
18. Խնձորակ	70	520
19. Գոմեր	40	310
20. Քաջաձոր	100	730
21. Բարունք	90	680
22. Քրտն	20	180
23. Ագարակ	190	1520
24. Թաթերք	130	1040
25. Մանլև	127	1016
Ընդամենը	4000	33786

Համատարած բռնագաղթի ու տեղահանության պայմաններում աչքի է ընկնում մի ուշագրավ իրողության. Նախիջևանի գավառի կաթոլիկ հայերի առաջնորդ Օգոստինոս եպիսկոպոս Բաջեցին նկարագրում է, թե ինչպես շահ Աբասը հանկարծ կարգադրեց, որ Նախիջևանի գավառի հայերը վերադառնան իրենց բնակավայրերը. «Անոր էր կիրակի,-գրում է նա,-ամենայն ժողովուրդն ելեալ էին առաւօտոյն աղօթ և հառաչանք դէպի Աստուած հայեացք և տեսանք թէ ի թագաւորէն մարդ եկաց, հրամանք բերաց թէ Նախիջևանոյ և Երինջակոյ գաւառն դառնան յետ: Երբ որ լսեցաք այսպիսի բարի խորատ՝ ամենեքեան ուրախութեամբ գոհութիւն մատուցաք Աստուծոյ և ցնծութեամբ վասն այսպիսի բարերարութեան, որ արար Աստուած և ողորմեցաւ ընդ ժողովրդեան իւրում: Ամենայն ժողովուրդն եղեն որպէս եղջիտ, թպէտ առաջ էին տկար...Եկինք հասանք մեր աշխարհս, տեսանք ամենայն ապրանքն թալանած, շատ տուն և վանք կրակ տված էրած. դառն դատարկ ժողովուրդն մնացին Աստուծոյ փառք տալով»: Այս հանգամանքը միանգամայն հասկանալի կլիներ, եթե նկատի չառնենք, որ շահ Աբասի այս բացառիկ շնորհը վերաբերում էր Նախիջևանի գավառի հայ կաթոլիկներին կամ, ինչպես անվանում էին նրան, իրենց՝ ունիթոռներին: Կաթոլիկ հայերն իրենց հայրենակիցների նման անպաշտպան չէին, առաջին հերթին Հռոմի պապն էր նրանց հովանավորում, ապա Արևմուտքի կաթոլիկ միապետները, որոնց դեսպանները հատուկ նամակներ էին տանում պարսից շահերին՝ խնդրելով նրանց ուշադրությունն ու հովանավորությունը Պարսկաստանի հպատակ հայ կաթոլիկների նկատմամբ: Հենց այս մեծ բռնագաղթի ժամանակ էլ, ինչպես երևում է Օգոստինոս Բաջեցու վկայությունից, շահի մոտ էր եկել «Ֆրանկների» դեսպանը, որը միջնորդեց Նախիջևանի գավառի կաթոլիկ հայերի համար, և քանի որ պարսից շահը ձգտում էր դաշնակցել արևմտաեվրոպական պետությունների հետ՝ ընդդեմ Օսմանյան կայսրության, չէր կարող մերժել նրանց խնդրանքը, մանավանդ որ դա վերաբերում էր հայության մի շատ փոքր մասին միայն: Հայ առաքելական մեծամասնության համար ոչ մի միջնորդություն չէր լինում որևէ քրիստոնյա պետության կողմից, որովհետև (ըստ կաթոլիկների,- Հ.Փ.) հայ եկեղեցին հերձվածող էր. միացած չէր կաթոլիկ եկեղեցուն, և եթե նրա հետևորդները տառապում էին ամենադաժան ստրկության մեջ, այդ այն պատճառով, որ նրանք իրենց հերձվածողության համար պատժված էին քրիստոնեական աստծուց: Այսպես էր բացատրում կաթոլիկ եկեղեցին իր գործողությունները առաքելական հայերի նկատմամբ, որի համար հայերի կրած տառապանքները չէին կարող անցանկալի լինել, քանի որ այդ տառապանքներն առավել ևս պետք է հարկադրեին նրանց դիմել կաթոլիկության՝ տեսնելով, որ իրենց կաթոլիկ հայրենակիցները համեմատաբար ավելի ապահով ու պաշտպանված են¹⁹: Այս և նման միջոցներով կաթոլիկ հոգևորականությունը ձգտում

¹⁹ *Լեո, Երկերի ժողովածու, հ. 9, Ե., 1973, էջ 251-252:*

էր զբաղվել հոգեորսությամբ, այսինքն՝ «հերձվածող» արևելյան քրիստոնյաներին (հիմնականում հայերին, -Հ.Փ.) կաթոլիկադավան դարձնել՝ կաթոլիկ աշխարհի՝ հետուն գնացող քաղաքական ծրագրերն իրագործելու նպատակով: Այսպիսով, 1605թ. շահ Աբասի կողմից իրականացված հայերի բռնագաղթը դեպի Պարսկաստանի խորքերը մեծ հարված հասցրեց Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկների համայնքին, չնայած, Հռոմի պապի և եվրոպական պետությունների դեսպանների միջամտությամբ շահը թույլ տվեց հայ կաթոլիկ բնակչությանը վերադառնալ իր մշտական բնակության վայրերը: Սակայն վերադարձավ և իր թալանված ու այրված գյուղերում բնակություն հաստատեց կաթոլիկ բնակչության փոքրաթիվ մասը: Նախիջևանի երկրամասի հայ կաթոլիկների արքեպիսկոպոս Ազարիա Ֆրիտոնի 1601թ. զեկուցագրով Ազատ-Ջիրանի Քոնա, Յոնա, Գանձակ, Մեծշենո Դարաշամբի մահալի Ապարաներ, Ապրակունիս, Շահապունիք, Սալթաղ, Խոշկաշեն, Դարաղուշ գյուղերում ապրում էր մոտ 1780 տուն կամ 19400 հայ բնակչություն²⁰: Բռնագաղթից հետո՝ 1616թ., Հռոմից ուղարկված Անխել Մարիա Չիտտադինիի կողմից կազմված զեկուցագրի համաձայն, Նախիջևանի գավառի բոլոր տասը գյուղերում միասին հաշվվում էր մոտ 305 կաթոլիկ ընտանիք, այդ գյուղերից՝ Քոնայում հաշվվում էր 1, Սալթաղում 2, Գանձակում 4 ընտանիք, դեպքում, երբ բռնագաղթից առաջ՝ 1601թ., Քոնայում կար 70, Սալթաղում՝ 120, Գանձակում՝ 70 տուն հայ ընտանիք²¹:

Աղյուսակ 2. Հայ կաթոլիկների՝ բռնագաղթի ենթարկված գյուղերի ու բնակչության թիվն ըստ Անխել Մարիա Չիտտադինիի 1616թ. զեկույցի

Գյուղեր	Հայեր		Մահմեդականներ
	Ընտանիք	Մարդ	Ընտանիք
1. Ապարաներ	500	5000	20
2. Ապրակունիս	250	2050	40
3. Քոնա	160	1800	40
4. Սալթաղ	120	1500	
5. Խոշկաշեն	130	1300	20
6. Մեծշեն	50	600	2
7. Գանձակ	70	1000	20
8. Շահապունիք	150	1700	50
9. Դարաղուշ	50	500	1
10. Յոնա	300	3950	
Ընդամենը	1780	19400	193

Թուման-ե Նախիջևանի հայ բնակչության բռնագաղթի կազմակերպումը որված էր երկրամասի կառավարիչ Մախսուդ սուլթան քենգերլուի վրա, իսկ Ջուղայի բնակչության տեղահանությունը՝ Թահմասը կուլի բեկի²²: Այստեղից պարզ երևում է շահ Աբասի առանձնահատուկ ուշադրությունն ու վերաբերմունքը Ջուղայի բնակչության նկատմամբ, իհարկե, խոսքը հարուստ վաճառականների ու նրանց ընտանիքների մասին է, քանի որ վերջիններս իրենց վրա էին կրելու Հարավային Պարսկաստանի տնտեսության աշխուժացման հիմնական ծանրությունը: Շահ Աբասի, Ջուղայի հարուստ հայ խոջաների ու նրանց ընտանիքների նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի մասին է վկայում Գրիգոր Դարանաղցու հետևյալ տեղեկությունը. «...եւ խնա-

²⁰ *Ephemerides carmelitac, annus XI, Roma, 1960, p. 416-449.*

²¹ *Carlos Alonso, Angel Maria Cittadini, arzobispo de Naxivan, Roma, 1970, pp. 212-215, 231.*

²² *Искандер Муншви, Тарих-и Аламара-иу Аббаси, М., 1963, с. 465.*

մարկելով զնոսա առաել քան զազգայինս իւր, որ են Ջուղայեցիք և այլ բազում գաւառաց մարդիկ, որ կան ի հանգստի ի հովանի թեոց նորա վերին ակնարկութեամբն, որպէս զհայր գթալով նոցա և որպէս զուստերաց եւ դատերաց մինչև ցայսօր ժամանակի»²³: Ջուղա քաղաքի պատմությունը սերտորեն կապված էր առևտրի հետ: Հայկական փոքրիկ քաղաքը, սկսած XVդ. կեսերից, իր աշխարհագրական դիրքի շնորհիվ, մեծ համբավ է ձեռք բերում որպէս Արևելքի և Արևմուտքի շուկաները իրար հետ կապող կենտրոն: Ջուղայի հայ խոջաները հարուստ ու հայտնի վաճառականներ էին, որոնք մեծ դեր ունեին Արևելքի ու Արևմուտքի առևտրի մեջ, նրանք կարողացան շատ կարճ ժամանակահատվածում հսկայական հարստություն կուտակել: Մակայն իր գոյության ընթացքում Ջուղան չդարձավ համաշխարհային առևտրական քաղաք: Այն մնաց սոսկ որպէս պահեստ ապրանքների համար: Հայ վաճառականին Ջուղայի հետ կապում էր միայն այնտեղ ապրող իր ընտանիքը²⁴:

Ջուղայեցիների բռնագաղթը մանրամասնորեն նկարագրում է Առաքել Դավրիժեցին. նա պատմում է, թե ինչպիսի խստագույն սպառնալիքներով պարսիկ զինվորները իրագործեցին շահի հրամանը²⁵, որի ժամանակ տեղահանվեց և բռնագաղթի ենթարկվեց մոտ 3 հազար հայ ընտանիք: Դեռ 1581 թ. առևտրական գործերով Ջուղա այցելած Նյուբերին նշում էր, որ քաղաքում ծխերի թիվը հասնում էր 3 հազարի, իսկ բնակչությունը կազմում էր 15-20 հազար: Տասը տարի անց՝ 1590 թ., մեկ այլ առևտրական-ճանապարհորդ Քարտվայտի տեղեկություններով Ջուղայում կար 2 հազար ծուխ՝ 10 հազար բնակչությանը²⁶: XVII դարի սկիզբներին Ջուղան ուներ 10-12 հազար բնակչություն²⁷: Ջուղայեցիները հաստատվում են Սպահանում ու կառուցում Նոր Ջուղա արվարձանը, որը XVII դարում, եվրոպացի ուղեգիրների տվյալներով, շուրջ 650 հազար բնակչություն ունեցող մայրաքաղաքին կից, տնտեսապես զարգացած, մոտ 30 հազար բնակիչ ունեցող բնակավայր էր²⁸: Որոշ ժամանակ անց Ջուղայի բնակչության աննշան մասը՝ 200 ընտանիք, խուսափելով բռնագաղթից, նորից հաստատվում է հայրենի քաղաքում: Մակայն 1606թ. զարմանը Ջուղայում մնացած բնակչությանը նորից տեղահան անելու համար շահի հրովարտակով Ջուղա է գալիս Համդան աղան. «Եւ եկեալ Համդան աղայն ընդ իւր գօրօք ի Ջուղայ՝ կոչեաց զմնացեալ ժողովուրդն առաջի և խօսեցաւ ընդ նոսա սաստիւ և բռնութեամբ, եթէ հնազանդեալ անսայք հրամանայ թագաւորին ելէք ձերովք ընտանեօք և ստացուածովք զի ի միասին երթիցուք, և թէ ոչ կամիք գնալ, զարուս և զկարողս ձեր սրով կոտորենք՝ և զինչս և զընտանիս ձեր ի գերութիւն առնումք: Այլև գնացեալ ի լերինս և ի ձորս տեղիս փախարէիցն գտին զփախուցեալսն, և բերին ի Ջուղա, և յինանց երկրորդում կիրակէի երկուշաբթօ օրն չուեցուցին ի Ջուղայոյ՝ և ուղևորեցին դէպի Թավրէզ»²⁹: Այսպիսով, դատարկվում ու ավերվում է Ջուղան: Այս դեպքերից 68 տարի անց՝ 1673թ. ապրիլի 13-ին, Ջուղա այցելած եվրոպացի ճանապարհորդ Շարդենի տեղեկություններով Ջուղայում ապրում էր 30 ընտանիք, բոլորն էլ՝ հայ³⁰: Իսթանբուլի Մունշիի հաղորդման համաձայն՝ տեղահանելով Նախիջևանի երկրամասի հայ բնակչությանը, շահ Աբասը նրանց տեղափոխում է Դիզմարի ու Գարադաղի շրջաններ, իսկ Ջուղայի բնակչությանը՝ պարսկական Իրաք և տե-

²³ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցիոյ, Երուսաղեմ, 1915, էջ 38:

²⁴ С. Тер-Аветисян, Город Джугза, Тбилиси, 1937, с. 1-2.

²⁵ Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 57-70:

²⁶ С. Тер-Аветисян, նշվ. աշխ., էջ 74.

²⁷ Ղ. Այիշան, Միսական, Վենետիկ, 1893, էջ 410, 413:

²⁸ Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, Եր., 1934, էջ 80:

²⁹ Պատմութիւն Առաքել վարդապետի Դարիժեցոյ, Վաղարշապատ, 1896, էջ 63:

³⁰ J. Chardin, Voyages en Perse, tom II, Amsterdam, 1730, p. 303.

ղավորում Սպահանի նահանգում³¹, քաղաքաբնակներին բնակեցնելով Սպահան, Քեշան, Ղազվին քաղաքներում, իսկ գավառաբնակներին Սպահանի շրջակա ավաններում ու Ալնջանի 7, Լնջանի 10, Գանդիմանի և Ջղախուռի 5, Փերիայի և Բուրվարիի 22 գյուղերում: Աղբյուրներում տեղեկություններ չկան, թե վերոհիշյալ գյուղերը հայերն իրենք հիմնեցին, թե՛ սրանք պարսկական գյուղեր էին, որտեղից շահ Աբասը տեղահանեց պարսիկներին՝ հայերին բնակեցնելու համար³²: Հայ գաղթականներից 500 տուն բնակեցվում է Շիրազում³³: Նախիջևան քաղաքից բռնագաղթի ենթարկված հայ բնակչությունը տեղափոխվում է Ֆահրապատ քաղաք³⁴:

Շահ Աբասը բռնագաղթված հայ բնակչության մի մասին բնակեցնում է Գիլանի և Մազանդարանի շրջաններում: Ժամանակի ականատես հայ պատմագիրներն այս շրջաններ բռնագաղթված բնակչության թվի մասին տեղեկություններ չեն տալիս: Խնդրո առարկա հարցի լուսաբանման համար բավականին արժեքավոր է Շարդենի հետևյալ վկայությունը. «Նա (շահ Աբաս, - Հ.Փ.) փոխադրեց 30 հազար քրիստոնյա ընտանիք և բնակեցրեց Գիլանի ու Մազանդարանի գավառներում»³⁵: Սակայն Շարդենը չի հստակեցնում՝ այդ 30 հազար ընտանիքները բոլորը հայեր էին, թե կային նաև վրացիներ: Ամենայն հավանականությամբ վրացի ընտանիքներ նույնպես եղել են, բայց մեծամասնությունն անկասկած հայ ընտանիք էր: Այնուամենայնիվ, բռնագաղթից հետո՝ հետագա տասնամյակներին, 5 հազար³⁶ հայ ընտանիքների հաջողվեց տարբեր ճանապարհներով վերադառնալ ու բնակություն հաստատել Թուման-ե Նախիջևանի Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի մահալների իրենց հայրենի գյուղերում:

Ժողովրդագրական տեղաշարժերը շարունակվեցին նաև հետագա տարիներին: 1617թ. Գրիմի թաքարները 30 հազարանոց բանակով հարձակվում են Նախիջևանի քաղաքների ու գյուղերի վրա և գերելով 30 հազար հայ բնակչություն՝ վերադառնում ու Չոլեքի դաշտում միանում են օսմանյան զորքերին: «Նրանք սերդարի և բոլորի կողմից մեծ պատվի և հարգանքի արժանացան», գրում է թուրք պատմագիր Իբրահիմ Փեչևին³⁷:

XVII դ. ձեռագրերի հիշատակարաններում պահպանված տեղեկությունների համաձայն՝ Թուման-ե Նախիջևանի հայ բնակչության թվակազմի մեջ փոփոխություններ տեղի ունեցան 1630-1639թթ. պարսկա-թուրքական բախումների ընթացքում՝ օսմանյան զորքերի կողմից կատարած գերեվարությունների ու բռնագաղթերի արդյունքում: 1630թ. Վանի Ալի փաշան. «...եղեալ բազում հեծելօք և զնաց ի վերայ Նախ չուանայ և շատ ատեր ետուր և բազում արիմահեղութիւն արար և բազում առ և աւար և գերիս բերեալ ի Վան...որ էին թուով երեք հազար...»: Նույն տարում օսմանյան զորքերը Վանից շարժվելով Նախիջևան. «...երկիր քանդեցին, ափրեցան, զառ ու գերին բերին ի Վան, ի Մահմտանք, ի Բերկրի, ի յԱրճէշ, ի Պաղէշ ԴՌ (4000), ԵՌ (5000) հարիւր գերի բերին, թող ոչխար ու տաւար: Մուղ փարթալ աւաղ աւաղ զՀայոց ազգիս ի գերել Տաճկաց: Ով կարէ պատմել կամ ընդ գրով արկանել զաղիողորմ Հայոց ազգիս»: 1631թ. կազմակերպված հերթական ավերիչ արշավանքի հետևանքով Նախիջևանի երկրամասում բազմաթիվ հայեր սպանվեցին, իսկ կենդանի մնացած բնակչությունը գերեվարվեց. «...եւ ի դառնալ սուլթան Մուրատին դօմուկ սուլտան մի Շահապ անուն յոր-

³¹ *Искандер Мунши, նշվ. աշխ., էջ 465.*

³² Հ. Առաքելյան, *Պարսկաստանի հայերը, Վիեննա, 1911, էջ 31:*

³³ Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցույ, Վաղարշապատ, 1896, էջ 51:

³⁴ Նույն տեղում, էջ 354:

³⁵ *J. Chardin, Op. cit., p. 320-325.*

³⁶ Մաշտոցի անվան մատենադարան, *ձեռագիր N 3478:*

³⁷ Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, *հ. Ա. կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, Եր., 1961, էջ 56:*

ջորջեալ, ժողովեալ ի վերայ իւր զսիննի Տաճիկք աշխարհիս այսմիկ և եկն ի գաւառն Նախիջևանու և դիմեալ ի քարանձաւսն. զոմանս քարավէժ արարեալ ի քրիստոնէից և զոմանս սրախողխող արարեալ և զայլսն ձերբակալ արարեալ հանդերձ աւարո առեալ էանց ի Կարնոյ քաղաք և յերկիրն Հռոմոյ»³⁸:

Երևանում թողնված թուրքական զորքերը Մուրթուզա փաշայի ղեկավարությամբ 1636թ. արշավում ու գերում են Նախիջևանի երկրամասի հայ բնակչությանը: Գեաքերի ականատես, հայ կաթողիկ քարոզիչ Հակոբ Հիսուսի վկայությամբ. «Մուրթուզա փաշեն գերացուց գաւառս, ԳճԻ (320) գերի Ապարաներո գնաց և զամենայն սպանածն, տարածն, օլքէս դուս ելաւ ՌԵՃ (1500) ջանս»³⁹: Ժողովրդագրական տեղաշարժերը շարունակվեցին նաև հետագա տարիներին, սակայն դրանք զանգվածային բնույթ չկրեցին:

Այսպիսով, XVII դ. առաջին կեսին՝ պարսկա-թուրքական բախումների ժամանակ տեղի ունեցած ժողովրդագրական մեծ տեղաշարժերի հետևանքով Նախիջևանի գավառի հայ բնակչության թվաքանակը արագորեն նվազեց: Հայաթափվեցին և ավերակների կույտի վերածվեցին հարյուրավոր բնակավայրեր: Չնայած կազմակերպված բռնագաղթերի պատճառով Նախիջևանի գավառի հայ բնակչության թվաքանակը որոշ փոփոխություններ կատարվեցին, սակայն էթնիկական լուրջ տեղաշարժեր տեղի չունեցան, և հայ բնակչությունն շարունակեց էր մեծամասնություն կազմել Նախիջևանի գավառում:

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ДВИЖЕНИЯ АЗАТ-ДЖИРАНСКОЙ И ДАРАШАМБСКОЙ МАГАЛАХ ТУМАН-Е НАХИЧЕВАНА (первая половина XVII века)

___ Резюме ___

___ Г. Паносян ___

В начале XVII века Нахичеванская провинция являлась армянской однородной областью, большинство населения которой составляли армяне.

В первой половине этого века, за время персидско-турецких столкновений, были внесены изменения в количественный состав всего населения области. Вследствие насильственной миграции, организованной шахом Аббасом I, из 69 населенных пунктов было выведено и отправлено в Персию более 160000 армян, в результате чего в Нахичеванской провинции были разрушены сотни армянских поселений, резко уменьшилось количество армян.

Однако следует отметить, что и после организованной миграции из провинции серьёзных этнических изменений не произошло, и в Нахичевани число живущих армян по-прежнему преобладало над общим количеством населения области.

³⁸ Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ (1621-1640 թթ.), հ. Բ, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Եր., 1978, էջ 386, 388, 742:

³⁹ Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. Ա, կազմեց՝ Վ. Հակոբյան, Եր., 1951, էջ 196:

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1920թթ.

Բացառիկ ծանր պայմաններում ստեղծված Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգը ներդրվեց աստիճանաբար: Նախ՝ 1919թ. ստեղծվեցին տեղական ինքավարության քաղաքային, ապա՝ 1920թ.՝ գավառային մարմինները: Հարկ է նշել, որ նախապես չհստակեցվեցին կենտրոնական և տեղական իշխանությունների իրավասության սահմանները: Այս հանգամանքը մեծապես խոչընդոտեց պետական կառավարման կայացումը: Ավելին, այն դարձավ ՀՀ քաղաքական համակարգի բնորոշ առանձնահատկություններից մեկը: Հանրապետության գոյության ամբողջ ընթացքում պետական կենտրոնական և տեղական ինքնակառավարման մարմինների պայքարն իրավասության սահմանների համար չթուլացավ՝ ստանալով տարբեր դրսևորումներ:

Թեև Հայաստանը հռչակվել էր պառլամենտական հանրապետություն, սակայն հանրապետության գոյության սկզբում պառլամենտը ձևավորվել էր ոչ թե ընտրությունների միջոցով, այլ Ազգային խորհրդի հիմքի վրա՝ կուսակցական համամասնության սկզբունքով: Հետևաբար հանրապետության առանձին շրջաններ, առավել ևս Ալեքսանդրապոլի գավառը, որը միայն 1918թ. դեկտեմբերին ազատագրվեց թուրքական զինակալումից, չունեին իրենց ներկայացուցիչը պառլամենտում: Այստեղ գործում էին թուրքերի ռազմակալման շրջանում ստեղծված քաղաքային խորհուրդն ու վարչությունը:¹ Այս երկու մարմինների միջև լուրջ հակասություններ էին առաջացել իրավասության սահմանների վերաբերյալ: Ընդ որում, սրանցից յուրաքանչյուրն իր հերթին մեղադրում էր մյուսին ժողովրդի կողմից ընտրված չլինելու համար: Հակասություններն առանձնապես սրվեցին հայ-վրացական պատերազմի շրջանում:

Թուրքերի հեռանալուց հետո նրանց կողմից սանձազերծված հայ-վրացական պատերազմն աղետալի կացություն էր ստեղծել Ալեքսանդրապոլի գավառում: 1918թ. դեկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությունը, ՀՀ կառավարության նախագահ նախարարին ներկայացնելով հայ-վրացական պատերազմի հետևանքով Ալեքսանդրապոլի գավառի սովից մեռնող բնակչության վիճակը, տեղեկացնում է, որ Քաղաքային խորհրդի արտակարգ նիստը որոշել է դիմել կառավարությանը հետևյալ խնդրանքով. «Համարել ժամանակավրեպ և ծայրահեղ անցանկալի հայ-վրացական պատերազմը և փորձել հարցերը լուծել խաղաղ ճանապարհով: Դադարեցնել Ալեքսանդրապոլում պատասխանատու պետական պաշտոնյաների կողմից բռնի ձևով բնակչությունից հացի վերջին պաշարները խլելը և բնակչության մորիլիզացիան»:² Ի պատասխան կառավարության հունվարի 4-ի այն որոշման, որ պատերազմ հայտարարելու հարցը վերաբերում է միայն պառլամենտին, Ալեքսանդրապոլի քաղաքապետի գրության մեջ նշվում է. «Քանի որ Ալեքսանդրապոլ քաղաքը և գավառը չունեն իրենց ներկայացուցիչը պառլամենտում, ապա ինքնավարությունը՝ որպես դեմոկրատիայի ներկայացուցիչ, իրավունք ունի արտահայտելու իր կարծիքը այնպիսի էական հարցի շուրջ, ինչպիսին պատերազմի հայտարարումն է: Քաղաքային Դումայի կարծիքը՝ որպես հասարակական կարծիքի արտահայտություն, լավել է նույնիսկ միապե-

¹ Հայաստանի ազգային արխիվ /այսմիեստ՝ ՀԱԱ/, ֆ. 105, ց. 1, գ. 2711, ք. 3-4:

² Նույն տեղում, գ. 3003, ք. 3:

տական կարգերի ժամանակ, առավել ևս դեմոկրատական հասարակությունում նրանք չպետք է զրկված լինեն այդ իրավունքից: Մեր պատվամենտը իր ընտրության ձևով չի կարող լինել ժողովրդի կամքի իրական արտահայտիչը, որովհետև այն ընտրվել է Ազգային խորհրդի կողմից, որի կազմը պատահական է և ոչ թե դեմոկրատական ընտրությունների հետևանք: Լսելով կառավարության հունվարի 4-ի հաղորդումը՝ Դուսման միաձայն որոշել է չհամաձայնվել այդ հաղորդմանը և միաժամանակ հայտնել կառավարությանը, որ արդարությունը պահանջում է Ալեքսանդրապոլի բնակչությանը հնարավորություն տալ ունենալու իր ներկայացուցիչը»:³

Թեև դաշնակցականները կարողանում են բացարձակ մեծամասնություն ապահովել նախ՝ 1919թ. մայիսի 4-ի Ալեքսանդրապոլի քաղաքային Դուսմայի, ապա՝ հունիսի 21-23-ին տեղի ունեցած Հայաստանի պատվամենտի ընտրություններում, այնուամենայնիվ իրավասության սահմանների համար կենտրոնական և տեղական իշխանության մարմինների պայքարը չի թուլանում: Դիշտ է, 1919 թվականի մայիսի 28-ին Հայաստանի կառավարությունն ընդունում է զավառների ինքնավարության «ժամանակավոր օրենքը», սակայն ինքնավարության գործը չափազանց դանդաղ է զարգանում: Պատճառներից մեկն այն էր, որ «ժամանակավոր օրենքը» ռուսական տեղական ինքնավարության օրենքն էր, իսկ վերջինս թեև տեղական ինքնավարություններին լայն իրավունքներ էր տալիս, բայց պետական իշխանությանը վերապահում էր նույն զավառներում նման ֆունկցիաներով գործունեություն, որպես հետևանք՝ պետությունն ու ինքնավարությունը դառնում էին մրցակիցներ: Բնականաբար ինքնավարությունը չէր դիմանում այդ մրցակցությանը:

1919թ. հոկտեմբերին ՀՀ հանրային կրթության նախարարությանն ուղղված գրության մեջ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը, ի պատասխան Հայաստանի կառավարության ժողովրդական համալսարան բացելու առաջարկին⁴, գրում է, որ Քաղաքային ինքնավարության կարծիքով, համալսարանի ուղղակի վերահսկողությունը պետք է լինի քաղաքային ինքնավարության ձեռքում, քանի որ Քաղաքային ինքնավարությունը իրենից ներկայացնում է ավելի դեմոկրատական սկզբունքներով ընտրված հիմնարկություն, թե՛ իր կազմով և թե՛ այն խնդիրներով, որոնք դրված են ինքնավարության վրա:⁵

Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը գտնում էր, որ քաղաքի զարգացման համար հնարավորություններ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է Ալեքսանդրապոլ տեղափոխել մի շարք պետական հաստատություններ և հիմնարկություններ: 1919 թվականի հոկտեմբերի 16-ին, երբ ՀՀ հանրային կրթության նախարարությունը դիմում է Ալեքսանդրապոլի քաղաքագլխին՝ խնդրելով պարզել, թե հնարավոր է Ալեքսանդրապոլի ուսումնարանների շենքերում ժամանակավորապես տեղավորել համալսարանը, նպաստավոր պայմաններ ստեղծել համալսարանի գոյության համար,⁶ քաղաքագլուխը գրում է, որ ոչ միայն հնարավոր է, այլև անհրաժեշտ համալսարանը բացել Ալեքսանդրապոլում:⁷ Ավելին, նա առաջարկում է Ալեքսանդրապոլ տեղափոխել մի շարք այլ հաստատություններ ևս, ինչպես, օրինակ, փոստ-հեռագրատունը, երկաթուղային, ջրային և գյուղատնտեսական վարչությունները: «Մեր առաջարկի ընդունման դեպքում, - գրում է նա, - շնչասպառ Երևանը կթեթևանա, և Ալեքսանդրապոլին կտրվի

³ ՀԱՄ, ֆ. 105, ց. 1, գ. 2996, ք. 1:

⁴ Նույն տեղում, գ. 2777, ք. 15:

⁵ Նույն տեղում, գ. 2779, ք. 4-5:

⁶ Նույն տեղում, գ. 2798, ք. 1:

⁷ Նույն տեղում, ք. 2:

առաջ գալու և զարգանալու հնարավորություն»:⁸ Իսկ երբ 1920թ. հունիսի 21-ին Նախարարների խորհուրդը որոշում է համալսարանը տեղափոխել Երևան, Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը, նրա լիազոր ներկայացուցիչները, հանդես գալով դրա դեմ, հանրային կրթության նախարար Գ. Ղազարյանին ներկայացնում են մի զեկուցագիր, որում այդ քայլը համարում են վնասակար՝ գրելով. «Ամբողջ երկրի նյութերը քամել և խտացնել մի կետում, և գավառը արյունաքամ անել, համարում ենք մեծապես վնասակար հայրենիքի համար»:⁹

Տեղական ինքնակառավարման համակարգի կայացման և պետական իշխանության մարմինների հետ նրանց հարաբերությունների կարգավորման գործում կարևոր դեր ունեցավ 1920 թվականի հունվարին ստեղծված Հայաստանի քաղաքների միությունը: Միության նախաձեռնողը Երևանի քաղաքագլուխ Մուսինյանն էր, որը 1919թ. նոյեմբերի 14-ին, նպատակ ունենալով ընդլայնել մունիցիպալ (տեղական ինքնակառավարման) գործունեության ծավալը, Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հայկ Մելքոնյանին ուղղված գրության մեջ առաջարկում է միավորել ուժերը, ընդհանուր բնույթ կրող հարցերի առթիվ մշակել ընդհանուր տեսակետ, համագործակցել, փոխադարձաբար օգնել միմյանց: «Քաղաքային խորհուրդներից ամեն մեկը առանձին առանձին գործելիս,- գրում է նա,- նոյնիսկ իր կազմի մեջ ունենալով անհրաժեշտ կարող մտատրական ուժեր, մեծ դժարությունների է հանդիպելու եւ հարուցում հարցերից շատերը մշակուելու են թերի կերպով կամ մնալու են առանց լուծում ստանալու: Բացի այդ, կարող է պատահել, որ մի հարցի առթիւ զանազան խորհուրդներ զանազան որոշումներ կայացնեն եւ նոյնիսկ այդ որոշումները կարող է լինեն հակադիր: Անհրաժեշտ է, որ ընդհանուր բնույթ կրող հարցերի առթիւ քաղաքային ինքնավարությունները ունենան մշակած ընդհանուր մունիցիպալ տեսակետ եւ մշակուած ծրագրերի գործադրութեան ժամանակ կապ հաստատուի համագործակցութիւն ստեղծելու եւ մէկ մէկու փոխադարձ օժանդակութիւն ցոյց տալու նպատակաւ»:¹⁰

Քաղաքների միության ստեղծման գաղափարը խրախուսվում էր նաև կառավարության կողմից: Հանրապետության վարչապետ Ա. Խատիսյանը, հանդես գալով քաղաքների միության առաջին նիստում, նշում է, որ սկսվել է մեր պետության երկրորդ՝ վերաշինության շրջանը, և կառավարությունը այս շրջանում պարտականությունների մի մասը հանձնելու է հասարակական կազմակերպություններին: Ընդգծելով, որ մենք ուժեղ ինքնավարություններ չենք ունեցել կյանքի բացառիկ պայմանների պատճառով, Խատիսյանն անհրաժեշտ է համարում զարգացնել և ամրապնդել տեղական ինքնավարությունները, որոնք ունեն գործելու ներքին մեծ ուժ և կենսունակություն: Քաղաքների միության առջև դրվում էին միայն տնտեսական խնդիրներ, մասնավորապես՝ պայքար սովի և թանկության դեմ, գաղթականներին ընդունելու, նրանց ապրելու հարմարություններ տալու, շինարարական գործ ձեռնարկելու, կապիտալը երկրում արդյունաբերող դարձնելու և այլն: Նախատեսվում էր աջակցել մասնավոր դրամատերերին, շինարարական գործունեությանը, պարենավորման գործի կազմակերպմանը: «Եթե կարողանանք իրագործել այս ծրագիրը,- ամփոփում է միտքը Ա. Խատիսյանը. ապա ուրեմն մենք կարող կլինենք հանդես բերել մեր ժողովրդի ստեղծագործական ոյժը և ապացուցել, որ Հայաստանը՝ որպես անկախ պետություն, կենսունակ է ու կարող, իսկ այդ անելու ծանր հոգսը վիճակուած է քաղաքների միությանը»:¹¹

⁸ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2798, ք. 3:

⁹ Երևանի համալսարան, 1918-1920թթ, Վավերագրերի ժողովածու (Կազմողներ Հ. Մամիկոնյան, Ս. Միրզոյան), Եր., 1995, էջ 210: ՀԱԱ, ֆ. 207, ց. 1, գ. 337, ք. 208-209:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2842, ք. 1:

¹¹ «Հատաջ», 1920թ., Եր., 20 հունվար, թիվ 15:

Երկրի վերաշինությանը հասարակության ակտիվ մասնակցության և տեղական ինքնակառավարման համակարգի կայացման հաջորդ քայլը գավառային ինքնավարությունների ստեղծումն էր: Ալեքսանդրապոլի գավառային ինքնավարության ընտրությունները տեղի են ունենում 1920թ. փետրվարի 26-ին:¹² Սակայն գավառային ինքնավարությունը ևս կանգնում է իրավասության սահմանների հատակեցման խնդրի առաջ: Ալեքսանդրապոլի գավառային ինքնավարության երկրորդ նիստում վարչության նախագահ Հ.Չոլախյանը հայտարարում է, որ գավառային բոլոր հիմնարկությունները՝ վարչություն, դպրոց, պարենավորում, հիվանդանոց, դատարան, անասնաբուժություն, խնամատարություն, սերմացուի և այլ գործեր, պետք է հանձնվեն գավառային ինքնավարությանը:¹³ Բայց, ինչպես երևում է Ալեքսանդրապոլի գավառային ինքնավարության վարչության նախագահի՝ ՀՀ խնամատարության և վերաշինության նախարարին ուղղված մարտի 23-ի գրությունից, այդ հարցը դեռևս լուծված չէր. «Հինք ունենալով գաւառի Ձեմստոյի վարչութեան նախագահի բանաւոր բանակցութիւնները՝ Մինիստրութեանդ հետ,- նշված էր այդ գրության մեջ,-Վարչութիւնս խնդրում է կարգադրութիւն անել փոխանցելու Ձեմստոյին իրենց պաշտօնեութեանը և համապատասխանող վարկերով ա)գաւառիս պարենաւորման և խնամատարութեան գործը, բ) Ալեքսանդրապոլի բժշկա-սանիտարական գաւառային բաժինը, գ) վերաշինութեան հետ կապ ունեցող բոլոր ձեռնարկութիւնները»:¹⁴

Տեղական ինքնակառավարման մարմիններին զուգահեռ՝ նույն գործով շարունակում էին զբաղվել նախարարությունները: Այսպես, գաղթականների տեղափոխման գործով զբաղվում են և՛ տեղական ինքնակառավարման մարմինները, և՛ խնամատարության ու վերաշինության նախարարությունն իր լիազորների միջոցով: Ստեղծված երկիշխանության պայմաններում լուրջ հակասություններ էին առաջանում տեղական իշխանությունների և նախարարության լիազորների միջև: Մասնավորապես 1920թ. ապրիլին, Ալեքսանդրապոլից գաղթականներին Կարսի շրջան տեղափոխելու ժամանակ, երբ Ալեքսանդրապոլի քաղաքային իշխանությունները փորձում էին ստրատեգիական կարևոր համարվող գյուղերում տեղավորել ալեքսանդրապոլցիներին, խնամատարության նախարարության լիազոր ներկայացուցիչ Մմբատը, շահադիտական համարելով քաղաքագլխի այս քայլը, ընդդիմանում է:¹⁵ Ստեղծված երկվորյան պատճառով Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը հրաժարական է տալիս, իսկ հաջորդ քաղաքագլուխն առաջարկում է վերացնել այդ երկվորյունը:¹⁶

1920 թվականի ապրիլի 7-ին ՀՀ խորհրդարանի անդամ Մահակ Թորոսյանը հանդես է գալիս պետական որոշ հաստատությունների, մասնավորապես դպրոցական, խնամատարական, պարենավորման, հողային, ջրաբաշխական և ճանապարհների հաղորդակցության պետական գործերը գավառներում գավառական համայնական ինքնավարություններին հանձնելու վերաբերյալ օրենսդրական նախաձեռնությամբ:¹⁷

Սակայն մայիսյան դեպքերից հետո է միայն կառավարությունն այս ուղղությամբ որոշակի քայլեր անում՝ 1920թ. հունիսի 5-ին ընդունելով օրենք, որով նախարարությունների որոշ իրավասություններ փոխանցվում են գավառային ինքնավարություններին:¹⁸ Իսկ քիչ ավելի ուշ, տեղական ինքնակառավարման արդյունավետ կազ-

¹² «Հառաջ», 1920թ., Եր., 27 փետրվարի, ք.43:

¹³ Նույն տեղում, ք. 43:

¹⁴ ՀԱԱ. ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 2, ք. 134:

¹⁵ Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922թթ, փաստաթղթերի հավաքածու, կազմող՝ Կ. Ալեքսանյան, Եր., 2012, էջ.322: ՀԱԱ, ֆ.205, ց.1, գ.801, ք. 109:

¹⁶ Նույն տեղում, էջ. 339, ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2-րդ մաս, ք. 172:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 1457, ց.1, գ. 157, ք. 4:

¹⁸ Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները, Եր., 1998, էջ 326-327:

մակերպման նպատակով իրականացվում է գավառների խոշորացում, ստեղծվում են նահանգներ՝ արտակարգ լիազորություններով օժտված նահանգապետերի գլխավորությամբ:¹⁹ Թեև վարչական այս բաժանումը միտված էր տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը, սակայն լուրջ դժգոհություններ է առաջացնում տարբեր շրջաններում, մասնավորապես Թալինում և Կարսում:²⁰

Ալեքսանդրապոլում լուրջ դժգոհությունների տեղիք է տալիս նաև այն հանգամանքը, որ տարածքային կենտրոնական մարմինը, ի դեմս Շիրակի նահանգապետի, սկսում է առաջնորդվել կուսակցական շահերով: «Աշխատելով բարձրացնել կուսակցությունը՝ ակամայ խորտակում են պետականության հիմունքները», - գրում է Շիրակի նահանգապետ Կարո Սասունու իրավախորհրդատու Գևորգ Խոյեցյանը՝ նահանգի դրության վերաբերյալ նահանգապետին ուղղված գրության մեջ:²¹

Եվ, ի վերջո, հստակ չէր նաև իրավասությունների սահմանը տարածքային կենտրոնական և տեղական պետական մարմինների միջև: Նույն Գևորգ Խոյեցյանը վերը նշված զեկուցման մեջ այս առթիվ գրում է. «Նահանգապետը տեղում հանդիսանում է միակ ներկայացուցիչը կառավարության, իր մեջ է ամփոփում իշխանության ամբողջականությունը, նրան են ենթարկում նահանգում գործող բոլոր հիմնարկություններն ու վարչությունները, բացի զուտ զօրական ու դատաստանական, որոնք սակայն օժանդակիչ են քաղաքացիական իշխանության, որն իր հերթին նրանց վրայ է յեմում իրաւակարգի պահպանման գործում: Մինչդեռ մեզ մօտ միանգամայն ինքնիշխան են ե՛ր Ֆինանսների, ե՛ր Երկրագործության, ե՛ր Աշխատանքի, ե՛ր միւս նախարարությունների ներկայացուցիչները: Նրանցից ամեն մեկն ունի իր սեփական քաղաքականությունն ու գործելակերպը, որով ստեղծում են մի աններդաշնակ, քառասյին դրություն, խախտում միօրինակարգ հանրապետության զանազան մասերում, եւ շատ անգամ իրենց ձախող ընթացքով ջղայնացնում հասարակությանը ու դժգոհություն առաջացնում կառավարության ու տիրող կարգերի դեմ:

Բազմիշխանությունն է տիրում նաև նահանգապետին ենթակայ վարչական օրգանների մեջ, նրանցից ոչ մեկը չի ճանաչում իր պարտականությունների ու իրաւունքների սահմանը, իրաւասությունների ընդհանուր շփոթ է տիրում: Նահանգական, գաւառական, քաղաքային միլիցիոներ, պարէտ, երկաթուղու միլիցայետ, տեսուչ, միլիցիայի եւ այլն, եւ այլն, սրանցից ամեն մեկը յաճախ ձեռնամուխ է լինում միւսի իրաւասության ենթակայ խնդիրների, շատ անգամ էլ զանց առնում իրենը: Անհրաժեշտ է վերջ տալ այս շփոթին եւ ճշգրտօրէն գծել իւրաքանչիւրի պարտականությունների եւ իրաւունքի շրջանակը»:²² Մասնավորապես կենտրոնական և տարածքային պետական իշխանությունների անհամաձայնեցված գործողությունները, իրավունքների և պարտականությունների խառնաշփոթը թույլ չեն տալիս արդյունավետ օգտագործել Պարսկաստան հեռացող թուրքերի ունեցվածքը տնօրինելու հնարավորությունը:

Հայաստանի կառավարության և Կարսի պարսկական հյուպատոսի միջև պայմանավորվածության համաձայն՝ 1920թ. հունիս-հուլիսին Ալեքսանդրապոլի գավառից Ադրբայջանի 10 հազար թուրքեր, անցնելու էին Պարսկաստան: Սրանք իրենց ունեցած հազարավոր անասունները վաճառում են մասնավոր անձանց: Գյուղատնտեսության նախարարությունը այս մեծաքանակ տավարը գնելու և ժողովրդական տնտե-

¹⁹ «Շիրակի աշխատավոր», Ալեքսանդրապոլ, 1920, թիվ 25:

²⁰ Տես ՀԱԱ, ֆ. 201, գ. 1, գ. 533, ք.2:

²¹ ՀԱԱ, ֆ. 201, գ. 1, գ. 49, ք. 88-93: Կ. Ալեքսանյան, Ալեքսանդրապոլի գաւառը 1920-ի թուրք-հայկական պատերազմի նախօրեակին, Հայկազեան Հայագիտական հանդէս, LԲ Հատոր, Պեյրոթ, 2012, էջ 389:

²² ՀԱԱ, ֆ. 201, գ. 1, գ.49, ք. 88-93: Կ. Ալեքսանյան, նշվ. աշխ., էջ 388:

սուբյան զարգացման համար օգտագործելու նպատակով Ս.Կամսարականի նախագահությամբ կազմում է հատուկ հանձնաժողով և միաժամանակ դիմում ՆԳՆ օգնական Քրնոյանին՝ խնդրելով, որ կարգադրություն անի միլիցիային արգելելու տավարի վաճառքը առանձին մարդկանց կողմից: Սակայն հաջորդ օրը, երբ հանձնաժողովը գնում է թուրքերի մոտ գնումներ անելու, տեսնում է, որ միլիցիայի պետը ոչ միայն չի արգելում չարաշահումները, այլև մերժում է հանձնաժողովին օգնել: Եվ դեռ ավելին, հենց հանձնաժողովի աչքի առաջ «զանազան մութ տարրեր» միլիցիայի թույլտվությամբ կամ մասնակցությամբ գնում են անասունները: Հուլիսի 25-ին ՆԳՆ-ի օգնականը վարչապետին խնդրում է անմիջապես կարգադրություն անել հավաքված տավարի մասին, որովհետև բազմաթիվ դիմումներ են լինում այդ տավարն իրենց տրամադրելու:²³

Շիրակի նահանգապետն իր հերթին, չունենալով ոչ մի գրավոր հրաման և կարգադրություն, իր նախաձեռնությամբ կազմակերպում է Ալեքսանդրապոլով անցնող թուրքերի խուզարկում՝ նրանցից գրավելով բազմաթիվ ապրանքներ, որը, ըստ պայմանավորվածության, նրանք կարող էին իրենց հետ տանել: Եվ երբ ՆԳՆ օգնական Ս. Թորոսյանի հրահանգով հուլիսի 16-ին այստեղ է գալիս Չոհրաբյանը և պահանջում դադարեցնել խուզարկությունը, գավառական միլիցիայետը և Սասունցի Մուշեղը, պատճառաբանելով, որ գրավոր հրաման չկա, չեն դադարեցնում այն: Պառլամենտի անդամ Ա.Տեր-Միքայելյանը, տեղեկացնելով այս մասին ՆԳՆ օգնական Ս. Թորոսյանին, խնդրում է գրավոր կարգադրություն հետագա գործողությունների մասին: Եվ միայն հուլիսի 20-ին ՆԳՆ-ի օգնականը Ալեքսանդրապոլի նահանգապետին գրում է. «Պարսկաստան մեկնող գաղթականների մաքսային հատկացումները վերցնող դուք չեք: Ըստ պայմանագրի՝ այդ պիտի լինի հանրապետության սահմանի վրա և ֆինանսների նախարարության միջոցով: Դուք կատարել եք ապօրինի գործողություն և այդ ապրանքները ուղարկելու եք Երևան՝ ֆինանսների նախարարություն»:²⁴

Չմայած պետական կառավարման համակարգի կայացմանն ուղղված քայլերին՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և Ալեքսանդրապոլի տարածքային պետական և տեղական ինքնակառավարման մարմինները չկարողացան հանդես գալ որպես մեկ ամբողջական մարմին՝ ընդհանուր պետական շահերով: Իրավասությունների համար պայքարը, հատվածական և կուսակցական մոտեցումը, պետական շահի բացակայությունը արգելակեցին երկրի համաչափ զարգացումը, թուլացրին պաշտպանունակությունը:

ВЗАИМООТНОШЕНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ РА И ОРГАНОВ САМОУПРАВЛЕНИЯ АЛЕКСАНДРАПОЛЯ В 1918-1920 гг.

____ *Резюме* _____

____ *К. Алексанян* _____

Статья посвящена внедрению системы самоуправления в Республике Армения. Представлены взаимоотношения органов власти центрального и Александропольского самоуправления. Исследование материалов показывает, что борьба за правомочность становилась одной из особенностей политической системы РА. Она стала значительным препятствием в становлении системы государственного управления и для развития страны вообще.

²³ ՀԱՄ, ֆ. 201, ց. 1, գ. 157, ք. 32:

²⁴ Նույն տեղում., ք. 81:

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԱՅ-ԹՈՒՐԶԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՈՒՐՁ

1920թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը բռնազավթված Ալեքսանդրապոլում ստորագրվեց քեմալական Թուրքիայի կողմից սանձազերծված պատերազմի արդյունքներն ամփոփող բռնի ուժով պարտադրված ծանրագույն մի պայմանագիր, որով կասկածի տակ դրվեց հայոց պետականության հետագա գոյության հարցը: Այսօր անհերքելի է այն փաստը, որ կողոպտիչ այս պայմանագրի կնքումը հնարավոր դարձավ միայն խորհրդա-թուրքական ռազմաքաղաքական համագործակցության շնորհիվ: Համագործակցություն, որն ապահովեց Թուրքիայի հաղթանակն ու հույս ներշնչեց վերջինիս մեկընդմիջտ ազատվելու դարավոր թշնամուց¹: Ուրեմն և գուր չէր Թուրքիայի արտգործնախարարի պաշտոնակատար Ահմեդ Մուխթար փաշան դեռևս 1920թ. նոյեմբերի 8-ին Արևելյան ռազմաճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրին հրահանգում. «Ոչնչացնել հայերի բանակը, բռնախլել զենքը և բաժանել մուսուլմաններին, հայերին զրկել նոր բանակ ստեղծելու իրավունքից, տիրել երկաթուղիներին և անմիջական ուղղակի կապ հաստատել ադրբեջանական թուրքերի հետ»²:

Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման հարցում, անշուշտ, պատասխանատվության իր բաժինն ունի նաև ՀՀ կառավարությունը, որը ռազմաքաղաքական առումով չկարողացավ կազմակերպել երկրի պաշտպանությունն արտաքին ներխուժումից, իսկ պարտություն կրելով՝ կնքեց քաղաքականապես անիրավահավասար պայմանագիր:

Հայ պատմագրությունը բազմիցս անդրադարձել է այս պայմանագրին, որովհետև ուժով պարտադրված լինելով՝ այն առայսօր վերագնահատման կարիք ունի:

Խորհրդային տարիներին Ալեքսանդրապոլի պայմանագրին անդրադարձել են Բ. Բոդյանը, Ջ. Կիրակոսյանը, Գ. Գալոյանը, Է. Ջոհրաբյանը, Ա. Եսայանը, Մ. Արզումանյանը, Ս. Ալիխանյանը և ուրիշներ³, որակելով այն որպես ստորացուցիչ, հրեշավոր և նույնիսկ դավաճանական⁴: Սակայն ոչ միշտ է կարելի համաձայնվել խորհրդահայ պատմագրության կողմից հնչեցված մեկնաբանություններին և առավել ևս տրված զնահատականներին: Օրինակ՝ Ա.Կարինյանը բանակցություններում Խորհրդային

¹ *М. Кемаль, Путь новой Турции, т. 3, М., 1934, с.314.*

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 31, թ. 6:

³ *Б.Борьян, Армения, международная дипломатия и СССР. Ч.II, М.-Л., 1929, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Ջ.Կիրակոսյանի խմբ., Եր., 1972: Գ.Գալոյան, Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923), Եր., 1999: Է.Ջոհրաբյան, Սովետական Ռուսաստանը և հայթուրքական հարաբերությունները (1920-1922թթ.), Եր., 1979: Ա.Եսայան, Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920-1922), Եր., 1967: Մ.Արզումանյան, Արևալիքից վերածնունդ, Եր., 1973: Ս.Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում 1917-1921 թթ., Եր., 1966:*

⁴ *Լեռ, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 455, Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Եր., 1967, էջ 111: Ս.Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում 1917-1921թթ., Եր., 1966, էջ 252: Մ.Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976, էջ 796: Բ.Օհանջանյան, Դաշնակցությունն առանց դիմակի, Եր., 1980, էջ 153: Հր.Միսնիսյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Եր., 1986, էջ 530 և ուրիշներ:*

Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Մոխիվանու միջնորդության մերժման մեղավոր համարում է հայկական պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանին՝ հայտարարելով, թե վերջինս ոչ միայն հրաժարվել է Մոխիվանու ծառայություններից, այլև Ս. Վրացյանին ուղարկած հեռագրում մեղադրել է նրան վնասակարության մեջ⁵: Մինչդեռ Ալ. Խատիսյանն իր հուշերում գրում է, թե ինքը շատ ճիշտ է թափել, որ Ռուսաստանի ներկայացուցիչը մասնակցի բանակցություններին, բայց չի կարողացել փոխել թուրքերի վճռական դիրքը⁶: Ինչ վերաբերում է Մոխիվանու գործունեության վնասակարությանը, ապա այդ մասին խոսվում է միայն նոյեմբերի 29-ին, երբ Կարաբեքիրն արդեն հինգ օր առաջ մերժել էր Մոխիվանու՝ որպես միջնորդի մասնակցությունը խորհրդածողովին, և վերջինս Ալեքսանդրապոլում պարզապես զբաղված էր խորհրդային իշխանության քարոզչությամբ⁷:

Ալեքսանդրապոլի պայմանագրի շուրջ խորհրդահայ պատմագրության կողմից պատմական փաստերի միտումնավոր կեղծման մեկ այլ դեպք կարելի է համարել այն հայտարարությունը, թե «դաշնակները, տեսնելով խորհրդային կարգերի հաղթանակը Հայաստանում, անդամահատեցին վերջինս և նրա մի մասը՝ Ղարսի և Արդահանի մարզերը, Երևանի մահանգի Սուրմալուի գավառը դավաճանաբար հանձնեցին Թուրքիային»⁸:

Ի՞նչ խոսք կարող է լինել այդ տարածքները միտումնավոր թուրքերին հանձնելու մասին, երբ թշնամին հենց Խորհրդային Ռուսաստանի թողվությանը էր զենքի ուժով գրավել վերոնշյալ տարածքները և Ալեքսանդրապոլի պայմանագրով ստիպել այն ընդունել:

Խորհրդահայ պատմագրության մեջ տեղ գտած մեկ այլ կեղծիքի համաձայն՝ ՀՀ դաշնակցական կառավարությունը 1920թ. նոյեմբերի 30-ի՝ լույս դեկտեմբերի 1-ի գիշերը կայացած նիստում որոշել է դաշնակցել Կարաբեքիրի հետ՝ ընդդեմ Խորհրդային Հայաստանի⁹: Իրականում՝ ճակատագրական այդ նիստում մի կողմից՝ ընդունվել է Բ. Լեզրանի վերջնագիրը Հայաստանի՝ խաղաղ ճանապարհով խորհրդայնացման, իսկ մյուս կողմից՝ Բ. Կարաբեքիրի վերջնագիրը հաշտության պայմաններն ընդունելու վերաբերյալ¹⁰:

Փաստորեն Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման գործում խորհրդահայ պատմագրությունը, երբեմն նույնիսկ միտումնավոր կեղծելով պատմական փաստերը, մեղադրում է Հայաստանի դաշնակցական կառավարությանը՝ մոռանալով, որ ստորագրուցիչ այդ փաստաթղթի կնքման հիմնական մեղավորը Խորհրդային Ռուսաստանն է, որ, համաշխարհային սոցիալիստական հեղափոխության մոլուցքով տարված, քեմալականներին ցույց տվեց ռազմական, նյութական ու քաղաքական աջակցություն:

Ալեքսանդրապոլի պայմանագրի գնահատման խնդրին անդրադարձել են նաև արևմտյան հեղինակները: Ընդ որում, եթե ՀՅԴ գործիչները (Ս. Վրացյան, Ռ. Փիրումյան, Ա. Ահարոնյան) փորձել են հիմնավորել պայմանագրի կնքման պատմական անխուսափելիությունը՝ նշելով, թե Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրվել է «հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանն սպառնացող մահացու վտանգից դրդված»¹¹,

⁵ Ա. Կարիկյան, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, էջ 40:

⁶ Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 301:

⁷ ՀԱՍ, ֆ. 4033, ց. 3, գ. 57, թ. 1:

⁸ Ա. Հակոբյան, Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Եր., 1948, էջ 11:

⁹ Ա. Մնացականյան, Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության, Եր., 1976, էջ 46:

¹⁰ Ա. Հակոբյան, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005, էջ 326-327:

¹¹ Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 503:

«սպառնալիքի և ճնշման տակ»¹² կամ «խրրև հաղթող կողմից պարտվող կողմին բռնությամբ պարտադրված պայմանագիր»¹³, ասպա սիյուրքի ոչ դաշնակցական որոշ հեղինակներ, ինչպիսիք են, օրինակ՝ Շ. Նաթալին, Ջ. Մարրյանը և Մ. Ավետյանը, խորհրդային պատմաբաններից ոչ պակաս ծանր որակումներ են տվել՝ պայմանագիրը համարելով «ժայռենադավ և մաքսանենգ», «գերագույն դավաճանություն»¹⁴:

Ամփոփելով վերը ասվածը՝ նշենք հետևյալը. հայ պատմագրությունը բազմիցս անդրադարձել է մեր ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող Ալեքսանդրասյուրի պայմանագրին: Նախորդ ինը տասնամյակների ընթացքում հավաքվել ու շրջանառվել է խնդրին առնչվող հսկայական փաստական նյութ: Այդուհանդերձ գիտական գրականության մեջ փաստաթղթին տրվել են ոչ միանշանակ, երբեմն հակասական մեկնաբանություններ ու գնահատականներ:

Իսկ ի՞նչ է տեղի ունեցել իրականում, ինչո՞ւ Ալ. Խատիսյանն Ալեքսանդրասյուրում պայմանագիր ստորագրեց, և պատմաիրավական ի՞նչ հիմքեր կան չճանաչելու համար այդ փաստաթղթի օրինականությունը:

1920թ. նոյեմբերի 30-ի երեկոյան թուրքերը վերջնագիր ներկայացրին Հայաստանին: Դրանից մի քանի ժամ առաջ ՀՀ վարչապետ Մ. Վրացյանին Հայաստանի խորհրդայնացման մասին վերջնագիր ներկայացրեց նաև Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը: Նոյեմբերի 30-ի՝ լույս դեկտեմբերի 1-ի գիշերը տեղի ունեցած նիստում ՀՀ կառավարությունը որոշեց ընդունել Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ Լեգրանի վերջնագիրը, սակայն առաջարկեց իր նախապայմանները. 1. Հայաստանը ճանաչել անկախ, 2. քաղաքացիական կռիվներ թույլ չտալ, 3. կառավարության մեջ ընդգրկել նաև դաշնակցականների և 4. թուրքերի հետ հաշտություն կնքել¹⁵: Նախապայմաններից վերջինը թույլ է տալիս ենթադրել, որ իշխանությունից հեռացող դաշնակցական կառավարությունը թուրքերի հետ որևէ փաստաթղթի ստորագրում չէր նախատեսում՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը թողնելով խորհրդային իշխանությունների տնօրինությանը: Այդուհանդերձ, Ալեքսանդրասյուրի պայմանագիրը ստորագրեց հենց հրաժարական տված և իշխանությունը Հայիեդկոմին հանձնած կառավարության պատվիրակությունը:

Դաշնակցական պատմագրությունը տեղի ունեցածը բացատրում է հետևյալ կերպ. առաջին՝ պայմանագիրը կնքվել է մի քանի օրով Խորհրդային Հայաստանի փաստական իշխանության տեր Դրոյի համաձայնությամբ, երկրորդ՝ Կարաբեքիրը սպառնում էր չստորագրելու դեպքում հայ պատվիրակների հետ Ալեքսանդրասյուրի ամբողջում հաշվեհարդար տեսնել, իսկ հետո շարունակել ռազմական գործողությունները մինչև Երևան¹⁶:

Այն, որ Ք. Կարաբեքիրը քաջատեղյակ էր Հայաստանի քաղաքական զարգացումներին, փաստ է: Նախքան Ալեքսանդրասյուրի պայմանագրի ստորագրումը Հայ-

¹² Ռ. Փիրուլյան, *Հայաստանը Հ.Յ. Դ-րոշլիկի հարաբերությունների ոլորտում 1917–1921*, Եր., 1997, էջ 295:

¹³ Ա. Ահարոնյան, *Մարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր)*, Բոստոն, 1943, էջ 110–111:

¹⁴ Շ. Նաթալի, *Երեք դաշնագիր (Ալեքսանդրասյուրի, Մոսկվայի և Կարսի)*, Բեյրութ, 1957, էջ 3, 12: Ջ. Մարրյան *Երեք դաշնագրեր (Ալեքսանդրասյուրի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը 1920–1921 թթ.)*, Բեյրութ, 1979, էջ 82: Մ. Ավետյան, *Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870–1920) հուշամատյան և գորավար Անդրանիկ, Փարիզ, 1954*, էջ 231 և այլն:

¹⁵ *Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ.* (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000, էջ 381:

¹⁶ Վլ. Ղազախեցյան, *Հայաստանը 1920–1940 թթ.*, Եր., 2006, էջ 12:

հեղկոմի նախագահ Ս. Կասյանը Գիլիջանից հեռագրել էր նրան՝ տեղեկացնելով Հայաստանի խորհրդայնացման մասին: Ինքն էլ պատասխան հեռագրով շնորհավորել էր Հայաստանի խորհրդայնացումը¹⁷: Թուրքական պատվիրակությունն ուղղակի հնարավոր բոլոր միջոցներով ջանում էր հաշտություն կնքել ՀՀ դաշնակցական կառավարության հետ՝ խորհրդայնացող Հայաստանի նոր իշխանություններին կատարված փաստի առջև կանգնեցնելու համար: Ալեքսանդրապոլի դեպքերից երկուս ու կես ամիս անց՝ 1921թ. փետրվարի 20-ին, Կ. Պոլսի պատրիարքարանում կայացած հանդիպման ժամանակ Ալ. Խատիսյանը, արդարանալով իր իսկ կնքած տխրահռչակ պայմանագրի համար, պատմել էր, թե հայկական պատվիրակության վրա բարոյահոգեբանական ճնշում գործադրելու համար Ք. Կարաբեքիրը նույնիսկ հրամայել էր սենյակի պատուհանի տակ, որտեղ ընթանում էին բանակցությունները, 2 կախաղան կանգնեցնել՝ 4 դիակներով:

Ըստ Ե. Մարգարյանի՝ դաշնակցականները ստորագրեցին Ալեքսանդրապոլի պայմանագիրը՝ ուղղակի համոզված լինելով, որ այն իրավական ուժ չի ունենա¹⁸: Դրոն ինքը դեկտեմբերի 2-ի երեկոյան՝ Խատիսյանի հետ ունեցած հեռախոսազրույցի ժամանակ, այն կարծիքին էր, թե Խորհրդային Հայաստանը «հեղափոխական երկրների միակ բարեկամ հեղափոխական Ռուսիայի» միջոցով Թուրքիայի հետ կգտնի ընդհանուր լեզու¹⁹:

Կարո՞ղ էր արդյոք Ալ. Խատիսյանը հրաժարվել պայմանագիրը ստորագրելուց: Մեր կարծիքով, այո՛, որպես հիմնավոր փաստարկ հայտարարելով, թե ինքը միջպետական հարաբերություններ կարգավորող փաստաթուղթ ստորագրելու իրավունք չունի, որովհետև այն կառավարությունը, որ ինքն էր ներկայացնում, դեկտեմբերի 2-ի ժամը 16.00-ից այլևս գոյություն չունի: Ավելին, Ալ. Խատիսյանը, որպես հիմք ընդունելով Երևանի համաձայնագրի 7-րդ կետը, որով Ռուսաստանի խորհրդային կառավարությունը պարտավորվում էր անհապաղ զինված ուժեր կենտրոնացնել անհրաժեշտության դեպքում ՀՄԽՀ անկախությունը պաշտպանելու համար²⁰, կարող էր հրաժարվել պայմանագիրը ստորագրելուց՝ ամբողջ պատասխանատվությունը դնելով նորահռչակ խորհրդային կառավարության վրա: Ուրեմն և գուր էին Ս. Վրացյանի այն կասկածները, որ «եթե Խատիսյանը հրաժարվեր ստորագրելուց, ապա Արաքսի ափին կանգնած թուրքերը առաջ կշարժվեին, և մինչև ռուս զորքերը հասնեին Էջմիածին ու Երևան, հնարավոր էր, որ էլ հայ չմնար»²¹: Մեր կարծիքով, Թուրքիան, որ արդեն գրավել էր «Ազգային ուխտով» իրեն «հասանելիք» հայկական տարածքները՝ Խորհրդային Հայաստանից ևս մեկ-երկու գավառ «պոկելու» համար չէր համարձակվի վտանգի տակ դնել խորհրդա-թուրքական հարաբերությունների ապագան:

Ուրեմն և Ալեքսանդրապոլի պայմանագրի ընդունման թերևս միակ պատմաբանաբանական հիմքն այն է, որ Հայաստանը պարտվել էր Թուրքիային, և վերջինս հաղթողի իրավունքով և ուժի սպառնալիքով նրան պարտադրել էր ծանր պայմանագիր:

Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագիրը միջազգային իրավական նորմերին համապատասխանության տեսակետից դիտարկելիս կարելի է տեսնել, որ այն ի սկզբանե չի ունեցել իրավական ուժ: Պայմանագրի ստորագրման պահին Ալ. Խատիսյանի պատվիրակությունը ՀՀ կառավարության հրաժարական տալու պատճառով, դա-

¹⁷ Ռ. Փիրուլյան, *նշվ. աշխ.*, էջ 295:

¹⁸ *Եր. Տարկիսյան, За кулисами. Как рождался Московский договор 1921 г. (Литературная Армения, Եր., 1991, N 1, с. 79).*

¹⁹ Է. Ջոհրաբյան, *նշվ. աշխ.*, էջ 115:

²⁰ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (քաղաքական պատմություն)..., էջ 384:

²¹ Ս. Վրացյան, *նշվ. աշխ.*, էջ 503-504:

դարել էր պետական պաշտոնական լինելուց²², իսկ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (այսուհետև՝ ԹԱՄԺ) պատվիրակությունը անօրինական էր (այդ պահին Թուրքիայում օրինական իշխանություն էր համարվում Կ. Պոլսի սուլթանական կառավարությունը) և միջազգայնորեն չճանաչված: Այսինքն՝ կողմերը միջպետական հարաբերություններ կարգավորող փաստաթուղթ կնքելու իրավասություն չունեին: Փաստաթուղթն իրավական ուժ չուներ նաև այն պարզ պատճառով, որ չէր վավերացվել կողմերից և ոչ մեկի կողմից, մինչդեռ, ըստ 18-րդ հոդվածի, դա պիտի արվեր մեկամսյա ժամկետում: Իսկ միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի համաձայն՝ չվավերացված պայմանագիրը չէր կարող լինել միջազգային իրավունքի աղբյուր և պարտավորություններ առաջացնել կնքող կողմերից որևէ մեկի համար:

Հենց դա նկատի ուներ ՌՄՖԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինը, երբ Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին հղած 1921թ. ապրիլի 8-ի նոտայում գրում էր. «Ես ինձ թույլ եմ տալիս Ձեզ հիշեցնել, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվել է դաշնակցական կառավարության կողմից այն պահին, երբ արդեն հռչակված էր Հայաստանի խորհրդային կառավարությունը, և որ դա վավերացված չէ...»²³: Դա նկատի ուներ նաև Խորհրդային Հայաստանի կառավարությունը, որը 1920թ. դեկտեմբերից մինչև 1921թ. հունվարն ընկած ժամանակահատվածում մի քանի անգամ նոտա-հուշագիր է ներկայացրել Թուրքիայի կառավարությանը՝ առաջարկելով անմիջապես բանակցություններ սկսել նոր բովանդակությամբ արդարացի պայմանագիր կնքելու համար²⁴:

Պայմանագիրը չճանաչվեց նաև եվրոպական երկրների կողմից: Հայ-թուրքական հաշտության բանակցություններից շարաքներ առաջ՝ 1920թ. նոյեմբերի 2-ին, բյուրո-կառավարությունը, կանխազգալով Հայաստանի մոտալուտ պարտությունը, Եվրոպայում ՀՀ պատվիրակության դեկավար Ա. Ահարոնյանի միջոցով տեղեկացնում է Անտանտի երկրներին, թե շրջապատված լինելով թուրք և բոլշևիկ թշնամիներով՝ հարկադրված է լինելու ծանր պայմանագիր ստորագրել, ուստի հորդորում է իր դաշնակիցներին չընդունել ստորագրելիք փաստաթուղթը²⁵: ՀՀ կառավարությունը նմանատիպ բողոք էր ուղղել նաև Ազգերի լիգային²⁶:

Լոնդոնի 1921թ. փետրվար-մարտյան միջազգային խորհրդաժողովը, որպես հիմք ընդունելով Ազգերի լիգայի 1919թ. ընդունած կանոնադրության 20-րդ հոդվածը, որի համաձայն՝ «արգելվում էր ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքի միջոցով պայմանագրի պարտադրումը», չեղյալ համարեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը²⁷: Ի

²² Ա.Հակոբյանը, անդրադառնալով դեկտեմբերի 2-ի երեկոյան կայացած Ալ.Խատիսյան-Դրո հայտնի հեռախոսազրույցին, վստահեցնում է, թե Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվելուց մի փոքր առաջ Խատիսյանը, այնուամենայնիվ, որոշ լիազորություններ վերստացել էր, որովհետև Դրոն, որ Հայաստանի նախկին կառավարության և Հայհեղկումի միջև մի քանի օրով կայի ու իրավահաջորդի գործառույթի իրականացնողն էր, փաստաթուղթը ստորագրելուն դեմ չի արտահայտվել (Մանրամասն տե՛ս Ա.Հակոբյան, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 58):

²³ Տ.Սահակյան, Ցավայի պայմանագրեր, Եր., 2007, էջ 350:

²⁴ Геноцид армян (документы и комментарии), сост. проф., Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, стр. 376.

²⁵ Ա.Ահարոնյան, նշվ. աշխ., էջ 111-112:

²⁶ Г.Махмуриян, Лига Наций, Армянский вопрос и Республика Армения, Ер., 1999, стр. 123.

²⁷ Մ.Ասլանյան, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համեմատական վերլուծության փորձ, Լրագրեր հասարակական գիտությունների, Եր., 2005, թիվ 1, էջ 180:

դեպ, այդ նորմն այսօր ամրագրված է ՄԱԿ-ի կանոնադրությունում և Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. մայիսի 23-ի կոնվենցիայում²⁸:

Փաստորեն, Ալեքսանդրապոլի պայմանագիրը պարտադրված է ուժով, միջազգային պայմանագրային իրավունքի տեսակետից անընդունելի է և չվավերացված: Փաստաթղթի ստորագրումից առաջ և հետո հայկական կողմը տեղյակ է պահել միջազգային հանրությանը առ այն, որ իրեն ուժի ու սպառնալիքի միջոցով պարտադրվում է պայմանագիր, ուստի այն պետք է հայտարարվի չեղյալ:

Անկախ իր իրավական հիմքից, Ալեքսանդրապոլի պայմանագիրը, անշուշտ, քաղաքական, քարոզչական և հոգեբանական մեծ ազդեցություն է ունեցել հայ-ռուս-թուրքական հետագա հարաբերությունների (մաս քանակցությունների) արդյունքների վրա: Հայաստանի և Թուրքիայի միջև միջնորդ հանդիսանալով՝ Խորհրդային Ռուսաստանը, առանց արդեն խորհրդայնացած Հայաստանի կարծիքը հաշվի առնելու, 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով ոչ միայն ճանաչեց Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիայի տարածքային ձեռքբերումները, այլև դրանք մի քանի ամիս անց Կարսում հարկադրեց ընդունել մաս Խորհրդային Հայաստանին:

РАЗМЫШЛЕНИЯ ОБ АЛЕКСАНДРАПОЛЬСКОМ АРМЯНО-ТУРЕЦКОМ ДОГОВОРЕ

___ Резюме ___

___ А. Айрапетян ___

В 1920 г., в ночь со второго на третье декабря, в захваченном турецкими войсками городе Александрополе был подписан тяжелейший для армянского народа договор.

Будучи вынужденно подписанным, данный договор с момента подписания считался неприемлемым и недействительным с точки зрения международного договорного права, и потому не может являться действенным и обязывать ни одну из сторон. До и после подписания договора армянская сторона периодически осведомляла международное сообщество и предьявляла жалобы великим державам о том, что данный договор был насильственно навязан.

Тем не менее, договор, независимо от своей правовой основы, имел влияние на дальнейшие трехсторонние (русско-армяно-турецкие) отношения и, в первую очередь, на Московский и Карсский договоры.

²⁸ Հոդված 52. «Պայմանագիրը համարվում է առ ոչինչ, եթե կնքված է ուժի սպառնալիքի կամ այն կիրառելու միջոցով ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքների խախտմամբ» (մանրամասն տե՛ս Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, Եր., 2001, էջ 6, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիա, մաս 5, բաժին 2):

**ԳՅՈՒՂԱՍՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ
XIXդ. վերջին և XXդ. առաջին կեսին**

XIXդ. վերջին և XXդ. սկզբին հայկական գյուղը դեռ ամբողջովին չէր ազատվել ավատատիրական հարաբերություններից, գյուղատնտեսական հողերը հիմնականում պետության, կալվածատերերի և հոգևոր հաստատությունների սեփականությունն էին: Այդ առումով կարևորում ենք ներկայացնել՝ Ալեքսանդրապոլի գավառի գյուղատնտեսական հողերի սեփականության ձևերի և գյուղացիական տնտեսությունների կառուցվածքային փոփոխություններն ինչպես են ազդել ազգաբնակչության սոցիալական կազմի ու կենսամակարդակի վրա: Հայաստանում մինչև խորհրդայնացումը գյուղական բնակչությունը բաժանվել է երկու մեծ խմբի՝ պետական և մասնատիրական (մուլքադարական և քիուդարական վանքապատկան և այլն) հողերի վրա բնակվողների: Հատկանշական է, որ Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիական հողերը եղել են բացառապես պետության սեփականությունը: Դրա վկայությունն է այն, որ XXդ. սկզբին պետական գյուղացիությունը կազմել է Երևանի նահանգի բնակչության 63,8 %-ը, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի գավառում՝ 92.2, Նախիջևանի՝ 30.4, Նոր Բայազետի՝ 72.9, Մուրմալուի՝ 49.7, Շարուր-Գարալագյազի՝ 62,5 և Էջմիածնի գավառներում՝ 60,1 %-ը¹: Հայաստանում կապիտալիզմի զարգացման պրոսական ուղին² հանգեցրեց մանր գյուղացիական և ավատատիրական տնտեսությունների քայքայմանը, որպես հետևանք ավելացավ գյուղական բնակչության հոսքը դեպի քաղաքներ: Գյուղացիներն էլ համարում էին բանվորների, արհեստավորների և մանր վաճառականների շարքերը: Ականավոր մարքսիստ Ստ. Շահումյանը 1906թ. գրում է. «Երևանի նահանգում գյուղական մանր տնտեսությունները քայքայվում են, գյուղացիությունը բնական անհրաժեշտությամբ բաժանվում է երկու մասի, մի կողմից՝ ծնունդ է առնում գյուղական մանր բուրժուազիան, որը հետզհետե հարստանում է, կենտրոնացնում իր ձեռքին հողերը, մյուս կողմից՝ գյուղացիական մեծամասնությունը զրկվում է հողից և արտադրության միջոցներից, արդյունքում ավելացած գյուղացիական աշխատուժի հաշվին ավելանում է բանվորների թիվը»³:

Ապրանքային արտադրության վերելքը և ունեցվածքային անհավասարությունը խորացրին Երևանի նահանգի գյուղացիության սոցիալական շերտավորումը, տեղի ունեցավ գյուղացիական տնտեսությունների նոր շերտավորում՝ նրանց բաժանումը չքավոր, միջակ և ունևոր խավերի: Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Չանգեզուրի և Ղազախի գավառներում 1907թ. ուսումնասիրված 42670 տնտեսություններից կամ 198372 շնչից սննդի կարիք ունեցողները կամ չքավորները կազմում էին 81774, սերմի կարիք ունեցողները (միջակները)՝ 79012, իսկ ապահովվածները (ունևորները)՝ 37586 շունչ: Բանող անասուն չունեցող տնտեսատերերը համարվել են չքավոր գյուղա-

¹ Մ. Ադոնց, Ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XXդ. սկզբին, Եր., 1968, էջ 58:

² Պրոսպերայում կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում ավատատիրական տնտեսություններն աստիճանաբար վերափոխվեցին ֆերմերային տնտեսությունների: Հայաստանում խոշոր հողատերերը՝ քիուվները և մուլքադարները, արտադրությունից հիմնականում կտրված էին և ապրում էին ռենտայով: Մեր երկրի գյուղերում կապիտալիստական կացութաձևը զարգացավ հիմնականում կուլակային տնտեսությունների ձևով:

³ Ստ. Շահումյան, Ընտիր երկեր հ. 1, Եր., 1957, էջ 57:

ցիներ⁴: Չունենալով սեփական հողատարածք, բանող անասուն, նյութական միջոցներ՝ չքավոր գյուղացին իր և ընտանիքի գոյությունը պահպանելու համար աշխատել է որպես բատրակ ունևոր գյուղացու մոտ կամ սեզոնային արտազմա աշխատանքի է մեկնել: Գյուղական բուրժուազիան հաճախ է օգտագործել վարձու աշխատանքը: Բամբակագործության բնագավառում նրանք իրենց դաշտերում աշխատելու համար վարձել են մեծ թվով բատրակներ, որոնք եկել են թե՛ Երևանի նահանգի լեռնային գյուղերից, թե՛ Պարսկաստանից ու Թուրքիայից: Բատրակները վճարվում են ինչպես բնամթերքով, այնպես էլ դրամով⁵: Չքավոր գյուղացիներ էին նաև մեկ կամ երկու գլուխ բանող անասուն ունեցող բոլոր գյուղացիները: Ալեքսանդրապոլի գավառում XX դ. սկզբին 138 գյուղացիական տնտեսություններից 7,2%-ը եղել է հարուստ, 15,9%-ը՝ ունևոր, 44,9 %-ը՝ միջակ և 32%-ը՝ չքավոր⁶:

Գյուղացիական հողատարածքի պակասության հիմնական պատճառներից մեկը գյուղացիների թվի շեշտակի աճն էր: Գյուղական բնակչության չքավորությունը պայմանավորված էր նաև սակավահողությամբ: Երևանի նահանգի գավառներում, գյուղական բնակչության թվի աճին զուգընթաց, չէր ավելանում գյուղատնտեսական հողահանդակների տարածքը, ինչը երբեմն պատճառ է եղել գյուղացիների ընդհարման: Դրա վկայությունն են Երևանի նահանգային ու գավառային ոստիկանական արձանագրությունները⁷: Սակավահողության և մանր գյուղացիական տնտեսության պայմաններում ավելի է դժվարանում հողի մշակումը: Այսպես, Ալեքսանդրապոլի գավառի Փոքր Քեթի (ներկայիս՝ Փոքրաշեն) գյուղացիները գութանների քչության պատճառով երբեմն համաձայնության չէին գալիս հող վարելու հարցում⁸: Հողի սակավությունը ստիպում էր մշակել նաև սարերի թեք լանջերը: Ալեքսանդրապոլի գավառի սակավահող գյուղերում դրանք վարել են ոչ թե գութանով, այլ արորով⁹: Գյուղացիական սակավահողությամբ պայմանավորված՝ 1901թ. մայիսի 1-ի «Անդրկովկասի պետական հողերում բնակվող գյուղացիների հողաշինարարության գլխավոր հիմունքների մասին» օրենքով հողերի բաշխման ձևերը գյուղական համայնքներում մնում են անփոփոխ, իսկ գյուղացիներին առաջարկվում էր իրենց հողաբաժինն օգտագործել: Օրենքով թույլատրվում էր հողի համայնական օգտագործումը փոխարինել ծխականով, եթե այդ որոշման օգտին քվեարկեր գյուղի բնակչության 2/3-ը: Գյուղացիներն իրենց հողաբաժնից օգտվելու համար պարտավորվում էին վճարել հողի հարկ կամ բահրա: Պետական հողերը ենթակա չէին վերաբաժանման առանձին գյուղերի և համայնքների միջև, իսկ հողաբաժինները չէին կարող լինել վաճառքի կամ գրավ դնելու առարկա: Հատկանշական է, որ տարբեր եկամտաբերության հողերի տուրքերը նույնն են եղել: «Երևանի նահանգի 1901-1903թթ. արքունական հողային տուրքերի հաշվեցուցակի» համաձայն՝ յուրաքանչյուր դեսյատին այգու և բանջարանոցի զուտ եկամուտը որոշվեց. Ալեքսանդրապոլի գավառի համար՝ 100 ռուբլի, Նոր Բայազետի՝ 11 ռուբլի, Էջմիածնի՝ 100 ռուբլի 74 կոպ., իսկ Երևանի՝ 76 ռուբլի 33 կոպ.: Բայց հայտնի է, որ Նոր Բայազետի գավառի բանջարանոցները ոչնչով չէին տարբերվում Ալեքսանդրապոլի բան-

⁴ Մ. Աղոնց, նշվ. աշխ., էջ 112:

⁵ Հայ ժողովրդի պատմություն, հ.6, Եր., 1981, էջ 317

⁶ Մ. Աղոնց, նշվ. աշխ., էջ 119:

⁷ Շիրակի երկրագիտական թանգարանի գրանցման գույքամատյան (այսուհետ՝ ՇԵԹԳԳ) 2784, «Արձագանք» գրականական և քաղաքական շաբաթաթերթ:

⁸ ՇԵԹԳԳ գիտաօժանդակ ֆոնդ 1211-1214, Բ. Նալբանդյան, Հայրենի գյուղի և մեր տոհմի պատմությունից, էջ 20:

⁹ ՇԵԹԳԳ գիտաօժանդակ ֆոնդ 1211-1214, Բ. Նալբանդյան, Հայրենի գյուղի և մեր տոհմի պատմությունից, էջ 20:

ջարանոցներից, իսկ Էջմիածնի այգիները՝ Երևանի այգիներից¹⁰: Ալեքսանդրապոլի գավառի մեկ ծխին հասնող տարածությունը 1901թ. կազմել է 10,3 դեսյատին կամ մոտ 11,3 հա և այդ ցուցանիշով զիջել է միայն Նոր Բայազետի գավառին¹¹: Ընդունված օրենքը հանգեցրեց կալվածատիրական հողատիրության քայքայմանը, իսկ կուլակներն ու զանազան դրամատներն իրենց ձեռքը կենտրոնացրին կալվածատերերի հողերը, և հողի ավատատիրական սեփականությունը փոխարինվեց բուրժուականով: Հողային հաջորդ օրենքը, որ հայտնի է «Ստոլիպինյան ագրարային բարեփոխումներ» անվանումով, ընդունվեց 1906թ. նոյեմբերի 9-ին: Այդ օրենքով իրավունք տրվեց պետական գյուղացիներին դառնալու իրենց հողաբաժինների սեփականատերեր: Օրենքի ընդունումը նպաստեց գյուղական համայնքային տնտեսության թուլացմանը և մենատնտեսության ուժեղացմանը: Ստոլիպինյան ագրարային ռեֆորմները միտված էին միջակ և ունևոր գյուղացիների ձևավորմանն ու հզորացմանը: Հատկանշական է, որ Ստոլիպինյան հողային օրենքը լայն տարածում ստացավ կայսրության եվրոպական գոտու նահանգներում՝ շրջանցելով ծայրամասերը, այդ թվում նաև՝ Հարավային Կովկասը, իսկ Երևանի նահանգի հողերը նախկինի պես մնում էին պետության և խոշոր հողատերերի սեփականություն: Հիմնականում միջակ գյուղացիները իրենց բաժնեհողերի օգտագործման համար պարտավոր էին հողատերերին վճարել բնամթերային և դրամական ռենտա: 1905թ. Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիական համայնքների օգտագործման տակ գտնվող հողերի (227690 դեսյատին) 99,9 %-ը պետական էին, իսկ 0,1%-ը՝ մասնատիրական: Երևանի նահանգի գյուղատնտեսական հողերի 69,2%-ը՝ պետական հողեր էին, 25,5%-ը՝ կալվածատիրական, և 5,3%-ը՝ մասնատիրական¹²: Մասնավոր հողատիրության բարձր տեսակարար կշիռ ունեցել են Լոռու գավառամասը և Չանգեզուրի որոշ շրջաններ: Հայաստանում ամենախոշոր կալվածատիրական տնտեսությունն ունեցել է հայոց եկեղեցին: Մուլքադարական և թիուլային¹³ իրավունքով հայոց եկեղեցին տիրապետել է գյուղերի: Այդ էր պատճառը, որ հայոց եկեղեցին դեմ էր ստոլիպինյան ռեֆորմներին, որովհետև, ըստ էության, ագրարային ռեֆորմների հետևանքով եկեղեցին կկորցներ իրեն պատկանող հողերի զգալի մասը: Հատկանշական է, որ ստոլիպինյան ագրարային ռեֆորմները Հարավային Կովկասում սկսվեցին 1912թ. դեկտեմբեր 19-ից հետո, երբ Նիկոլայ II-ը հաստատեց «Հողերի փրկագնման մասին» օրենքը: Այդ օրենքի 16-րդ կետով գյուղացիները հողեր կարող էին ձեռք բերել ինչպես կանխիկ գումարով, այնպես էլ փրկագնման միջոցով: Գյուղացին և շինականը փրկագնման գումարը պետությանը կարող էին մարել 56, 41 կամ 28 տարվա ընթացքում¹⁴: Փրկագնման ենթակա էին միայն կալվածատիրական, այսինքն՝ մուլքադարական, թիուլային, վանքապատկան հողերը: Քանի որ Ալեքսանդրապոլի գավառում կալվածատիրական հողեր չկային, ընդունված օրենքը որևէ կերպ չէր կարող ազդել գյուղացիական կյանքի վրա:

Կապիտալիզմի զարգացումը Հայաստանում անհրաժեշտաբար փոփոխություններ մտցրեց հարկային գործընթացում: 1901թ. հունվարին ընդունված օրենքով հաստատվում է ծխահարկ, բահրատուրք և հողային հարկ: Բահրատուրքը ներառում

¹⁰ Հայ ժողովրդի պատմություն հ.6, Եր., 1981թ. էջ 325:

¹¹ Մ. Արմենց, նշվ. աշխ., էջ 69:

¹² *Кавказский календарь на 1907г., Тифлис 1908г., стр. 72.*

¹³ Պետական և արքունի ծառայության դիմաց, իբրև պարզև, բարձրաստիճան ամիրաներին և զինվորականությանը երբեմն նաև հոգևորականությանն իբրև թիուլ տրվում էին մեկ կամ մի քանի գյուղերից ստացվող եկամուտները: Թիուլն ընդհատվում կամ մեկ ուրիշին է փոխանցվում տվյալ թիուլդարի պաշտոնից ազատվելու դեպքում: Մուլքադարներ են կոչվել խոշոր հողատերերը, որոնց ունեցվածքը փոխանցվել է ժառանգման սեփականության իրավունքով:

¹⁴ Մ. Արմենց, նշվ. աշխ., էջ 69:

էր երկու տարր՝ հողային ռենտա, որտեղ հողօգտագործողը հարկի գումարը վճարում է հողի սեփականատերին, իսկ հողի հարկը վճարում է պետությանը: Հատկանշական է, որ պետությանը հողահարկ մուծել են մաս հողի սեփականատերերը: Բնականաբար այդպիսի պայմաններում փոփոխություններ պետք է առաջանային ապրանքափողային հարաբերություններում: Գյուղատնտեսական հողերը տրվել են ոչ միայն փրկագնման, այլև վարձակալության իրավունքներով ինչպես պետական գյուղացիությանը, այնպես էլ տարատեսակի գյուղացիական ընկերություններին: Հատկանշական է, որ մինչև 1917թ. փետրվարյան հեղափոխությունը Հայաստանում, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի գավառում, հողերի վարձակալության իրավունքից օգտվել են հիմնականում միջակ և ունևոր գյուղացիները:

Ապրանքափողային հարաբերությունները Հայաստանում սկսվել են դեռևս ստոլիպինյան գյուղացիական ռեֆորմներից առաջ: Գյուղացիական տնտեսությունը, հարմարվելով շուկայի պահանջներին, նախադրյալներ է ստեղծում առևտրային երկրագործության ձևավորման համար: Այսինքն՝ աղքատ գյուղացին գյուղատնտեսական աշխատանքների կատարման համար ունևոր գյուղացուց և առևտրականից տարեկան բարձր տոկոսադրույքով (30-40 տոկոս) վարկ է վերցրել¹⁵: Վաշխատական տոկոսն ավելի էր բարձրանում, երբ գյուղացիները պարտքը մարում էին ոչ թե դրամով, այլ գյուղատնտեսական մթերքներով: Ներքաշվելով շուկայական հարաբերություններ՝ Երևանի նահանգում հացահատիկը 20-րդ դարի սկզբին դառնում է վաճառքի հիմնական առարկաներից մեկը: Երևանի գավառը, 1904թ. սկսած, Ալեքսանդրապոլի գավառից ներմուծել է ցորեն, որովհետև հացահատիկի փոխարեն մշակել է բամբակ, որն ավելի ձեռնառու է և շահութաբեր է եղել: Իսկ Երևանի գավառում արտադրված բրինձն առաքվել է Կարսի մարզ՝ Ալեքսանդրապոլի և այլ գավառներ¹⁶: Երկաթուղու կառուցումով էր նաև պայմանավորված, որ Երևանի նահանգում նվազում է հացահատիկի արտադրության ծավալները, որովհետև Ռուսաստանի եվրոպական գոտուց մեծ քանակությամբ հացահատիկ սկսեցին ներմուծել: Հասկանալի է, որ դա բացասաբար էր անդրադառնալու Ալեքսանդրապոլի գավառի հացահատիկի արտադրության վրա և փոխելու էր գյուղատնտեսության ճյուղային կառուցվածը: Ալեքսանդրապոլի գավառում տարեցուտարի աճում էին կտավատի արտադրության ծավալները: Բավական է նշել, որ 1912թ. Երևանի նահանգում կտավատի ցանքատարածությունները կազմել են 3154 հա, որից 2385-ը տեղաբաշխված է եղել Ալեքսանդրապոլի գավառում¹⁷:

Հայաստանի գյուղատնտեսության կառավարման ոլորտում փոփոխություններ եղան Առաջին աշխարհամարտի վերջին: 1917թ. մարտի 26-ին Անդրկովկասյան հատուկ կոմիտեն, որպես հետևանք գյուղացիական զանգվածային բողոքի ճնշման, ստեղծում է հողային գործերի ժամանակավոր հանձնաժողով: Կառավարությունը պարտավորվում է վերացնել «ճորտատիրական» իրավունքի մնացուկները: Սակայն Հողային կոմիտեն անկարող գտնվեց կատարելու գյուղացու պահանջները և նախագուշացումներից անցավ ահաբեկումների¹⁸: Միակ գործնական քայլը կառավարության կողմից այն էր, որ բնամթերային վարձավճարը փոխարինեց դրամականով, և գյուղացին պարտավորվում էր պետությանը վճարել ստացված բերքի 1/5-ի արժեքը ոչ թե բնամթերքով, այլ դրամով¹⁹:

¹⁵ Մ. Արմնց, նշվ. աշխ., էջ 105

¹⁶ «Մշակ», 1904թ. նոյեմբերի 18, (N 253):

¹⁷ Հայ ժողովրդի պատմություն հ. 6, Եր., 1981, էջ 315:

¹⁸ Վ. Միքայելյան, Հողային հարցը և գյուղացիության դրությունը Հայաստանում (1917-1920թթ.), Պատմաբանասիրական հանդես N 1, Եր., 1960, էջ 111:

¹⁹ Վ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 113:

Ալեքսանդրապոլի գավառի գյուղատնտեսության վիճակն էլ ավելի վատացավ 1918-1920թթ.: Առաջին հանրապետության խորհրդարանի 1918թ. դեկտեմբերի 18-ին հրավիրված նիստին տեղեկություն է տրվում, որ հանրապետությունում գաղթականների թիվը 600 հազարից ավելի է²⁰: Այդպիսի պայմաններում գյուղացու սերմնացուի և անասնազվխաքանակի պահպանումը վտանգված էին: Նա իրեն չէր կարող սննդով ապահովել, ուր մնաց մասնաբաժին հաներ գաղթականի համար: Գաղթականներին սննդով ապահովելու համար կառավարությունն ստիպված անցավ գյուղացիներից պարենի բռնագրավման, որը հաջողություն չունեցավ: Ներքին շուկայում չկարողանալով ցորեն հայթայթել՝ կառավարությունը հույսը կապում է դրսից հացահատիկ ներմուծելու հետ²¹: Հացամթերման և այլ խնդիրներով հիմնականում զբաղվել է Առաջին հանրապետության կառավարության երկրագործության և պարենավորման նախարարությունը, որի նպատակն է եղել ֆինանսական միջոցներ հատկացնել գյուղատնտեսական գործիքների նորոգման, նորերը գնելու, սերմնացու ձեռք բերելու և այլ աշխատանքների համար: Եղել են դեպքեր, որ հատկացված դրամական միջոցներն ու օգնությունները գյուղացիական տնտեսությունների միջև արդյունավետ չեն բաշխվել²²: Առաջին հանրապետությունը գյուղատնտեսական ճգնաժամը հաղթահարեց արտասահմանյան երկրներից ներմուծված գյուղաարքավորումների և սերմնացուի հաշվին, որն ապահովեց բարձր բերքատվություն²³: Սակայն, 1920թ. բերքահավաքի ժամանակ թուրքական բանակը մուտք գործեց Հայաստան, ավելի ճիշտ՝ հացառատ Ալեքսանդրապոլի գավառ: Ստացված բերքի հիմնական մասը տեղափոխվեց Թուրքիա:

Կարմիր բանակի մուտքը (1920թ. նոյեմբեր-դեկտեմբերին) ազդարարվեց նրանով, որ առաջնահերթ հրապարակվեց Հայաստանի հեղկոմի դեկրետը հողերի ազգայնացման մասին: Ազգայնացվում է մոտ 1,5 մլն հա հողատարածք, որի մեծ մասը կառավարությունը հանձնում գյուղացիական տնտեսությունների օգտագործմանը²⁴: Նորաստեղծ բոլշևիկյան կառավարությունը 1921թ. ապրիլի 28-ի դեկրետով վերացնում է կալվածատիրական, վանքապատկան հողերի մկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը: Ընդունված դեկրետը նպատակ ուներ լուծում տալու հանրապետության գյուղացիության բարդ հիմնախնդիրներին: Առաջին աշխարհամարտը և թուրքական օկուպացիան հանրապետության գյուղատնտեսությունը հասցրել էին ծայրահեղ ծանր կացության: 1921-1922թթ. Հայաստանի գյուղացիության 78%-ը, իսկ Ալեքսանդրապոլի գավառում՝ 90%-ից ավելին գտնվում էր ծայրահեղ չքավորության մեջ: Հայ գյուղացին ի վիճակի չէր իր միջոցներով վերականգնելու մանր գյուղացիական աղքատ տնտեսությունը²⁵: Հատկանշական է, որ Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիական տնտեսությունները 1914թ. համեմատությամբ 1922թ. կորցրել էին գութանների 92,2, արորների՝ 76,8 և գերանդիների՝ 96,6%-ը²⁶: Նույն տարվա զարմանը Հայկենտվիճվարի (Հայաստանի կենտրոնական վիճակագրական վարչություն) անկետային ուսումնասիրության նյութերից պարզվում է, որ գավառի Դուզլյանդի գավառամասում

²⁰ ՀՀ պառլամենտի նիստերի արձանագրություններ (1918-1920թթ.), Եր., 2010, էջ 115:

²¹ Նույն տեղում, էջ 166:

²² Նույն տեղում, էջ 390:

²³ Բ. Թամրազյան, Սովետական Հայաստանում գյուղատնտեսական մտավորականության կազմավորման պատմությունից (1921-1925թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետ՝ ԼՀԳ), հ.6 (546), Եր., 1988, էջ 31:

²⁴ Ա. Հակոբյան, Սոցիալիստական հայ ազգի կազմավորման և զարգացման մասին, Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի N3, Եր., 1952, էջ 24:

²⁵ Ա. Մարտիչյան, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները հայկական գյուղում, Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի N5, Եր., 1948, էջ 4:

²⁶ Ա. Մարտիչյան, նշվ. աշխ., էջ 18:

ցանք չունեցող 31 տնտեսություններից 27-ը «ինչն՞ու ցանքս չունեք» հարցին պատասխանել են՝ «լծկան, սերմացու ու ինվենտար չունենք», նույնպիսի պատասխան են տվել Մոլլա-Գյոբչա գավառամասի 30 տնտեսությունից 29-ը, Թալինի գավառամասի 28 տնտեսությունից 16-ը, Հաջի Խալիլի գավառամասի 21 տնտեսությունից 19-ը և այլն²⁷: Ի դեպ, գյուղատնտեսական գործիքների սակավության պատճառով հացահատիկի միջին բերքատվությունն այդ տարի բավականին ցածր է եղել՝ 1 հա-ից միջինը 7,1 ցենտներ:

Նորաստեղծ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը մի քանի որոշումներ ընդունելուց և արդյունավետ աշխատանքից հետո կարճ ժամանակահատվածում երկիրը, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի գավառը դուրս բերեց սոցիալ-տնտեսական ճգնաժամից: Հայաստանի Ժողկոմխորհի ղեկընտնով 1922թ. օգոստոսի 9-ին հանրապետությունում կազմակերպվում են փոխադարձ օգնության գյուղացիական կոմիտեներ (ՓՕԿ), որոնց նպատակն էր գյուղի աշխատավոր և չքավոր մարդկանց, կարմիր բանակայինների ընտանիքներին ցույց տալ նյութական և բարոյական օգնություն: 1923-1924 տնտեսական տարում գործում էին այդպիսի 994 կոմիտեներ, որոնք 59000 ընտանիքի ցույց տվեցին օգնություն՝ տրամադրելով սերմնացու, քարշող ուժ և գործիքներ²⁸: Ալեքսանդրապոլի գավառում չքավորներն անդամագրվում էին սպառողական և փոխօգնության կոմիտեներին: Բացի դրանից, Ալեքսանդրապոլի ամեն մի գավառակ ունեցել է վարկընկերություններ: Տեղի իշխանությունները, որպեսզի չքավոր գյուղացիությանն ազատեն կուլակների ազդեցությունից, վարկավորում էին: Այսպես, 1926թ. վարկընկերությունը առաջին գավառակի (Դուզքյանը) չքավոր գյուղացիներին վաճառել է 263 գութան, 73 փոցխ, 6 շարքացան, 20 խոտհարք, 10 քամհար, 9 խնցիկ և այլ գյուղատնտեսական գործիքներ, իսկ երկրորդ գավառակի (Բյավթառու) վարկընկերության 500 անդամի տրվել է 6000 ռուբլի՝ գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու համար²⁹: Գյուղացիներին հարկային արտոնություններ տրամադրելու համար եղել են նաև չարաշահումներ: Այսպես, Թալինի գավառակի երկու կուլակ ուզեցել են ազատվել գյուղմիաս (գյուղացիական միասնական) հարկից³⁰: Չարաշահումներից խուսափելու և բատրակների շահերը պաշտպանելու համար գավառակների գործադիր կոմիտեները որոշում են հսկողություն սահմանել, որ բատրակները իրենց նվազագույն աշխատավարձը և հավելավճարներն ստանան առանց ձգձգումների, արգելեն ունևոր գյուղացիներին հովիվ դառնալ, իսկ աշխատանքի տեսչության ստուգումները դարձնեն հաճախակի³¹:

Ալեքսանդրապոլի գավառում գյուղատնտեսության զարգացման գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ գյուղացիական կոոպերացիաների ստեղծումը, որը խրախուսվում էր հանրապետության կառավարության կողմից: Այն զուտ սոցիալիստական հասարակարգի ծնունդ չէ և ի հայտ է եկել դեռևս նախախորհրդային տարիներին³²: Կոոպերացիայի տարրական ձևերից է սպառողական կոոպերացիան, որը Հայաստանում ծնունդ է առել 1898թ., երբ Երևանում գործեց «Էկոնոմիկա» սպառողական ընկերությունը, իսկ 1918թ. Հայաստանում գործում էին արդեն 266 սպառողական

²⁷ Նույն տեղում, էջ 10:

²⁸ Բ. Թևոյան, *Աշխատուժի գրադավածության հարցի լուծումը Սովետական Հայաստանում (1921-1929թթ.)*, ԼՀԳ, հ.3(495), Եր., 1984, էջ 21:

²⁹ ՀԱԱ Շիրակի մարզային բաժանմունք, ֆ. 9, ց. 1, գ. 7, թ. 73:

³⁰ Նույն տեղում, գ. 39, թ. 219:

³¹ Նույն տեղում, գ. 1, գ. 41, թ. 49:

³² Վ. Ղազարյան, *Կոլեկտիվացման նախապատրաստումը Հայաստանում 1928-1929թթ.*, Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի N5, Եր., 1959, էջ 44:

կոտայերատիվ ընկերություններ³³: 1923թ. ՀԿԿ Կենտրոնական կոմիտեն ձեռնամուխ եղավ Հայաստանի կոտայերատիվ ցանցի վերակառուցման աշխատանքներին: Նշված տարում վերացվում են Հայկոտայի բոլոր բաժանմունքները, և դրանց տեղը կազմավորվում են յոթ տարածքային կոտայերատիվներ Երևանում, Ղարաքիլիսայում (ներկայիս՝ Վանաձոր), Ալեքսանդրապոլում, Էջմիածինում, Նոր Բայազետում, Մեղրիում և Դիլիջանում: Հանրապետությունում կոտայերատիվ շարժումն սկսեց թափ հավաքել 1924թ.-ից, երբ կազմավորվեց Հայգյուղկոտայը, որը մեծ օգնություն էր հասցնում չքավոր և միջակ գյուղացիներին, իսկ 1928թ. սպառողական կոտայերացիայում ընդգրկված էր գյուղացիական տնտեսությունների արդեն 38,5 %-ը 1924թ. 5,9 %-ի դիմաց³⁴: Կոտայերատիվների դերը մեծ էր հատկապես կոլտնտեսություններին կամ գյուղացիական տնտեսություններին տեսակավոր սերմերի, գյուղատնտեսական մեքենաների և այլ սարքավորումների մատակարարման և վարկեր տրամադարելու մեջ՝ դրա տեղը գյուղացիներից ստանալով գյուղմթերքներ՝ պայմանագրով սահմանված գներով³⁵: Արտադրականին զուգահեռ՝ գործել է սպառողական կոտայերացիան, ինչը փայտտերերի կամավոր միավորում է՝ իր անդամների կարիքները ապրանքներով և ծառայություններով բավարարելու, նրանց շահերը ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով: Սպառողական կոտայերացիան՝ որպես միավորում, շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում. եկամուտներն օգտագործվում են միայն իր կանոնադրական նպատակների իրականացման համար: Սպառողական կոտայերացիայի կազմակերպական ձևերն են սպառողական ընկերությունները և դրանց միությունները: 1920-ական թվականներին Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի գյուղատնտեսության մեջ որոշակի տեղ էին գրավում գյուղատնտեսական կոտայերացիայի պարզ ձևերն ու վարկային ընկերությունները³⁶: Ալեքսանդրապոլի գավառում շարժումը նշանավորվեց սպառողական կոտայերացիաների, գյուղատնտեսական արտադրական կոտայերատիվների ու կոմունաների ստեղծումով, որոնք իրար հետ մրցակցում էին: Մասնավոր առևտրականներն ազատորեն մրցում էին կոտայերատիվ և պետական առևտուր կազմակերպողների հետ և շատ դեպքերում ապրանքներն ավելի էժան էին վաճառում: Այսպես, 1922թ. Հայաստանի անտառկոմը որոշում է բնակչությանը փայտ վաճառել՝ յուրաքանչյուր սաժենի(2,1մ) համար սահմանելով 40 ռուբլի, մինչդեռ մույն քանակությամբ փայտ շուկայում մասնավոր առևտրականները վաճառում էին 32-35 ռուբլի³⁷: Քիչ չեն եղել նաև չարաշահումները կոտայերատիվներում: Լենինականի գավառի Գյուլլիջայի գյուղխորհրդի 1927թ. արձանագրություններից մեկում հիշատակվում է. «Կոտայերատիվի գործակատարներից մեկի կողմից ապրանքների բաշխումը չի կատարվում կոտայերատիվի սկզբունքներով: Հիշյալ խանութում թագավորում են խնամիության և մույնիսկ վերավաճառքի դեպքեր: Բատրակները՝ որպես անդամներ, չեն օգտվում կոտայերատիվից, իսկ ունևոր գյուղացիները, որոնք անդամ չեն, օգտվում են: Այսպես, կոտայերատիվի անդամ բատրակը չի ստանում իրեն հասանելիք լամպի ապակին և 400գ. շաքարավազն այն դեպքում, երբ Աղա-ալի Ալասկեր օղլին ստացել է մեկ պարկ շաքարավազ և չորս ֆունտ թեյ, իսկ կոտայերատիվի կողմից հատկացված 900 ռուբլին, որը նախատես-

³³ Ա. Մկրտչյան, Կոտայերատիվ շինարարությունը Երևանի գավառում (1921-1925թթ.), Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի N7, Եր., 1954, էջ 3:

³⁴ Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 39:

³⁵ Վ. Ղազախեցյան, նշվ. աշխ., էջ 43:

³⁶ Բ. Թամրազյան, Մովետական Հայաստանում գյուղատնտեսական մտավորականության կազմավորման պատմությունից (1921-1925թթ.), ԼՀԳ, հ. 6 (546), Եր., 1988, էջ 32:

³⁷ Ա. Մկրտչյան, Կոտայերատիվ շինարարությունը Երևանի գավառում (1921-1925թթ.), Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի N7, Եր., 1954, էջ 6:

ված է եղել հատկացնել չքավորներին անդամագրելու համար, չի կատարվել»³⁸: Պատահել է, որ գյուղացին աշխատել է քաղաքի արտադրական և տրանսպորտային ոլորտներում և միաժամանակ զբաղվել է երկրագործությամբ, ինչը հարուցել է համագյուղացիների վրդովմունքը³⁹:

Հողերի վարձակալության երևույթը 1927-1929թթ. տարածված է եղել ոչ միայն Լենինականի գավառում, այլև Հայաստանում: Նրանք, ովքեր չունեին ֆինանսական և նյութական միջոցներ գյուղատնտեսական աշխատանքներ կազմակերպելու, հնարավոր է, որ նաև ունակ չէին աշխատանքը արդյունավետ կազմակերպելու: Դրանով է պայմանավորված նաև, որ 1927թ. մեր հանրապետության չքավոր գյուղացիության 67,9%-ը իրենց հողերը վարձակալության են տվել կուլակներին⁴⁰: Այն հանգամանքը, որ կուլակային տնտեսությունը վարձակալությամբ արտադրության միջոցներ էր վերցնում, կատարվում էր արտադրությունն ընդլայնելու և կապիտալը վերարտադրելու համար, իսկ չքավոր գյուղացին կարիքը հոգալու, գոյատևելու համար է վարձակալությամբ վերցրել հողերը:

ԽՍՀՄ-ում գյուղատնտեսության զարգացման ոլորտում շրջադարձային նշանակություն ունեցավ նոր տնտեսական քաղաքականության անցնելը (այսուհետ՝ ՆՏԶ): ՆՏԶ-ն ունեցել է երկակի բնույթ, մի կողմից՝ կարճատև նահանգ՝ կապիտալիստական տնտեսահարաբերությունների թողությունը, իսկ մյուս կողմից՝ աշխատանքներ են տարվել սոցիալիստական տնտեսահարաբերություններ հաստատելու ուղղությամբ⁴¹: Այսինքն՝ պետությունը ուղղորդել է շուկայի զարգացումը, իսկ շուկան կարգավորել է տնտեսական հարաբերությունները: ՆՏԶ-ին հաջորդեց գյուղական բնակավայրերի կոլեկտիվացումը, երբ պետությունն ամբողջությամբ վերահսկում ու կառավարում էր գյուղատնտեսությունը: Մինչև 1930-ական թվականները ԽՍՀՄ-ում, այդ թվում՝ Հայկական ԽՍՀ-ում, պահպանվում էին կապիտալիզմին բնորոշ տնտեսավարման ձևերը: Դրանով էր պայմանավորված նաև, որ երկրորդ (1933-1937թթ.) հնգամյակում քաղաքական խնդիր էր դրվում վերջնականապես վերացնել կապիտալիստական տարրերին: Այդ առումով, երկրի առաջնորդ Ի. Ստալինն առաջարկում էր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, փնտրել կապիտալիստներին, որոնք դարձել են արհեստավորներ, հաշվետարներ, քարտուղաներ և այլն: Կոլտնտեսությանը ձևականորեն կողմնակցելով՝ նրանք իրականում խոչընդոտում են կոլտնտեսության ձևավորումը, փորձում են վիժեցնել հացամթերումները, փչացնում են կոլտնտեսության ունեցվածքը⁴²: Չնայած գյուղացիության կողմից կոլեկտիվացման նկատմամբ թերհավատությանը՝ 1934թ. Լենինականի շրջանում կոլեկտիվացման ցուցանիշն արդեն 76,1% էր⁴³: Այնուհանդերձ անհատ տնտեսությունները որոշ բուսատեսակների արտադրությամբ դեռևս առանցքային տեղ է զբաղեցրել: Դրա վկայությունն են աղյուսակ 1-ում բերված թվային տվյալները:

³⁸ ՀԱԱ Շիրակի մարզային բաժանմունք, ֆ.9, ց.1, գ.38, թ.106:

³⁹ Նույն տեղում, գ.144, թ.16:

⁴⁰ Ա. Մարտիչյան, նշվ. աշխ. էջ 19:

⁴¹ Ա. Հակոբյան, Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման խաղաղ աշխատանքին անցնելու սկզբնական շրջանում (1921-1922թթ.), Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի N3, Եր., 1950, էջ 30:

⁴² Հ. Կարապետյան, Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը երկրորդ հնգամյակի առաջին տարիներին (1933-1937թթ.), Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի N8, Եր., 1950, էջ 15:

⁴³ Հ. Կարապետյան, նշվ. աշխ., էջ 23:

Աղյուսակ 1

Լենինականի շրջանի մթերումների քանակը (առ հունվարի 1-ը 1933թ.)
«Հացամթերում» ձեռնարկությունում /տոննա⁴⁴

	Պլանով նախատեսված			Փաստացի կատարված է			Փաստացի աճը %-ով
	Կոլտնտեսություն	Անհատական տնտեսություն	Ընդամենը	Կոլտնտեսություն	Անհատական տնտեսություն	Ընդամենը	
Ցորեն	900	2600	3500	886	2704	3590	102,5
Ցորենի սերմ	500	-	500	143,6	-	143,6	28,7
Կտավատ	124,7	81,5	206,3	13,7	13,1	26,8	12,9
Կերակրախոտ	125	1025	1220	50	518,6	568,6	46,6
Դարման	1890	3100	4990	740	1050,8	1789,8	35,8

Կոլեկտիվացման հաջողությունն ապահովելու համար նախաձեռնվեց, այսպես կոչված, «քսանհինգհազարականների» շարժումը: Հատկանշական է, որ Հայաստանում այս շարժումը լայն տարածում չի ստացել: Այսպես, 1930թ. որպես կամավորներ գյուղում ապրելու և աշխատելու են մեկնել 60 բանվոր, հիմնականում Երևան և Լենինական քաղաքներից, մեկ տարի անց նրանցից գյուղում մնացել են 47-ը, իսկ 1932թ.՝ 33 բանվոր:⁴⁵ Լենինականի մեխանիկական գործարանի բանվորական կոլեկտիվը սերտ կապ հաստատեց իր քսանհինգհազարական պատվիրակ Աբգար Դ-անիելյանի հետ, որը Լենինականի շրջանի Կապս գյուղի կոլտնտեսության նախագահն էր: Նրան օգնելու համար գործարանը երեք անգամ բանվորական բրիգադ ուղարկեց Կապս, իսկ Լենինականի մեխանիկական գործարանը գյուղի կոլտնտեսությանը մվիբեց մեկ քամհար մեքենա:⁴⁶

Որպես ամփոփում նշենք, որ ավելի քան 40 տարիների ընթացքում Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի դրությունը գյուղատնտեսության բնագավառում բազմիցս ենթարկվել է փոփոխության՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործընթացների փոփոխություններով: Գյուղատնտեսական ռեֆորմները գործուն ազդեցություն ունեցան գյուղական բնակչության սոցիալական կազմի վրա: Մինչ խորհրդային կարգերի հաստատումը գավառի գյուղացիությունը հողը օգտագործել է վարձակալության հիմունքներով: Կոլեկտիվացումն արմատապես փոխեց գավառի գյուղատնտեսության վիճակը: Մանր գյուղացիական տնտեսություններին փոխարինելու եկան կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունները: Կոլեկտիվացումը նպաստեց գյուղատնտեսության մեքենայացմանը, աշխատուժի ավելցուկին և քաղաքային բնակչության թվի աճին:

⁴⁴ ՀԱՍ Շիրակի մարզային բաժանմունք Ֆ.9, ց.1, գ.148, թ.5:

⁴⁵ Մ. Ալլահվերդյան, Քսանհինգհազարականները կոլտնտեսային շարժման կազմակերպիչներ Հայաստանում, Տեղեկագիր Հայկական ՍՍՌ- գիտությունների ակադեմիայի N12, Եր., 1963, էջ 14:

⁴⁶ Մ. Ալլահվերդյան, նշվ. աշխ., էջ 17:

СОСТОЯНИЕ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА АЛЕКСАНДРАПОЛЬ-ЛЕНИНАКАНСКОГО УЕЗДА В КОНЦЕ XIX-ГО И В НАЧАЛЕ XX вв.)

___ Резюме ___

___ А. Бояджян ___

На протяжении более 40 лет сельское хозяйство Александрополь-Ленинаканского уезда подвергалось изменениям, что было обусловлено различными социально-экономическими и политическими процессами. Сельскохозяйственные реформы сильно повлияли на социальный уровень сельского населения.

Коллективизация основательно изменила положение дел в сельском хозяйстве уезда. На смену мелким крестьянским хозяйствам пришли коллективные и советские хозяйства. Коллективизация способствовала механизации сельского хозяйства, избытку рабочей силы и росту городского населения.

**ՀԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐ
ԵՎ ՀԱՎԱՏՍԼԻՔՆԵՐ**

Հացը ոչ նյութական մշակութային ժառանգության կարևոր բաղադրիչներից է, որն իր ստեղծման ժամանակներից մինչ օրս պահպանվել ու կիրառվում է գրեթե բոլոր ժողովուրդների կենցաղում: Հայերի մեջ հայտնի են հաց մշակույթին առնչվող տարբեր տեսակներ 1. Ցորենհաց, գարեհաց, մատնաքաշ, պան, նկանակ, լավաշ, լոշ //զանգակ/ քարի վրա եփվող/, եղջերահաց, բոկեղ, շոթ /բարակ/, անեկ /խմորը չհասունացած/, բաղարջ /անթթխմոր/, խուկլի /հարկ եղած չափով չթթված/, կողի, կսկուծ, պասպաճիկ, սոմին, բոքոն, ձողիհաց, ճաթ /կորեկի, եգիպտացորենի/, կիլիկիաց, տաշտիքեր, պահուց քուլիճա, տաթ հացի քուլիճա, դոմպիկ, թերուն, փռան բաղարջ, թոնրի բաղարջ, պիսմեա, փռում:¹

Շիրակը լիարուն նետված անբավ ցորենի հայրենիք է՝ բարեբանված հացամբարներով ու հացի շտեմարաններով: Այդ է վկայում Հայկ դյուցազուն Նահապետի ծոռ Շարայի մասին ավանդական գրույցը. Արամայիսը «իր որդուն՝ բազմազավակ ու շատակեր Շարային ամբողջ աղիտով ուղարկում է մի մերձակա արգավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան՝ Արագածի թիկունքում, որտեղ շատ ջրեր են հոսում. նրա անունով, ասում են, գավառը կոչվեց Շիրակ: Ուստի, թվում է, թե ճշտվում է գյուղացիների մեջ տարածված առասպելը. «Թե քո որկորը Շարայի որկորն է, բայց մեր ամբարները Շիրակի ամբարները չեն»:²

Պատմական Հայաստանի գյուղերից շատերը, որոնք առատ են հացով ու բերքով, ունեն *հաց* արմատով անուններ՝ Հացաշենը՝ Թալինի շրջանում, Հացառատը՝ Կամո քաղաքի շրջագծում, Հացավանը՝ թե՛ Աբովյանի շրջանում, թե՛ Միսիանի, Հացին՝ Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանում, Հացիկը՝ Ախուրյանի շրջանում, Հացիկը կամ Հացեկացը՝ Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Տարոն գավառում (ի դեպ, պատմական նշանավոր այս գյուղը հռչակված է եղել ոչ միայն իր հացով, այլև որպես երանելի Մաշտոցի ծննդավայր):

Հույն պատմաբան Քսենոֆոնը (ն.թ. 5-4-րդ դդ.) Հայաստանում իր ճամփորդութունների ժամանակ տվել է տեղական բնակչության հետևյալ նկարագիրը. «...տներում էին գտնվում այծերը, ոչխարները, կովերն ու թռչուններն իրենց ձագերով: Այնտեղ պահվում էին ցորեն, գարի, բանջարեղեն և գարու գինի՝ խառնարաններում: Ամանների մակերեսին հավասար լողում էին գարու հատիկները, և նրանց մեջ խրված էր մեծ և փոքր չափերի եղեգ, բայց առանց հանգույցների: Ով ուզում էր խմել, պետք է այդ եղեգը վերցներ բերանը և դրանով գինին ըմպեր»:

Ինչպես հաստատում են անտիկ և հինհայերենյան գրավոր վկայությունները, գարին եթե ոչ առաջինը, ապա հացահատիկային բույսերի մեջ առաջիններից մեկն էր, որ սկսել են մշակել դեռևս հին ժամանակներից, հատկապես կրոնաժխտական արարողակարգերում գարու օգտագործումը ուժեղ փաստարկ է այդ մշակաբույսի աճեցման վաղեմության օգտին: Հայաստանում առհասարակ հիմնական սննդանյութեր են եղել հացը, ձավարեղենը և կաթնեղենը:

¹ *Ա.Սուքիասյան*, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., 1967, էջ 381:

² *Մ. Խորենացի*, Հայոց պատմություն, Եր., 1968, էջ 91:

Հայ ժողովրդական էպոսից հայտնի է *Հաց ու գինի, Տեր կենդանի* երգման, առհասարակ աղոթքի մի բանաձև, որ կրկնվում է գլխավորապես էպոսի Մշո տիպի պատմումներում: *Հաց ու գինի*ն քրիստոնեական պատարագի հաղորդությունն է, իսկ *Տեր կենդանին* նույնն է, ինչ Աստված կենդանի՝ ի հակադրություն կուռքերին, որոնք անկենդան են:³

Մեր դյուցազնավեսյուն զգալի դրսևորումներ են գտել նաև հին հեթանոսական հավատալիքները, պատկերացումները, ծիսական սովորությունները (հերոսների՝ ջրից զոյացում ու զորացում, հմայական խոսքի զորության հավատք, նախնիների պաշտամունքի, մեռելների սգո և հոգեհացի ծիսական արարողություններ), որոնք մեծ մասամբ համաձուլվել են քրիստոնեական հավատալիքներին:⁴ Էպոսում կան նաև հնագույն զրույցներ՝ ավանդական վիպական սյուժեներով, որոնց մեջ ընդգծվում է ցորենի և գարու՝ աշխարհը նորոգելու, մաքրագործելու և նոր սկիզբ հաստատելու գաղափարը: Այսպես՝ Մասնա վերջին քաջազունը փակվում է Վանա քար կոչված ժայռի մեջ: Ասում են՝ տարին երկու անգամ ժայռը բացվում է, Մեերը դուրս է գալիս քարանձավից, փորձում է հողի ուժը և զգալով, որ այն չի դիմանա իր ծանրությանը, վերադառնում է հետև ալմտեղից հղում իր պատգամը.

Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,
Երոր ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու գարին էղավ քանց ընկույզ մի,
Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էրտեղեն:⁵

Մեզ են հասել ժողովրդական բանավոր ավանդազրույցներ, տարբեր աղբյուրներով ավանդված միևնույն զրույցի տարբերակներ հացի ու այլուրի մասին: Դրանցից մեկի համաձայն՝ երբ մի օր լուսնի մայրը խնոր է շաղախում, լուսինը լալով գալիս, մորից հաց է ուզում: Մայրը զայրացած՝ խմորոտ ձեռքով ապտակում է լուսնին, անիծում, որ նա երբեք չկշտանա: Ապտակից լուսինը թռչում է երկինք, դեմքին խմորի կտորներ: Երբ լուսինը կուշտ է լինում, պայծառ փայլում է երկնքում, երբ քաղցած է, խավարում է:⁶

Ըստ հայկական հին ավանդության՝ հայերն ունեցել են հացահատիկի աստվածուհի՝ Աշորա անունով: Վերջինս գեղանի մի աղջիկ էր չորս վարսահյուսքերով՝ ցորնաթույր, հաճարաթույր, գարեթույր ու կորեկաթույր: Հայոց հացահատիկի աստվածուհին իր թագավորությունը հաստատել է Հայաստանի բոլոր կողմերում: Նրա նմանակիցները Հին Հունաստանում Դեմետրան և Պերսեփոնեն էին, որոնք՝ որպես հացի ու հնձի կույսեր, մարմնավորել են հացաբույսերի դիցուհու հավատը: Այսինքն՝ հացն այնքան է պաշտվել, որ հասցվել է աստվածության աստիճանի, որը բնականաբար պիտի կրեր հացի էանիշներ: Բնականաբար, քանի որ մարդկության կյանքում ոչ մի բան այնպես մշտապես չի կրկնվում, ինչպես հանապազօրյա հացը: Տերմունական աղոթքում ևս *Ձիաց մեր հանապազորդ տո՛ր մեզ այսօր* արտահայտությամբ հաստատագրվում է հացի կենսական անհրաժեշտությունը, միաժամանակ այն գաղափարը, որ Աստված «ինքն է տնօրինողն ու բաշխողը ամենայն բարութեանց: Հացը կը խորհրդանշե մեր ֆիզիկական պահանջքը, նաև մեր խնդրանքը Աստուծոյ, հաղորդակից դառնալու համար Յիսուսի մարմնին ու արեան»:⁷ Բոլոր դեպքերում հայ ժողովրդի սովորութամշակութային կենցաղում մշտապես զոյություն է ունեցել հացի պաշտամունք, որը դրսևորվել է նրա հավատալիքներում ու ծիսական գործողություններում:

³ Մասնա ծոներ, խմբ. Մ. Արեղյանի, աշխատակցությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, Եր., 1951, էջ 849:

⁴ Մ. Հարությունյան, Բանագիտական ակնարկներ, Եր., 2010, էջ 156:

⁵ Հայ ժողովրդական հերոսավես, Մասունցի Դավիթ, Եր., 1981, էջ 315:

⁶ Մ. Հարությունյան, Հայ հին վիպաշխարհ, Եր., 1987, էջ 17:

⁷ Յովնան արքեպս. Տերտրեան, Փունջ մը քարոզներ, Մոնրեալ, 1994, էջ 17:

Հները հավատում էին, որ եթե նոր տան հիմքի մեջ մի բուռ ցորեն շաղ տային, տունը հացառատ կլիներ: Հիվանդ ունեցողը լավաշ էր թխում և յոթ տուն բաժանում էր, որ հիվանդն առողջանար: Ըստ վանահայերի՝ եթե հացը թխեին Թուխ գետի ջրով և կերցնեին ուշ լեզու ելնող կամ կակազող երեխային, նրա լեզուն կբացվեր: Նրանք համոզված էին, որ Վանա սրբազան լճի ջրով հունցած հացը ուժ է տալիս կնոջը՝ հեշտությամբ ծննդաբերելու: Եթե երեխան դեռ չէր քայլում, աջ ոտքին բոքոն էին կապում, որ ապահովեին նրա հեշտ քայլերը: Ըստ էության, մարդու կյանքի ճգնաժամային կամ անցումային փուլերում ամկա խնդիրները լուծվել են հացի օգնությամբ: Հացով երդվել են (ես հացին քոռ աչքով նայեմ, թե սուտ ըսեմ), աղ ու հացով դիմավորել, իրար հետ հաց են կիսել: Մինչև օրս էլ արդիական են հացով մարդ, հացը կոկորդով ներս չզնալ, հացը շեն անել, հացի մեջ աղ չլինել, հացը ցամաք ուտել, հացի պտունկը կտրել, հացով տեղ, հացին յուղ քսել, հաց ու փոք, հացին մամա ըսել, հացին աղ չլինել, հացի հասնել, հացի տեր լինել, հացի քոռ, հացը ցամաք ուտել, հացը ծնկին, հացը աչքերը բռնի, հաց ու պանիր և բազմաթիվ այլ դարձվածքներ ու արտահայտություններ:⁸

Բազմաթիվ են հացի խորհրդանշական ընկալումն ու սահմանումները հայոց և տարբեր մշակույթներում: Հացահատիկի ոգին շատ մշակույթներում մարմնավորված է արական ու իգական սկիզբներում՝ հողաբերքի ու տղաբերքի ծննդաբանության խորհրդով: Օրինակ՝ Համբարձմանը դաշտերում, նորածիլ խոտերի ու ծաղիկների մեջ տեղի ունեցող աղջկական խնջույքի վաղնջական միտումը երկու բեղմնընդունակ ուժերի՝ հողի ու երիտասարդ պտղունակ կանանց համակցությամբ նրանց բեղունությունը գորացնելն էր: Տարվա այդ շրջանում հողը երիտասարդ աղջկա ունակություններով էր օժտված:⁹

Հայերը հավատում էին, որ ով կապեր վերջին խուրճը, այդ տարի կամուսնանար: Հասկի վերջին խրճից պատրաստված պսակը օրհնում էին եկեղեցում ու պահում մինչև հաջորդ գարուն: Ազգագրական որոշ շրջաններում վերջին խուրճը կոչում են հացի մայր կամ հնձի մայր, մեծ մայր, երբեմն էլ՝ Նանի: Այդ խուրճը պատրաստում են կնոջ նման. զարդարում են ծաղիկներով ու զոզոնց կապում: Յորենի հասկերից նորափեսայի համար նարոտ էին հյուսում՝ նորաստեղծ ընտանիքին հացառատություն ու բարեբախտություն մաղթելով:

Հացի պաշտամունքն ըստ էության նույնանում է հատիկապաշտությանը: Բոլոր տեսակի հատիկները՝ ձավարեղենը, ցորենը և այլն, հմայող, հաջողություն ապահովող ուտելիքներից են, որոնց առատ օգտագործումը նախնական պատկերացումներում պիտի ապահովեր կյանքի հարատևությունն ու մշտնջենականությունը: Մարդու կյանքի անցումային փուլերը ևս նշվում է հատիկային պաշտամունքի դրսևորմամբ (երեխայի առանհատիկը): Ավելին՝ հայոց ավանդական մշակույթը վկայում է, որ մի շարք տոների ժամանակ կատարվել են ոչ մսեղեն զոհաբերություններ. Սուրբ Մարգարիտ՝ փոխինդ, Տյառընդառաջին՝ աղանձ, Համբարձման տոնին կաթնով են արել և բաժանել յոթ տեղ: Նույն իմաստն ունեն նաև ընդդեմի առատ օգտագործումը:¹⁰ Այն ճաշատեսակները, որոնք ունեն հարգիության աստիճան, ևս առնչվում էին հատիկապաշտության դրսևորումներին:

Ամենագարմանայի հացահատիկը կտրհատ ցորենն է: Յորենը զինվոր է, որն ընդունում է նոր կյանքի՝ բնության զարթոնքի մարտահրավերը: Հացն սկսվում է ցորենի հատիկից, հողից ու դաշտից, գութանից ու հորովելից. «Աշխարհի հիմ վրը գութնին

⁸ Ա. Մուքիսայան, Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածքների բառարան, Եր., 1975, էջ 352:

⁹ Հ. Խառատյան-Մաթեյան, Հայ ժողովրդական տոները, Եր., 2005, էջ 18:

¹⁰ Նույն տեղում, էջ 25:

է», -ասում է ժողովուրդը: «Աշխարհ գութնի մոտ կլիանա», - հաստատում է էպոսը: Գութաներգերն ու հորովելներն էլ հողի ու հացի, հացի ու հաց արարողի գովման երգեր են:

Հունձքը ևս ծխական արարողակարգ է. «Հունձվորը գերանդին սրում էր, երեսը խաչակնքելով «Օրհնյալ է Աստված» ասում ու սկսում գերանդին աջ ու ձախ փարտեղ-հնձել: Արտի մեջ տեղ-տեղ պատահած կարճ ցորենը մանգաղով էին հնձում: Հունձը վերջացնելուց հետո մշակները մի հեղի էին կապում ու տանում մանեխն՝ աչքալուսի ընծա՝ բարենադիմություններով. «Բարով-խերով, ուրախությունով, դուռով-դրկցով, ցամաք աչքով և ուրախ սրտով արժանանանք թագա հացը ուտելուն»:¹¹

Հաց թխելու մախրոդ օրը այլուրը ամբարից կամ ջվալներից դուրս էին հանում և այլմաղով մաղում խմորի տաշտի մեջ: Վերջինս կարող է լինել կլոր, քառակուսի ու քառանկյունի: Լցնում էին տաշտերը և դնում հատուկ տեղ՝ լուսադեմին խմոր անելու և ցերեկը հաց թխելու համար: Խմորի տաշտերում միայն խմոր էին անում, ուրիշ նպատակի համար չէին օգտագործում. դա մեղք էր համարվում:¹²

Խմորը հունցելուց հետո ձեռքով խմորի երեսին խաչ էին քաշում, մայիս ամսին՝ կրկնախաչ (ըստ ժողովրդական ընկալման անբերրի ամիս էր), որ գերդաստանի համար ապահովեին Հիսուսի պաշտպանությունը, հետո խմորը դաստախումով ծածկում էին, որ թթվի: Հացաթխման համար անհրաժեշտ էին հիշյալ առարկաները՝ բատատ, փարտիչ, անթրոց, շիշ, ակիշ, թաթակիշ, գրտնակ, սեղանատախտակ:

Հաց թխողը կապույտ կտավե մխոց էր հագնում, թևոցները թևը քաշում, դուրս էր գալիս աղոթքանի առաջ, երեսը խաչ հանում, մի երկու ծուր դնում և ասում. «Բարի լույսի բարի՛ Աստված, հոգնած, դադրած արեգակ Աստված, մեր հացին բարաքյաթ տաս», ապա փարտիչով թոնրի մեջը, կողերը սքբում ու սկսում էր հաց թխել՝ լոշ կամ լավաշ, թափթափա, բոքոն, մատոնքաշ, ծակուլիկ և այլն:

Ներքին Բասենի բոլոր գյուղերում գրեթե ամեն օր էին թխում. հայերը, քրդերը՝ թոնրում, իսկ հույները՝ փռում: Ունևորներն ուտում էին ցորենից, իսկ չքավորները՝ գարեհաց: Հացերի տեսակներն էին՝ լավաշ կամ լոշ, բոքոն, փոտնիտ, այրեքշտիկ, մատոնքաշ, անեկ և այլն: Անեկ հացը, որին տալիս էին մակ բաղարջ անունը, սովորաբար թխում էին ջրադացներում: Բացի տարբեր տեսակի հացերից ու գաթաներից, այլուրից պատրաստում էին էրիշտա, այրե խաշիլ, խավիժ, հասութան (այլուրով ու յուղով կերակուր), պոչով ապուր, թաթար բորակի և այլն:¹³

Հայերի մեջ լավաշն ամենաընդհանրացված ու սիրված հացատեսակն է: Հայկական նրբաթերթ այս հացի յուրահատկությունն այն է, որ միայն ուտեստ չէ, այլ մակ տոնածիսական ու պաշտամունքային նշանակություն ունեցող մշակութային կարևոր տարր, որը մեծապես հարգի է հարսանեկան, թաղման ծեսերում, ավանդական տոների ծիսական արարողություններում ու հավատալիքների մեջ: Իր բազմագործառութային նշանակությամբ լավաշն այսօր էլ հայ ժողովրդի համար շարունակում է մնալ որպես ազգային ինքնության արտահայտություն: Հունցելը, գնդելն ու թխելը տանտիկիներ մեղակ էր կատարում, բայց բնորոշ էր մակ երկուսից չորս կնոջ համագործակցությունը աշխատանքի բաժանմամբ: Այն բոլոր շրջաններում, որտեղ հացը կարելի է երկար պահել, մեծ քանակությամբ թխելու համար հրավիրում են ազգակից կամ հարևան կանանց:¹⁴ Ամեն անգամ, երբ լավաշը հանում են թոնրից, կյանքն ասես նորոգվում է: Առաջին հացը, որպես կանոն, միշտ կուտ է զնում: Հայերի մեջ հմայական արգելք կա, որի համաձայն՝ թխված առաջին յոթ հացը չեն ուտում. թոնրից հացը հանելով՝ ասում

¹¹ Ալ. Մխիթարյանց, Փշրանքներ Շիրակի ամբարներից, ձեռագիր ժողովածու:

¹² Գ. Հակոբյան, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 14:

¹³ Ներքին Բասեն, նշվ. աշխ., էջ 146, 165:

¹⁴ Վ. Բղոյան, Հայ ազգագրություն, Եր., 1974, էջ 114:

են՝ էս մեկը Հիսուսի համար է, մյուսը՝ հիվանդ հարևանի, երրորդը՝ նորաստեղծ ընտանիքի, չորրորդը՝ կարոտյալների, հինգերորդը՝ պանդուխտների, վեցերորդը՝ զրկվածների և վերջապես յոթերորդը՝ երկնքի թռչունների, այսինքն՝ հա՛ց տուր, որ հաց բերի:

Լավաշ հացի պատրաստման եղանակը հայտնի է դեռևս խոր անցյալից: Խմորը հունցում են ցորենի ալյուրի, ջրի, աղի և թթխմորի կամ այլ խմորիչի խառնուրդով: 4-5 ժամ խմորումից հետո հավասարաչափ գնդերի են բաժանում, ապա կտրատած գնդերը գրտնակով բարակեցնում են և հացառի (բատատ) միջոցով թխում բարկ թոնրում: Սովորաբար լավաշի երկարությունը՝ 60-70, լայնությունը 30-40 սմ է: Հայաստանի մի շարք շրջաններում հաճախ լավաշը թխում են աշնանը և 1-2 ժամ չորացնում, այնուհետ պահում են կախանների վրա կամ հացարկղներում: Նախքան ուտելը ջուր էին ցողում չորացած լավաշի վրա և մի քանի բուսական սպունգի մեջ փաթաթելուց հետո օգտագործում: Ավանդությունը պատմում է, որ լավաշը դեռևս հայտնի է եղել աշխարհանված Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ, երբ հայերը պաշարված բերդից լավաշ են կախել իբրև հաշտության ու խաղաղության առաջարկ:¹⁵ Լավաշից բացի, թոնրի մեջ թխում էին մալ հաստ, երկարած և կլոր հացատեսակներ, ծիսական բոլոր հացերը՝ գաթա, տարի, վասիլներ: Հացի հետ կապված հավատալիքները ձևավորվել են դարերի հոլովությամբ և պատկերացում են տալիս հին հայերի վաղնջական աշխարհընկալման ու աշխարհատեսության, սովորութային ու ավանդական մշակույթի մասին: Ցորեն ցանելուց առաջ հին հայերը գնում էին եկեղեցի, մոմ վառում, հողաբերքի օրհնության պատարագ մատուցում՝ *Տեր, ողորմյա, Տեր, ողորմյա*: Եթե հարսանյաց հաց էր թխվում, թոնրի կրակը վառում էին սպիտակ զգեստներով, ծաղկազարդ թանթաններով երեք աղջիկներ, որոնք կրակը բերում էին եկեղեցուց: Հացարարման գործընթացի տարբեր արարներն են՝ մաղժած, խմորիունց, գնդերի պատրաստում, գրտնակում, թխում: Հացարարումը՝ որպես արվեստ, առավելապես դրսևորվում է հարսանյաց արարողակարգից առաջ: Խմորատաշտերից մեկի վրա կարմիր քող են գցում, երկու կողմերում մոմեր են վառում՝ խորհրդանիշ, որ հարսը զույգ մնա: Մաղժածին մասնակցում են բացառապես յոթ բախտավոր կանայք, մաղում են լուռ ու անձայն, որ հարսը համավոր լինի: Մաղը մեկից մյուսի ձեռքն է անցնում շրջանաձև՝ ճակատագրի ծիրը գծելով: Այրի կինը իրավունք չունի հարսանիքի ալյուր մաղելու: Բազմաթիվ են ցորենին, հացին ու հողաբերքին առնչվող մոգարգելքները, որոնք բոլոր դեպքերում արտահայտում են ժողովրդական հավատալիքներն ու պատկերացումները: Այսպես՝ չամուսնացածները իրավունք չունենին առաջին բուռ ցորենը ցանելու: Մերմնացանը ցանքի նախորդ և մի քանի օրերը՝ մինչև ցանքի վերջը, կնոջ հետ առագաստ չէր մտնում, որ ցորենը չսնքեր: Չբեր կինը ցորեն ցանելու գիշերը պառկում էր ամուսնու հետ, որպեսզի ինքն էլ պտղավորվեր: Նվազ բերք ստացողն իր սերմնացու ցորենը փոխում էր նախորդ տարին առատ բերք ստացածի սերմնացուի հետ, որ նրա առատությունից բաժին ունենար: Թխած հացը եթե բշտեր, ուռչեր կամ պատռվեր, այդ տարվա բերքը առատ կլիներ:

Եթե երեխաները բոքոնը անցկացնեին իրենց վիզը կամ լավաշը գլուխներից դրած խաղային, այդ տարի հացի թանկություն կլիներ: Թոնրատան պատերը չէին սրբում, որ տան առատությունը չկորչեր: Հաց թխելու համար ջուր տաքացնելիս խաչակնքում էին, որ սատանաները վրան չվազվեին: Խմորին ասում էին՝ դու ըստեղ հանգչի, մենք էրթանք ցախի:

Խմորի գնդերը չէին հաշվում, որ չպակասեին: Առաջին վառված հացը ամուսնացած կինը չէր ուտում՝ հավատալով, թե ամուսնուն վատ բան կպատահի: Կուտ գնա-

¹⁵ Հ. Խաչատրյան, Հացապատմություն, Եր., 1984, էջ 32:

ցած առաջին հացը տալիս էին չբեր կնոջը, որ ուտեր պտղավորվեր: Մինչև յոթ հաց չթխվեր, չէին ուտում, որ տան *ղամաթը* հաստատ լիներ: Խմորի վերջին գունդը, որ բերում էին թխելու, չէին ասում՝ էլ չկա, այլ՝ էլ Աստված տա: Հացթուխն էլ պատասխանում էր՝ փառքդ շատ, Աստված: Տաշտի վերջին հացը չէին ուտում. կեսը կտրում, զցում էին թոնիրը՝ ասելով՝ վերջին հացը՝ կրակին:

Հաց ուտելուց հետո պետք է սեղանը անմիջապես հավաքեին, այլապես հացի հրեշտակը կհոգներ և կարող էր ընտանիքին վնասել: Լուսնի երրորդ օրը հացը տանից դուրս չէին տալիս՝ մտածելով, թե տան *առատությունը* կպակասի: Հաց թխելիս, եթե բատարը հացթուխի ձեռքից ընկներ թոնիրը, ասում էին՝ վատի նշան է, դժբախտություն կպատահի: Հաց թխելու ժամանակ, եթե թոնրի մեջ իրար կողք կողքի խփված երկու լավաշների եզրերը պատահմամբ միմյանց վրա գային, սրանցից մեկը հանում էին և ընտանիքի անդամներից մեկի գլխի վրա երկու մաս անում, որ նա հարստանար: Բաղարջ և գաթա թխելու ժամանակ թույլ չէին տալիս, որ տղամարդիկ թոնրատուն մտնեին, այլապես թխածները թոնրի կողքին կամ շրթին չէին մնա. կթափվեին ցած: Խմոր անելու ժամանակ, եթե մի կտոր խմոր տաշտից դուրս թռչեր, նշան էր հյուր գալու: Եթե թոնրի մեջ հացը բացվեր, ծակծկվեր, չար բերան կբացվեր: Հացի փռոցը դուրսը թափ չէին տալիս, որ տան *առատությունը* չկորչեր: Ամբողջական հացը տնից դուրս չէին տալիս. մի փշուր կտրում էին, որ ամբողջից մաս ունենային նաև իրենք: Երբ մեկը տնից զնում էր, հետը հաց էին դնում, որ *ղամաթի* ճանապարհի լիներ: Երեխային գիշերը տնից դուրս բերելիս կրծքին կամ ծոծրակին հաց էին դնում, որ լուսնակոխ չլիներ:

Վախեցածին կամ չարաչք առածին հացի կտորով էին աղոթում, հետո այդ հացը տալիս էին անասուններին՝ ուտելու:

Գիշերը շանը հաց չէին զցում, որ տան *բարաքյաթը* չպակասեր:

Եթե մեկի երդմանը չէին հավատում, ասում էր՝ էս հացին քոռաշեմ, թե սուտ ըսեմ:

Եթե մեկը փափագ-մուրագ ուներ, առավոտ բարի լույսին կգարթներ, հացը կպահեր արևի դեմ՝ ասելով՝ ծաղկած արեգակ, դու գիտես:

Մեկի հետ խնամի դառնալու համար կարմրեալ յոթ լավաշ էին ուղարկում նրա տուն, որովհետև քամի թե կարկուտ՝ կարմրեալ ցորենը չէր փչչի:

Միևուճար տղայի պսակի հացը պետք է թխեր այն կինը, որ շատ երեխաներ ուներ, որպեսզի միևուճարը բազմուք դառնար:

Մաղի մեջ մնացած այլուրը լցնում էին թախտի տակը, որ հարսը ընտանեսեր լիներ: Հարսանիքի հացի թթխմորը տնից դուրս չէին տալիս. հնարավոր էր՝ չար սիրտ մեկը տաներ և նորապսակներին վնասեր/կապեր/: Հացը, եթե գետնին ընկներ, պետք է անմիջապես վերցնել համբուրել, մեղա գալ հացին ու գլխից վեր դնել: Հացի վառված, սևացած մասն ուտողը վաղ թե ուշ դրամ կգտներ:

Հացի գործառույթը և վերջինիս հետ կապված հավատալիքները ուշագրավ են նաև թաղման ծիսակարգում: Ննջեցյալների հետ կապված սովորույթներն ու արարողություններն ուղղված են ծանր հոգեվարք սպրողի մահը արագացնելու: Լավաշ հացը երեք անգամ կատեցնեին մահամերձի գլխի վերևը, որ հոգին հեշտ տար: Մեռնողի կրծքին նշխարք (մասունք) էին դնում: Հոգեհանգստի հացը թխելիս՝ բատարը խփելու ժամանակ, հացթուխը աջ ուսից հետ էր նայում՝ մահն ու կսկիծն իրենից վանելու: Հայտնի են թթխմորին առնչվող մոգարգելքներ. հոգեհացի թթխմորը չէին ուզում, որ կսկիծը տուն չտանեին:

Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ անդրադարձված է հացի պաշտամունքը՝ բնության երևույթների շնչավորումը, նրանց աստվածացումը: Մարդն ի սկզբանե բնության ուժերն ու դրսևորումները մարմնավորել է զանազան ոգիների մեջ՝ Հացի ու հնձի ոգիներ, հացի թագուհի, հացի մայր, որ կապվում է արգասավորու-

թյան ու առատության հետ, հացին վերագրել է տարբեր դերակատարումներ՝ հացը դատավոր ու միջնորդ, հացը զինվոր: Հացի գերակա նշանակությունն են արտահայտում հետևյալ առած-ասացվածքները՝ Հացը՝ սուլթան, ջուրը՝ վեզիր, մնացածը՝ զգիր-ձգիր: Հաց ու թան ունես, ամեն բան ունես: Աղ ու հաց՝ սիրտը բաց: Որտեղ հաց՝ էնտեղ կաց, որտեղ գինի՝ էնտեղ քնի: Հարսը հաց թխեց, տանտիկինը պարծեցավ: Ամանաթ հացով փոր չի կշտանա: Իմ ցամաք հացը լավ է ինձ համար, քանց ձեր դարբու փլավը: Շո՛ր տու՛ շնորհքի գամ, հա՛ց տու՛ խելքի գամ և այլն:¹⁶ Հացով բարենադրություններ են հղում. գետինն օրհնում են՝ առաջին բուռ ցորենը շաղ տալով, ամենաներկարակյաց հացը՝ լավաշը, զցելով նորապասկների ուսերին, արևշատություն ու բարեբախտություն են մաղթում նրանց: Բարենադրում են տանտերերին՝ ասելով՝ Աստված հացին առատություն տա, սեղաններդ լիառատ մնան, աշխատավորներդ երկար կյանք ունենան:

Յուրաքանչյուր ժողովրդական տոնի և ծեսի ժամանակ ցորեն-այլուր-հաց եռամիասնությանն առնչվող առանձնամաս կար, որն արտահայտում էր տոնի հիմնական բովանդակությունը: Մի դեպքում հացով կանխատեսումներ են արել, մյուս դեպքում՝ այն դիտել որպես ծիսական կերակուր: Ամանորի տարեհացի մեջ որևէ նշան էր դրվում, ավելի հաճախ՝ արծաթե դրամ՝ իբրև բախտփորձում: Այս ծիսական հացը զարդարում էին ընկույզով ու չամիչով, ապա կտրում տան անդամների թվին հավասար, և ում բաժնի միջոց դուրս գար նշանը, այդ տարի նա երջանիկ կլիներ կամ ընտանիքի հաջողությունը նրանից կգար: Տարի հացից բացի, թխում էին նաև հմայական տարբեր ձևերի ու մեծության խմորեղեններ, որոնք ունեին կանխատեսելու նպատակ:¹⁷

Մուրբ Մարգսի տոնն առնչություն ուներ հացաբույսերի, մասնավորապես ցորենի և դրանից պատրաստված փոխինդի հետ, որն ամենուրեք համարվում էր այս տոնի ծիսական կերակուրը: Այդ օրը հալվա էին եփում և գիշերը մատաղի ձևով բաժանում ժողովրդին՝ վանքի կամարների տակ օբևան գտած ուխտավորներին, կամ էլ մատաղատների մոտ հացի մատաղ էին բաժանում: Փոխինդով արված խաշիլի առաջին պատառը դնում էին դրան շեմին կամ կտորին, որ թռչունները գային տանեին այն ուղղությամբ, ուր նրանց սպասումների իրականացման հորիզոնն էր: Չարչարանաց շաբաթին հարսները լույս առավոտից մինչև ուշ գիշեր խմոր էին հունցում՝ որպես նշխար Քրիստոսի մարմնի: Ավագ շաբաթվա օրերին միմյանցից նեղացածները հաշտվում էին. չէ՞ որ գնալու էին հաղորդվելու և հաց ցանելու, որովհետև հավատում էին՝ «Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում», այսինքն՝ Քրիստոսն է, որ զոհվելով որպես հաց բաշխվում է մեզ համար: Ս.Չատկի հացը թխելիս, որքան էլ տանը այլուր շատ լիներ, այլուր էին մաղում: Առաջին մաղբաժնից մի բուռ դնում էին Քրիստոսի համար: Չատկվա հավկիթը զարդարում էին հավերժության խորհրդանիշ ռիթմիկ կրկնվող ցորենի պատկերով՝ որպես կյանքի մշտակայության արտահայտություն: Տոն առ տոն ըստ էության ամրագրվում է ցորեն - այլուր - հաց միասնության ամենակեցույց դերակատարումը:

Մեծ պասի հենց առաջին օրը ամեն տուն թխում էր յոթ անալի բաղարջ՝ ի նշան պասի յոթ շաբաթվա: Տյառնընդառաջի ծիսական արարողակարգը նշվում էր աղանձի պատրաստմամբ: Ցորենը չորացնում-բովում էին, որ նմանողական հմայությամբ գետինն էլ չորանար, և զարումը շուտ գար: Այս օրվա խորհրդով հմայական բարենադրություններն ուղղված էին բերքի և նյութական բարեկեցության ապահովմանը՝ *Տերնդեզ, դարմանը՝ կես, Մի փութ ցանես, հարյուր քաղես*: Համբարձման ժողովրդական տոնը ևս ունի հատկապաշտությանն առնչվող ծիսական ճաշ. այդ օրը կաթնով են եփում:

¹⁶ Ա.Ղանալանյան, *Առածանի, Եր.*, 1950, էջ 142, 154, 288:

¹⁷ Հ. Խառատյան, *նշվ. աշխ.*, էջ 25:

Եթե արտերը նվազ բերք էին տալիս, կաթնովը շաղ էին տալիս դաշտերում, որ հացին առատություն լիներ: Այսինքն՝ հողին օգնելու նպատակով մատաղներ են արել հանուն հողի:¹⁸

Հայոց մեջ հացն ու աստվածային խոսքը նույնարժեք սրբություններ են համարվում: Գիրը ազգի հոգևոր հացն է: *Ոչ միայն հացիվ, այլ նաև աստվածային բանիվ* ապրող մեր ժողովուրդը Սբ Գիրքն այնքան է պաշտել, որ կարդալիս դրել է արմատի մեջ: Հավատում էին, որ մարդու գոյության տաճարն այրատունն է, նախ՝ այստեղ պիտի խունկ վառել, հետո՝ եկեղեցում, իսկ ամենասրբազան տունը թոնիրն է:

Հայ ավանդական մշակույթում ունեցած դերով ու նշանակությամբ հացը երեկ, այսօր և միշտ եղել, մնում է և մնալու է սեղանի արքա, այն առողջություն է, բարեբերություն, հավատ վաղվա օրվա նկատմամբ, ի վերջո երկիրն է, աշխարհը, կյանքը: Հացը և հացարարունը, լինելով մարդկության մեծագույն ստեղծագործություն, իբրև կենաց խորհուրդ, հմայական-ծիսական արարողակարգ, ստիպում են անձին նորովի նայել կյանքին:

Հացի հետ կապված հավատալիքները, որ դարերով ամրագրվել են մեր ժողովրդի ծիսամշակութային կենցաղում, ինչպես և նրա բազմազան ձևերը՝ արևհացեր, լուսնաձև հացեր, խաչաձև հացեր, գուշակության հացեր և այլն, վկայում են, որ հացը, լինելով ինքնաբերական և գիտակցական պաշտամունքի առարկա, մշտապես դիտվել է բազմագործառութային նշանակությամբ, պաշտվել որպես հատիկային Աստծո նշանակ:

НАРОДНЫЕ ПРЕДСТАВЛЕНИЯ И ВЕРОВАНИЯ, ОТНОСЯЩИЕСЯ ХЛЕБУ

___ Резюме ___

___ К. Саакян, Р. Оганисян ___

Хлеб-важная составляющая нематериального культурного наследия, которая с времен создания до сегодняшнего дня сохранилась в быту почти всех народов.

В статье рассмотрены основные виды армянского хлеба, и на основе этнографических материалов раскрыты сокральные функции хлеба в разных фольклорных словесных формулах и поговорках.

¹⁸ Հ. Խառատյան-Առաքելյան, նշվ. աշխ., էջ 17:

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ PR-Ի ԼԵԶՎՈՒՄ

Հայտնի է, որ լեզվի բառային կազմի շարունակական փոփոխությունը, ի թիվս այլ գործոնների, անմիջականորեն պայմանավորված է հասարակության ներսում ընթացող զանազան տեղաշարժերով՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն, որոնք առավելապես իրենց արտացոլումն են գտնում լեզվի բառային կազմում: Բառային կազմն ամենից առաջ հարստանում է նորաբանությունների հաշվին: Այսօր՝ հատկապես վերջին տասնամյակում, մեր լեզուն հարստացել է հազարավոր նոր բառերով, որոնց բառակազմական-կաղապարային քննությունը, անշուշտ, նոր շերտեր է բացում հայերենի բառակազմական հնարավորությունների ուսումնասիրության խնդրում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին շրջանի նորաբանությունները լայնորեն ներկայացված են պարբերական մամուլի էջերում:

Մենք նորաբանություններ ենք համարում հին բառերին նոր որակներ հաղորդելը, բառակերտման նոր միջոցները, բառակազմական առկա կաղապարներով նոր բառերի ստեղծումը, փոխառությունն ու պատճենումը: Լեզվաբան Էդվարդ Աղայանի կարծիքով՝ «Ամեն մի նոր բառ՝ սեփական թե փոխառյալ, նախապես հանդես է գալիս որպես նորաբանություն»:¹ Ընդունված է տարբերել նորաբանությունների երկու տեսակ՝ լեզվական և անհատական կամ հեղինակային:² Ինչպես հայերենի զարգացման ողջ ընթացքում, այդպես էլ ժամանակակից հայերենում նոր բառերի առաջացումը տեղի է ունենում երկու ճանապարհով՝ արտաքին և ներքին: Արտաքին ուղին փոխառություններն են, իսկ ներքին ուղին՝ բառաբարդումն ու ածանցումը: Այսօր առավել քան ակտիվ գործում է «լեզվում եղած բառերի բառակազմական կաղապարներով նոր բառերի կազմման»³ գործընթացը, ինչպես՝ *ճեպայց*. «Էդվարդ Նալբանդյանի հետ առանձին *ճեպայց* նախատեսված չէր» /www.panorama.am, «Ստեփանակերտում նախարար Էդվարդ Նալբանդյանի *ճեպայց* նախատեսված չի եղել», 25.11.2011թ./, *արտարժույթ*. «Այնհայտ է, որ *արտարժույթի* այս տատանումները մեր անառողջ տնտեսության արտացոլումն են» /www.7or.am, *զագաթ/ն/աժողով*. «Բնավ պատահական չէ, որ *զագաթաժողովների* միջև տասնամյա ընդմիջումը համընկավ աշխարհում Ռուսաստանի դիրքերի վերանվաճմանը, որոնք թուլացել էին Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած տարիներին» /«Առավոտ», «*Գագաթաժողով*՝ հանուն *զագաթաժողովի*», 26.11.2010թ./, «Մերժ Սարգսյանի մասնակցությամբ 2008թ. Բուխարեստյան հանդիպումից սկսած երեք տարի շարունակ ՆԱՏՕ-ի *զագաթնաժողովը* իր հռչակագրերով անդրադարձել էր ԼՂ հակամարտության կարգավորմանը» /ՀԺ, «Հայ ազգային կոնգրեսը դատապարտում է Մերժ Սարգսյանի կողմից ՆԱՏՕ-ի *զագաթնաժողովը* բոյկոտելու որոշումը», 25.11.2010թ./, *սղանային*. «Հնարավոր է, մենք գործ ունենք նոր երևույթի, ըստ էության՝ *սղանային* գլոբալիզացիայի հետ, որի հետևանքով երկրներում տղանի կառուցվածքներում կտրուկ աճել է արտաքին բաղադրիչը» /«168 ժամ», «Սղանային գլոբալիզացիա», 21.12.2009թ./, *հանրահավաք*. «Նախագահական ընտրությունների ընթացքում և մանավանդ մարտի 1-ի սպանդից ու արտակարգ դրության հայտարարումից հետո զանգվածային քաղաքական հալածանքները, բացի ընդդիմադիր գործիչներից, տարածվել են նաև ընդդիմության համակիրների և անգամ *հանրահավաք*

¹ Էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Եր., 1984, էջ 169:

² Տե՛ս Ս. Մելքոնյան, *Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության*, Եր., 1984, էջ 157-158:

³ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էրոյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ.1, Եր., 1979, էջ 235:

ների սովորական մասնակիցների վրա»/ ՀԺ, «Լևոն Տեր-Պետրոսյանի ելույթը՝ սեպտեմբերի 23-ի հանրահավաքում», 24.09.2011թ./, *սփյուռքացում*. «Մփյուռքացում անվանված ընթացքը կարելի է անվանել նաև անցում գաղթականից՝ արտոյալի, չսոցիալականացվածից դեպի սոցիալականացված «փոքրամասնություն» կամ հիբրիդացում» /«Առավոտ», «Ազգային ինքնությունը բախման և երկխոսության գործընթացներում», 23.07.2011թ./, *Եվրաստլանտյան*. «Պիտեր Սեմմերի. Հայաստանի *Եվրաստլանտյան* ինտեգրումը շարունակվելու է՝ անկախ սահմանների բացումից» /www.hraparak.am, «Ինտեգրումը շարունակվելու է», 03.06.2011թ./, *գաղափարայնացում*. «Մերօրյա քաղաքական կյանքում այս առումով անհրաժեշտ են իրական բարեփոխումներ: Ասել է թե՛ երիտասարդների *գաղափարայնացում* և գաղափարների իրացում» /«168 Ժամ», «Կուսակցությունների երիտասարդացում և երիտասարդների կուսակցականացում», 29.11.2006թ./ և այլն: Բերված նորակազմություններից մի քանիսի համար /*արտարժույթ, հանրահավաք*/ կարող ենք փաստել, որ ընդհանրացող կարգի են, այսինքն՝ «կարճատև թե երկար ժամանակամիջոցում, անընդհատ կրկնվող գործածությունների հետևանքով անցնում են բառապաշարի գործում շերտին և հենց դրանով էլ դադարում նորաբանություն լինելուց»⁴: Հաճախակի գործածության շնորհիվ դրանք կարող են անբազրվել լեզվի ակտիվ բառաշերտ, ինչպես՝ *բարձրաձայնել*. «Չենք կարողանում *բարձրաձայնել*» /«Առավոտ», «Համաճարակի մասին լռում են՝ «երկիրը փրկելու համար»», 23.07.2011թ./, *գնաճ*. «...որպեսզի ընդհանուր *գնաճը*, կախված ապրանքատեսակների սպառման ծավալներից, չզերազանցի 5.5 տոկոսը»/ ՀԺ, «Անվերահսկելի գնաճ», 23.10.2010թ./, *այլախոհ*. «Մեր պայքարը խորհրդային *այլախոհների* պայքարի նկատմամբ մի շատ մեծ առավելություն ունի՝ մեր համախոհների թիվը շատ մեծ է, աննկարագրելի մեծ, այնքան մեծ, որ սերժանտացման ընթացքը կարելի է կասեցնել» /ՀԺ, «Այլախոհների պայքար», 13.01.2011թ./, *ստորագրահավաք*. «Թոչկանի համար *ստորագրահավաք* է սկսվել. ջրվեժի մոտ շուրջօրյա հերթապահությունը շարունակվում է»/ www.hraparak.am, «Թոչկանի համար ստորագրահավաք է սկսվել», 28.10.2011թ./ և այլն: Նորաբանությունների մեջ, ինչպես և սպասում էինք, գերակշռում են կազմությանը բարդ բառերը:

Նորաբանությունները, նորագույն հասկացումները, բառային պատճենումները, նաև փոխառությունները վկայում են մեր կյանքում առկա նոր երևույթների, հասկացությունների գոյության մասին, որին բնականաբար հաջորդում է դրանց անվանումների ստեղծումը: Ավելի հաճախ մամուլի միջոցով են այդ բառերը ներմուծվում կենդանի լեզվի բառապաշար և ինչ-որ տեղ թելադրվում են հասարակության տարբեր խավերին: Հանրական նորաբանությունների գերակշռող մասը ձևավորվում, ստեղծվում է ինչպես հրապարակախոսության, այնպես էլ քաղաքական PR-ի լեզվում: Դրանք ստեղծվում են մի դեպքում՝ բառապաշարի բացը լրացնելու, մեկ այլ դեպքում՝ ոճարտահայտչական նպատակներով:

90-ականներին հայոց լեզվում խիստ մեծացավ փոխառությունների հոսքը: Դա պայմանավորված էր քաղաքական կյանքում, տնտեսության, մշակույթի բնագավառներում, ինչպես նաև հանրային սոցիալական կողմնորոշման մեջ տեղի ունեցած փոփոխություններով: Երկրի քաղաքական կյանքում սկսեցին հարմարվել նոր հասկացություններին՝ պրեզիդենտ /նախագահ/, պառլամենտ /խորհրդարան/, սփիքեր /խոսնակ/, էլեկտորատ /ընտրազանգված/ և այլն:

Օտար եզրույթները տիրապետող դարձան գիտության և տեխնիկայի առաջատար ոլորտում՝ ֆայլ, փեյջեր, ֆաքս, մոնիտորինգ, ատոլիտ, հոլդինգ, ինվեստիցիա,

⁴ *Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 170:*

բրոքեր, դիլեր և այլն: Մշակութային ոլորտ թափանցեցին այնպիսի բառեր, ինչպես վեսթեռն, քրիլեր, սերիալ, հիթ, շոունեն և այլն: Արագ փոխվեց կենցաղային խոսքը՝ համարվելով ոչ հայկական անվանումներով՝ սնիկերս, համբուրգեր, չիզբուրգեր, սիրայթ և այլն: Նորագույն փոխառություններ են անխմացիոն, բիզնես ֆորում, բիզնեսմեն, բոմժ, գլոբալիզացիա, եվրո, իմիջ, լոբբի, կինոքինոալե, հակեր, մենեջմենթ և այլ բառերը:

Օրինակներից նկատելի է, որ նորագույն փոխառություններում առկա են ինչպես միաբառ կազմություններ՝ եվրո, իմիջ, իզգոյ, հիթ և այլն, այնպես էլ երկբառ՝ բիզնես լեդի, շոու բիզնես և այլն: Փոխառյալ բառերի մեծ մասն ունի հայերեն համարժեքներ, սակայն ոճավորման նպատակով մամուլը նախապատվությունը տալիս է օտար բառերին: Օրինակ՝ թերթերը գրում են *լեզիտիմ*, թեև առկա է դրա հայերեն համարժեքը՝ *օրինական*, *կազինո խաղատան* փոխարեն և այլն:

Փոխառյալ նորաբանությունների շրջանակում ուրույն տարատեսակ պետք է դիտել ներքին փոխառությունները կամ ներթափանցումները արևմտահայերենից, ինչպես՝ մարտավարություն, ռազմավարություն, արհեստավարժ, կարգախոս և այլն: Արևմտահայերեն կազմություններն առավելապես գալիս են փոխարինելու խորհրդային շրջանում մեր լեզվում տարածում գտած օտար համարժեքներից /մարտավարություն-տակտիկա, ռազմավարություն-ստրատեգիա, արհեստավարժ-պրոֆեսիոնալ, կարգախոս-լոզունգ և այլն/: Ժամանակը ցույց կտա, թե դրանցից որոնք կկայունանան: Իբրև փոխառությունների և նոր բառերի առաջացման պատճառներ կարելի է թվարկել հետևյալները.

Դրանք առաջանում են որպես հասարակական կյանքում ի հայտ եկած նոր իրողություններ, նոր առարկայի, նոր հասկացության անվանում /մարքեթինգ, զենոֆոբիա/:

Նոր բառեր փոխառելը պայմանավորված է օտարերկրյա մշակույթի ազդեցությամբ, թելադրվում է պարզապես օտար բառօգտագործման ձգտումով:

• Նոր բառի կարճառոտությունը /իմիջ, սերիալ/:

Քառասյալի փոխառյալ շերտում փոխառությունների յուրացման առանձնահատկությունների տեսակետից ուրույն տարատեսակ են դիտվում պատճենումները, երբ փոխառվում է ոչ թե բառը, այլ կազմության կաղապարը:⁵ Տարբերում են պատճենումների հետևյալ տեսակները՝ բառակազմական /բառապատճենում/, երբ կատարվում է օտար բառի քարգմանություն ըստ ձևայինների՝ գերխանութ-supermarket, իմաստային, երբ փոխառվում է բառի փոխաբերական իմաստը /կառույց-հաստատություն, գերատեսչություն-ռուսերեն сыктывра-ից, կիսապատճենումներ, երբ քարգմանվում է բառի միայն մի մասը /մակրոտնտեսություն-макроэкономика/:

Քաղաքական PR-ի լեզուն գերազանցապես հարուստ է խոսքի հասարակական հնչեղությունը, թարմությունը, հրատապությունը և այլ որակային հատկանիշներ ապահովող անհատական կամ հեղինակային բնույթ ունեցող նորաբանություններով: Կան նորաբանություններ, որոնք չունեն կրկնվող գործածություն: Դրանք դիպվածային (օկազիոնալ) բառեր են, որոնք պատկանում են մեկուսացած նորաբանություններին⁶: Այս բառերը խոսքում ավելի շատ ոճական, գեղարվեստական նպատակադրումով են գործածվում, քան անվանողական: Հատկանշական է, որ այս կարգի նորաբանությունները «խոսքային տվյալ իրավիճակում նյութի թելադրանքով կամ հեղինակի

⁵ Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987:

⁶ Նույնը:

որոշակի նպատակադրումով՝ խոսքն ավելի համոզիչ, պատկերավոր դարձնելու համար»⁷ ստեղծված նոր բառերն են:

Դիպլոմաձային բառերն ստեղծվում են ինչ-որ դեպքի, իրադարձության անմիջական ազդեցությամբ, դիպուկ են, սրամիտ և նպաստում են խոսքի արտահայտչականությանը, ինչպես՝ *իշխանագող*, *իշխանակռացած*, *իշխանատակ*. «Էդ ո՞ր տականքը համարձակվեց Ազատության սուրբ հրապարակը Թատերական կոչել:

–Հա՛, *իշխանագող* տականքը, *իշխանատակ* հեռուստաընկերությունները, *իշխանակռացած* լրագրողները» /ՉԻ, «Էլի մերոնք, որ ծախու չեն», 16.07.2008թ./, *վագրաթռիչ*, *սյունաարծվապաց*, *տրեխո-հանգանակ*. «Է՞լ ինչ հրաշքներ գործի խեղճ վարչախումբը, որ հավատանք նրան՝ ընդունելով երկրորդ սերնդի *վագրաթռիչ* մեր նոր կրոնը, արտաքին մախաճեռնողական *սյունաարծվապաց* մեր նոր հավատքը, Գյումրվա դիլիջանյան տեխնո-բանկային մեր նոր *տրեխո-հանգանակը*... Ըստ իս, եղածն էլ բավարար է. Աստված «է՛լ բեթարից ազատի»/ՀԺ, «Պա չո՞ն սլիում դյա մարդա», 06.05.2009թ./: Այս բառերն ստեղծվել են հասկացությունների բովանդակային, հատկանշային կողմերը ճիշտ, անհրաժեշտ նրբերանգներով արտահայտելու, խոսքի բովանդակային և արտահայտման ձևերի համապատասխանության հասնելու նպատակով: Մրանցում իշխում է զգայական վերաբերմունքի արտահայտությունը:

Ավելի հաճախ մենք ակնհայտ ենք լինում լեզվում արդեն իսկ եղած բարդության բաղադրիչներից մեկի փոփոխությամբ նոր բառի ստեղծման, ինչպես, օրինակ՝ *կայֆադուլ՝ հացադուլի* նմանողությամբ, *փողամուղ՝ գազամուղի*, *ռչընտիր՝ նորընտիրի*, *քավորագրկում՝ ազատագրկումի* և այլն:

Կայֆադուլ. «Երանի՛ թախանդցիներին, մոլորվացիներին, վրացիներին և բոլիվիացիներին: Խոսքս ամենևին էլ մեզ զոնե ջրցան մեքենաներով ցրելու երազանքի մասին չէ կամ թե՛ Մաշտոցի պողոտայում մախազահականից հանած աթոռները քշելու: Ոչ էլ՝ Մերժ Մարգարայանից հացադուլ ենք պահանջում, զոնե, զոնե՝ *կայֆադուլը*» /ՉԻ, «Թալանել են փոխնախարարի աներոջն ու զոքանչին», 15.04.2009թ./, *ժառաջարդ*. «Լոռվա մարզում ներկայիս գյուղնախարար Արամայիս Գրիգորյանը, իր «Հայանտառի» պետ Մարտուն Մաթևոսյանը անտառների հունձ են իրականացնում: Այո՛, սա *ժառաջարդ* է, որ այս թափով և հայրենիքի հանդեպ անասունի այս վերաբերմունքով դեռ մախկին գյուղնախարար Դավիթ Լոքյանն էր սկսել» /ՉԻ, «Հայ հեղափոխական ժառաջարդ», 20.12.2008թ./, *փողամուղ*. «Հենց 2010 թվականի բյուջեի քննարկումների ժամանակ էլ դաշնակներն իրենց մաշկի վրա զգացին կռալիցիայից վնասները՝ նրանց հատակ ցույց տվեցին, որ նախարարական *փողամուղներից* բացի՝ նրանք զրկվել են մախ «ատկատներ» գրպանելու իրավունքից»/ ՉԻ, «Մերժված և ընդունված «ատկատների բյուջե», 19.03.2010թ./, *ռչընտիր*. «Վերջն ասածս էն ա, տղերք ջան, որ ձեզ եսիմ ինչի տեղ դնելուց առաջ ուշադիր կարդացե՛ք հոգեբանական գրականությունը, ուր ձեզնից շատերի խնդիրները վաղուց նկարագրված են, անկախ նրանից՝ ոստիկան եք, թե *ռչընտիր նախագահ*»/ՀԺ, «Մինչև ուստ գալը», 23.04.2011թ./, *քավորագրկում*. «Ինչ խոսք, *քավորագրկման* միջոցով Վիկտոր Գալստյանի հանդեպ իրականացված քաղաքական այս դաժանագույն հաշվեհարդար-վեցնետան կարող էր դառնալ մի հրաշալի կատակերգության սյուժե» /www.lragir.am, «Քավորի քաղաքական ասպտակը», 16.09.2010թ./ և այլն:

Քաղաքական PR-ի լեզվում հանդիպում են նորակազմություններ, որոնք ստեղծված են հատուկ անուններից՝ *սևրաֆորիա*. «Մա «*սևրաֆորիայի*» յուրօրինակ դրսևորում է թուրքերի մոտ, որն այնտեղ ձևավորվել է Սևրի պայմանագրի կնքման հետևանքով»

⁷ Լ.Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 140:

քով» /www.7or.am, «Նախաձեռնողականության» հաշվեկշիռը», 20.12.2009թ./, *գեղամյանիզագիա*. «Ժամանակն է, որ Հայաստանի քաղաքական բառապաշարում նոր տերմին հայտնվի՝ *գեղամյանիզագիա*» /ԶԻ, «Գեղամյանիզագիոն գործընթացներ», 8.06.2009թ./, *փարաքարափակիչ*. «Վերջերս էլ Մոսկվայից ձեռնունայն է վերադարձել և Մամվել Նիկոյանի հանձնաժողովին գործնականում բան չի ներկայացրել *փարաքարափակիչ* Արամ Կարապետյանը»/ «Իրավունք», «Զարմանք», 22.11.2011թ./:

Գործածական են *-իկ* նվազափաղաքչական վերջածանցով կազմությունները՝ հեզնական իմաստով, ինչպես՝ *նախարարիկ*. «Դա հինգ-վեց ամսակներով պաշտոնավարող *նախարարիկներին* ու իրենց գործում ձախողված գործիչներին գովազդելու նպատակ ունի, քանզի խորհրդանիշներն անձնավորվելու են» /www.hrparak.am, «Շատ ուրախ է մեր կյանքը», 25.06.2009թ./, *պատգամավորիկ*. «Առնվազն ակնկալվում էին մանր-մուրր *պատգամավորիկներ*ի եթերային զգվտոցներ»/www.tert.am, «Մեր տխուր և անգույն քաղաքականությունը», 17.03.2012թ./:

Որոշ նորաբանություններ կերտված են խոսակցական բառաշերտին բնորոշ կաղապարներով ու միջոցներով, օրինակ՝ *-/ա/ցու* վերջածանցով՝ *քաղաքապետացու*. «*Քաղաքապետացու* Վ. Բարսեղյանը այնքան է կառչած իր աթոռից, որ այսպիսի մի կարգ է հաստատել քաղաքում. ով պատերից պատռած կտանի մյուս թեկնածուների նկարները, կվարձատրվի 200 դրամով» /«Իրավունք», «Ով մի պատռած նկար տանի, կստանա 200 դրամ», 22.10.2011թ./, կամ *-ուհի* վերջածանցով՝ *երկրապահուհի*. «1998-ին Հ.Նաղդայանը շատ արագ կողմնորոշվեց ու «թռավ» «Հանրապետության» գնացքից՝ համարելով «Երկրապահ» խմբի շարքերը՝ դառնալով ակտիվ «երկրապահուհի» /ԶԻ, «Համ պատգամավոր է, համ վաշխառու տիկին», 24.12.2005թ./:

Նորաբանությունների շարքում PR-ի լեզվում բավականին լայն գործածություն ունեն, այսպես կոչված, բառապատճենումները: Մեր լեզվի զարգացման արդի փուլում հատկապես տարածված են ռուսերենից կատարված բառային պատճենումները, որոնք սովորաբար դիտվում են որպես իմաստային փոխառություններ: Օրինակ՝ *բարիքեռի*. «Նա մի *բարիքեռի* է, որն ուսանողների ուսման վարձերն է վճարում, շրջանից եկող ուսանողների համար անվճար ավտոբուս է տրամադրում» /ՀԺ, «Բարիքեռին և նրա «բարգավաճիկները», 28.04.2009թ./:

Փաստենք, որ քաղաքական մեթոդյա ելույթներում գործածված ու գործածվող նորաբանությունները հիմնականում բացասական իմաստ են պարունակում: Այդ բառերը ուղղակիորեն հայելին են ներկա քաղաքական ուժերի պայքարի, անձի ինքնարտահայտման ու ինքնադրստրման: Հաջող PR-ի պարագայում բառընտրության ու բառագործածության կարևորությունը հատկապես էական է մարդու մտածողության վրա ազդելու, ցանկալի հույզեր արթնացնելու տեսակետից:

Քաղաքական PR-ի լեզվին բնորոշ են նաև նորագույն հասկանումները, որոնք հիմնականում հասարակական-քաղաքական կազմակերպությունների, պետական-պաշտոնական տարբեր կառույցների կրճատ անվանումներ են և լրացնում են նորաբանությունների շարքը, ինչպես՝ *ԱԺՄ* (Ազգային ժողովրդավարական միություն), *ՀՀԸ* (Հայոց համազգային շարժում), *ԵԱԽ* (Երիտասարդության ազգային խորհուրդ), *ՄԻՄ* («Սահմանադրական իրավունք» միություն), *ԱԺ* (Ազգային ժողով) և այլն:

Ժամանակակից մամուլի լեզվի բառապաշարի վերջին տասնամյակը նշանավորվում է նոր բառեր կերտելու հարաճուն միտումով՝ պայմանավորված հասարակարգում արմատական փոփոխություններով ու դրանից ածանցյալ մյուս զարգացումներով: Հայերենն ավանդաբար պահպանել է առավելապես սեփական բառակազմական միջոցներով հարստացնելու իր առանձնահատկությունը՝ նախկին բառակազմական կաղապարների գործուն կիրարկմամբ: Սա ցույց է տալիս, որ ավանդաբար հայերենի

բառակազմական համակարգն ավելի կայուն է եղել լեզվի մյուս՝ ճարտանական և շարահյուսական համակարգերի համեմատությամբ:

НЕОЛОГИЗМЫ В ЯЗЫКЕ ПОЛИТИЧЕСКОЙ PR

___ *Резюме* ___

___ *Л. Киракосян* ___

Известно, что изменения в словарном составе языка напрямую обусловлены различными социальными, экономическими, культурными и другими процессами, происходящими на данном этапе развития языка. Словарный состав языка, в первую очередь, пополняется за счет неологизмов. За последнее десятилетие армянский язык обогатился тысячами новых слов. Изучение их словообразовательных моделей выявляет богатство словообразовательных возможностей армянского языка. В проанализированном материале в основном представлена общественно-политическая терминология, взятая из армянской прессы. Были использованы также материалы “Словаря неологизмов современного армянского языка” С.Элюян /Ереван, 2002/.

**ՕՏԱՐԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՁԽԱԼԱՓՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ձ.Խալափյանը 20-րդ դարի երկրորդ կեսի արձակագիրներից է՝ հեղինակ, որի ստեղծագործությունը համարյա թե ուսումնասիրված է, ավարտել է ԵՊՀ ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը և աշխատել Երևանի գիտահետազոտական տարբեր ինստիտուտներում որպես նախագծող ինժեներ: Առաջին հայացքից այսպիսի «ուչ գրական» կենսագրություն ունեցած մարդը որևէ կապ չպետք է ունենար գեղարվեստական գրականություն հեղինակելու հետ: Մյուս կողմից՝ Ձ.Խալափյանը բազմաժանր գրող է, նրա ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել են ֆիլմեր («Թթե-նին», «Որտե՞ղ էիր, մարդ աստծո»), նա հարստացրել է հայ թատերգությունը անգամ Հայաստանից դուրս (Լենինգրադ, Ռիգա, Պյառնու, Բլագոգրադ, Շյաուլյայ) հաջողությամբ բեմադրված մի շարք պիեսներով: Իսկ վերջիններից առավել ճանաչվածները՝ «Հրաշք երեխան» և «Օրորոցայինը», թատերագետները դասել են 20-րդ դարի 60-70-ական թվականների հայ դրամատուրգիայի նվաճումների շարքում¹:

Ձ.Խալափյանի ստեղծագործություններում հանդիպող օտարաբանությունների ուսումնասիրման համար ընտրվել են նրա երեք ժողովածուները՝ «Եվ վերադարձնելով Չեր դիմանկարը» (1978թ.), «Չերմանց մխիթարություն» (1979թ.) և «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» (1983թ.), որոնցում գետեղված են հեղինակի 60-70-ական թվականներին գրված գործերը:

Գեղարվեստական գործերում օտարաբանություններն իրենց ուրույն տեղն ունեն, որովհետև հեղինակները նրանցով ստեղծագործական զանազան խնդիրներ են լուծում: «Օտարաբանությունները...գեղարվեստական գրականության մեջ գործածվում են ոճավորման (նաև՝ երգիծական) տարրեր նպատակներով»²: Հատկապես խորհրդային շրջանում ստեղծագործած գրողները ոճաբանական այս հնարին հաճախ են դիմում (հիշենք Ե.Չարենցի՝ անցյալ դարի 20-30-ական թվականների բազմաթիվ գործեր, Հր.Քոչարի, Հր.Մաթևոսյանի և ուրիշների արձակ ստեղծագործությունները և այլն): Բնական է, որ օտարաբանություններից չի խուսափել նաև մեր կողմից ուսումնասիրվող հեղինակը, չնայած նրա ստեղծագործության մեջ դրանք մեծ տեղ չեն գրավում: Իրավացի է Լ.Եզեկյանը՝ նշելով, որ գրողների կողմից օտարաբանությունների գործածումը «ինչպես համապատասխան միջավայրի, այնպես և առանձին կերպարների խոսքի ոճավորման նպատակադրումն է»³:

Ձ.Խալափյանի գործերում հանդիպող օտարաբանությունները հիմնականում ռուսերեն բառեր են կամ ռուսերենի միջոցով այլ լեզուներից փոխառություններ, որոնց մի մասը ժամանակին տեղ է գտել նաև մեր լեզվի գրական շերտում, իսկ մի մասն էլ կամ նրանց ոչ ճիշտ տարբերակները թափանցել են խոսակցական հայերենի շերտը: Գրանք կարելի է բաժանել երկու խմբի՝

¹ Հարկ է նշել, որ Ձ.Խալափյանի մի շարք գործեր թարգմանվել են ռուսերեն, ուկրաիներեն, չեխերեն, բուլղարերեն, լեհերեն, իսկ հեղինակը «Ոսկե եղեգն» նախագահական մրցանակի դափնեկիր է, արժանացել է Հայաստանի գրողների միության՝ Գերենիկ Գեմիրճյանի անվան, ինչպես նաև ՀՀ կառավարության և ՀԳՄ սահմանած «Հրանտ Մաթևոսյան» մրցանակներին:

² Լ.Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2006, էջ 152:

³ Նույն տեղում, էջ 162:

1. օտար բառեր, որոնք օգտագործում են հայ և օտարազգի հերոսները օտար լեզվով խոսելիս կամ ինչ-որ արտահայտություն անելիս,
2. օտարալեզու բառեր, արտահայտչաձևեր, որոնք հանդիպում են հեղինակի (հազվադեպ) կամ նրա որևէ հերոսի խոսքում և ունեն սուկ ռճական արժեք:

Բնական է, որ ազգությամբ ռուս հերոսի կերպարի տիպականացման առաջնահերթ խնդիրը պետք է լիներ այն, որ նրա խոսքում ռուսերեն բառեր հնչեն: «Պատը» վիպակում, երբ սիրած ճաշատեսակն են դնում ռուս հերոսի առջև, հիացմունքը հայտնում է մայրենի արտահայտությամբ. «Ух, житуха⁴» (ՈւՄՍ, 418): Չարմանալի չէ, որ հարբելուց հետո նա պիտի անպայման հայտնի՝ օգտագործելով ռուսերեն արտահայտություն. «Пошел ты...» (ՈւՄՍ, 419):

Գաղտնիք չէ, որ ուսանողների խոսքում օտարաբանությունները այսօր էլ նկատելի են: Ասվածը վերաբերում է սերնդեսերունդ փոխանցվող *լիկվիդ, գաշտա, գաշտանիկ, սեմեստր* և այլ բառերին, որոնք փոխառություններ են ռուսերենից և հայերեն համարժեք միավորների առկայությամբ բավական կենսունակ: Բնական է, որ մի քանի տասնամյակ առաջ դրանք շատ ավելի էին տարածված: Սա է պատճառը, որ երբ «Երիցուկի թերթիկներ» վիպակի՝ գյուղ եկած ռուսաց լեզվի ուսուցչուհուն (ի դեպ, նա ազգությամբ հայ է. այդ է վկայում նրա անունը՝ Հռիփսիմեն) հարցնում են, թե որ ինստիտուտը կամ համալսարանն է ավարտել, նա պատասխանում է. «Ես դեռ չեմ ավարտել: Հանձնել եմ միայն չորրորդ *սեմեստրի* քննությունները» (ՈւՄՍ, 287):

Հաճախ ռուսերենից հայերենին անցած բառերն ու արտահայտությունները հերոսների կողմից հնչում են աղավաղված, բայց տվյալ միջավայրի համար հասկանալի տարբերակով: «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» վեպի հայ հերոսներից մեկը երգում է ռուսերեն երգ. «Ցիպլոնիկ ժարընի, ցիպլոնիկ վարընի...» (ՈւՄՍ, 17): Կամ՝ «Պատը» վիպակում «մալականի» հոգեհացին մասնակցող ռուսը հայերեն ասում է. «Ես *սիլոդկա*⁵ ուտել չեի իմանում» (ՈւՄՍ, 418): Կամ՝ «Երիցուկի թերթիկներ» վիպակում Հայրենական պատերազմի տարիներին գյուղի՝ ռազմաճակատ մեկնած ռուսաց լեզվի ուսուցչին փոխարինելու եկած ուսանողուհին, առաջին անգամ մտնելով դասարան, աշակերտներին բարևում է ռուսերենով. «Здравствуйте»: Պարզ է, որ երկար ընդմիջումից հետո ռուսերեն խոսել փորձող գյուղացի աշակերտների պատասխանը պիտի լիներ՝ *Չդրաստի...* (ՈւՄՍ, 286):

Երբեմն այնպիսի իրավիճակ է ստեղծվում, որ օտարալեզու բառը շատ ավելի լավ է տվյալ մարդուն բնութագրում, քան դրա հայերեն տարբերակը: Հենց այս պատճառով էլ «Մպիտակ մուկը» վիպակում հեղինակի խոսքում հանդիպում ենք. «...Չնայած չեմ հավատում, բայց քո գիտությունն էլ փորձենք, - ասաց Սանատրուկը, *սամոդուրի* սուր հայացքը նրանից չկտրելով» (ՈւՄՍ, 465): Մեկ այլ դրվագում («Պատը» վիպակում) հաճախորդին ժպտալով թալանող խորամանկ մատուցողին հայհոյելիս հերոսը օտարաբանությունից ավելի հարմար արտահայտություն չի գտնում. «-Դրա *աֆերիստ...* - շնչաց գործակատար կին ունեցող Համոն» (ՈւՄՍ, 434): Նախադասության երկրորդ մասը՝ հեղինակի խոսքն էլ հուշում է, որ Համոյի համար սա սովորական երևույթ է, որովհետև շողքորթ ժպիտը հատուկ էր նաև իր կնոջ մասնագիտությունն ունեցող մարդկանց:

⁴ Ռուսերեն հասարակարանություն է, բարձմանվում է՝ «լավ կյանք»: Տե՛ս *T. Ефремова, Современный толковый словарь русского языка, 2000, հատված Ерик-зага, էջ 23* (էլեկտրոնային տարբերակ):

⁵ *Селёдка* (սելյոդկա - ծովատառեխների ցեղին պատկանող ծովային փոքրիկ ձուկ) բառի աղավաղված ժողովրդախոսակցական տարբերակն է:

Որոշ դեպքերում էլ օտարաբանության գործածման պատճառը հերոսի կարծիքով, այդ բառի հայերեն տարբերակի թվացյալ անհասկանալիությունն է: «Պատը» վիպակում հերոսը ներկայացնում է իր հետ եկած ընկերոջը. «Մա էլ *պաժառնիկ* Խոստիկն է» (ՈԷՄԱ, 434): Երևի կարծում է, թե բառի հայերեն *հրշեջ* տարբերակը դիմացինին անհասկանալի կլինի: Կամ միգուցե այդ բառը ինքը չգիտի: Իսկ որ այդ օտարաբանությունը հեղինակը հատուկ միտումով է գործածում, երևում է նախորդ էջում: Հեղինակի խոսքում օգտագործվում է հայերեն բառը. «Հովսեփը բացատրեց, հասկացրեց, բայց դարձյալ *հրշեջ* Խոստիկը ոչինչ չհասկացավ» (ՈԷՄԱ, 433):

Շան հաչոցը նկարագրելու ամենահարմար ձևը հեղինակը համարել է օտարաբանությունը. «Դուռը փակվեց, և խավարի մեջ մնաց հաչող շան *մորզեճ*» (ՈԷՄԱ, 3): Ընթերցողին այս մեկ բառն էլ բավական է հասկանալու համար, որ խոսքը ընդհատվող հաչոցի մասին է:

Հեղինակը նուրբ հումոր է դրսևորում խորհրդային պետության մեջ առկա թերությունները ցույց տալու համար: Հայտնի է, որ հատկապես խորհրդայնացման սկզբնական շրջանում շատ էին օգտագործվում օտարաբանություններ, որոնք մարդկանց անհասկանալի էին և դրանով մաս ազդեցիկ դեր ունեին: Այսպես՝ երևի թե գյուղ-խորհրդում մտածել են, որ *գրասենյակ* հայերեն բառը չի կարող մարդկանց վրա այն ազդեցությունն ունենալ, ինչ օտարալեզու տարբերակը. «Շենքի ճակատին տախտակ էր փակցված. «Գյուղխորհրդի *կանցիլար*» (ՈԷՄԱ, 8): Մեկ այլ դրվագում ոճական նուրբ հնարով ծաղրվում է խորհրդային պետության մեջ տարածված այն երևույթը, երբ խանութներում պակասություն էր, բայց առանձին մարդիկ կարողանում էին տարբեր ճանապարհներով ձեռք բերել պահանջարկ ունեցող ցանկացած ապրանք: Այդպիսի մի անձնավորություն է «Գիզին դեկի մոտ» վիպակի հերոսներից մեկը. «Կիմա նրան ո՛վ է Սուրենն ասում, այլ հարգանքով՝ *Դեֆիցիտ* ճարենիչ, պակասում էր միայն Չերդ գերագանցությունը» (ՁՄ, 69):

Խորհրդային շրջանում ռուսամետությունը երբեմն հասնում էր ծայրահեղության: Շատ ծնողներ ձգտում էին իրենց երեխաներին անպայման ռուսական կրթության տալ, տանը խոսում էին ռուսերեն կամ խոսքում օգտագործում ռուսերեն բառեր, արտահայտություններ: Նույնիսկ տապանաքարերի մակագրություններն էին այդ լեզվով կատարում: Այսպես է վարվում նաև «Մայիտակ մուկը» վիպակի հերոսներից մեկը, ում հայրը գյուղում ոչ մեկի կողմից հարգանք չի վայելել (ինչպես հեղինակն է ասում, «որին կյանքում հարսանիք հրավիրած չկային»): Դա չի խանգարում, սակայն, որ որդին հոր գերեզմանին արձան կանգնեցնի՝ հետևյալ վերամբարձ և ճոռոմ մակագրությամբ. «Трудолюбивому отцу Качо Седраковичу Бек-Мурадяну, от сына Амаяка, которого народ любил»: Ապա հաջորդում է հեղինակի հումորը. «Ազգանվան Բեկմուրադը երկու մասի կոտրելը միտումնավոր էր, իբր, տեսեք, մենք էլ ենք բեկերից, իշխանական ցեղ ենք» (ՁՄ, 157):

Հեղինակի ուշադրությունից չի վրիպել այն, որ արհեստավոր մարդիկ իրենց խոսքում սովորաբար ավելի շատ օգտագործում են օտարալեզու մասնագիտական բառեր: Ահա էլեկտրիկ Հակոբի բառապաշարը. «...մի հատ *կորպուս* տուր»: Կամ՝ «Բլոկ մի՛ արա: *Դիսկին* ո՞նց է գլորում: Հիմա դու յոթ քաշիր, ես *ինդիկատորով* նայեմ» (ՁՄ, 78): Այլ դեպքերում գործածվում են *ռադիատոր* (ՁՄ, 299), *ակումյատոր* (ՁՄ, 121), *արմատորա* (ՁՄ, 123), *կոնդենսատոր* (ՈԷՄԱ, 66) և այլն: Օրինակ՝ «...*Ռադիատորը* տաքացել է (ՁՄ, 299): ...*կոնդենսատորներ* են, պահեստից են ստացել (ՈԷՄԱ,- 66): Մի շարք մասնագիտությունների, արհեստների անուններ ևս ժողովրդի լայն զանգվածին ավելի ծանոթ են օտարաբանությամբ՝ *կոնդուկտոր* (ՁՄ,- 80), *բուֆետչիկ* (ՁՄ,- 85), *մայյար* (ԵՎՉԴ,- 289) և այլն: Այսպես՝ «- Չէ՛, Մաքո՛ ջան, այսօր *կոնդուկտորը* Վե-

դուրսը Մելիքի տղան է, մեր Պարզերը» (ԵՎՁԳ, 265): «Հայրենական պատերազմի հաշմանդամին առանց հերթի մեքենա է հասնում. մեքենան վերցնենք ու վաճառենք ո՞ւմ, որևէ *բուֆետչիկ* Արոյի» (ՋՄ, 85): «Վա՛յ քո տունը շինվի, *մայլարների* նման ժամադրվեցինք հրապարակի այգում» (ԵՎՁԳ, 289): Այս երևույթը շարունակվում է նաև մեր օրերում: Մեր կարծիքով, սրա պատճառը մի կողմից հայերեն հաջող համարժեքների բացակայությունն է, մյուս կողմից՝ սովորույթի և ինտերգիայի գործոնները:

Ռուսաց լեզվից կամ ռուսերենի միջոցով այլ լեզուներից փոխառյալ բառերից բացի՝ Ջ.Խալափյանն անհրաժեշտության դեպքում գործածում է նաև ֆրանսերեն, թուրքերեն բառեր: Մի դեպքում թուրքերեն օտարաբանությունն առանձնահատուկ կերպով է պատկերում իրավիճակը և հերոսին: Մարդը հայտնվում է զավեշտալի վիճակում, և դրա հետևանքով շրջապատի կողմից ստանում ծաղրական մականուն: Այսպես՝ «Պատը» վիպակի հերոսներից մեկը՝ նոր հարևանը, որի անունը դեռ ոչ ոք չգիտեր. «Միայն մի անգամ կիրակի օրը նարդի խաղաց, քանի գցում էր՝ իքի-բիր էր ընկնում, այսինքն՝ երկու-մեկ: Անունը դրին՝ *Բքիբիր*» (ՈԷՄԱ, 364):

Հաճախ օտարաբանությունների միջոցով հեղինակը համապատասխան միջավայր է ստեղծում: Հատկապես ադրբեջանաբանակ հայերի լեզվում առկա էին ադրբեջաներեն (թուրքերեն) բառեր, արտահայտություններ: Մրանով է բացատրվում Ջ.Խալափյանի «Որտե՞ղ էիր, մարդ աստծո» վեպի հերոսուհիներից մեկի «*Միտքի* քանի՞սն է» հարցում օտարաբանության գործածությունը:

Արտասահմանյան երկրներում ապրած հայը իր խոսքում անպայման պիտի օգտագործի օտարալեզու բառեր: «Պատը» վիպակի մարսեցի հերոս Կարպիս Միմոնյանը Հայաստան այցելած իր ֆրանսիացի կնոջ տպավորություններն է թարգմանում հայերեն. «Հայաստանը մեզ համար, ըրբ, տիկինս ասում է, ըրբ, անչափ, ըրբ, տիկինս ասում է, ըրբ, մենք չենք գիտեր, որ այսքան *սիվիլիզացիոն*, ըրբ, քաղաքակիրթ ժողովուրդ եք», ապա շարունակում է. «Գերեց, գերեց մեզ, *իմպրեսիոն*, ըրբ, տպավորիչ, ասում է տիկինս, գետեր, դաշտեր, լեռներ, Արարատ...» (ՈԷՄԱ, 410):

Պատահում է, որ օտարաբանությունը ավելի է շեշտում, սաստկացնում խոսքը, այդ պատճառով էլ հերոսը հայերեն բառին ավելացնում է դրա օտարալեզու տարբերակը: «Պատը» վիպակում, դիմացինի սուտ խոսքից գայրամալով, հերոսը նրա երեսին շարտում է. «Նա պակված է եղել քեզ հետ, սուտ ես խարում... Վերջ, *ֆինի*, էլ չստեսես...» (ՈԷՄԱ, 433): Իսկ «Որտե՞ղ էիր, մարդ աստծո...» վեպում տեսնում ենք հակառակ երևույթը. օտարալեզու բառով արտահայտված երևույթը սաստկացվում է հայերեն տարբերակով. «Դա *սաքոտաժ* է, վնասարարություն⁶» (ՈԷՄԱ, 63):

Ոչ մի տեղ չսովորած, բայց բուժակ աշխատող անձնավորությունը գիտի մարդկանց հոգեբանությունը, նրանց վրա ազդելու և իր խոսքերի ճշմարտությունը հաստատելու համար նա ներկայանում է որպես չորս լեզվի տիրապետող: Բնական է, որ նա պատեհ առիթը բաց չի թողնում իր այս առավելությունը հիշեցնելու. «Խնորեն, իսկական փարիզյան կապսուլ, կարդացեք՝ Santal Midy: Իսկ այս մեկը, նայեցեք՝ capsules au Matico, հոնորեի դեմ» (ՈԷՄԱ, 27):

Մի շարք օտարալեզու բառեր մտել են մեր բառապաշար և չունեն իրենց հայերեն տարբերակները: Դրանք գերազանցապես եզրույթներ են՝ դեղանուններ, գի-

⁶ «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում Է.Աղայանը երկու բառերն էլ համարում է գրական լեզվին հատուկ (տես Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1266; 1396): Ավաճի վկայությունն է այն, որ անվանի լեզվաբանը դրանց դիմաց խոսքի որևէ այլ ոճի պատկանելու մասին ճշում չի կատարում: Կարծում ենք, որ այսօր սաքոտաժը օտարաբանություն պիտի դիտել: Այս փաստը բառապաշարի անընդհատ զարգացման ապացույց է:

տական բառեր, ինչպես նաև հագուստի, խաղերի անուններ և այլն: Ջ.Խալափյանի ստեղծագործություններում ևս հանդիպում ենք նման բառերի: «Սպիտակ մուկը» վիպակի հերոսը «գրպանից հանեց *պենիցիլինի* փոքրիկ սրվակը, քիչ նայեց, ապա դրեց սեղանին...» (ՈԷՄԱ, 482): Կամ՝ «Սահա՛կ, դրա ականջի ետևը *իխտիոլ* քսիր» (ՈԷՄԱ, 4): Մեկ այլ դրվագում («Որտե՞ղ էիր, մարդ աստծո...» վեպում) հանդիպում ենք. «Չորս-հինգ հոգի երգեցին, իսկական *աթեիստներ...*» (ՈԷՄԱ, 61): Կամ՝ «Կար նաև կարմիր *գալիֆեռ* մի մարդ» (ՈԷՄԱ, 6): Կամ՝ «...ազատ ժամերին *դոմինո* էին խաղում», ինչպես որ տարածված էր անցյալ դարի կեսերին (ՈԷՄԱ, 21):

Ինչպես վկայում են վերը բերված որոշ օրինակներ, օտարալեզու բառեր հանդիպում են նաև հեղինակային խոսքում: Սա հատկապես նկատելի է Ջ.Խալափյանի վաղ շրջանի գործերում (20-րդ դարի 60-ական թթ.), և կարծում ենք՝ պայմանավորված նաև հեղինակի ոչ մասնագիտական կրթությամբ: Այսպես՝ «Պատը» վիպակում տղաները ներս մտան. «...շիշը դրին *բուֆետին*» (ՈԷՄԱ, 434): Կամ՝ «-Ծեծած մտով, - ասաց մատուցողը՝ *բրոկոտոն* ու մատիսը հանելով» (ՈԷՄԱ, 233): Կամ՝ «Սրահների հատակը պատած էր երկնագույն *լինոլեումով*» (ՈԷՄԱ, 253): Անգամ նույն ստեղծագործության մեջ հեղինակը մի դեպքում գործածում է օտարաբանությունը, իսկ մի քանի էջից հետո՝ դրա հայերեն տարբերակը: Այսպես՝ «Գիզին իր թերթը գիտեր, իր *ռեկլամը...*» (ՋՄ, 99): Բայց՝ «Մեկը եկել էր խմբագրություն, *գովազդ* էր բերել...» (ՋՄ, 102): Չենք բացառում, որ ընդգծված և այլ (*ստերիլիզատոր* (ՈԷՄԱ, 75), *գրաֆին* (ՈԷՄԱ, 76) և այլն) օտարաբանությունների գործածումը կապվում է ժամանակաշրջանի՝ 20-րդ դարի 60-ական թվականների հետ, երբ օտար, հատկապես ռուսերեն բառերի օգտագործումը սովորական երևույթ էր մեր հասարակության մեջ: Նշենք, որ ուշ շրջանի ստեղծագործություններում հեղինակը ավելի հետևողական է այս հարցում:

Շատ փոխառություններ ժամանակի ընթացքում վերածվում են օտարաբանությունների: Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ տվյալ օտարալեզու բառի հայերեն համարժեքը գործածության է դրվում լայն խավերի կողմից՝ դուրս մղելով առաջինին: Սակայն քանի դեռ այս երևույթը տեղի չի ունեցել, լեզվում այն իր տեղն ունի: Կարծում ենք, թե Ջ.Խալափյանի վերոհիշյալ ժողովածուներում հենց այս պատճառաբանությամբ կարելի է բացատրել *սիջակ* (ՈԷՄԱ, 6), *ժիլետ* (ՈԷՄԱ, 6), *քրոմե* (ՈԷՄԱ, 7), *ռեյս* (ՈԷՄԱ, 22), *շոֆեր* (ՈԷՄԱ, 14), *ալպինիստ* (ՈԷՄԱ, 23) և այլ օտարաբանությունների առկայությունը: Է.Ադայանը նշում է. «...շատ հաճախ այս կամ այն հասկացությունն արտահայտելու համար գուցահեռաբար գործածվում են հայեցի և փոխառյալ բառերը՝ նույն հասկացության արտահայտության համար, որոնց միջև, բնականաբար, տեղի է ունենում մրցակցություն, որ հանգեցնում է մեկի կամ մյուսի հաղթանակին: Հաճախ է պատահում նաև, որ որոշ ժամանակ գործածվում է միայն փոխառյալ բառը, մինչև կազմվում է հայերեն հաջող համապատասխանը և դուրս մղում նրան»⁷: Իսկ Լ.Եզեկյանը նկատում է. «...օտար լեզուներից փոխառնված, վերցրած բառերը փոխառություններ են, քանի դեռ տվյալ լեզվի բառապաշարում նրանք չունեն իրենց համապատասխան, ազգային համարժեք ձևերը, իսկ երբ արդեն դրանց համարժեքներն ստեղծվում են տվյալ լեզվի համապատասխան բառակազմական միջոցներով, նշված փոխառությունները դառնում են օտարաբանություններ»⁸: Այդպես է նաև վերը նշված բառերի պարագայում:

Որքան էլ որ օտարաբանությունները գրական լեզվի համար անթույլատրելի, մերժելի երևույթ են, այնուամենայնիվ, գեղարվեստական խոսքում, մասնավորապես՝ Ջ.Խալափյանի ստեղծագործություններում նրանց դերը նկատելի է. ինչպես ցույց է

⁷ Է.Ադայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Երևան, 1984, էջ 187:

⁸ Լ.Եզեկյան, *նշվ. աշխ.*, էջ 152:

տալիս քննությունը, հեղինակը սովորաբար ոճական այս հնարը միշտ օգտագործում է տեղին: Օտարաբանությունները կարևոր են կերպարների տիպականացման, անհրաժեշտ իրավիճակ ստեղծելու գործում: Նրանց միջոցով հեղինակն ստեղծում է ասելիքի արտահայտման յուրահատուկ ձև, լուծում լեզվատոճական և գեղարվեստական խնդիրներ:

Համառոտագրություններ

ԵՎԶԳ - Ջ. Խալափյան, Եվ վերադարձնելով Չեր դիմանկարը, Եր., 1978:

ՋՄ - Ջ. Խալափյան, Ջերմանց մխիթարություն, Եր., 1979:

ՈԷՄԱ - Ջ. Խալափյան, Որտե՞ղ էիր, մարդ աստծո, Եր., 1983:

СТИЛИСТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ВАРВАРИЗМОВ В ПРОИЗВЕДЕНИЯХ З. ХАЛАПЯНА

___ *Резюме* ___

___ *А. Саргсян* ___

Насколько варваризмы для литературного языка были бы недопустимым, неприемлемым явлением, тем не менее, в художественной речи, в частности, в произведениях З. Халапяна, они играют важную роль. Автор этот стилистический прием использует всегда уместно. Варваризмы имеют большое значение в описании типажей, в создании необходимых ситуаций. С их помощью автор создает уникальную форму выражения, разрешает различные стилистические и художественные проблемы.

**ՀՈՄԱՆԻՇ ԲԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՂ ՉԱՐԵՆՑԻ
«ԳԻՐՔ ԸՆՆԱՊԱՐՀԻ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ**

Հայերենում հոմանիշ հասկացության համար տարբեր ժամանակներում գործածվել են մի քանի տերմիններ՝ հոմանիշ, համանիշ, նույնանիշ, որոնք արդի հայերենում ձեռք են բերել միևնույն հասկացության որոշակի տարբերակված իմաստներ: Ընդհանուր հասկացությամբ ընդունված է հոմանիշ տերմինը՝ լեզվական միևնույն իրողությունն արտահայտելով երկու տարբերակներով՝ 1. համանիշ - մոտ իմաստ ունեցող, բայց լիովին իմաստները չեն համընկնում, ինչպես՝ վարս - հեր. վարս - կանացի երկար մազեր, հեր - առհասարակ մարդու գլխի մազ, կամ՝ քաջ - արի - խիզախ - կարիճ - անվեհեր - համարձակ - սրտոտ: 2. նույնանիշ - նույն իմաստն ունեցող բաների համար՝ բույր - հոտ, զագաթ - կատար և այլն:

«Հայերենում հոմանիշներ են կոչվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բաները, որոնք ունեն մոտ կամ նույն իմաստներ և միաժամանակ կարող են տարբերվել ոճական կիրառությամբ, հուզարտահայտչական գունավորմամբ, ինչպես նաև գործածականությամբ և ուրիշ բաների հետ կապակցվելու տարբեր ունակությամբ»:¹ Ուրեմն՝ հոմանիշները մերձիմաստ և նույնիմաստ լեզվական իրողություններ են, որոնք իրարից տարբերվում են իմաստային նրբերանգով և ոճական կիրառությամբ:

Լեզվի ինչպես բառապաշարի, այնպես էլ քերականական միջոցների ոճական հնարավորություններն առաջին հերթին դրսևորվում են հոմանշության հողի վրա: «Գործառական ոճական տարբերությունները ցույց են տալիս, թե հոմանիշային շարքի անդամներից ո՞րը լեզվի ո՞ր տարբերակին է պատկանում կամ գործառական ո՞ր ոճին: Այսպես, օրինակ, թուշ - այտ, պռոշ - շրթունք, ունք - հոնք, չանգալ - կարթ համանիշային շարքերում ունենք մի կողմից՝ խոսակցական լեզվի թուշ, պռոշ, ունք, չանգալ բաները, մյուս կողմից՝ դրանց գրական համապատասխանները՝ այտ, շրթունք, հոնք, կարթ»:²

Եթե ոճական կիրառությունն արդյունք է մտքի, զգացմունքի արտահայտման ու նպատակահարմար միջոցների ընտրության, ապա ամեն մի լեզվում էլ հոմանշությունն է, որ ընտրության լայն հնարավորություն է ընձեռում: Առանց հոմանշության չկա և լեզվական միջոցների արտահայտչականություն, որովհետև բանի քերականական իրողության ոճական արժեքը դրսևորվում և ըմբռնելի է դառնում միայն այն դեպքում, երբ դա համեմատվում է իմաստով մոտ այլ բանի և քերականական իրողության հետ:

«Բառային հոմանիշների կարևոր չափանիշները նրանց իմաստային ու ոճական գործառություններն են: Նրանք են որոշում նույն կամ մոտ իմաստ ունեցող բաների յուրահատուկ կապերն ու հարաբերությունները, ինչպես նաև այդ կարգի բաների տեղը լեզվի բառային համակարգում»:³

Թե ինչքան հարուստ ու կարևոր են հոմանիշների ոճական-արտահայտչական հնարավորությունները, առանձնապես լավ է զգացվում նաև խոսքի մեծ մշակների՝

¹ Ա. Մուքիսայան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989, էջ 137:

² Գ. Ջահուկյան, Աղայան Է., Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա սյրակ, Եր., 1980, էջ 240

³ Ա. Մուքիսայան, նշվ. աշխ., էջ 139:

իրենց ստեղծագործությունների լեզվի վրա կատարած աշխատանքին ծանոթանալու դեպքում: Այդ աշխատանքը հիմնականում հատկանշվում է հոմանիշ հնարավորություններից լավագույնի, տվյալ դեպքում եզակիորեն անհրաժեշտի ընտրության ուղղությամբ կատարած որոնումներով:

Հոմանիշությունը բավական լայն հասկացություն է:

Բերենք հոմանիշ բառերի օրինակներ.

Փա՛ռք փառաբանենք ապա մենք մեր
Առյուծ- Մհերին, դյուցազնին քաջ,
Դավթին՝ նրա որդուն դյուցազն,
Մհերին՝ նրա որդուն անմահ,-

Ողջ ժողովրդին ապա Սասնա,
Որ լուրք լեռներում մի օր բազմած
Հորինեց պայծառ գրույցը այս –
Եվ անցավ անհետ, դարձավ երագ»:⁴

Դարձավ նա գառամ ու այլեհեր,
Եվ կամաց-կամաց դյուցազնին ծեր
Սկսեց պատել, ինչպես գիշեր,
Վիշտն անբուժելի ու մահաբեր:⁵

Առաջին դեպքում հոմանիշներ են *քաջ* և *դյուցազն* բառերը, երկրորդ դեպքում՝ *գառամ*, *ծեր* և *այլեհեր* բառերը, իսկ երրորդ դեպքում՝ *անբուժելի* և *մահաբեր* բառերը:

Ուռճանում էր նա անհագուրդ,
Հրկիզվում աշխարհի հրով,
Ամբարում էր իմաստ և խորհուրդ,
Որ լցվի անհուն երգերով:

Օ՛, խնդություն՝ն խեղճ՝ առանց առթի,
Օ՛, ուրախություն՝ն ռամիկ մարդի,
Օ՛, խաղող քաղած վերջին հերթին,
Օ՛, գինի քամած վերջին որթից:⁶

Օ՛, Առյուծ – Մհեր, ռամիկ արդար,
Փրկության պատմե՛շ չարից չարկամ,
Չե՛ք ժողովրդի, ու՛ժ տիրակալ,
Անհատների ու անեզրական ...⁷

Մի դեպքում հոմանիշ բառեր են՝ *խնդություն* - *ուրախություն*, *իմաստ* - *խորհուրդ*, իսկ մյուս դեպքում՝ *անհատների ու անեզրական*:

Խոսելով հոմանիշ բառերի մասին՝ պետք է նշել, որ հայերենում հոմանիշների ճոխությունը պայմանավորված է նրա աղբյուրների հարստությամբ, հոմանիշների առաջացման հիմնական գործոններն են բառապաշարի տարբեր շերտերի առկայությունը, բառային կազմում կատարվող համալրումները, բառերի ոճական զանազան կիրառությունները, բառերի իմաստափոխությունը և այլն:

⁴ *Եղ. Չարենց*, *Երկերի ժողովածու, 4 հատորով, 3-րդ հատոր, Եր., 1987, էջ 6:*

⁵ *Նույն տեղում, էջ 8:*

⁶ *Եղ. Չարենց*, *Երկերի ժողովածու, հատոր 1-ին, Եր., 1985, էջ 424:*

⁷ *Եղ. Չարենց*, *Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, էջ 11:*

«Հոմանիշների մեջ գոյություն ունեցող նրբինաստային բոլոր տարբերությունները, փաստորեն, առաջացել են կամ առաջանում են բառի իմաստային փոփոխությունների հետևանքով»:⁸

Այսպես՝ *թուղթ - նամակ*, նախապես *թուղթ* նշանակության հետ հետագայում ձեռք է բերել թղթի վրա գրված բովանդակությունը, իմաստը, կամ՝ *սուրբ բառը աստվածային, գերբնական* իմաստի հետ ձեռք է բերել *մաքուր, ազնիվ, առաքինի* իմաստները և այդ բառերի հետ էլ կազմում է հոմանիշների շարք:

Հոմանիշների առաջացման աղբյուր են նաև արևելահայ և արևմտահայ գրական լեզվի տարբերակները, դրանց բառերով ու դարձվածաբանական միավորներով կազմված հոմանիշները, ինչպես՝ *ասիկա - այս, աղվոր - գեղեցիկ, ստեն - ժամանակ, պագ - համբույր, փաստել - ապացուցել* և այլն: Նման աղբյուր են նաև նորագույն փոխառությունները ու նորաբանությունները: Օրինակ՝ *արտորակցիա - վերացարկում, ինտելիգենտ- մտավորական, գաղափարաբան - գաղափարախոս, դահուկածող - դահուկափայտ* և այլն: Հայերենում շատ դեպքերում փոխառությունների հետ միաժամանակ կամ որոշ ժամանակ անց կազմվում է հայերեն համագորը, որոշ դեպքերում նաև փոխառյալ մի բառի դիմաց ստեղծվում են հայերեն մեկից ավելի հոմանիշներ, և բառերի միջև հաստատվում են հոմանշային բազմապիսի կապեր, որոնց բնույթը կախված է հոմանիշների տեսակից, նրանց հարաբերությունից:

Հոմանիշների դերը չափազանց մեծ է լեզվի բառապաշարի և դարձվածքային շրջանառության, ակտիվ բառապաշարի ծավալի ընդլայնման, բառերի գործածության նրբերանգների յուրացման, խոսքի ճոխ դրսևորման, լեզվի ոճական միջոցների հարստացման և խոսքի մշակույթի զարգացման գործընթացում:

Հոմանիշները հնարավորություն են տալիս արտահայտելու բառերով արտացոլված օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների զանազան նրբերանգները, նրանք ավելի կատարելագործում և զարգացնում են գրական լեզուն, ճշտություն և ստույգություն տալիս բառին և բառագործածությանը, լեզվում մտցնում են ոճական ու հուզարտահայտչական բազմազանություն, օգնում խուսափելու խոսքի միօրինակությունից, նույն բառի կրկնությունից և այլն: Հոմանիշների՝ որպես գեղարվեստական խոսքի արտահայտչական և պատկերավորման միջոցի նշված առանձնահատկություններն առանձնապես վառ դրսևորում են ստանում գեղարվեստական գրականության և հրապարակախոսության մեջ: Հոմանիշների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև լեզվի բառապաշարի, դարձվածաբանության, իմաստաբանության, ոճաբանության, ընդհանուր լեզվաբանության, լեզվի որոշ օրինաչափությունների բացահայտման և պարզաբանման ուղղությամբ:

Շարունակենք հոմանիշների տեսակների մասին նկարագրությունը:

Հոմանիշների իմաստային ընդհանրությունը կարող է դրսևորվել կիրառությունից դուրս՝ բառային մակարդակում և կիրառության մեջ՝ խոսքային մակարդակում: Ըստ այս հանգամանքի էլ հոմանիշները լինում են երկու տեսակ՝ բառային մակարդակի և խոսքային մակարդակի:

Մերգեյ Աբրահամյանը հոմանիշները բաժանում է երկու խմբի՝ իմաստային և ոճական հոմանիշներ:⁹ Նա նշում է հոմանիշների այս տեսակների առաջացման ուղիները, ընդգծում դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

1.Վերը նշված բառային մակարդակի հոմանիշների գործածության ոլորտը բավական լայն է: Դրանք կարող են հանդես գալ գրեթե բոլոր լեզվական ոճերում:

⁸ Ա.Մուքիսյան, նշվ. աշխ., էջ 150:

⁹ Ս.Աբրահամյան, Հայոց լեզու բան և խոսք, Եր., 1986, էջ 83:

2. Երկրորդ խմբի հոմանիշները հիմնականում գեղարվեստական, մասամբ նաև հրապարակախոսական լեզվում են հանդես գալիս՝ որպես բառի գործածության հարցում անհատական ակտիվ վերաբերմունքի արտահայտություն: Դրա համար էլ առաջինները կոչվում են համագործածական, իսկ երկրորդները՝ անհատական հոմանիշներ: Համագործածական հոմանիշների կազմի վերաբերյալ հայ լեզվաբանության մեջ լուրջ տարակարծություններ գոյություն չունեն: Միանգամայն ընդունելի պետք է համարել խնդրի այնպիսի լուծումը, երբ ավանդական մոտեցումով նույնանիշ կոչված բառերն այժմ չեն առանձնացվում և դիտվում են որպես հոմանիշներից անջատ լեզվական անկախ իրողություններ:¹⁰ Եթե երևույթի նկատմամբ ոճական մոտեցում ցուցաբերենք, ապա այդպիսի մոտեցումն արդարացվում է: Չկան այնպիսի բառեր, որոնք և՛ իմաստով, և՛ կիրառությամբ նույնը լինեն: Այս ուղղությամբ Մ. Նալբանդյանն ասել է. «Աշխարհիս երեսին ոչ մի լեզվում երկու բառ չկա մաթեմատիկաբար ճիշտ մի և նույն նշանակությունը տվող, ամենքն էլ տարբերվում են թե՛ շատ և թե՛ քիչ»:¹¹ Իսկ պրոֆեսոր Ս. Մելքոնյանը գրում է. «Բառային մակարդակի հոմանիշների մեջ դասվում են ոչ միայն իմաստով մոտ բառերը, ինչպես՝ ռիս – քեն, զննել-տնտղել, վտանգավոր-կործանարար, մրրկահույզ-մրրկածուփ, ուզել-տենչալ, մեծ-վիթխարի, աղքատ-չքավոր, թշվառ-ողորմելի, այլև նույնիմաստ բառերը /նույնանիշները՝ պես-մման, պատուհան-լուսամուտ, մագ-հեր, ծնոտ-կզակ, գեղեցիկ-սիրուն, այտ-թուշ և այլն/»:¹² Բառային մակարդակի հոմանիշներ են.

Առյուծ Սհերին՝ դյուցազնին մեր,
Նա ինքն էր իրեն իշխան կարգել –
Եվ ապրում էր իր լեռներում դեռ
Նա կյանքով ազատ ու անարգել:¹³

Եվ ահա - մի վառ ու պայծառ օր –
Հրաշքով անհաս ու գորավոր-
Առյուծ- Սհերին մեր ալևոր
Ծնվեց մի մանկիկ արևավոր:¹⁴

Եվ տիրանալով երկրին այսպես՝
Չենով - Օհանին բերին հանդես,
Որ իբրև հմուտ ու հեռատես
Այր հավատարիմ, իշխան ու մեծ –
Կառավարել և իշխել իրենց:¹⁵

Մոռացած նրա համբավն հավետ՝
Նրա վաստակած ոսկուն ցավեց,
Իբրև ոտխից աշխարհավեր
Միակ փրկություն ու ապավեն:¹⁶

Բերված օրինակներում ընդգծված բառերը՝ *ազատ-անարգել, վառ - պայծառ, կառավարել - իշխել, փրկություն - ապավեն* բառային մակարդակի հոմանիշներ են:

¹⁰ Ա.Մուքիսյան, *նշվ. աշխ.*, էջ 105:

¹¹ Մ.Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3-րդ, Եր., 1940, էջ 213:*

¹² Ս.Մելքոնյան, *Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, էջ 70:*

¹³ Ե. Չարենց, *Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 385:*

¹⁴ Նույն տեղում, էջ 387:

¹⁵ Նույն տեղում, էջ 388:

¹⁶ Նույն տեղում, էջ 389:

Խոսքային մակարդակի անհատական հոմանիշների որոշակի կազմի մասին խոսելն անհնար է: Դրանք այն բառերն են, որոնք կիրառությունից դուրս հոմանշային կապերի մեջ չեն գտնվում, իմաստով բոլորովին տարբեր են: Օրինակ՝

Ահա Մելիքը, արքան այն նեռ,
Մեզ նենգ ժպիտով կանչում է ներս,
Որ դավով խարդախ ու արնանենգ,
Քեզանից, Դավիթ, իր ռխն հանե:¹⁷

Եվ գուր է ասում գրույցը հար,
Թե պահուն այդ սև, այդ ժամին չար,
Օգնության եկավ խորհուրդով վառ
Չենով -Օհանը, իշխանն այն մաս:¹⁸

Եվ ժողովրդի գլխին ազատ,
Իբրև հովանի մի սրբազան,
Կախվեց տերերի ժանիքը ժանտ-
Ե՛վ խարույկ, և՛ խաչ, և՛ խարազան...¹⁹

Ընդգծված բառերը հոմանիշներ են միայն որոշակի կիրառության մեջ, հատկապես գեղարվեստական լեզվում, օժտվելով իմաստային նոր երանգներով՝ հանդես են գալիս որպես նույն հասկացության արտահայտման միջոցներ: Անհատական հոմանշությունը սովորաբար ընդլայնվում է գեղարվեստական պատկերավորման համար այնքան բնորոշ բառի փոխաբերական գործածության հիման վրա:

Անհատական հոմանիշների ստեղծման գործում առանձնապես արդյունավետ եղանակը գրական, ժողովրդական, սովորական բառերը իմաստային նոր երանգով օժտելն է, բառի մեջ նոր արտահայտչական հնարավորություններ բացահայտելը: Դրա շնորհիվ բառի իմաստը թարմանում է, փրկվում է ծերանալու վտանգից:

Ինչպես համագործածական, այնպես էլ անհատական հոմանիշները հատկապես գեղարվեստական լեզվում հատկանշվում են ոճական հարուստ հնարավորություններով:

Գեղարվեստական լեզվի ոճական բովանդակությունը բառընտրության արդյունք է: Գեղարվեստական խոսքի ոճը, հմայքը նրբերանգային հնարավորությունների հաշվառման հիման վրա են ապահովում:

Պատահական չէ, երբ ծանոթանում ենք գրողների բառային մանրակրկիտ և տևական աշխատանքին, համոզվում ենք, որ աշխատանքն առաջին հերթին ընթացել է հենց հոմանիշների արտահայտչական հնարավորությունների բացահայտման և օգտագործման ուղղությամբ: Օրինակ՝

Իր կայծակնափայլ սուրը քաշեց,
Որ հարվածով մի, գարկով մի շեղ
Դյուցազնին՝ Դավթին միջից կիսե:²⁰

Բայց դժնի ուժեր տարան նրան,
Փակեցին Սասնա անհուն լեռան
Քարայրում մթին, որ այնտեղ նա
Հավիտյան, ընդմիշտ գերված մնա ...²¹

¹⁷ Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 401:

¹⁸ Նույն տեղում, էջ 402:

¹⁹ Նույն տեղում, էջ 408:

²⁰ Նույն տեղում, էջ 392:

²¹ Նույն տեղում, էջ 407:

Հոմանիշների ոճական հարուստ հնարավորությունները մնան դեպքում հմտորեն ծառայեցվում են այն բանին, որ հասկացությունն արտահայտվի իմաստային նրբերանգների մանրակրկիտ հաշվառումով, բառի ընտրությունը լիովին ներդաշնակի խոսքի ընդհանուր ոճական ուղղվածությանը, ապահովի արտահայտության կատարյալ բանաստեղծականությունը:

Հոմանիշների դերն անգնահատելի է նաև խոսքում՝ գործածության մեջ:

1. Հոմանիշ բառերի դերը մեծ է խոսքը միօրինակությունից ազատ պահելու, արտահայտությունը հաճելիորեն բազմազան դարձնելու գործում: Հաճախ անհրաժեշտ է լինում, որ խոսքային փոքր հատվածում, երբեմն ուղղակի կից տողերում արծարծվի մույն հասկացությունը, այսինքն՝ մույն լրացյալը մեկից ավելի անգամ հանդես բերվի գրեթե մույն բովանդակությունն ունեցող լրացումով, կամ մույն առարկային վերագրվեն համասեռ հատկություններ: Օրինակ՝

Միերը ուներ զենքեր հրացայտ,

Միերը ուներ նժույգ պայծառ,

Միերը ուներ և սուր-կայծակ:²²

Եվ կանգնեց Դավիթը նրա դեմ

Անասան, անահ դենքով վսեմ,

Հայացքով պայծառ, ժպիտով սեզ,

Բոցավառ՝ ինչպես պայծառ արեգ:

Մռացած նրա փառքը պայծառ՝

Թաքցրեց նրա զենքերն հրացայտ,

Առյուծ-Միերի սուրը կայծակ

Եվ գորությունը նրա անծայր:²³

...Որ գնա Մասնա երկրին տիրե,

Որ Մասնա քաղաքը ավերե,

Որ ժողովրդին ամբողջ զերե,

Տեղահան անե, Մարր բերե:

...Մարդ է՞լ կգնա դարանամիտ

Մարամելիքի հետ հարամի

Նետով-աղեղով կռի՞վ կանի:²⁴

Խոնարհության շավղով, առաքինության

Դարերով սրբագործեալ հեզության,

Որ ժողովուրդը լինի ինչպես հնում –

Չարքա՛, աստվածավախ ու արդար:²⁵

Երգում եմ ահա այս գովքը ես

Խաղողի մեր՝ քորք ու լուսատեսք,

Մեր գինու՝ պայծառ ու հրկեզ,

Մեր աստվածների մեծահանդես:²⁶

2. Հոմանիշների իմաստային տարբերությունն ընդգծվում է, և դրա հիման վրա խոսքի արտահայտչականությունն ուժեղանում է նաև այն դեպքում, երբ դրանք հանդես են բերվում հակադրական հարաբերությամբ: Օրինակ՝

²² **Եղ. Չարենց,** Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 397:

²³ Նույն տեղում, էջ 389:

²⁴ Նույն տեղում, էջ 396:

²⁵ Նույն տեղում, էջ 411:

²⁶ Նույն տեղում, էջ 418:

Այդ ո՞վ է ասել՝ նորից են սիրում.

Նորից չեն սիրում, սիրում են կրկին... /Պ.Ս., ԵԺ, էջ 135/

Եղ. Չարենցի այս ժողովածուի մեջ մենք այսպիսի օրինակների չենք հանդիպել:

3. Հոմանիշների համար բնորոշ է նաև համատեղ օգտագործումը. երբ հոմանշալին շարքի երկու և ավելի բառեր միասնական են հանդես գալիս՝ որպես մի ընդհանուր հասկացության համակողմանի, ամբողջական արտահայտման միջոց: Այսպիսի դեպքերում հոմանիշները գերազանցապես անմիջականորեն իրար են հաջորդում՝ կապվելով հավելական հարաբերությամբ: Օրինակ՝

Իր հայրը ուներ կայծակե սուր,
Հուր մժույգ ուներ, զրահներ հուր,
Ջրկելով նրան այսպես մի օր
Ձենքերից իր քաջ, դյուզագուն հոր:²⁷

Տեսավ զրահներ ու հուր ու քոզ,
Սարսափեց, սարսեց էությանը ողջ,
Եվ գնաց հայցի աղիտորոմ
Փրկություն՝ չարից այն անողոր:²⁸

Չե՞ս տեսնում՝ Բադին ու Կոզբադին
Տանում են քո հոր արդար ոսկին.
Ուժ, զորություն է տված բազկիդ,
Գնա՛, ո՛վ Դավիթ, գնա՛ հսկի –
Չտանեն քո հոր արդար ոսկին:²⁹

Դավիթը մնաց փոսում խավար,
Անաշտական, մենակ, իսկ դուրսը չար
Մարանելիքը, արքան դաժան,
Քրքջում էր ահեղ ու ժանտաժանտ:³⁰

Հավաքեց ապա, տիրեց իսկույն,
Առյուծ-Մեծի ամբավ ոսկուն,
Սրտում ա՛հ հազար, հազար սուկում՝
Աչքերը չռեց նրա ոսկուն:³¹

Բայց դժնի ուժեր տարան նրան,
Փակեցին Մասմա անհուն լեռան
Քարայրում մթին, որ այնտեղ նա
Հավիտյան, ընդմիշտ գերված մնա...³²

Անհիմն է այն կարծիքը, թե հոմանիշների համատեղ օգտագործումը վնասում է խոսքի սեղմությանը: Դա չի կարող վերաբերել գեղարվեստական լեզվին, որտեղ հոմանիշների այդպիսի օգտագործումով ընդգծվում է նախադասության կարևոր նշանակություն ունեցող հասկացությունը, դա ներկայացվում է իմաստային անհրաժեշտ նրբերանգներով, ավելի է զորեղանում խոսքի արտահայտչականությունը:³³

4. Համատեղ կարող են օգտագործվել նաև իմաստով բավական տարբեր բառեր, բառային և խոսքային մակարդակների հոմանիշներ: Նման դեպքերում հասկա-

²⁷ Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 389:

²⁸ Նույն տեղում, էջ 390:

²⁹ Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, էջ 15:

³⁰ Նույն տեղում, էջ 23:

³¹ Նույն տեղում, էջ 11:

³² Նույն տեղում, էջ 28:

³³ Ս. Մեքոնյան, նշվ. աշխ., էջ 77:

ցությունը ներկայացվում է բազմակողմանիորեն, յուրաքանչյուր բառ որևէ կողմից է բացահայտում դրա բովանդակությունը: Օրինակ՝

Ուժեր կործանիչ, և՛ մութ, և՛ չար
Քարայրում այն մութ, միգում խավար
Փակեցին անով քո դեմքը վառ,
Եվ գալիք քեզից սարսափահար՝
Հայտարարեցին քեզ նեո ու չար...³⁴

Օ՛, ռամիկ կյանքի անգո պատկեր,
Դարերում հեռու, ու հին, ու ծեր,
Երբ մարդկությունը ապրում էր դեռ
Վաստակով արդար, ու սուրբ, ու վեհ:³⁵

Մեերի օրով երկրում Մասուն
Ապրում էր ռամիկ մի ժողովուրդ,
Չուներ իշխաններ նա դեռ հմուտ,
Իշխաններ դժնի, ու չար, ու մութ,
Եվ ապրում էր իր լեռներում լուրթ
Վաստակով իր պարզ, քրտինքով սուրբ:³⁶

Ընկավ մեր Դավիթն անդունդի մեջ,
Շուրջը – մթություն, ու մուժ, ու մեզ,
Իսկ վերից Մելիքը արնանենգ,
Սարսելով անից իր խելագար,
Քաշեց մի հսկա, վիթխարի քար:³⁷

5. Հոմանիշների համատեղ օգտագործման առավել ուշագրավ դրսևորումներից մեկն էլ այն է, երբ յուրաքանչյուր հաջորդ բառը լրացնում, է նախորդ բառով արտահայտված հասկացությունը: Այսպիսի դեպքերում հաջորդ բառը նախորդից իմաստով ավելի զորեղ է: Համատեղ օգտագործմամբ այսպիսի հոմանիշների խմբերն ստեղծում են աստիճանաբար զորեղացող արտահայտչական միջոց, որը հայտնի է աստիճանավորում անվանումով: Օրինակ՝

Եվ ժողովուրդը Մասնա անկոր՝
Խեղճացած, խոնարհ ու գլխկոր,
Անցավ Օհանի դժնի կամքով
Մարամելիքի թրի տակով:³⁸

Արթնացավ իսկույն բանակն ամբողջ,
Թնդյուն, շառաչյուն, շոինդ ու կոչ,
Չիերի խրխինջ ու խրխնջոց,
Չենքերի շաչյուն, ու հուր ու բոց...³⁹

Եվ սուգ բարձրացավ, տրտունջ ու լաց
Աշխարհում հայոց, - և որբացած
Մասնա աշխարհի ճայնը գնաց,
Հասավ ականջին Դավթի դյուցազն,

³⁴ Եղ. Չաքենց, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, էջ 29:

³⁵ Նույն տեղում, էջ 7:

³⁶ Նույնը:

³⁷ Նույն տեղում, էջ 23:

³⁸ Նույն տեղում, էջ 13:

³⁹ Նույն տեղում, էջ 21:

Որ խավար ու խուլ հորում կորած
Ժայթքում էր աշքից կրակ ու կայծ:⁴⁰

Եվ զարմանալի՜ շռայլորեն
Սկսեց չափել, ինչպես ցորեն,
Առյուծ-Սիերի գանձը, որ էլ Մսրամելիքի ձեռքը գորեղ
Հավիտյան իշխե, թագավորե:⁴¹

Քարայրում այն մութ, միգում խավար
Փակեցին ահով քո դեմքը վառ,
Եվ գալիք քենից սարսափահար՝
Հայտարարեցին քեզ նեղ ու չար,
Որ չելնես մի օր նրանց համար
Չրեբես անկում, ու մուժ, ու մահ...⁴²

Ահա թե ինչու, թեկուզ մենք մեծ
Պայքարներ ունենք մենք հեռակա -
Հավատով անքիծ, անապական
Ես կյանքի գովքն եմ երգում ահա...

6. Համատեղ հոմանիշները կարող են հանդես գալ նախադասության տարբեր անդամների դերով: Բայց երևույթը խոսքով ներկայացնելու, խոսքի արտահայտչականությունն ուժեղացնելու իմաստով ավելի կարևոր են այն դեպքերը, երբ ա) հանդես են գալիս որպես ստորոգյալ, օրինակ՝

Հավաքեց ապա ահով անսանձ
Օհանը ամբավ ոսկի ու զանձ,
Մսրամելիքի մոտը գնաց,
Թախանձեց, խնդրեց վիզը ծռած:⁴³

Փարվեց կարտոսով որդուն նորեկ –
Խանդով խնդազին գրկեց նրան, -
Փակեց նա ապա աչքերը սեզ -
Եվ ինքն էլ, կինն էլ ընկան – մեռան...⁴⁴

Երբ մեռավ այսպես Սիերը ծեր,
Թողնելով մանկանն իր նորածին –
Սասմա իշխաններն եկան - ասին,
Թե մերն է հիմա Սիերի ծին,
Եվ տեր կանգնեցին ու տիրեցին
Սիերի ամբողջ ունեցածին:⁴⁵

Գնաց Դավիթը սրտով տրտում,
Գնաց այն Չենով-Օհանի տուն,
Թակեց, թնդագրեց երդիկ ու դուռ...⁴⁶

բ) Գործածվում են նախադասության այլ անդամների դերով, օրինակ՝
Առյուծ Սիերի Անունն հիշեց,

⁴⁰ Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, էջ 24:

⁴¹ Նույն տեղում, էջ 14:

⁴² Նույն տեղում, էջ 29:

⁴³ Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, 402:

⁴⁴ Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, 3-րդ հատոր, էջ 10:

⁴⁵ Նույնը:

⁴⁶ Նույն տեղում, էջ 19:

Եկավ, կայծակե սուրը խփեց,
 Չարկեց հարվածով, զարկով վսեմ –
 Քառասուն կաշին միջից կիսեց:⁴⁷

Համատեղ գործածության դեպքում հոմանիշները սովորաբար ոճական առումով համասեռ են լինում, այսինքն՝ պատկանում են բառապաշարի ոճական գրեթե նույն շերտին: Հիմնականում այդպես են մինչև այժմ քննարկված իրողությունները, որոնք գերազանցապես գրական բառապաշարի ոճականորեն չեզոք համարված բառեր են: Համատեղ գործածության մեջ, թեև ոչ այնքան լայն կիրառությամբ, կարող են հանդես գալ նաև ոճականորեն տարասեռ բառեր: Գրականի հետ կարող են հանդես գալ բարբառային, ժողովրդական, հուզարտահայտչական զանազան երանգներ արտահայտող բառեր: Նման դեպքերում, երբ նույն տողում անմիջական շփման մեջ են դրվում ոճական առումով իրարից տարբեր, երբեմն և իրար բացասող, դժվարությամբ մերվող իրականություններ, բառօգտագործման ավելի մեծ հմտություն է պահանջվում:⁴⁸

7. Խոսքը ներքին բազմազանությամբ օժտելու, դրանց ինքնատիպ անհատականությունն ու թարմությունն ուժեղացնելու իմաստով առավել ուշագրավ են այն գործածությունները, երբ բերվում են գրական ու ժողովրդական զանազան հուզարտահայտչական երանգ ունեցող բառեր կամ ոճականորեն չեզոք գրական բառն ու շրջասույթը: Օրինակ՝

Եվ ապրում էր իր լեռներում լուրթ,
Վաստակով իր պարզ, քրտինքով սուրբ:⁴⁹

Փա՛ռք արևին մեր, որ հիմա վառ
 Լուսավորում է հրով բերրի
 Անցնող խավարը մեր խողերի
 Խուլ նկողները քաղաքների:⁵⁰

Ոլորեց աչքերը արնակոխ
 Մարամելիքը Դավթի վրա,
 Մտրակեց ապա նժույզն իրա,
 Որ սմբակներով հրահրրան
Ոտնակոխ անի, ճզմի նրան:⁵¹

Վեր թռավ Մելիքն ահեղ
Սարսափից կորած ու խելահեղ,
 Բայց զսպեց իրեն, շունչը պահեց,
 Ժպտալով ապա Դավթին նայեց...⁵²

Բերված օրինակներում քրտինք, խողեր, ճզմել, շունչը պահել բառերը ժողովրդական են, իսկ վաստակ, նկողներ, ոտնակոխ անել, զսպել բառերը՝ գրական:

8. Երբ գրական միջավայրում համատեղ գործածվում են գրական ու բարբառային բառերը, ապա խոսքի արտահայտչականությունը հաճախ կասկածի տակ է դրվում: Օրինակ՝

Արձակեց ապա հրաման գոռ,
 Որ ժողովուրդը Մասմա ամբողջ,
Հավաքի, բառնա հարկը փրկիչ

⁴⁷ **Եղ. Չարենց**, *Երկերի ժողովածու, 3-րդ հատոր*, էջ 27:

⁴⁸ **Ս.Մելքոնյան**, *նշվ. աշխ.*, էջ 81:

⁴⁹ **Եղ. Չարենց**, *Երկերի ժողովածու, հատոր 1-ին*, էջ 385:

⁵⁰ *Նույն տեղում*, էջ 428:

⁵¹ **Եղ. Չարենց**, *Երկերի ժողովածու, 3-րդ հատոր*, էջ 13:

⁵² *Նույն տեղում*, էջ 22:

Եվ գերի գնա Մսրա երկիր:⁵³

Որ գնա՝ Մսրա արքայի հետ,
Մղի պատերազմ մի չարաղետ,
Որ ուժը նրա հորդած, ինչ գետ,
Դարձնի, քի մեր երկրից ետ:⁵⁴

Այս օրինակներում գրական բառեր են՝ *հավաքի* և *դարձնի*, իսկ բարբառային՝ *քի*, *բանա* բառերը:

Գեղարվեստական ստեղծագործություններում հոմանիշները երբեմն կարող են հանդիսանալ բառի իմաստի, ոճական արժեքի բացատրության միջոց: Իրավացիորեն Ս. Մելքոնյանը գրում է. «Բառական հոմանշության առիթով ոմանց կողմից առաջ է քաշվում նաև բառի և շրջատյթի հարաբերակցության հարցը: Բայց նման մոտեցման դեպքում շատ են ընդարձակվում բառական հոմանշության շրջանակները: Ճիշտ է, որ շրջատյթը իմաստով համընկնում է համապատասխան բառին»:⁵⁵

Այսպիսով՝ մենք ավելի խորը ուսումնասիրեցինք հոմանիշները և պարզեցինք, թե որքան մեծ ու անգնահատելի են հոմանիշ բառերի դերն ու նշանակությունը մեր լեզվում:

Ինչպես նկատեցինք, հոմանիշ բառերը խոսքին նոր երանգ, նոր, ավելի խորը իմաստ են հաղորդում և գեղեցկացնում են այն: Հոմանիշների շնորհիվ կարելի է խոսքում խոսասփել միօրինակությունից: Սրանք ավելի կատարելագործում ու զարգացնում են հատկապես գրական լեզուն և հարստացնում են մեր լեզվի բառապաշարը:

ИСПОЛЬЗОВАНИЕ СИНОНИМОВ В СБОРНИКЕ Ег. ЧАРЕНЦА

___ Резюме ___

___ С. Закарян ___

Представлены стилистические возможности применения синонимов, широкая распространенность их в армянском языке и разнообразие синонимов вне сферы употребления- на лексическом уровне (применение), и в сфере употребления – на речевом уровне (личностные).

Для доказательства выдвинутых положений приводятся примеры из сборника Ег. Чаренца “Книга дороги”.

Подробно рассматривается роль синонимов при употреблении их в речи:

- преодоление однообразия слова,
- усиление выразительности слова,
- совместное употребление синонимов,
- придание слову внутреннего разнообразия
- совместное употребление литературных и народных выражений с разнообразным выразительным оттенком.

⁵³ Եղ. Չարենց, Երկերի ժողովածու, հատոր 1-ին, էջ 387:

⁵⁴ Նույնը:

⁵⁵ Ս. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 82:

Գագիկ ԽԱՉԻԿՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայ անվանի գրող Ավետիս Ահարոնյանը /1866-1948/ եղել է Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության նշանավոր ներկայացուցիչ, Հայաստանի Առաջին հանրապետության խորհրդարանի նախագահ, սփյուռքում ճանաչված հասարակական գործիչ: Խորհրդային Հայաստանում իշխանությունների վարած ներքին ու արտաքին քաղաքականության հանդեպ ուեցած քննադատական վերաբերմունքի պատճառով, նրա գեղարվեստական ստեղծագործությունները խորհրդային տարիներին իր հայրենիքում չվերահրատարակվեցին և չդարձան ընթերցողների լայն շրջանների համար մատչելի: Ա.Ահարոնյանի գրական ժառանգությունն անցյալում մահ գրականագիտական խոր ու բազմակողմանի վերլուծության չի ենթարկվել:

Արդեն վաղուց է, ինչ հնարավորություն է ստեղծվել իր ապրած ժամանակաշրջանում լայն ճանաչման արժանացած հայ գրողի բազմահատոր ու բազմաժանր գրավոր ժառանգությունը հետազոտելու և ըստ արժանվույն գնահատելու համար: Երկար տարիներ զբաղվելով Ա.Ահարոնյանի գրավոր ժառանգության մի կարևոր հատվածի՝ գեղարվեստական արձակի ուսումնասիրությամբ՝ մենք համոզվել ենք, որ 19-րդ դարի 80-ական թվականներից մինչև 20-րդ դարի 30-ական թվականները ստեղծագործած հայ գրողի գեղարվեստական մտածողության բազմաժանր արգասիքի մեջ գեղարվեստական արձակն ամենաարժեքավորն է: Նրա լավագույն հղացքներն իրենց գեղարվեստական դրսևորումներով ու ենթատեքստով միտված էին դեպի 20-րդ դարի սկզբի համադրական արվեստն ու գեղարվեստական մտածողությունը: Նման նախասիրությունն ի վերջո նպաստել է, որ գրողի ստեղծագործություններում գեղարվեստական ուրույն նրբերանգներով ու ընդգրկումներով արտացոլվեն իր ապրած ժամանակաշրջանի ոգու մի շարք էական կողմերը: Նրա լավագույն արձակ երկերում արծարծված գեղագիտական, փիլիսոփայական, հումանիստական, ազգային-քաղաքական, բարոյահոգեբանական թեմաները հուզում ու հետաքրքրում են մահ ժամանակակից հայ մարդուն:

Ծանոթանանք նշանավոր գրողի կյանքի ու ստեղծագործության առավել կարևոր հանգրվաններին: Ա. Ահարոնյանը ծնվել է 1866թ. Մուրմալուի գավառի Իգդիրմավա գյուղում: Հայրը՝ Առաքելը, դարբին էր, մայրը՝ Ջարդարը՝ գրագետ գեղջկուհի: Վերջինս էլ տառաճանաչ է դարձնում որդուն: Նախ՝ իրենց գյուղում, ապա՝ Իգդիրի դպրոցում նախնական կրթություն ստանալուց հետո անձնական ընդունակությունների և իր սիրելի ուսուցիչ, Իգդիրի դպրոցի տեսուչ Դ.Քալանթարյանի միջնորդությամբ 1881թ. ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը (այս շրջանի, ինչպես մահ ընդհանրապես իր մանկության ու պատանեկության մասին գրողը հանգամանորեն պատմել է «Իմ գիրքը» գեղարվեստական ինքնակենսագրության մեջ): 1886թ. ճեմարանում ուսումնառությունն ավարտելուց հետո վերադառնում է հայրենի գյուղ:

1887թ. Թիֆլիսի «Արձագանք» պարբերականի ապրիլի 26-ի համարում տպագրվում է Ահարոնյանի առաջին թղթակցությունը՝ «Նամակ Իգդիրից»: Ըստ էության այս տարվանից էլ սկսվում է նրա գրական-հասարակական գործունեությունը: Կարճ ժամանակով մահ վերակացու է աշխատում Էջմիածնի ճեմարանում: Այնուհետև՝ ուսուցիչ է աշխատում Իգդիրի, ապա՝ Նոր Բայազետի ժխական դպրոցներում: Վերադառնում է Իգդիր և մինչև 1896թ. աշխատում որպես դպրոցի ավագ ուսուցիչ: 1894թ.

«Մշակ»-ի մեջ տպագրված «Լուրեր սահմանի այն կողմից» հոդվածաշարի մեջ նա գաղթականներից, ինչպես նաև այլ արդյուններից ստացած տեղեկություններից այն եզրակացության է գալիս, որ Թուրքիայի իշխանությունները կոտորածներ են նախապատրաստվում իրականացնել Արևմտյան Հայաստանում: Այս կանխագուշակությունը դժբախտաբար իրականանում է: Նա 1895-96թթ. կոտորածներից խույս տվածներին, որոնք գաղթել էին Մուրմալուի գավառ /Իգդիրնավա, Իգդիր/, առաջին օգնությունն է կազմակերպում Իգդիրում: Իսկ որոշ ժամանակ անց գաղթականների պատմածների հիման վրա գրում է իր առաջին՝ վավերական ատաղձով ստեղծված գեղարվեստական երկերը («Պուտ-ըն կա՛թ», «Ֆալագ վուրդունի», «Նորածինը», «Փշուր-ըն խա՛ց», «Բաշուն»): Դրանք տպագրվում են «Մշակ»-ում:

Գրողի կենսագրության մյուս կարևոր դրվագը նրա ուսումնառության շրջանն է Եվրոպայում: 1898 թվականին նա ընդունվում է Լոզանի /Շվեյցարիա/ համալսարանի պատմափիլիսոփայության բաժինը: Պատմության և փիլիսոփայության դոկտորի աստիճանով այս բարձրագույն կրթական հաստատությանը հրաժեշտ տալուց հետո համաշխարհային գրականության պատմության դասախոսություններ է լսել Փարիզի Սորբոնի համալսարանում: Ուսումնառությանը զուգընթաց նա բեղմնավոր ստեղծագործական գործունեությամբ է զբաղվում: Այդ տարիներին Ժնև տեղափոխված Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության նշանավոր հիմնադիրներից մեկի՝ Զ.Միքայելյանի հորդորների, ֆիդայական շարժման ու պայքարի մասին նրա կողմից «Խում նյութ» տրամադրելու շնորհիվ, գրում և նրա խմբագրած «Գրոշակ» պաշտոնաթերթի էջերում տպագրում է «Ազատության ճանապարհին» շարքի առաջին երկերը: Գրում է այլ ստեղծագործություններ, որոնք տպագրվում են Թիֆլիսի հայ մամուլում: Հատկապես գրական առատ հունձքի տարիներ եղան նրա համար 1900-ական թվականները: Ուսումնառությունն ավարտելուց հետո /1902/ նա գալիս է Թիֆլիս: Աշխատում է «Մուրճ»-ի խմբագրությունում: Ժամանակի հայկական պարբերականներում /«Մշակ», «Մուրճ», «Հասկեր»/ և առանձին գրքերով տպագրվում են նրա պատմվածքներն ու վիպակները /«Պատկերներ», 1900, «Խեղճերը» /1902/, «Արագը»/1904/, «Ազատության ճանապարհին»/1906/, «Կյանքի վեպը» /1908/ ժողովածուն, «Մրիկի սուրբը» /1903/, «Լուսնուն» /1904/ վեպերը, ուղեգրությունները /«Շվեյցարական գյուղը», «Իտալիայում», «Դեպի Անի»/:

Ուշագրավ է այն իրողությունը, որ 1904 թվականին Անիի ավերակները դիտելու կապակցությամբ Ահարոնյանը եղել է Ալեքսանդրապոլում: Նա իր տպավորությունները գրի է առել «Դեպի Անի»¹ ուղեգրության մեջ: Գրողը լավ տպավորություն է ստացել քաղաքի արհեստավորների թաղամասից, ջերմ խոսքերով է արտահայտվել տեղի բնակչության շրջանում ազգային ավանդույթները պահպանվելու կապակցությամբ: Մեծ բանաստեղծ Ավ.Իսահակյանի հետ Անիի ավերակները դիտելու մեկնած գրողը ցավով է նկարագրում անցած ճանապարհին հանդիպած գյուղերի ու գյուղացիների անմխիթար վիճակը: Ի հակադրություն տխուր ներկայի՝ Եվրոպայում բարձր կրթություն ստացած ու շրջագայած Ահարոնյանն իր հիացմունքն ու հպարտությունն է արտահայտում Անիի փառահեղ շինությունների ավերակներից ստացած տպավորությունների մասին:

Ահարոնյանն այս շրջանից հանդես է գալիս նաև որպես ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ, դաշնակցության ակտիվ անդամներից մեկը: «1901-02-ին մասնակցել է դաշնակցության և հնչակյան կուսակցության միավորման նպատակով նրանց միջև տարվող բանակցություններին, 1902-ին՝ համիդյան բռնակալության դեմ

¹ Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, Վենետիկ-Ս.Ղազար, 1948, /Թեհրան, «Արմեն» հրատ./, հ. Է, էջ 9-67:

ընդհանուր ճակատ կազմելու օսմանյան ընդդիմադիր կուսակցությունների ու կազմակերպությունների առաջին համագումարին: Հայկական պատվիրակության կազմում եղել է Հասագայի/1907/ խաղաղության կոնֆերանսում, ներկայացրել Հայկ. հարցի լուծման խնդրագիրը²: 1907-09-ին Ա.Ահարոնյանը նշանակվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տնօրեն: Ինչպես որդին է նշում, Ահարոնյանը և Վրաստանի հայոց հոգևոր առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանը ջանքեր են գործադրում և հայ մեծահարուստ Ա.Մանթաշյանի դրամական աջակցությամբ կառուցում են Ներսիսյան դպրոցի նոր շենքը: Այս տարիներին /1905-08թթ./ գրել է նաև մանկական պատմվածքներ, որոնք տպագրվել են «Հասկեր» ամսագրում, դրամաներ՝ «Արցունքի հովիտ» /գրվել և բեմադրվել է 1906թ., առանձին գրքով տպագրվել է 1907թ., Բաքվում/, «Ուխտվածները», «Սև թռչունը»/1908/, «Պատրանքներ կամ մեռելները խոսում են»: /Վերջինը Թիֆլիսում բեմադրվել է 1911 թ. դեկտեմբերի 12-ին, առաջին անգամ տպագրվել Երևանում լույս տեսնող «Նորք» հանդեսի 2003 թ. առաջին համարում, էջ 119-150/:

1909թ. մայիսին, այսպես կոչված, «դաշնակցության» գործով բազմաթիվ հայ գործիչների հետ բանտարկում են նաև Ահարոնյանին: Նա լինում է Թիֆլիսի, Բաքվի, Ռոստովի, Նովոչերկասկի բանտերում: Ի վերջո ազատվում է 1911թ. և Արևմտյան Հայաստանով, ուր առաջին անգամ էր լինում, տեղափոխվում է Եվրոպա և այստեղ ապրում մինչև 1916 թ.: Այս շրջանում է նա գրել «Անդունդը», «Խավարի մեջ», «Մոխիրների տակից» վիպակները, ինչպես նաև իր անձնական վերապրումներով պատկերված, ցարական բանտաշխարհն արտացոլող «Մարբազ Խեչոն», «Պարտվածները», «Իմ բանտը» երկերը: Այս տարիների գործերից ուշագրավ են նաև «Երագներիս աշխարհը» /1910-11/, «Արևմտյան նամակներ», «Թափառումներ - խոհեր» /1913-14/ ուղեգրությունները:

Երբ դադարում են նրա հանդեպ քաղաքական հալածանքները, նա վերադառնում է Թիֆլիս, մասնակցում ազգային հասարակական կյանքի գործընթացներին: 1917թ. ճանաչված գործիչն ու գրողն ընտրվում է Հայոց ազգային խորհրդի նախագահ: Իսկ երբ հիմնվում է Հայաստանի Առաջին հանրապետությունը, մի որոշ ժամանակ անց /1919թ./ Ահարոնյանն ընտրվում է նախ` խորհրդարանի անդամ, ապա` նաև նախագահ: 1919 թ հունիսից նա արդեն խորհրդարանի նախագահի կարգավիճակով էր ղեկավարում Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը 1919-1920թթ. Փարիզի հաշտության կոնֆերանսում: 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրել է Սևրի հաշտության պայմանագիրը: Մասնակցել է 1921թ. Լոնդոնի կոնֆերանսին, իսկ 1922-23 թթ.` Լոզանի կոնֆերանսին: Վերոհիշյալ կոնֆերանսներում իր առաքելության, ինչպես նաև տարբեր երկրների ղեկավարների, ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնի, մի շարք դիվանագետների հետ հանդիպումների մասին նա գրել է իր քաղաքական օրագրում, որը տպագրվել է «Մարդարապատից մինչև Սևր և Լոզան» վերնագրով /Բոստոն, 1943թ./: Լոզանի կոնֆերանսը վիժեցրեց Արևմտյան Հայաստանի տարածքները հայերին վերադարձնելու խնդիրը: Ահարոնյանը, դաշնակիցներին և Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ.Չիչերինին ուղղելով իր բողոքագրերը, հեռացավ քաղաքական գործունեության ասպարեզից:

1923թ. հետո նա հիմնականում զբաղվել է գրական-ստեղծագործական աշխատանքով, ըստ էության, հայտնվելով սփյուռքահայ գրականության լինելության գործընթացի մեջ` իբրև վտարանդի գրող: Այս շրջանում նրա գեղարվեստական արձակը մի նոր որակ է ձեռք բերում: Լինելով գրական նշանակալի ճանապարհ անցած հեղինակավոր գրող` Ահարոնյանն անձամբ է հայտնվում սփյուռքահայի կացության ու հոգեվիճակի մեջ: Նա իր արձակ երկերի նոր հերոսներով շարունակում է բացահայտել ու

² Հայկական հարց: Հանրագիտարան, Եր., 1996, էջ 26:

գեղարվեստորեն մարմնավորել հայ մարդու բարոյահոգեբանական յուրահատկությունները: Դիտարկում ու գեղարվեստորեն ամրագրում է ազգային արժեքների, հայրենի ավանդույթների հետ կապի, աշխարհի հետ հայ մարդու բազմազան առնչությունները: Ահարոնյանի այս տարիների ստեղծագործություններն աղերսներ ունեին սփյուռքահայ գրականության «կարոտի» ու «նահանջի» ուղղությունների հետ: Գրողն իր արձակ գործերում արծարծել է նաև իրեն հետաքրքրող բարոյահոգեբանական բազմազան այլ խնդիրներ: Ահարոնյանի սփյուռքյան շրջանի ստեղծագործությունների մեջ առանձնանում է Փարիզում լույս տեսած «Իմ գիրքը» ինքնակենսագրական վեպն իր երկու մասերով /«Մանկություն», 1927թ., «Պատանեկություն», 1930թ./: Այս տարիներին գրողի մի շարք փոքրածավալ գեղարվեստական ստեղծագործություններն ու զանազան գրական, պատմագիտական, քաղաքական հոդվածները տպագրվել են հիմնականում Բոստոնի «Հայրենիք» ամսագրի էջերում և առանձին գրքերով: Դրանց թվում են «Ճամփորդը»/1926/ ժողովածուի մեջ ամփոփված վիպակները, «Ոսկի հեքիաթ» դրամայի մի հատվածը /3-րդ և 4-րդ գործողությունները/ /1938թ., «Հայրենիք», թիվ 3/, «Քրիստափոր Միքայելյան» /1925/, «Անդրանիկ»/1927/երկերը: Ուշարժան գրականագիտական- մշակութաբանական հոդվածներից են՝ «Արիական լույսը հայոց աշխարհում» /1925/, «Հայկական հին հավատալիքները» /1939/, «Բաֆֆի», «Կոստան Չարյան, «Տատրագոմի հարսը»»/1930/: Նկատենք, որ Կ.Չարյանը 1930 թ. Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» ամսագրում, ապա առանձին գրքով տպագրված իր պոեմը ընծայագրել է «Ա.Ահարոնյանին»: Հայտնի է, որ պոեմի մասին սփյուռքահայ մամուլում հակասական՝ թեր և դեմ կարծիքներ են արտահայտվել: Ահարոնյանն առաջիններից մեկն էր, որ հեղինակի պոեզիայի այս գլուխգործոցի մասին արտահայտվեց դրականորեն: Տեսավ ավանդական թեմայի ինքնատիպ գեղարվեստական մշակում և արտահայտություն, արևմտահայության դաժան կյանքի մեջ մարդկային հոգու, սիրո պահանջի, օտարի ճնշումների դեմ պայքարելու բարդ ու հակասական վիճակների արտացոլում: Նրան հատկապես գրավում էր բռնակալության դեմ ֆիդայիների հերոսական ընդվզման պատկերումը:

1930թ. սփյուռքահայ գաղթօջախներում լայնորեն նշվեց Ա.Ահարոնյանի գրական-ստեղծագործական գործունեության 40-ամյակը: Այդ մտահղացումն առաջացել էր Փարիզում համախմբված հայ մտավորականների շրջանում դեռևս մեկ տարի առաջ: Հորեյանական կենտրոնական հանձնաժողովի գործադիր մարմնի ատենապետ է ընտրվում եվրոպական գիտական շրջաններում ճանաչման արժանացած նշանավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցը: 1930թ. մայիսի 10-ին Փարիզում՝ Սորբոնի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում, տեղի է ունենում գլխավոր միջոցառումը: «Բառիս բուն իմաստով Ֆրանսիայի գրական ողջ ընտրանին, քաղաքական ու պետական շատ գործիչներ, հասարակայնության ներկայացուցիչներ /ֆրանսիացի և հայ/ մասնակիցը դարձան վտարանդի, աստանդական գրողի մեծարանքի այդ հիասքանչ ցույցին: Նիստը բացեց Հորեյանական կենտրոնական հանձնաժողովի գործադիր մարմնի ատենապետ Ն.Ադոնցը: Այնուհետև ելույթներ ունեցան ֆրանսիացի և հայ բազմաթիվ բանասացներ: Երեկոն եզրափակվեց հորեյանական ճոխ համերգով»³: Միջոցառումն, անշուշտ, ուներ նաև քաղաքական ենթատեքստ: Եվրոպայի գիտական, մշակութային կենտրոն Ֆրանսիայի մայրաքաղաքում մեծարվում էր իր հայրենիքում՝ Խորհրդային Հայաստանում մերժված ու «արգելված» գրողը: Իր խոսքում Ա.Ահարոնյանը, համեստորեն զնահատելով սեփական գրական վաստակը, սահմանում է իր գրական դավանանքի մարդասիրական էությունը, արտահայտում մեծ հավատ դեպի ամայացած հայրենիք հայության դարձի հանդեպ:

³ Տես՝ «Գրական թերթ», Ե, 2000, սեպտեմբերի 1-15:

Ահարոնյանի հայրենամյակը, ստեղծագործական բեղուն գործունեությունն ընդհատվում է 1934 թ. փետրվարի 11-ին: Ինչպես վկայում է Վ.Ահարոնյանը, գրողը 1928թ. մի թեթև կաթված էր ունեցել, և բժիշկները խորհուրդ էին տվել խուսափել երկարատև աշխատանքից ու հոգեկան հուզումներից: Բայց ահա 1934թ. Բեյրութի Հայկական ճեմարանին օգնություն կազմակերպելու համար նա առաջարկում է մի հանդես կազմակերպել Մարսելում, որին խոստանում է անձամբ մասնակցել: Անտեսելով մտերիմների հորդորները՝ նա գնում է Մարսել: Այստեղ՝ փետրվարի 11-ին քաղաքի մեծ դահլիճներից մեկում, մոտ երկու հազար հանդիսականների առջև, հայ ժողովրդի և նրա փառահեղ մշակույթի մասին ոգեշունչ ելույթի ժամանակ նա կաթվածահար է լինում: Իր խոսքում Ահարոնյանը վստահեցնում էր իր ունկնդիրներին, որ հայ ժողովուրդն իր մշակույթով է կարողացել պահպանել իր ինքնությունը: Իսկ մշակույթը լիարժեք կերպով ստեղծվում է հայրենի հողի վրա, ժողովրդի կենսագործունեության միջավայրում: «Եվ այսպես, - ասում է նա, - մշակույթը հայկական գաղութների համար, նա քամք է: Մշակույթը հողից է ծնվում, հողն է կերպարանք, բնություն և դրոշմ տալիս նրան: Մշակույթը ժողովրդին տալիս է լեզու, գեղեցկություն, ճշմարտություն: Դարերի ընթացքին մեր ժողովուրդը երկնեց և լույս աշխարհ բերեց անմատչելի գեղեցկություններ, սրբազան և տիտան արժեքներ: Իր ուրախության և վշտի երգերով, սահմուկեցուցիչ և անասելի փոթորիկների միջից բերեց և մինչև այստեղ հասցրեց մեր մշակույթը: Բայց մենք, ցան ու ցրիվ եղած, ո՞ր երկրի մեջ պիտի դնենք այդ ավանդը, հայ մշակույթը: Բալկանների՞ մեջ, թե՞ Միուրիա կամ Ամերիկա: Ո՛չ, միայն ու միայն հայրենիքի մեջ»⁴:

Ահարոնյանը խորհրդահայ վարչակարգի ու նրա ներքին քաղաքականության հանդեպ թեև քննադատաբար էր վերաբերվում, բայցև համոզված էր, որ Խորհրդային Հայաստանը հայի հայրենիքի մի մասն է, առանց որի գաղթօջախների հայությունը չի կարողանա պահպանել իր ազգային դեմքը: Ուստի նա շեշտում էր. «Ժողովուրդ Հայոց, գիտակցի՛ր, որ սպասման վիճակ է այս: Հավատա՛, որ պիտի վերադառնաս քո պապերի, արիարանց քաջերի երկիրը: Եկել ենք այստեղ չմնալու համար, եկել ենք վերադառնալու համար: Մենք գաղութների մեջ պիտի դառնանք ամրապնդման և գորացման մեկ-մեկ ազդակներ մեր հայրենիքի համար, որ կա Արարատյան Աշխարհի մեջ: Գիտցի՛ր, հայ՝ ժողովուրդ, որ արժեք ես դու և խոսք ունիս ասելու այս նամարդ աշխարհին»⁵: Կաթվածահար վիճակում Ահարոնյանն ապրում է ևս 14 տարի՝ այդ ընթացքում առանց ստեղծագործել կարողանալու: 1946 թ. գաղթօջախներում նշվում է նաև գրողի ծննդյան 80-ամյակը: Ահարոնյանը մահացել է 1948 թ. և մեծ շուքով թաղվել Փարիզի Պեր Լաշեզ գերեզմանոցում:

Ահարոնյանը բազմաժանր գրող է: Նա գրել է արձակ, քնարական, դրամատիկական ստեղծագործություններ: 1940-50-ական թվականներին նրա որդու՝ Վ.Ահարոնյանի ջանքերով և «հրատարակիչ հանձնախմբի» աջակցությամբ՝ ճանաչված գրողի ստեղծագործությունները տպագրվում են տասը հատորով: Նույնը 1980-ական թթ. վերահրատարակվում է Թեհրանում: Բայց և այնպես տասհատորյակը ակնհայտ կերպով չի ընդգրկում գրողի ողջ գեղարվեստական ժառանգությունը: Դրա մի մասը մնացել է ժամանակի հայկական մամուլի էջերում: Ահարոնյանի որոշ ստեղծագործություններ տպագրվել են Վաստակավոր, Գարիբ, Կուրբաթ-Հարուն, Ա.Ա., Avesta ծածկանուններով:

Խորհրդային իշխանությունների կողմից համարվելով սոսկ պարսավանքի արժանի գրող և մտավորական՝ Խորհրդային Հայաստանում նրա ստեղծագործությունները չեն տպագրվել: Հեռխորհրդային տարիներին ստեղծված բարենպաստ հանգա-

⁴ Ա.Ահարոնյան, Ժողովածու երկերի, Թեհրան, 1982, հ.1, էջ 67:

⁵ Ա. Ահարոնյան, Ժողովածու երկերի, Թեհրան, 1982, հ.հ. 1-10:

մանքներում հնարավոր եղավ հրատարակել նրա երկերի մի մասը, ինչը պետք է անբավարար համարել: Ճանաչված գրողի գեղարվեստական արձակը «Խավարի մեջ» /1991/ վերնագրով երկհատորանոց ժողովածուով ներկայացնելը, հուսով ենք, այդ գործի լույս սկիզբը պետք է համարվի: Ա.Ահարոնյանի գրական ժառանգության, մասնավորապես նրա գեղարվեստական արձակի նկատմամբ իրարամերժ, տարամետ կարծիքներն այսօր հետազոտողին պարտադրում են մախ և առաջ լինել իրատես, քանի որ գրողի ժամանակակիցները և հետնորդները նրան երբեմն դրվատել կամ պարսավել են՝ նաև քաղաքական ու կուսակցական նեղ, կողմնակալ շահերից ելնելով:

Ա.Ահարոնյանի գեղարվեստական որոշ երկեր /դեռևս նրա կենդանության օրոք/ բարձրանվել են օտար լեզուներով, այդ թվում՝ ֆրանսերեն, ռուսերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, չեխերեն, վրացերեն, բուլղարերեն, հունարեն, իսպաներեն:

ЖИЗНЬ И ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА ТВОРЧЕСТВА АВЕТИСА АГАРОНЯНА

____ *Резюме* _____

____ *Г. Хачикян* _____

Охарактеризованы тематические, идеологические и художественные особенности творчества знаменитого армянского писателя А.Агароняна, подобающе не оцененного в советский период за свои политические взгляды и деятельность. Представлены важные отрывки из его биографии. Подчеркнуты усилия писателя и государственного деятеля А.Агароняна, приложенные им на пользу своему народу и в политической жизни, и в литературе в первые десятилетия 20-ого века. Упомянуты ценные произведения, созданные им в разных литературных жанрах. Отмечено также на каких иностранных языках и под какими псевдонимами они напечатаны.

Աճի ՄԱՀԱԿՅԱՆ

ԻՆՏԵԼԵԿՏ ՔԱՐՏԵԶԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Մենք ապրում ենք զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների դարում: Տեղեկատվության փոխանակումը տարիների ընթացքում դարձել է ավելի արդյունավետ: Գրասենյակային աշխատողների քանակը աճում է: Գրասենյակներում իրականացված հետազոտությունների համաձայն՝ աշխատողների ստացած էլեկտրոնային տեղեկատվությունը երկու անգամ աճել է նախորդ տարիների համեմատ: Եթե տասնհինգ տարի առաջ մենեջերի աշխատանքային սեղանը պատված էր թղթերի մեծ քանակով, քանի որ դրանք ինֆորմացիայի ստացման հիմնական աղբյուրն էին, ապա հիմա սեղանին միայն համակարգիչ կա: Սրանով հանդերձ չի պակասում ինֆորմացիոն աշխատանքի սթրեսը, քանի որ միացնելով համակարգիչը՝ մենեջերը բազմաթիվ հաղորդագրություններ, փաստաթղթեր, խնդիրներ է տեսնում, որոնք հաճախ քառսի են վերածվում:

Այս խնդիրների լուծման համար կիրառվում են թայմ և մայնդ մենեջմենթի գաղափարները: Թայմ մենեջմենթը ուղղված է ժամանակի արդյունավետ կառավարմանը,¹ իսկ մայնդ մենեջմենթը թայմ մենեջմենթի ուղղություններից է,² որի հիմնական նպատակն է ինտելեկտ քարտեզիով անձնական և կորպորատիվ գործունեության արդյունավետության բարձրացումը: Մայնդ մենեջմենթի մեթոդը հեշտացնում է աշխատանքները, ինչպիսիք են՝ կառավարման նոր քաղաքականության մշակում, ատենախոսական թեզի պաշտպանություն, նոր ծրագրի պլանավորում, նոր ապրանքանիշի հայեցակարգի մշակում, ժողովների անցկացում, շնորհանդեսների նախապատրաստում և իրականացում:

Ժամանակակից աշխարհում դժվար է գտնել որևէ մեկին, ով չի լսել ինտելեկտ քարտեզի մասին. այն նաև անվանում են ուղեղի կամ խելքի քարտեզ: Բայց քչերը գիտեն, որ դրա շնորհիվ կարելի է զարգացնել ոչ միայն ստեղծագործական մտածողությունը, այլ նաև արդյունավետորեն լուծել բիզնես խնդիրները: Ինտելեկտ քարտեզի հիմքում մարդկանց ուղեղի աշխատանքի հիմնական սկզբունքներն են, որոնք կարելի է անվանել կենսաբանական համակարգիչ: Այս մեթոդը թույլ է տալիս բարձրացնել կենսաբանական համակարգչի արդյունավետությունը: Քանի որ մարդու մտածողությունը յուրօրինակ է, ապա ինտելեկտ քարտեզն էլ յուրօրինակ է և չկրկնվող:

Ինտելեկտ քարտեզի տեխնոլոգիան նախապես հիմնված է եղել այն սկզբունքի վրա, որ ուղեղի աջ կիսագունդը ինֆորմացիան ընկալում է այլ օրենքներով, քան ձախը:³ Աջ կիսագունդը ապահովում է անձի տարածքային կողմնորոշումը, ամբողջական ընկալումը, եռաչափ ընկալումը, պատկերացումը, երազանքը, ռիթմի զգացողությունը, գունային ընկալումը: Չախ կիսագունդը ապահովում է հաջորդականության կողմնորոշումը, թվերի ու ցուցակների հետ գործողությունները, վերլուծությունը, տրամաբանությունը, խոսքը: Ինտելեկտ քարտեզը թույլ է տալիս, որ աջ և ձախ կիսագնդերն ինֆորմացիան ընկալեն միաժամանակ:

¹ *П.Берд, Тайм менеджмент, М., 2004, стр. 15.*

² *С.Бехтерева, Майнд-менеджмент, М., 2009, стр. 9.*


³ *М.Зденек, Развитие правого полушария, М., 2004, стр. 87.*

Ինտելեկտ քարտեզ մեթոդը կիրառվում է կյանքի բոլոր ոլորտներում, որտեղ պահանջվում է կատարելագործել անձի ինտելեկտուալ ներուժը: Այն ունի չորս էական տարբերվող հատկանիշներ.⁴

1. ուշադրության օբյեկտ,
2. հիմնական թեմաներ, որոնց համաձայն դասակարգվում են ենթաբաժինները,
3. ճյուղերը նշվում և բացատրվում են բանալի (եղակետային) բառերով կամ բնութագրերով,
4. ճյուղերը ձևավորում են համակարգը:

Ներկայացնենք ինտելեկտ քարտեզի կազմման մի քանի սկզբունքներ.

Սկսել կենտրոնից: Կենտրոնում է գտնվում է ամենագլխավոր միտքը՝ ինտելեկտ քարտեզի կազմման նպատակը: Պետք է սկսել գլխավոր մտքից, այնուհետև կառուցանան նոր գաղափարներ, որոնք կլրացնեն այդ միտքը: Անհրաժեշտ է սկսել ժամացույցի սլաքի ուղղությամբ՝ աջ կողմի վերևի անկյունից: Կենտրոնական մասում վառ օբյեկտի տեսքով պետք է լինի ինտելեկտ քարտեզի ստեղծման նպատակը: Դրա համար պետք է հստակորեն նշել խնդիրը, օգտագործել տվյալ պահին ոգևորող գույնն ու նկարները, ինչպես նաև պետք է ձևավորել:



Օգտագործել բանալի (եղակետային) բառեր և կապեր: Անհրաժեշտ է մտքերն իրար կապել: Կապերի կիրառումը թույլ է տալիս ուղեղին առավելագույն արագությամբ կազմավորել ինֆորմացիան և ստանալ ամբողջական նկարագիր: Պետք է կիրառել մի օբյեկտից դուրս եկող հինգից յոթ կապեր, որոնք թույլ կտան նույնիսկ հոգնած մարդուն ընկալել ինֆորմացիան: Գլխավոր օբյեկտի կապը պետք է նշել մուգ ու հաստ գծով, իսկ ենթակա օբյեկտներինը՝ բարակ: Եթե հարևան օբյեկտները կապված են իրար, ապա պետք է ցույց տալ սլաքներով:

Գունավորել: Գույները ունեն իմաստ, որոնք պետք է հաշվի առնել: Գույնը մենք ընկալում են անմիջապես, իսկ տեքստի ընկալման համար որոշակի ժամանակ է պետք: Յուրաքանչյուր գույն ունի իր նշանակությունը, ընդ որում, յուրաքանչյուր մարդու գունազգացողությունը յուրովի է: Այս կամ այն գույնի իմաստը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ անձնական նախընտրություն, նախկին փորձ, մշակույթի ազդեցություն և այլն: Տարբեր մշակույթներում միևնույն գույնը կարող է տարբեր նշա-

⁴ T.Buzan, B. Buzan, *The Mind Map Book*, , USA, New York, 1994, p.103.

նակություններ ունենալ: Ներկայացնենք գույների ընկալման արագությունը և նշանակությունները:⁵

Գույն	Նշանակություն	Ընկալման արագություն
Կարմիր	Արագ ընկալվող, առավելագույնս ուշադրությունը կենտրոնացնող, հայտարարում է վտանգի, խնդիրների մասին: Հետևաբար լուսակիրում արգելքի նշանը կարմիր է:	Արագ
Կապույտ	Խիստ, գործնական գույն: Ուղղորդում է արդյունավետ շարունակական աշխատանքի:	Միջին
Կանաչ	Ազատության, հանգստացնող գույն: Գրական է ընկալվում մարդկանց կողմից: Նշանակությունը կախված է նաև նրա երանգից:	Ցածր
Դեղին	Էներգիայի, լիդերության գույն: Գրգռող, ջղայնացնող գույն է, որին հնարավոր չէ ուշադրություն չդարձնել:	Բարձր
Շագանակագույն	Հողի գույն, ամենատաք գույներից է: Հուսալիության, ուժի, կայունության, վստահության գույն է:	Ցածր
Նարնջագույն	Վառ, սադրիչ գույն: Խանդավառության, էներգիայի, գրգռման, դինամիկայի գույն է: Ուշադրության գրավման հիանալի միջոց է:	Բարձր
Երկնագույն	Նրբության, ռոմանտիկայի գույն: Հիանալի ֆոնային գույն է:	Ցածր
Սև	Խիստ, սահմանափակ գույն է: Իդեալական է տեքստի սահմաններ գծելու համար:	Միջին

Մեր առօրյա կյանքը լի է ինֆորմացիայիով, որը հաճախ դժվար է լինում ընկալել, յուրացնել, առավել ևս հիշել: Որպես հետևանք՝ մենք տառապում ենք ինֆորմացիայի ծանրաբեռնվածությամբ, որը էականորեն նվազեցնում է մեր աշխատանքի արդյունավետությունը: Սակայն դա կարելի է փոխել ինտելեկտ քարտեզով:

Գիտարկենք հիմնական խնդիրները, որոնք կարող են լուծվել հիշյալ քարտեզի շնորհիվ:

Կազմակերպել մտքերը: Ինտելեկտ քարտեզի կիրառումը կարող է օգնել կազմակերպելու նոր ինֆորմացիան հեշտ յուրացվող և հիշվող ձևով: Ինտելեկտ քարտեզը կիրառվում է հիշելու համար գրքերի, դասախոսությունների, հանդիպումների, հարցազրույցների, հեռախոսային զանգերի ինֆորմացիան:

Ինֆորմացիան հիշել: Մարդիկ չեն կարողանում հիշել տասից ավելի հասցե: Բայց դրա փոխարեն՝ կարողանում են գործնականորեն հիշել հասցեն (օրինակ՝ եկեղեցուց դառնալ աջ, հետո ուղիղ գնալ մինչև փոստը): Նման հասցեներն անհամար են. հնարավոր չէ հաշվել. մարդը, մի անգամ լինելով մի վայրում, հետագայում անմիջապես կհիշի, թե ինչպես այնտեղից կարելի է գնալ ուրիշ վայր: Հետևաբար կարող ենք ասել, որ ինտելեկտ քարտեզի կիրառումը նպաստում է ինֆորմացիան հիշելուն, ինչպես նաև արագ և արդյունավետ վերլուծելուն:

Ստեղծագործել: Ինտելեկտ քարտեզը օգնում է ազատվելու գծային մտածողությունից, և նպաստում է նոր գաղափարների ավելի հեշտ և արագ ի հայտ գալուն:

⁵ D.R. Reaton, *The Book on Mind management*, 4th Printing, USA, AZ, Quma Learning System, Inc, 1994, p.119.

Շփման ժամանակ ավելի քիչ խնդիրներ ունենալ: Հաճախ են լինում այնպիսի դեպքեր երբ գրուցակիցները փորձում են բացատրել բարդ կամ մեծ ծավալի ինֆորմացիա և չի ստացվում բառերով բացատրել, այդ դեպքում հիմնականում փորձում ենք այդ ամենը ներկայացնել նկարելով:

Կամ ի՞նչ են անում մարդիկ, երբ հեռախոսով գրուցում են բարդ կամ անցանկալի թեմայից: Նրանց մեծ մասը նկարում է թղթի վրա: Հիմնականում նկարում է, որպեսզի կարողանա աշխատանքներին ներգրավել ուղեղի աջ կիսագունդը. դա թույլ կտա մեծացնել պատասխանների հնարավոր տարբերակների քանակը և բարձրացնել մտածողության արդյունավետությունը:

Խնդիրները հեշտ և արագ լուծել: Ցանկացած բնույթի խնդիրների դեպքում, անկախ դրանց մասնագիտական կամ անձնական լինելուց, ինտելեկտ քարտեզը օգնում է տեսնելու բոլոր հարցերը, թե ինչպես են այդ հարցերը իրար կապված, և որն է դրանց կարևորությունը:

Պլանավորել: Ինտելեկտ քարտեզը օգնում է պլանավորելու, հավաքելու ամբողջ ինֆորմացիան կազմակերպված ձևով, կարելի է ստեղծել ցանկացած տեսակի պլան՝ միջոցառման, ելույթի, գրքի, նպատակներին հասնելու:

Ինտելեկտ քարտեզը թույլ է տալիս նաև նոր գաղափարների որոնման համար իրականացնել ուղեղային գրոհ, արտադրողականությունը բարձրացնել, ավելի կարևոր հարցերը տեսնել, համոզիչ ներկայացնել ինֆորմացիան: Ինտելեկտ քարտեզի առավելություններն են՝

- Աշխատում է ուղեղի նման:
- Հիշողությունը հիմնված է գուգադրությունների (ասոցիացիաներ) վրա: Յուրաքանչյուր գաղափար ուղեղում ունի հազարավոր գուգորություններ և կապեր: Ինտելեկտ քարտեզը թույլ է տալիս, որ դրանք գրառվեն ու շեշտադրվեն:
- Ուղեղը հիշում է ելակետային բառեր և պատկերներ և ոչ թե նախադասություններ: Ինտելեկտ քարտեզը օգտագործում է մի քանի ելակետային բառեր և նկարագրեր, որը թույլ է տալիս ամբողջ ինֆորմացիան ներկայացնել մի էջում:
- Քանի որ ինտելեկտ քարտեզը պարունակում է գունագեղ նկարներ և նրանց միջև ելակետային բառերով կապեր և նկարագրեր, ապա հեշտ է հիշվում:
- Ինտելեկտ քարտեզի ստեղծումն սկսվում է թղթի մեջտեղից, որը թույլ է տալիս աշխատել ցանկացած անկյունում:
- Ինտելեկտ քարտեզի ստեղծումը ներկայացնում է, թե ինչպես է ուղեղը կազմակերպում գաղափարները:
- Ինտելեկտ քարտեզի շնորհիվ պատկերները մնում են հիշողության մեջ:
- Ինտելեկտ քարտեզի վիզուալ ներկայացումը թույլ է տալիս ընդգծել ինֆորմացիայի ելակետային կողմերը:

Ինտելեկտ քարտեզի առավելությունները և նշանակությունը թույլ են տալիս, որ այն մեծ տարածում ունենա կառավարման ոլորտում: Ի դեպ, մենեջերները, կազմակերպության աշխատակիցներն սկսել են կիրառել ինտելեկտ քարտեզի բաղկացուցիչ մասերը, առանց իմանալու վերջինիս գոյության մասին: Ներկայումս կառավարման ոլորտում այն օգնում է արագ կողմնորոշվելու, խնդիրների լուծման ուղիներ գտնելու, որոշումներ կայացնելու, նոր գաղափարներ առաջադրելու:

Ժամանակակից հայկական կազմակերպություններում որոշակի խնդիրներ լուծելիս կիրառվում է ինտելեկտ քարտեզը, սակայն այն դեռևս լայնորեն չի ինտեգրվել մեր առօրյա կյանքին՝ պայմանավորված մեր մտածելակերպի առանձնահատկություններով: Մենեջերների խնդիրն է կարողանալ կիրառել ինտելեկտ քարտեզը կամ դրա բաղկացուցիչ մասերը՝ հաշվի առնելով հայկական մտածելակերպի առանձնա-

հատկությունները: Միայն այդ ժամանակ մենք կկարողանանք գնահատել ինտելեկտ քարտեզի օգտագործման շահեկանությունը կառավարման ոլորտում:

Ամփոփելով թեման՝ կարող ենք նշել, որ ինտելեկտ քարտեզի ստեղծումը հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկերացնելու նպատակը, նրան հասնելու միջոցները և ճանապարհները:

Գույների, նկարների և կապերի շնորհիվ ցանկացած ինֆորմացիան ընկալվում, վերլուծվում և հիշվում է ավելի արագ, քան սովորական ձևով (տառերով և թվերով) ներկայացնելու դեպքում:

Ինտելեկտ քարտեզի որակը կարելի է բարելավել գույների, նկարների, արտահայտությունների միջոցով, նաև քարտեզին եռաչափ տեսք տալով, որը կբարձրացնի նրա հանդեպ հետաքրքրվածությունը, նրա գրավչությունը և յուրահատկությունը:

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ ИНТЕЛЛЕКТ- КАРТЫ В СФЕРЕ УПРАВЛЕНИЯ

___ *Резюме* ___

___ *А. Саакян* ___

Интеллект- карта представляет собой графический способ передачи идей и концепций. Это-визуальный инструмент мышления, который содействует структурированию информации с целью более быстрого восприятия, анализа, осмысления, обобщения, генерирования новых идей.

Интеллект- карта предназначена для подготовки и проведения мозгового “Штурма” (индивидуально или в группах), решения проблем, изучения и запоминания, планирования, исследования и консолидации информации из различных источников, представления информации и принятия новых предложений на сложные темы.

Արկադի ԱՎՈՊՈՎ

**ԱՐԵՎՍՏՅԱՆ ՇԻՐԱԿԸ ԿԱՐՍԻ ԳԵՆԵՐԱԼ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ
ՁԵԿՈՒՑԱԳՐԵՐՈՒՄ (1890-ական թթ.)**

Որպես հետևանք 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի՝ Ռուսաստանին անցած տարածքներում ի հայտ են գալիս նոր վարչական միավորներ՝ Բաթումի և Կարսի մարզերը: Առաջինի կազմում ընդգրկված էին Բեռլինի 1878թ. հուլիսի 1-ի պայմանագրով Ռուսաստանին անցած սևծովյան շրջանները, ինչպես նաև «Աշխարհացոյց»-յան Գուգարք մահանգի Կդարքք գավառը, որի տարածքում Օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում ձևավորված վարչամիավորներն էին՝ Արտանուջը, Շավշեթը և Լիվանեն (Արդվին):

Բեռլինի պայմանագրով Ռուսաստանին անցած շրջաններից Կարսը, Կաղզվանը, Արդահանը և Օլթին ընդգրկվում են նորաստեղծ Կարսի մարզ: Վրացի մեծամունդ հնագետ Է. Թաղայշվիլի կարծիքով, Օլթիի և Արդահանի օկրուգների ընդգրկումը Կարսի մարզ արհեստական էր ու սխալ, քանի որ աշխարհագրական, պատմական և ազգագրական տեսանկյուններից այդ օկրուգները ոչ մի ընդհանուր բան չունեին Կարսի մարզի մյուս օկրուգների՝ Կարսի և Կաղզվանի հետ: Վերջիններս Է. Թաղայշվիլին պատմական և ազգագրական տեսանկյուններից համարում էր բուն հայկական տարածքներ՝ ի տարբերություն «Վրաստանի անբաժանելի հատվածներ Օլթիի և Արդահանի»: Թաղայշվիլին կարծում էր, թե Ղոբոխի ավազանում ընկած Օլթիի օկրուգը պիտի կցվեր Բաթումի մարզին, իսկ Կուր գետի վերնագավառն զբաղեցնող Արդահանի օկրուգը՝ որպես Ջավախքի մի մաս, Թիֆլիսի մահանգին¹: Եթե առաջնորդվենք Թաղայշվիլի տրամաբանությամբ, ապա անիմաստ էր Կարսի մարզի՝ որպես առանձին վարչական միավորի գոյությունն ընդհանրապես, քանի որ կարելի էր Կարսն ու Կաղզվանն իրենց հերթին միացնել Երևանի մահանգին՝ իբրև Ախուրյան և Արաքս գետերի ավազաններում ընկած շրջաններ:

Նորաստեղծ Կարսի մարզն ընդգրկում էր Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ, Արշարունիք և Վանանդ, Գուգարքի՝ Արդահան, Տայքի Կող, Բերդացիոք, Պարտիզացիոք և Բողխա գավառները: Պատմամշակութային բազմաթիվ հուշարձաններով հարուստ պատմական Շիրակի արևմտյան մասը՝ Շորագյալի և Աղբաբայի տեղամասերի տեսքով, ընդգրկվեց Կարսի մարզի նույնանուն օկրուգ, ինչը նպաստեց միջնադարյան Հայաստանի շիրակյան ժառանգության համակողմանի ուսումնասիրությանը: Այդ գործում աչքի ընկան XIX-XX դարերի մեծագույն գիտնականներ Ն. Մառը, Թ.Թորամանյանը, Հ.Օրբելին, Ն.Ադոնցը և այլք:

Թուրքական տիրապետությունն իր բացասական կնիքն էր թողել հայահոծ այս շրջանի վրա: XIX դարի վերջին քառորդին այնտեղ մեծ թիվ էին կազմում ինչպես ավերակ ու լքված, այնպես էլ մահմեդականաշատ բնակատեղիները, որոնց մասին վկայում են Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվի (այսուհետև՝ ՎՊԿՊԱ) մի շարք ֆոնդերում պահպանվող վավերագրերը: Հրատարակվող

¹ Э.Ткайшвили, Археологическая экспедиция 1918 г. вожныепровинции Грузии, Тб., 1952, с. 17.

փաստաթղթերը մեր կողմից հավաքագրվել են 2012թ. հունիսին և զետեղված են ՎՊԿՊԱ թիվ 12 ֆոնդում (фонд 12 – Канцелярия главноначальствующего гражданской частью на Кавказе (1883-1905) - ед. хр. 19646): Դրանք արտացոլում են Ախուրյանի ավազանի և մասնավորապես Արևմտյան Շիրակի բնակավայրերի ժողովրդագրական պատկերը, ազգային կազմը և կրոնադավանաբանական նկարագիրը:

Փաստաթղթերը դասավորված են ժամանակագրական հաջորդականությամբ և հրատարակվում են առաջին անգամ:

Всеподданейший отчет о состоянии Карсской области за 1889 г.

Ф. 12, оп. 7, д. 3950 /58 листов/

Карс, Типография Канц. Воен. Губернатора Карсской области. 1890 г.

Военный губернатор Карсской области, Генерального штаба генерал-майор Томич

5 декабря 1890 г.

Гор. Карс.

Приложение 5 к главе 1

Ведомость

Населенным пунктам карсской области, с показанием числа дымов, душ и национальности коренного населения

К 1-му январю 1890 года

Листы 21-25

N	Название населенных пунктов	Число		Национальность
		Дымов	душ	
Шурагельский участок				
1	Агузум арм.	35	270	Арм.*
2	Агузум мус.	50	400	Крп.
3	Аг-Булах	24	196	Кпх.-ш
		7	45	Кпх.-с
		5	60	Тур.
		1	21	Кур.
4	Аджам Маврак	51	370	Арм.
5	Ани	21	165	Тур.
		7	40	Кур.
6	Араз -оглы	41	320	Арм.
7	Аралых	40	330	Кпх.
8	Аргино	17	150	Тур.
		1	11	Кур.
9	Астакана	35	280	Крп.-ш
10	Ашага-Кядыкляр	55	410	Арм.
11	Баджы-оглы	50	419	Кпх.-ш
12	Байрахтар	30	331	Арм.
13	Баш-Кядыкляр	74	730	Арм.
14	Баш-Шурагель	119	1161	Арм.

* Այստեղ և հետագայում ազգությունները ներկայացված են ըստ բնագրի (Ս.Ա.):

15	Вартанлы	58	610	Արմ.
16	Гаджи-Пири	19	612	Кпх.-с
17	Гаджи-Вали	53	612	Гр.
		2	9	Արմ.
		3	31	Тур.
18	Герхана	40	438	Արմ.
19	Гамза кярак	85	760	Արմ.
20	Гореловка	41	409	Дух.
21	Гюлли – Булаг	90	763	Кпх.-ш
22	Дайналых	53	400	Кпх.-ш
23	Далавер	3	18	Кпх.-ш
		50	401	Кпх.-с
24	Джала	88	710	Արմ.
25	Джарджи	10	86	Тур.
26	Дилян	14	132	Кпх.-с
		6	30	Тур.
		3	28	Кур.
27	Иланлы	32	264	Кпх.-ш
28	Инджадара	36	284	Тур.
29	Каракаш	73	600	Кпх.
30	Каракилиса	64	438	Кпх.
31	Карамамед	35	360	Արմ.
32	Кармир ванк	18	170	Արմ.
33	Кечит	23	182	Тур.
34	Кизил-Даш	46	395	Кпх.-ш
		2	20	Кпх.-с
35	Кизил-чахчах	148	1319	Արմ.
36	Кинак	48	406	Кпх.-ш
37	Кириловка	60	538	Дух.
38	Кмлы больш	84	637	Кпх.
39	Кмлы малые	34	315	Кпх.
40	Коша-ванк	28	320	Արմ.
41	Куюджух	31	232	Արմ.
		1	4	Кур.
		65	573	Кпх.-ш
42	Кюльверан	5	48	Кур.
43	Кюрук-дара	75	660	Արմ.
		1	11	Тур.
44	Мокюз	71	619	Тур.
		2	10	Кпх.-с
45	Молла-Муса	72	512	Кпх.-ш
46	Огузлы	87	719	Արմ.
47	Оджах-кули	69	616	Արմ.
48	Орта-Кядыкляр	43	363	Արմ.
49	Охча-оглы	75	608	

50	Паргет Бол.	48	365	Арм.
		45	327	Тур.
		1	10	Кур.
51	Пирвали	73	724	Арм.
52	Палдырван	69	683	Арм.
53	Сейди	23	226	Кпх.-ш
54	Спасовка	69	691	Дух.
55	Субботань	65	688	Гр.
		45	344	Тур.
		2	12	Кур.
56	Тазакент	19	166	Арм.
57	Терпение	70	724	Дух.
58	Тихнись арм	74	580	Арм.
59	Тихнись мус.	40	295	Тур.
60	Узун -Килиса	70	759	Арм.
Итого		3322	29113	
Агбабинский участок				
1	Амасия	33	295	Кпх.
2	Балыхлы	33	234	Кпх.
3	Бахчалы	21	180	Кпх.
4	Безиргян	56	562	Арм.
5	Гелли	31	227	Кпх.
6	Гюллиджа	26	214	Кпх.
7	Даш-кепри	38	276	Кпх.
8	Дюзкент	500	400	Кпх.
9	Ибиш	42	316	Кпх.
10	Иланлы	18	158	Кпх.
11	Карабулаг	29	237	Кпх.
12	Каранамаз	37	312	Кпх.
13	Карачанта	48	379	Кпх.
14	Кизил-килиса	30	221	Кпх.
15	Магараджик	40	341	Кпх.
16	Мумухан	16	120	Кпх.
17	Муслухли	20	128	Кпх.
18	Оксуз	10	76	Кпх.
19	Ордакю	19	262	Кпх.
20	Сельдаглан	30	260	Кпх.
21	Сных	18	135	Кпх.
22	Согютли	10	76	Кпх.
23	Султанабад	19	262	Кпх.
24	Тазакент	17	149	Кпх.
25	Тапакей большой	32	220	Кпх.
26	Тапакей маленький	24	175	Кпх.
27	Ханчалы	31	201	Кпх.

28	Хозыкент	30	242	Кпх.
29	Чахмах	29	250	Кпх.
30	Шиш-тапа	17	141	Кпх.
31	Элляр-эюги	31	261	Кпх.
Итого		893	7227	

Подлинник: печатный.

Фонд 12 опись 7, д. 4003

Обзор Карсской области за 1895 год

(приложение к Всеподданейшему отчету военного губернатора Карсской области)

Карс, Типография Канц. Воен. Губернатора Карсской области. 1896.,

Ведомость

Лит. Б. Листы 29-36

Населенным пунктам карсской области, с показанием числа дымов, душ и
национальности коренного населения

К 1-му январю 1896 года

N	Название населенных пунктов	Число				Национальность
		Число дымов	Мужского пола	Женского пола	Обоего пола	
Шурагельский участок						
1	Агузум арм.	38	206	165	371	Арм.-грк
2	Агузум мус.	49	207	207	414	Крп.-шт.
3	Аг-Булах	23	121	104	225	Крп.-шт.
		7	27	26	53	Крп.сун.
		5	36	32	68	Трк.сун.
		1	12	12	24	Крд.сун.
4	Аджам Маврак	54	243	201	444	Арм.-грк
5	Ани	21	98	90	188	Трк.сун.
		7	20	20	40	Крд.сун.
6	Араз -оглы	42	198	187	385	Арм.-грк
7	Аралых	40	171	179	350	Крп.-шт.
8	Аргино	17	80	89	169	Трк.сун.
9	Астахана	35	168	149	317	Крп.шт.
10	Ашага-Кядыкляр	55	234	231	465	Арм.-грк
11	Баджы-оглы	50	246	206	452	Крп.шт.
12	Байрахтар	31	200	201	401	Арм.-грк
13	Баш-Кядыкляр	74	432	405	837	Арм.-грк
14	Баш-Шурагель	120	605	624	1229	Арм.-грк
15	Варганлы	58	366	279	645	Крп.шт.
16	Гаджи-Пири	19	95	73	168	Крп.сун.
17	Гаджи-Вали	52	377	339	716	Греки
		2	14	9	23	Трк.сун.
18	Гамза кярк	87	447	390	837	Арм.
19	Герхана	43	262	289	551	Арм.
20	Гореловка	41	234	216	450	Духоб.
21	Гюлли – Булаг	-	-	-	-	-
22	Дайналых	53	221	230	451	Крп.шт.
23	Далавер	-	-	-	-	-

24	Джала	89	385	382	767	Арм.-грг
25	Джарджи	11	51	43	94	Трк.сун.
26	Дилан	14	76	60	136	Крп.сунт.
		6	22	18	40	Крд.сун.
		5	16	17	33	Крп.шт.
27	Иланлы	33	163	137	300	Крп.шт.
28	Инджадара	36	153	155	308	Трк.сун.
29	Каракаш	73	350	284	634	Крп.шт.
30	Каракилиса	64	261	257	518	Крп.шт.
31	Кара126мамед	-	-	-	-	-
32	Кармир ванк	19	106	90	196	Арм.-грг
33	Кечит	23	102	102	204	Трк.сун.
34	Кизил-Даш	-	-	-	-	-
35	Кизил-чахчах	150	796	763	1559	Арм.-грг
36	Кинак	48	218	228	446	Крп.шт.
37	Кириловка	56	297	305	602	Духоб.
38	Кмлы большие	84	352	337	689	Крп.шт.
39	Кмлы малые	34	179	164	343	Крп.шт.
40	Кошаванк	29	131	123	254	Арм.
41	Куюджук	35	152	154	306	Арм.
42	Кюльверан	71	201	326	527	Крп.шт.
		5	31	20	51	Крд.сун.
43	Кюрюк-дара	81	400	408	808	Арм.-грг
44	Мокюз	69	374	340	714	Трк.сун.
		2	11	6	17	Крп.сун.
45	Молла-Муса	72	283	267	550	Крп.шт.
46	Огузлы	89	382	432	814	Арм.
47	Оджаг-кули	67	342	367	709	Арм.
48	Орта-Кядыкляр	45	227	240	467	Арм.
49	Охча-оглы	75	335	333	668	Крп.шт.
50	Паргет Бол.	46	243	240	483	Трк.сун.
		49	198	188	386	Арм.-грг
51	Палдырван	73	410	413	823	Арм.-грг
52	Пирвали	83	419	443	862	Арм.-грг
53	Сейды	23	230	115	345	Крп.сун.
54	Спасовка	73	416	406	822	Духоб.
55	Субатань	67	362	359	721	Греки
		47	171	187	358	Трк.сун.
56	Тазакент	20	93	96	189	Арм.-грг
57	Терпение	74	429	454	883	Духоб.
58	Тихнись арм	75	356	294	650	Арм.-грг
59	Тихнись мус.	40	154	176	330	Трк.сун.
60	Узун -Килиса	73	436	481	917	Арм.-грг
Итого		3152	15633	15163	30796	
Агбабинский участок						
1	Амасия	30	143	147	290	Крп.сун.
		3	12	14	26	Крп.шт.
2	Балыхлы	33	142	146	288	Крп.сун.
3	Бахчалы	16	60	69	129	Крп.сун.
		5	43	34	77	Крп.шт.
4	Безиргян	19	77	76	153	Арм.-гр.

5	Гелли	25 7	119 13	111 11	230 24	Крп.сун. Крп.шт.
6	Гюлли-Булаг	91	441	419	860	Крп.шт.
7	Гюллиджа	26	123	120	243	Крп.шт.
8	Джабаджи	38	163	143	306	Крп.сун.
9	Даш-кепри	36 2	159 9	134 14	293 23	Крп.шт. Крп.шт.
10	Далавер	51 3	235 13	200 10	443 23	Крп.сун. Крп.шт.
11	Дюзкенд	50	256	232	488	Крп.шт.
12	Ибиш с посел- ком Айчинглы	42	204	192	396	Крп.шт.
13	Иланлы	18	108	88	196	Крп.шт.
14	Карабулаг	30	142	121	263	Крп.сун.
15	Карамамед	42	246	232	478	Арм.-гр.
16	Каранамаз	32 6	126 58	121 48	247 106	Крп.шт. Крп.сун.
17	Карачанга	48	221	218	439	Крп.шт.
18	Кизил Даш новый	38	156	158	314	Крп.шт.
19	Кизил Даш старый	10	74	64	138	Крп.сун.
20	Кизил-килиса	32	128	129	257	Крп.сун.
21	Магараджик	40	201	202	403	Крп.шт.
22	Мумухан	15	79	84	163	Крп.сун.
23	Муслузли	11 9	53 35	45 24	98 59	Крп.сун. Крп.шт.
24	Оксуз	11	44	50	94	Крп.шт.
25	Ордаклис поселком Гонджали	29	143	141	284	Крп.сун.
26	Сных	10 8	40 29	51 29	91 58	Крп.сун. Крп.шт.
27	Сельдаглан	30	154	155	309	Крп.сун.
28	Согюгли	11	49	43	92	Крп.сун.
29	Султанабад	27	99	109	208	Крп.сун.
30	Тазакенд	16	85	78	163	Крп.сун.
31	Тапакей большой	27 6	105 27	90 27	195 54	Крп.сун. Крп.шт.
32	Тапакей маленький	24	103	90	193	Крп.сун.
33	Ханчалы	31	112	114	226	Крп.сун.
34	Хозыкент	13 17	79 79	62 61	141 140	Крп.сун. Крп.шт.
35	Чакмах	9 20	64 95	56 76	120 171	Крп.сун. Крп.шт.
36	Шиш-тапа	12 5	58 19	54 14	112 33	Крп.сун. Крп.шт.
37	Эляр-эюги	31	154	140	294	Крп.сун.
	Итого	1145	5377	5054	10431	

Подлинник: печатный.

Обзор Карсской области за 1897 г.

Ф. 12, оп. 7, д. 4032 /на 69 листах/

Карс, Типография Канц. Воен. Губернатора Карсской области. 1898 г.

Ведомость

Лит. Б. /листы 39-46/

Населенным пунктам Карсской области, с показанием числа дымов, душ и национальности коренного населения

К 1-му январю 1898 года

N	Название населенных пунктов	Число				Национальность
		Число дымов	Мужского пола	Женского пола	Обоего пола	
Шурагельский участок (резиденция село Аргино)						
1.	Агузум арм.	38	221	181	402	Арм.-грг
2.	Агузум мус.	49	237	234	471	Крп.-шт.
3.	Аджам Маврак	54	263	221	484	Арм.-грг
4.	Ани	21	103	101	204	Трк.шт.
		7	21	23	44	Трк.сун.
5.	Араз -оглы	42	210	205	415	Арм.-грг
6.	Аралых	40	193	202	395	Крп.-шт.
7.	Астахана	35	182	171	353	Крп.шт.
8.	Аг-Булах	23	127	121	248	Крп.-шт.
		7	29	28	57	Крп.сун.
		5	37	33	70	Трк.сун.
		1	12	12	24	Крд.сун.
9.	Ашага-Кядыкляр	55	250	249	499	Арм.-грг
10.	Аргино	17	87	98	185	Трк.сун.
11.	Баш-Шурагель	120	649	681	1330	Арм.-грг
12.	Баш-Кядыкляр	74	466	436	902	Арм.-грг
13.	Баджы-оглы	50	255	218	473	Крп.шт.
14.	Байрахтар	31	217	218	435	Арм.-грг
15.	Варганлы	58	393	298	691	Крп.шт.
16.	Гаджи-Пири	19	102	82	184	Крп.сун.
17.	Гаджи-Вали	52	398	368	766	Греки
		2	15	9	24	Трк.сун.
18.	Гамза кярак	87	480	437	917	Арм.
19.	Герхана	43	269	296	565	Арм.
20.	Гореловка	41	233	224	457	Духоб.
21.	Дайналых	53	245	258	493	Крп.шт.
22.	Джала	89	409	422	831	Арм.-грг
23.	Джарджи	11	56	42	98	Трк.сун.
24.	Дилан	16	79	70	149	Крп.сунт.
		6	24	21	45	Крд.сун.
		5	17	17	34	Крп.шт.
25.	Иланлы	33	168	146	314	Крп.шт.
26.	Инджадара	36	160	164	324	Трк.сун.
27.	Каракаш	73	365	302	667	Крп.шт.
28.	Каракилиса	64	276	279	555	Крп.шт.
29.	Кармир ванк	19	117	103	220	Арм.-грг
30.	Кечит	23	108	112	220	Трк.сун.

31.	Кизил-чахчах	150	849	841	1690	Арм.-грг
32.	Кинак	48	227	242	469	Крп.шт.
33.	Кириловка	56	284 4	300 4	594 8	Духоб. Русские прав.
34.	Кмлы большие	84	375	357	732	Крп.шт.
35.	Кмлы малые	34	186	167	353	Крп.шт.
36.	Кошаванк	29	143	133	276	Арм.гр.
37.	Куюджук	35	159	164	323	Арм.гр.
38.	Кюльверан	71 5	213 32	347 24	560 56	Крп.шт. Крд.сун.
39.	Кюрюк-дара	81	432	444	876	Арм.-грг
40.	Мокюз	69 2	387 13	356 7	743 20	Трк.сун. Крп.сун.
41.	Молла-Муса	72	300	289	589	Крп.шт.
42.	Огузлы	89	410	471	881	Арм.гр.
43.	Оджаг-кули	67	372	396	768	Арм.гр.
44.	Орта-Кядыкляр	45	241	247	488	Арм.гр.
45.	Охчи-оглы	75	352	344	696	Крп.шт.
46.	Паргет Бол.	46 49	253 210	247 201	500 411	Турки и курды Арм.-грг
47.	Палдырван	73	445	444	889	Арм.-грг
48.	Пирвали	89	461	467	928	Арм.-грг
49.	Плодотворное (бывш.Терпение)	74	430	454	884	Духоб.
50.	Сейды	23	241	121	362	Крп.сун.
51.	Спасовка	73	419	404	823	Духоб.
52.	Субатань	47 67	182 279	194 374	376 753	Греки Трк.сун.
53.	Тазакент	20	102	99	201	Арм.-грг
54.	Тихнись арм	75	385	319	704	Арм.-грг
55.	Тихнись мус.	40	161	192	353	Трк.сун.
56.	Узун -Килиса	73	470	499	969	Арм.-грг
Итого		3160	16600	16230	32830	
Агбабинский участок						
1	Амасия	30 3	146 16	147 18	293 34	Крп.сун. Крп.шт.
2	Бальхлы	36	155	153	308	Крп.сун.
3	Бахчалы	16 8	63 50	76 41	139 91	Крп.сун. Крп.шт.
4	Безиргян	26	119	117	233	Арм.-гр.
5	Гелли	25 7	127 16	99 24	226 40	Крп. шт. Крп. сун.
6	Гюллибулах	91	456	476	932	Крп.шт.
7	Гюлиджа	26	147	125	272	Крп.шт.
8	Джабаджи	38	170	168	338	Крп.сун.
9	Даш-кепри	36 2	151 11	134 17	285 28	Крп.шт. Крп.сун.
10	Далавер	51 3	246 17	232 13	478 30	Крп.сун. Крп.шт.
11	Дюзкенд	50	250	235	485	Крп.шт.
12	Ибгиш с поселком	42	219	180	399	Крп.шт.

	Այժմի անուն					
13	Իլանլի	18	106	108	214	Կրթ. շրջ.
14	Կարաբուլաղ	30	171	140	311	Կրթ. սյուն.
15	Կարամամեդ	42	254	230	484	Արմ.-գր.
16	Կարանամազ	32	136	136	272	Կրթ. շրջ.
		6	62	53	115	Կրթ. սյուն.
17	Կարաչանտա	50	227	202	429	Կրթ. շրջ.
18	Կիզիլ Դաշ նո՞վյի	10	47	44	91	Կրթ. շրջ.
19	Կիզիլ Դաշ ստարի	38	163	146	309	Կրթ. սյուն.
20	Կիզիլ-կիլիսա	32	127	122	249	Կրթ. սյուն.
21	Մագարաճիկ	40	210	183	393	Կրթ. շրջ.
22	Մումուխան	15	63	68	131	Կրթ. սյուն.
23	Մուսլուխլի	24	97	94	191	Կրթ. շրջ.
24	Օքսուզ	11	53	49	102	Կրթ. շրջ.
25	Օրճակլի ս պոսեղոմ Գոնճակալի	29	151	149	300	Կրթ. սյուն.
26	Տնիկ	10	35	33	68	Կրթ. սյուն.
		8	15	13	28	Կրթ. շրջ.
27	Տեղաճակալ	30	160	165	325	Կրթ. սյուն.
28	Տոկյուղլի	11	46	38	84	Կրթ. սյուն.
29	Տուղտանաբաճ	27	119	117	236	Կրթ. սյուն.
30	Տազակենճ	26	82	79	161	Կրթ. սյուն.
31	Տաթակեյ խոշո	27	109	104	213	Կրթ. սյուն.
		6	29	27	56	Կրթ. շրջ.
32	Տաթակեյ խոշո	24	108	92	200	Կրթ. սյուն.
33	Ճանչակալ	31	127	131	258	Կրթ. սյուն.
34	Ճոշյուկենտ	30	193	148	343	Կրթ. շրջ.
35	Ճախմախ	9	61	53	114	Կրթ. սյուն.
		20	84	74	158	Կրթ. շրջ.
36	Շիշ-թաթա	12	61	51	112	Կրթ. սյուն.
		5	30	18	48	Կրթ. շրջ.
37	Քլյար-էոյու	31	177	162	339	Կրթ. սյուն.
Իտոյու		1164	5659	5284	10943	

Ստորագրող: տպագրուած.

Բնակչոսւթի խոսւթոսւթներ

Արմ.	արմեյե
Արմ.-գրգ.	արմեյե ցրիցրիանցյ
Գր.	ցրեկի
Դուխոբ.	Դուխոբորյ
Կրթ.	կարաթաթախի
Կրթ.-ի	կարաթաթախի շիիտյ
Կրթ. շրջ.	կարաթաթախի շիիտյ
Կրթ.-ս	կարաթաթախի սոննիտյ
Կրթ. սյուն.	կարաթաթախի սոննիտյ
Կրճ. սյուն.	կուրճի սոննիտյ
Կուր.	կուրկի
Կրկ. սյուն.	կուրկի սոննիտյ
Կրկ. շրջ.	կուրկի շիիտյ

**ЗАПАДНЫЙ ШИРАК В ОТЧЕТАХ КАРССКОГО
ГЕНЕРАЛ-ГУБЕРНАТОРА (1890-ые гг.)***Резюме**А. АКОПОВ*

После Берлинского трактата 1878 г. на территориях, отошедших России, были сформированы две области – Батумская и Карсская. В состав первой входили Аджария и древнеармянская область Кхарчк (на территории Кхарчка в период османского правления существовало несколько административных единиц – Ливане, Шавшет и Артанудж). В состав Карсской области вошли округа Карс, Ардаган, Кагызван и Ольты. Издаваемые документы представляют интереснейшие материалы по истории Западного Ширака, который в 1890-ые гг. входил в состав Шурагельского и Агбабинского участков Карсского округа. Во “Всеподданнейших” отчетах Карсского генерал-губернатора сохраняется довольно обширная информация об этно-демографической и конфессиональной картине Западного Ширака. К отчетам приобщены также ведомости с различными статистическими данными, которые могут представлять интерес как для специалистов-историков, так и для широкого круга читателей. Представленные документы выбраны из фонда Центрального государственного исторического архива Грузии 12 (Канцелярия главноначальствующего гражданской частью на Кавказе (1883-1905)).

**«ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ»
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1884-1899թթ.**

XIXդ. հայ բարեգործական-մշակութային ընկերությունների մեծ մասը ազգի ինքնաճանաչման մակարդակի բարձրացման և օտարի դեմ նրա պայքարի կազմակերպման խնդիրն էր լուծում: Այդպիսին էր նաև «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը», որի գործունեությունը հայ պատմագիտության մեջ, մեր կարծիքով, դեռևս բավարար չափով լուսաբանված չէ:

Ընկերությունը հիմնադրվել է 1881թ. Թիֆլիսում բժիշկ Բ. Նավասարդյանի կողմից: Նրա կազմակերպման աշխատանքներին մասնակցություն են ունեցել Գ. Մունդուկյանը, Ա. Բաբայանը, Ա. Եզեկյանը, Ս. Արծրունին, Ա. Մանթաշյանը և այլք: Պաշտոնական ձևակերպմամբ ընկերության նպատակն էր «...նպաստել լուսաորոշեան տարածմանը Հայերի մեջ Կովկասում և Անդրկովկասում և օգնել նոցա նիւթակահանայէս»:¹ Շուտով ընկերությունն իր ներկայացուցչություններն է բացում Շուշիում, Երևանում, Ախալցխայում, Ալեքսանդրապոլում և այլ քաղաքներում: Սույն հրապարակմամբ ժամանակի մամուլի և արխիվային նյութերի հիման վրա մենք փորձում ենք լուսաբանել ընկերության Ալեքսանդրապոլի մասնաճյուղի գործունեությունը:

«Կովկասի հայոց բարեգործական ընկերության» Ալեքսանդրապոլի մասնաճյուղը թեև հիմնադրվեց 1884թ., բայց իրականում սկսեց գործել 1890 թվականից: Այդ ընթացքում եղան և՛ ոգևորության պահեր, և՛ ամլության տարիներ՝ պայմանավորված ընկերության կենտրոնական խորհրդից եկող տարաբնույթ ազդակներով, ժամանակի հայ հասարակական-քաղաքական կյանքում կատարվող փոփոխություններով, նաև՝ տեղական վարչության նախագահների ձեռնբերության կամ նվազ ակտիվության գործոնով:

1884թ. փետրվարի 27-ին ալեքսանդրապոլցի մտավորականներ Հ. Բաբայանցի, օր. Կ. Քյանդարյանցի, տ. Հ. Հովհանջանյանցի, Ս. Վեհապետյանցի, Ա. Մխիթարյանցի, Հ. Տեր-Մարգարյանցի, տ. Ս. Ջալալյանի, Հ. Բարսամյանի, Ա. Կրիստյանցի, օր. Վ. Միրզայանցի, Ն. Կարապետյանցի, Կ. Տեր-Դավթյանի, Ն. Տիգրանյանի և Գ. Բունիաթյանի հորդորով Արդուսյան դպրոցի տեսուչ Կարապետ Ջալալյանը դիմում է «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» խորհրդի նախագահ Ա. Անանյանին՝ Ալեքսանդրապոլում ընկերության տեղական վարչություն հիմնելու խնդրանքով:² Ընկերության կենտրոնական խորհուրդը դիմումը քննարկում է 1884թ. մարտի 2-ի նիստում և բավարարում ալեքսանդրապոլցիների ցանկությունը՝ այդ մասին մարտի 5-ի գրությամբ տեղյակ պահելով Կ. Ջալալյանին: 1884թ. ընթացքում «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» հիմնադիր նախագահ Բ. Նավասարդյանը և Կ. Ջալալյանը մի քանի անգամ դիմում են Ալեքսանդրապոլի գավառապետին և ոստիկանության կառավարչին՝ ընկերության տեղական վարչություն բացելու թույլտվություն ստանալու, այսինքն՝ կատարված իրողությունն արձանագրելու խնդրանքով, սակայն նրանց ջանքերն ապարդյուն են անցնում:

¹ Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում 1881-1911, Կազմեց Լ.Ե. Թ., 1911, էջ 40:

² Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 28, ցուցակ 1, գործ 899, թերթ 1-2:

«Կովկասի հայոց բարեգործական ընկերության» Ալեքսանդրապոլի մասնաճյուղի վերակազմակերպման գործընթացի սկիզբը 1890թ. հուլիսի 22-ին Ս. Ամենափրկիչ եկեղեցուն առընթեր դպրոցի դահլիճում հրավիրված ժողովը եղավ, որը նախագահում էր Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի փոխանորդ Գարեգին վրդ. Սաթունյանը: Ներկաներն իրենց աջակցությունն են հայտնում նախագահին, որն իր ելույթում նշում է «Բարեգործականի» գործուն մասնաճյուղ ունենալու անհրաժեշտության մասին:³ Իսկույն անդամագրվում են 32-35 հոգի: Մասնաճյուղի անդամները, որոնց քանակը տարբեր տարիներին տատանվել է 20-ից 140-ի սահմաններում, հիմնականում ուսուցիչ-ուսուցչուհիներ էին, առևտրականներ, մտավորականներ, հայ ազատագրական շարժման գործիչներ: «Բարեգործականի» տեղական վարչության նյութական միջոցները զոյանալու էին անդամավճարներից, նվիրատվություններից և բարեգործական մշակութային միջոցառումներից (թատերական և համերգային ներկայացումներ, պարահանդեսներ) ստացվող հասույթներից:

1890թ. օգոստոսի 19-ին հրավիրվում է երկրորդ ժողովը, որը կրկին նախագահում էր Գ. Սաթունյանը: Ժողովն ընտրում է ընկերության տեղական վարչության անդամներին և նրանց փոխանորդներին: Գործադիր անդամների թիվը կարճ ժամանակում հասել էր արդեն 94-ի: Որոշվում է 71 անձանց ստորագրությամբ խնդրագիր ուղարկել ընկերության կենտրոնական խորհուրդ՝ տեղական մասնաճյուղ բացելու թույլտվությունը վերահաստատելու ակնկալիքով: Այս իրողությունը լայն արձագանք է գտնում Թիֆլիսի «Մշակ» և «Նոր Դար» թերթերում:

Ինչպես ցույց է տալիս ընկերության Ալեքսանդրապոլի մասնաճյուղի շուրջ 15 տարիների կենսագրությունը՝ ընկերության տեղական վարչության գործունեության հիմնական ուղղությունները եղան՝ անբերրիության հետևանքների վերացումը Ալեքսանդրապոլի գավառում և սովի կանխումը, արդուլիամիդյան կոտորածներից փրկված արևմտահայերի օբևանի և ապրուստի ապահովումը, չունևոր աշակերտների ուսման վճարների հատուցումն ու նրանց կրթության կազմակերպումը, գրադարան-ընթերցարանի հիմնումն Ալեքսանդրապոլում,⁴ աղքատախնամությունը և այլն: Ընկերության տեղական վարչությանը, թեև դժվարությամբ, սակայն հաջողվեց իրականացնել նաև բավականին խոշոր կրթական մի ծրագիր, այն է՝ Ալեքսանդրապոլում կար ու ձևի դպրոցի հիմնադրումը:

1890թ. հոկտեմբերի 19-ին կենտրոնական խորհուրդը շնորհակալություն է հայտնում Գ. Սաթունյանին նախաձեռնության համար և գործելու թույլտվություն տալիս:⁵ Մինչև տարվա վերջ մասնաճյուղի գործադիր անդամների թիվը կտրուկ աճում է՝ հասնելով 133-ի: Նրանց մուծած անդամավճարներից 670 ռուբլի գումար է գոյանում: Ընկերության տեղական վարչությունը որոշում է այդ գումարը բաշխել հետևյալ կերպ. «...400 ռուբլի մատենադարան-ընթերցարանի բացման համար ծախսել, 100 ռուբլի՝ տաս հոգի աղքատ մանուկներին ուսում տալու հայոց դպրոցներում, 50 ռուբլի վարչութեան ծախս է, և 50 ռուբլի պիտի յատկացվի մի բժշկին, որպէս զի նա պարտաւորվի ձրիապէս բժշկելու քաղաքիս աղքատ դասակարգի հիւանդներին...»:⁶ Մնացած 70 ռուբլին վարչությունը պետք է շահեցներ:

1891թ. ընկերության տեղական վարչությունը մատնվում է անգործության: Ընդհանուր ժողովի նախագահ Գ. Սաթունյանը փորձում է հրաժարվել իր պաշտոնից՝ պատճառ բերելով Ալեքսանդրապոլից իր հաճախակի բացակայության հանգամանքը,

³ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 899, թ. 14:

⁴ Այս հարցին մենք կանդրադառնանք առանձին հոդվածով:

⁵ Նույն տեղում, թ. 20:

⁶ Ալեքսանդրապոլից, «Մշակ», Թ., 1891, №1, էջ 3:

ասկայն, 1891թ. հոկտեմբերի 27-ին կայացած ընդհանուր ժողովը միաձայն որոշում է խնդրել նրան շարունակել պաշտոնավարումը նաև առաջիկա տարում:⁷

«Բարեգործականի» Ալեքսանդրասպուլի մասնաճյուղը լիարյուն չաշխատեց նաև 1892-1893թթ.: Նրա գործադիր անդամների թիվը պակասեց մինչև 42-ը: Մասնաճյուղը էական քայլեր չձեռնարկեց այդ ժամանակահատվածում Ալեքսանդրասպուլի գավառում բռնկված ժանտախտի համաճարակի տարածումը մեղմելու ուղղությամբ և սահմանափակվեց կենտրոնական խորհրդից ստացված հիգիենիկ-ախտահանիչ միջոցներն ու դեղորայքը գործադրելով:⁸ 1892թ. վերջին մասնաճյուղի ընդհանուր ժողովը ժանտախտից տուժած ընտանիքներին օգնելու նպատակով տեղական վարչությանը 90 ռուբլի հատկացրեց:⁹ Մասնաճյուղի այս անհետևողականությունը, հավանաբար, արդյունք էր այն իրողության, որ ժանտախտի համաճարակը մեղմելու նպատակով Ալեքսանդրասպուլում մի քանի ուսուցիչների և երիտասարդների նախաձեռնությամբ բացվել էր երկու անվճար թեյարան, ստեղծվել էր աղքատ հիվանդներին օգնող հանձնախումբ, հարցին մեծ ուշադրություն էր դարձնում նաև տեղական իշխանությունը:

1893 թ. ընկերության տեղական վարչությունը նյութապես օգնում է Ալեքսանդրասպուլի եկեղեցական-ծխական դպրոցներում սովորող հինգ աշակերտների (100 ռուբլի) և Հոռոմ գյուղի դպրոցի հոգաբարձությանը (50 ռուբլի): 1893թ. վերջին, երբ վարչության նախագահ է ընտրվում իրավաբան Մ. Պապաջանյանը, որը բավական գործույթայն մի անձնավորություն էր, ընկերության Ալեքսանդրասպուլի մասնաճյուղի գործունեությունը նկատելիորեն աշխուժացավ:

1892-1893թթ. Անդրկովկասի մի քանի շրջանների, այդ թվում՝ Երևանի նահանգի համար անբերրիության տարիներ էին:¹⁰ Չորային եղանակի և գյուղատնտեսական ապրանքների բարձր գների պատճառով նահանգի հազարավոր քաղաքային ու գյուղացիական տնտեսություններ հայտնվել էին անելանելի դրության մեջ: Բնական աղետը պատուհասել էր նաև Ալեքսանդրասպուլի գավառը:¹¹ Նոր տարվա՝ 1894թ. սկզբում «Բարեգործականի» Ալեքսանդրասպուլի տեղական վարչությունը որոշում է փող և ալյուր բաժանել քաղաքի աղքատներին և այդ նպատակով կազմում է երեք հոգանոց հանձնաժողով, որի անդամները շրջում են քաղաքում՝ բաժանելով օգնությունը քաղաքի ծայրամասերում բնակվող մոտ 250 առավել աղքատ ընտանիքներին:¹²

Ավելի մեծ օգնություն ցույց տալու դիտավորությամբ տեղական վարչության անդամներից մեկին՝ Մարգիս Սահակյանի առաջարկով հունվարի 24-ին փորձնական բացվում է «ձրի-էժանագին ճաշարան»: Այն կարճ ժամանակի ընթացքում հասցնում է շահել հասարակության համակրանքը: Քաղաքի բնակիչներն օգնում էին մթերքով, փայտով, կահույքով և դրամով:¹³ Այս մասին նախաձեռնող խմբի անդամներից Ս. Սահակյանը զեկուցում է տեղական վարչության փետրվարի 3-ի ընդհանուր ժողովում: Ի դեպ, այդ շրջանում Ալեքսանդրասպուլի մասնաճյուղի գործադիր անդամների թիվը կրկին աճել էր՝ հասելով 90-ի:

⁷ ՀԱՍ, ֆ. 28, ց. 1, գ. 899, թ. 28:

⁸ Տեղեկագիր Հայոց բարեգործական ընկերության Կովկասում 1892, Թ., 1893, էջ 25:

⁹ Ալեքսանդրասպուլից, «Նոր-Ղար», 1892, Թ., №173, էջ 2:

¹⁰ С.З-въ, Неурожай и помощь, «Новое обозрение», 1893, Т., N3399, с.1-2.

¹¹ Я.Х-нъ, Александрополь, «Новое обозрение», 1893, N3434, с.3. С.З-въ, Состояніе урожая въ эриванской губ., «Кавказское сельское хозяйство», 1893, Т., N3, с.42.

¹² Ալ., Նամակ Ալեքսանդրասպուլից, «Մշակ», 1894, №7, էջ2:

¹³ Ե. Ալ., Նամակ Ալեքսանդրասպուլից, «Մշակ», 1894, №17, էջ 2: Թովմ., Ալեքսանդրասպուլ, «Նոր-Ղար», 1894, №31, էջ 3: Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, «Մուրճ»-ի ֆոնդ, վավերագիր 101-5, թերթ 5:

Ճաշարանի գործունեությունն ամուր հիմքերի վրա է դրվում: Փետրվարի 6-ին Ալեքսանդրապոլի գավառապետի, Երևանի և Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակների փոխանորդների, տեղական վարչության նախագահի և այլոց ներկայությամբ «ճրի-էժանագին ճաշարանը» բացվում է պաշտոնապես:¹⁴ Ելույթ ունեցողները միակամ նշում են, որ հասարակության անդամներից յուրաքանչյուրն իր չափով պետք է մասնակցի այդ բարեգործական նախաձեռնությանը:¹⁵ Ճաշարանի աշխատողներն ուսուցիչ-ուսուցչուհիներ էին, մանկահասակ աղջիկներ և երիտասարդ մտավորականներ: Ճաշարանի գործունեության ընթացքում (հունվարի 24-ապրիլի 22) այնտեղ անվճար ուտելիք (հաց, «քարթոլով քիրիթ» և այլն) էր ստացել 8689 ընտանիք կամ 48262 հոգի: Նրա կարիքների համար ծախսվել էր 1584 ռուբլի:¹⁶

Ընկերության տեղական վարչությունը նախաձեռնում է նաև Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիներին սերմացու հացահատիկ բաժանելու գործը: 1894թ. մարտի 28-ին վարչությունը դիմում է կենտրոնական խորհրդին, որպեսզի նա թույլատրի այդ նպատակով օգտագործել իր մոտ եղած դրամական միջոցները, և 1000 ռուբլի բարձր տոկոսով փոխառություն է խնդրում:¹⁷ Կենտրոնական խորհուրդն անկարող է գտնվում բավարարելու վերջին պահանջը: Կազմվում է մասնագիտական հանձնաժողով, որը շրջում է գավառի մի քանի գյուղերում և արձանագրում, որ գյուղերն իսկապես թշվառության մեջ են, գյուղացիները չունեն հաց, սերմացու, ծանրաբեռնված են բարձր տոկոսով վերցրած պարտքերով, շատերը չունեն ամասուն, առկա են մուրացկանության դեպքեր:¹⁸

1894թ. ապրիլի 6-ից մինչև 21-ն ընկած ժամանակահատվածում՝ զարմանալից հողագործական աշխատանքների եռուն շրջանում, վերոհիշյալ հանձնաժողովի կողմից փոխարինաբար 1989 ռուբլու սերմացու բաժանվեց 23 գյուղերի աղքատ ընտանիքներին:¹⁹ Նշենք, որ շահառու գյուղերի թիվը մայիսի սկզբներին հասավ 42-ի, իսկ գումարը, որով գնվել էր սերմացուն՝ 3112 ռուբլու:²⁰ Տեղական վարչությունը նախատեսում է հիմնել հացահատիկի շտեմարան, բայց գործը զուլիս չի գալիս, քանի որ բաժանված սերմացուն գյուղացիները չեն կարողանում լրիվ փոխհատուցել:

Մի նկատառում. և՛ ճաշարանի պահպանման, և՛ գյուղացիներին սերմացուի տրամադրման ծախսերը «Բարեգործականի» Ալեքսանդրապոլի տեղական վարչությունը միայնակ չէր հոգում: Նա այդ նպատակով կենտրոնական խորհրդից ստացել էր 1400 ռուբլի, «Մշակ» թերթի խմբագրությունից՝ 768 ռուբլի, Ամենայն հայոց կաթողիկոսից՝ 500 ռուբլի, Ալեքսանդրապոլցիներ Խաչատուր Ղասաբյանից՝ 15 ռուբլի, Հարություն Վարդպատրիկյանից՝ 200 ռուբլի, Բաղդասար Դրամբյանի կտակարար Գրիգոր Դրամբյանից՝ 300 ռուբլի, Գրիգոր Ռաֆայելյանից՝ 300 ռուբլի և արմավիրցի Ալեքսանդր Տարասովից՝ 100 ռուբլի, իսկ Թիֆլիսից Գևորգ Հակոբյանը և Գրիգոր Բալանդուրյանը 100 ռուբլի արժողությամբ ցորեն և այլուր էին ուղարկել:

Վարչությանը նյութապես աջակցում են նաև տեղի դերասանները, որոնք 1894 թ. մարտի 20-ին Ալեքսանդրապոլի ակումբի դահլիճում կազմակերպում են գրական-

¹⁴ Ե.Ալ., Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1894, №17, էջ 2: Թուփ., Ալեքսանդրապոլ, «Նոր-Դար», 1894, №31, էջ 3:

¹⁵ Նույնը:

¹⁶ Յ.Խաչվանքեան, Նամակ խմբագրությունից, «Մշակ», 1894, №84, էջ3:

¹⁷ ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.899, թ.43:

¹⁸ Նույն տեղում, թ.48:

¹⁹ «Մշակ», 1894, №48, էջ3:

²⁰ ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.899, թ. 52: Հմմտ. Երեսնամեակ Հայոց բարեգործական ընկերության Կովկասում 1881-1911, էջ 201:

երաժշտական երեկո և հոգուտ ճաշարանի բեմադրում «Վայ իմ կորած 50 ոսկի» և «Մադոյի կտակը» կատակերգությունները:²¹

1894թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ընկերության տեղական վարչությունն օգնում է Թիֆլիսի Միխայլովյան դպրոցի աշակերտ Գևորգ Մնացականյանին, Ներսիսյան դպրոցի աշակերտներ Գարեգին Վանեցյանցին և Սենեքերիմ Շահազիզյանցին, որպեսզի նրանք կենտրոնական խորհրդից ամսական դրամական նպաստ ստանան իրենց ուսումը շարունակելու համար:²² Որոշ ժամանակ անց վարչությունը, կարևորելով «կար ու ձևի» արհեստի տարածումն Ալեքսանդրապոլում, փորձում է հինգ աղքատ օրիորդների տալ ուսման: Սակայն դա տեղում կազմակերպել չի հաջողվում, իսկ կենտրոնական խորհուրդն էլ չի ընդառաջում վարչության խնդրանքին, որ գոնե երեք օրիորդ գնար Թիֆլիս ու «Հայուհյաց բարեգործական ընկերության» կար ու ձևի դպրոցում սովորեր այդ մասնագիտությունը:²³

1895թ. ընկերության տեղական վարչության աշխատանքը գործնականում չէրևաց: 1896թ. մարտի 28-ին ալեքսանդրապոլցի մեծահարուստ Գրիգոր Դրամբյանը 500 ռուբլի է նվիրում վարչությանը: Այն ի պահ է տրվում կենտրոնական խորհրդին որպես անձեռնմխելի գումար,²⁴ որի տոկոսներով 1896-1898 թվականներին տեղական վարչությունն օգնություն է ցուցաբերում դպիր Սարգիս Միքայելյանին, Թիֆլիսի արհեստավորական և Նիկոլակսկի դպրոցների ալեքսանդրապոլցի աշակերտներ Սարգիս Քեալաշյանին և Սկրտիչ Լոռեցյանին:²⁵ Նույն թվականի մայիսին վարչությունը 1200 ռուբլի է բաժանում Ալեքսանդրապոլի գավառի աղքատ գյուղացիներին:²⁶

1896թ. վերջին մասնաճյուղն ուներ մոտ 80 գործադիր անդամ: Ալեքսանդրապոլի քաղաքապետ, տեղական վարչության նախագահ Գ. Տեր-Պետրոսյանի ջանքերով 1897թ. սկզբին նրանց թիվն ավելացավ ևս 40-50-ով:²⁷

Կովկասի «Բարեգործականն» իր մասնաճյուղերով որոշակի օգնություն է ցուցաբերել նաև արդուլիամիդյան կոտորածներից փախած արևմտահայերին: Ալեքսանդրապոլի գավառում նրանք երևացել էին դեռևս 1894թ. գարնանը: Անբերրիության հետևանքները հաղթահարող գյուղական բնակչությունը, որը դժվարությամբ էր իր օրական ապրուստն ապահովում, գրկաբաց է ընդունում աղետյալ հայրենակիցներին: Ալեքսանդրապոլում նրանք ժամանակավոր ապաստանել էին Սր Աստվածածին եկեղեցու գավթում:²⁸ Թշվառ գաղթականների վիճակը ծանրացավ հատկապես 1894թ. աշման և ձմռան ամիսներին: Եթե 1895թ. տեղական վարչությունը շոշափելի գործ չի կատարում նրանց վիճակը բարելավելու համար, ապա 1896թ. վերջին և հատկապես 1897թ. սկզբին աշխատանքներն ակտիվանում են: Այդ 25-40 գաղթական ընտանիքների մեծ մասը գյուղերից էր, որևէ արհեստի չէր տիրապետում: Նրանց հնարավորինս օգնելու նպատակով «Բարեգործականի» Ալեքսանդրապոլի մասնաճյուղը կազմակերպում է մի քանի միջոցառումներ: Դրանցից մեկը 1897թ. հունվարի 11-ին քաղաքային ակումբի դահլիճում հայ և ռուս կանանց ուժերով կազմակերպված ասիական և եվրոպական ուտելիքների վաճառքն էր, որից գոյանում է 600 ռուբլի գումար: Ակումբի

²¹ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1894, №37, էջ3:

²² ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.899, թ.54, 56:

²³ Նույն տեղում, թ.61-62:

²⁴ Նույն տեղում, թ.69:

²⁵ ՀԱԱ, ֆ.28, ց.1, գ.899, թ.70: Նույնը, գ.291, թ.3-4, 14-15:

²⁶ «Մշակ», 1896, №54, էջ 4: «Տարագ», 1896, Թ., №19, էջ 306:

²⁷ Գիւմրեցի, Նմուշներ Ալեքսանդրապոլի կեանքից, «Տարագ», 1897, №10, էջ171-172:

²⁸ Անդրանիկ, Աղեքսանդրապոլ, «Արձագանք», 1894, №117, էջ 3: Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1895, №11, էջ 4:

խորհրդի նախաձեռնությամբ կազմվում է նաև հայ-ռուսական մի հանձնախումբ, որը շրջում է քաղաքի տներում և հանգանակում ևս 1400 ռուբլի: Հավաքված դրամից 1000 ռուբլին հատկացվում է գաղթականների կարիքների համար:²⁹ Վարչությունն այս և իր ունեցած դրամական այլ միջոցներից նաև մեկ շնչի հաշվով 2 ռուբլի է բաժանում քաղաքաբնակ գաղթականներին: Շուտով տեղական վարչությունն Ալեքսանդրապոլում տեղակայված Բաքվի և Կաբարդինյան գնդերից, ինչպես նաև Աստրախանից հաց և հագուստ է ստանում գաղթականների համար:³⁰

Փետրվարի 18-ին Սբ Վարդանանց տոնի կապակցությամբ քաղաքային ակումբի դահլիճում կազմակերպվում է պարահանդես, որի 800 ռուբլի եկամտի գերակշռող մասը տեղական վարչությունն ուղղորդում է քաղաքաբնակ գաղթականների հրատապ խնդիրների լուծմանը:³¹ Ուշադրությունից չեն վրիպում նաև Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում բնակվող գաղթական ընտանիքները, որոնց վարչությունը հաց և օգտագործված շորեր է բաժին հանում:

Ընկերության տեղական վարչության 1897 - 1899թթ. գործունեության մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել:

1890-ական թթ. երկրորդ կեսը հայ կրթամշակութային կյանքի համար ծանր ժամանակաշրջան էր: Ցարական իշխանությունները հալածանքի քաղաքականություն էին վարում հայկական դպրոցների և բարեգործական ընկերությունների նկատմամբ: Դրա արդյունքում սուժեց նաև «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունն» իր մասնաճյուղերով: 1898թ. նրա Ալեքսանդրապոլի մասնաճյուղում մնացել էր 83 անդամ, իսկ 1899թ. մարտի 10-ի դրությամբ՝ ընդամենը 47-ը:³²

Երկարատև նախապատրաստական աշխատանքներից հետո ընկերության տեղական վարչությանը հաջողվեց 1899թ. մարտի 14-ին Ալեքսանդրապոլում հանդիսավոր կերպով բացել կարուճկի դպրոց, որի 14 կետից բաղկացած կանոնադրություն-ծրագիրը դպրոցի նպատակն էր հռչակում «կար ու ձև և ամեն տեսակ ձեռագործ» սովորեցնելը:³³ Ուսումնական հաստատություն կարող էին հաճախել հասարակության բոլոր խավերի գրագետ և 14 -ից բարձր տարիք ունեցող աղջիկները (բացման պահին դպրոցն ուներ 42 աշակերտ): Ուսումնառությունը տևելու էր մեկ տարի: Չքավորները սովորելու էին անվճար, իսկ մյուսները՝ ամսական 3 ռուբլի վճարով: Կրթօջախը կատարելու էր նաև զանազան իրերի պատրաստման պատվերներ:³⁴ Այն երկու տարի ժամկետով ղեկավարելու էր Օ. Անդրեասյանը: Թե ինչքան տևեց այդ դպրոցի գործունեությունը, պարզ չէ, դրա մասին տեղեկություններ չգտնվեցին: Սակայն պարզ է մի բան, որ նրա գործունեությունը երկար չէր կարող տևել թեկուզև այն պատճառով, որ 1899-ի սեպտեմբերին, Ալեքսանդրապոլում դադարեց գործել «Բարեգործականի» մասնաճյուղը, որը կարուճկի դպրոցի ծախսերի ըստ էության միակ հոգացողն էր:

1899թ. հուլիսի 6-ին Ռուսաստանի ներքին գործերի նախարարը հաստատում է «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» նոր կանոնադրությունը, որը նրան այլևս մասնաճյուղեր ունենալու հնարավորություն չէր ընձեռում: Նոր կանոնադրու-

²⁹ *Berberis L.*, Աղեքսանդրապոլ, «Արձագանք», 1897, №30, էջ 3:

³⁰ Տաճկահայ փախստականները, «Մուրճ», 1897, Թ., №2-3, էջ 396: **Շիրակացի**, Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1897, №18, էջ 2: Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1897, №21, էջ 3: **Շիրակեցի**, Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1897, №22, էջ3:

³¹ **Պ.Մ.**, Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1897, №23, էջ 2: Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1897, №31, էջ4:

³² **Բժ. Ն.Տէր-Սահակեանց**, Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1899, №53, էջ1-2:

³³ **Պ.Մ.**, Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1899, №52, էջ 2:

³⁴ Նույնը:

թյամբ՝ եղած մասնաճյուղերը ինքնուրույն գործելու իրավունք էին ստանում: Հիմնվելով վերջինիս վրա՝ Ալեքսանդրապոլի տեղական վարչությունը նոր կանոնադրության քննարկմանը նվիրված 1899թ. սեպտեմբերի 26-ի վերջին ընդհանուր ժողովում որոշեց շարունակել մասնաճյուղի գործունեությունը, արդեն որպես առանձին ընկերություն՝ հայցելով երկրամասի իշխանությունների թույլտվությունը:³⁵ Սակայն վերջիններս կտրականապես մերժեցին տեղական վարչության այս առաջարկը, և դա բնականաբար եղավ «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» Ալեքսանդրապոլի մասնաճյուղի տասնհինգամյա կենսագործունեության ավարտը:

ДЕЯТЕЛЬНОСТЬ АЛЕКСАНДРАПОЛЬСКОГО ОТДЕЛЕНИЯ
“КАВКАЗСКОГО АРМЯНСКОГО БЛАГОТВОРИТЕЛЬНОГО
ОБЩЕСТВА” В 1884-1899ГГ.

___ Резюме ___

___ Г. Айвазян ___

Александропольское отделение “Кавказского армянского благотворительного общества” открылось в 1884 году, но реально приступило к работе 19 октября 1890 года. Гуманитарные и культурно-просветительские цели, высокие идеалы общества сплотили вокруг отделения учителей, торговцев, городскую интеллигенцию и ремесленников.

Денежные средства отделения образовались от добровольных взносов членов и пожертвований широких слоев общества. Отделение выплачивало стипендию нуждающимся ученикам школы Александрополя и Тифлиса, оказывало медицинскую и экономическую помощь бедствующим слоям местных и западных армян. Открылась ремесленная школа.

После принятия нового устава, согласно которому полномочия “общества” сокращались, были закрыты все отделения, в том числе и Александропольское.

³⁵ Պ.Մ., Նամակ Ալեքսանդրապոլից, «Մշակ», 1899, № 182, էջ 2:

Լատուրա ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ

Աչքերիս լույսը, մատներիս ուժը, մտքիս խոյանքը
և այն, ինչ հանձնում եմ կտավին, մեկընդմիջտ մնալու է
մարդկանց, և դա թող լույս լինի: Ամենասատվածայինը
արարման պահին է և լույսը, որ մնալու է քեզանից հետո
և հիշեցնելու քո ներկայությունն արվեստում:
Ս. Մկրտչյան

Մուսաննա Մկրտչյանը երջանիկ ճակատագրով նկարչուհի է, քանզի կարողանում է արվեստում իրեն դրսևորել անմնացորդ, և նրա նկարչությունը, որն այդքան բարձր է գնահատվում հասարակության կողմից, դարձել է նկարչուհու կյանքի անբաժանելի մասն ու ժամանակի անդրադարձը:

Մուսաննա Մկրտչյանի սերը նկարչության նկատմամբ վաղ հասակից է դրսևորվել: Մկզբում գրեթե անգիտակցաբար, բայց հետո ըստ էության ստեղծագործելն այնքան է կլանում նրան, որ ծնողները տալիս են Ս.Մերկուրովի անվան նկարչական դպրոց: Մուսաննան նկարչուհի դառնալու իր երազանքն իրականացնում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում, որն ավարտելուց հետո վերադառնում է հայրենի քաղաք (այն ժամանակ՝ Լեռնիական) մեկընդմիջտ այնտեղ մնալու անխախտ որոշմամբ: Մկզբում՝ նկարչական դպրոցում՝ որպես ուսուցչուհի, ապա Գ-յումբու մանկական գեղարվեստի կենտրոնում՝ որպես տնօրեն. վարչական աշխատանքը, սակայն, երբեք չխանգարեց արվեստագետի բուռն ստեղծագործական կյանքին:

Մկրտչյանը կյանքը տեսնում է բազմակողմանիորեն և լիաբուխ: Ստեղծագործելիս նա չի խնայում ո՛չ ուժ, ո՛չ եռանդ, ո՛չ գուներանգներ: Իր եռանդուժը փորձում է թե՛ գեղանկարչության, թե՛ գրաֆիկայի, թե՛ փափուկ քանդակի, թե՛ ռելիեֆային գեղանկարչության բնագավառներում: Նկարչուհու կուլաժները, զանազան նյութերից ու պատրաստի իրերից կազմված տարածական-եռաչափ պատկերները, ապլիկացիաները, բատիկները, փափուկ քանդակները հանդիսատեսի հետ հաղորդակցման մոր եղանակներ ու ուղիներ են:

Գեղանկարչությունը նրա ստեղծագործական աշխարհի լավագույն բացահայտումներից մեկն է: Փափուկ, հյութալի, գունազեղ վրձնով այս նկարչուհին դիտողին գերում է իր անմիջականությամբ ու անկեղծությամբ, գույնի ու գծի հուզականությամբ: Ս. Մկրտչյանի ստեղծագործություններում ամենասովորական, առօրեական առարկաները ձեռք են բերում առանձնակի իմաստ եւ գեղեցկություն, բացահայտում նրա հոգու բովանդակությունը: Նկարչուհու հերոսների աշխարհն այնպիսին է, ինչպիսին կան նրանք իրականում՝ առանց պատրանքների ու գունազարդման: Մկրտչյանը չի ընդունում այուժենների շինծությունն ու գեղարվեստական արհեստական հնարքներ: Կարողանում է անզամ առօրեականի մեջ փնտրել ամենաէականը, այսինքն՝ իմաստակիրը, այն, ինչ խոսում է մարդկային բնության ու գեղեցկության մասին:

Ս. Մկրտչյանի վրձնումներն անչափ քնարական են ու չեն պարունակում կեղծ ու շինծու զգացմունքներ: Նրա մատյուրմորտները, բնանկարները, անզամ դիմանկարները դիտողին էնոցիոնալ այնպիսի լիցք են հաղորդում, որն ի գորտ է տալու միայն արարչաստեղծ բնությունը: Ժանրային տարբեր մոտիվներով աշխուժացված նրա բնանկարները աչքի են ընկնում պլաստիկական ընդհանրացված ձևերով, տարածական պլանների ռիթմիկ դասավորությամբ, մոնումենտալ շնչով ու իմպրեսիոնիստական

թրթռուն բազմերանգությամբ, պլեներային գեղանկարչությանը բնորոշ գունային թարմությամբ:



Նկարչուհին իր աշխատանքներին անուններ չի տալիս, որևէ կերպ չի պարտադրում դիտողին (բացի դիմանկարներից). դա հնարավորություն է տալիս դիտողին ծավալվելու իր երևակայության տիրույթներում: Նկարի ընկալումը, այնուամենայնիվ, սուբյեկտիվ երևույթ է:

Նկարչուհու ստեղծագործությունների զգալի մասը կազմում է նրա գրաֆիկական աշխատանքները, որտեղ նա դրսևորում է գրաֆիկական շեշտված մտածողություն և ստեղծագործելու ինքնատիպ ձեռագիր:

Նրա յուրաքանչյուր գիծ իմաստավորված է: Նկարչուհու գրաֆիկական աշխատանքներից պետք է առանձնացնել «Գյումրի՛, իմ սեր» շարքը: Այս շարքում մեր առջև հառնում հարազատ քաղաքի՝ Ալեքսպոլ-Գյումրու անցած-գնացած դեպքերն ու դեմքերը, կյանքն ու կենցաղը, անկրկնելի ոգին ու շունչը, բնիկ գյումրեցիներին բնորոշ կերպարներն ու կոլորիտային տիպերը: «Գյումրի» շարքում նկարչուհին փորձում է մոռացությունից փրկել և նոր սերնդի համար պահպանել հին Գյումրին՝ առանձնահատուկ կոլորիտով ու ծեսի վերածված ավանդույթներով:

Մերը Գյումրու նկատմամբ նկարչուհին հավանաբար ժառանգել է իր սիրելի ուսուցիչ, շնորհաշատ նկարիչ Հակոբ Անանիկյանից: Շարքը հուշերի, հիշողությունների կերպավորում է, որը թելադրված է նկարչուհու հոգեվիճակով: Այստեղ հոգու վիճակը դարձել է թելադրող, իսկ ձեռքն ընդամենը վերարտադրել է հոգու թելադրանքը:

Նկարչուհին խոստովանում է, որ «Գյումրին» իր համար թեմա չէ, այլ ծննդավայր, մանկություն ու պատանեկություն, կյանք ու ուրախություն, որն առանց վարանելու մվիրել է իր հարազատ քաղաքին: Նա անչափ նախանձախնդիր վերաբերմունք ունի իր քաղաքի նկատմամբ: Հավատացած է, որ Գյումրին չպետք է ընկալել որպես սոսկ քաղաք, որովհետև այն մի ողջ ժամանակահատվածի ազգագրական պատմություն է, ինքնատիպ կոլորիտ, որի անհետացումը ցավալի կորուստ կլինի մեր մշակույթի համար:

Բազմաշնորհ նկարչուհու աշխարհը չի կարելի սահմանափակել կերպարվեստի որևէ ձևի մեջ: Այն ավելի ընդգրկում է և համադրում է կերպարվեստի գրեթե բոլոր տեսակները: «Այս զարմանահրաշ կնոջ մեջ զարմանալիորեն համադրված են ոգու





արիությունը, քնքշությունն ու մարդկային հմայքը, կազմակերպչական անուրանալի տաղանդը, անմարելի կենսագործական էներգիան, ոգևորվելու և ոգևորելու հազվագյուտ կարողությունը»,-իրավացիորեն նկատել է արվեստաբան Հենրիկ Իգիթյանը:



Արվեստագետի նորարարական, փորձարարական որոնող մտքի արգասիք են «փափուկ քանդակները», քանդակի ու գեղանկարչության սինթեզ ռելիեֆային գեղանկարչական աշխատանքների շարքերը: Մ. Սկրոչյանը խոստովանում է, որ ինքը չի սիրում իր ստեղծագործություններով ձանձրացնել մարդկանց: Նրա անհանգիստ բնավորությունն անընդհատ որոնում է ինքնարտահայտման նոր կերպեր: Մովորական թերթի կտորները նկարչուհու հմուտ ձեռքերում ոգի են առնում, մարմնավորվում, դառնում «Գիննագիստուհի», «Մպասուհի», «Թագուհի» կամ պարզապես «Գյունրեցի ամուսիններ»: Սկրոչյանի փափուկ քանդակները դիմում են դիտողի ոչ այնքան զգացմունքին, որքան նրա աչքին ու գեղարվեստական ճաշակին: Իսկ տիկնիկների հայտնվելը

Մկրտչյանի արվեստում բացատրվում է նկարչուհու՝ քատրոնի նկատմամբ ունեցած մեծ սիրով ու դերասանուհի դառնալու անկատար ցանկությամբ: Սակայն ճակատագիրը նրա համար այլ ճանապարհ էր նախատեսել՝ գույնի ու գծի, լույսի ու հղացքի, անուրջների ու արարման:

Նկարչուհին իր զարմանալի աշխատասիրությամբ ու ինքնանվիրումով ամենուր հասնում է ցանկալի արդյունքի:



Այսօր, ավելի քան երբևէ, Գյումրին կարիք ունի այնպիսի նվիրված ու ազնիվ անհատականությունների, ինչպիսին Մ.Մկրտչյանն է, որն իր հոգում կրում է արարման բերկրանքը և այն իր սիրելի Գյումրուն ծառայեցնելու հավատամքը:

ХУДОЖНИК СУСАННА МКРТЧЯН

___ Резюме ___

___ Լ. Ատանեսյան ___

Свой творческий талант Сусанна Мкртчян проявила почти во всех областях изобразительного искусства: живописи, графике, рельефной живописи, мягкой скульптуре. В своих пейзажах, натюрмортах, портретах художница выделяется непосредственностью, искренностью, мастерством цвета и линии.

Серия “Моя любовь - Гюмри” рассказывает о быте, образе жизни старого Гюмри, о колорите и возрожденных традициях обрядов. А рельефный пейзаж-это результат беспокойного характера и экспериментаторской мысли художницы.

У художницы есть слово, и она еще восхитит своим сотворением.

Հասնիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՇԻՐԱԿՅԱՆ ՊԱՐԵՂԱՆԱԿՆԵՐԸ Ա. ԲՐՈՒՏՅԱՆԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Շիրակի ժողովրդական երաժշտական ստեղծագործությունն իր ինքնատիպ նկարագրով վաղուց արժանի տեղ է զբաղեցրել հայագիտական հետազոտություններում: Այստեղ հատկապես կարևորվել է ժողովրդական երգը՝ քաղաքային և գեղջկական տարրեր ժանրային տարատեսակներով: Այս հսկայածավալ ժառանգության մեջ ստվերում է մնացել պարային արվեստը, որի ամբողջական նկարագրի՝ առավելապես շարժողական տեքստի գրառման ցավալի բացակայությունը նպաստել է ավանդական մշակույթի ինքնատիպ, բազմաթիվ արժեքավոր տարրեր կորոլ այս ժանրի հանդեպ անհարկի զգուշավորության կամ էլ անուշադրության մատնելու իրողությանը:

Ժամանակին գիտական-բանահավաքչական աշխատանքները ճիշտ և նպատակային կազմակերպելու դեպքում շիրակյան ավանդական պարի բազմաթիվ մուշներ կորսված չէին լինի և, միգուցե, այսօր մեր համայնքային-ընտանեկան արդի հանդիսություններն ու ժողովրդական տոնախմբություններն այսքան անիմաստ և դատարկաբան պարերով չէին լցվի:

Մեր հաղորդման նպատակը այս ցավալի երևույթի արմատների և ծնող պատճառների բացահայտումը չէ, այլ դրանց կանխարգելման ջանքերն ավելացնելը և շիրակյան պարերի առայժմ սոսկ գիտական ամփոփ նկարագրության միջոցով դրությունն հնարավորինս շտկելը, ինչպես նաև այդ պարերի մասին հստակ պատկերացում կազմելը: Ազգագրական, բանահավաքչական բազմաբնույթ նյութերում այժմ էլ կարելի է հայտնաբերել առանձին պարերի նկարագրություններ, որոնք հնարավորինս ճշգրտելուց, միևնույն պարի մի քանի տարբերակներ համադրելուց հետո հնարավոր կլինի վերականգնել այդ պարերը և հարստացնել մերօրյա ազգային մշակութային կյանքը:

Մենք անդրադարձել ենք մի աղբյուրի, որտեղ վերոնշյալ ժանրերին վերաբերող բավական հարուստ նյութեր են հավաքված: Դրանք առայսօր լուրջ քննության չեն ենթարկվել և չեն դրվել ազգագրական համեմատական վերլուծության մեջ: Խոսքը վերաբերում է հայ անվանի երաժիշտ-բանահավաք Արշակ Բրուտյանի «Ռամկական մրմունջներ»-ի առաջին ժողովածուին,¹ որտեղ ժողովրդական երգերի կողքին տեղ են գտել նաև բացառիկ խնամքով և բանահավաքչական նախանձախնդությամբ գրաված շուրջ 63 պարեղանակներ:

Արդեն առիթ ունեցել ենք նշելու, որ դժվար է գերազնահատել Ա.Բրուտյանի բանահավաքչական, մանկավարժական, խմբավարական և համերգային գործունեության դերն ու նշանակությունը Ալեքսանդրապոլի մշակութային կյանքում: Դա լեցուն ու ազգանպաստ գործ էր, որն անգնահատելի դեր կատարեց քաղաքի մշակութային կյանքում:²

Բանահավաքչական աշխատանքը, որը թանկ ու նվիրական էր Ա.Բրուտյանի համար, իր ժամանակի չափանիշներով պետք է գնահատել որպես բացառիկ արժեքավոր ու առաջադիմական: Ժողովրդական երգն ու նվագը որպես մնայուն արժեքներ իրենց կայուն տեղը զբաղեցրեցին խորը մտավորականի բազմալորտ զբամունքների

¹ Ա.Բրուտյան, Ռամկական մրմունջներ, Եր., 1985:

² Հ.Հարությունյան, Արշակ Բրուտյանը և Շիրակի երաժշտական կյանքը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.14, Գյումրի, 2011, էջ 111:

մեջ: Այսօր նրա ջանքերի շնորհիվ հնարավոր է ուրույն պատկերացում կազմել Շիրակի ժողովրդական երաժշտության բնորոշիչների մասին: Այս առումով Շիրակը բավական խայտաբղետ ու բազմաոճ երաժշտական մշակույթի կրող էր:

Հիշենք, որ Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթը, որը ձևավորվեց XIX դարի առաջին կեսին, սկզբում հիշեցնում էր բազմազան մի խճանկար: Բնակիչները գերազանցապես հայեր էին, պատերազմական հայտնի իրադարձություններից հետո սկսված մեծ ներգաղթով Կարսից, Էրզրումից, Բայազետից, նաև Բասենից, Մուշից, Ալաշկերտից այստեղ հանգրվանած: «Մի կողմից՝ հայ բազմատարր ազգային դիմագծի բացարձակ գերիշխանությունը, մյուս կողմից՝ ազգային փոքրամասնությունների ինքնատիպ մշակութային դրսևորումներն ու դրանց փոխհարաբերությունները աստիճանաբար ձևավորեցին մի նոր հայկական քաղաքային մշակութային կյանք, որն արդեն XIX դարի վերջում բնութագրվում էր իր կայուն ու ինքնատիպ ավանդույթներով: Աստիճանաբար կայունացավ երգ-երաժշտության բազմաժանր համակարգ՝ XX դարի սկզբում ձեռք բերելով երաժշտաճանկան տեղային հատկանիշներ: Ընդհանուր առմամբ, Ալեքսանդրապոլն ապրել է հագեցած երաժշտական կյանքով: Այստեղ հասարակական բոլոր խավերն ունեցել են երաժշտագեղագիտական հատուկ պահանջներ, որոնք էլ խթանել են այդ արվեստի զարգացումը»:³

Իրավացիորեն է գնահատել երաժշտագետ Ա.Սարյանն հայ քաղաքային ժողովրդական մշակույթին բնորոշ յուրահատկությունները, նշելով, որ քաղաքում ստեղծվել է ինքնատիպ «արտահայտչական միջոցների համակարգ, որը ձևավորվել, մշակվել է լադախնտոնացիոն տարբեր ակունքների մասնակցությամբ, ազգային և այլազգի երաժշտության արտահայտչամիջոցների օրգանական միահյուսմամբ ու յուրացմամբ գոյացրել է ոճական տիպեր՝ կապված այս կամ այն ակունքի, սկզբունքի յուրացման չափի, աստիճանի հետ»:⁴

Մշակութային այսպիսի իրականության մեջ էլ Ա.Բրուտյանի կողմից գրի են առնվել այն պարեղանակները, որոնց անդրադարձել ենք սույն հաղորդման մեջ: Անտարակույս, դրանք լայնորեն տարածված են եղել ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ Շիրակի տարածաշրջանի մյուս բնակավայրերում:

Նախքան այդ պարեղանակների քննությունը, կարևոր ենք համարում *պարի*՝ որպես XIX դարի կեսից Շիրակում և հատկապես Ալեքսանդրապոլում ձևավորվող հայկական մշակույթի բաղադրիչին, անդրադարձը:

Հնարավոր է այսօր լիարժեքորեն պատկերացնել պարի, որպես ավանդական մշակույթի հստակ գործառույթները հիշյալ ժամանակշրջանում: Եթե գյուղական միջավայրում գերակշռել են ծիսական պարերը, որոնք, օրացուցային բնությամբ պայմանավորված, կատարվել են հասակակից տղամարդկանց կամ կանանց, նաև՝ խառը խմբերով, այս կամ այն ծեսի և տոնախմբության ժամանակ,⁵ ապա քաղաքում պարի գործառույթը եղել է ավելի բազմազան: Թեև այստեղ ևս կարևորվել են օրացուցային, արարողակարգային ավանդույթները, սակայն քաղաքային ժամանցն իր բազմակերպությամբ կարևոր մի ասպարեզ էր ներկայանում համարժեք պարերի կիրառման համար: Ընտանեկան ճոխ հավաքույթներն ու խնջույթներն ասպարեզ են բերել յուրահատուկ պարային ավանդույթներ, որոնք կարծես պոկվել, անջատվել են ծիսական հենք, միտք ու բովանդակություն կրող հնավանդ երաժշտական-շարժողական համալիրից: Դրանք ևս կատարվել են հասարակական տոնախմբությունների ժամանակ սրահներ-

³ Հ.Հարությունյան, *Երաժշտական կյանքն Ալեքսանդրապոլում*, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ.11, Գյումրի, 2008:

⁴ Ա.Սարյան, *Հայ քաղաքային ժողովրդական երգերի հատընտիր*, Եր., 2010, էջ 6:

⁵ Շ. Լիսիցյան, *Старинные пляски и театральные представления армянского народа*, т.2, Եր., 1973.

րում կամ բացօթյա հրապարակներում անցկացվող բազմամարդ միջոցառումների ընթացքում:

Ա.Բրուտյանի գրառած պարեղանակների անվանումներն ընդունելով որպես կողմնորոշիչ, փորձել ենք դրանք խմբավորել ըստ բովանդակության և ժանրային պատկանելության: Այս ընթացքում հենվել ենք պարագետ Ժ.Խաչատրյանի արժեքավոր հետազոտության վրա, որը նվիրված է Ջավախքի ժողովրդական պարերին:⁶ Մեր դիտարկումները ցույց տվեցին, որ բրուտյանական գրառումների անվանումների հիմնական մասը հանդիպում է Ժ.Խաչատրյանի կողմից Ջավախքում հավաքած նյութերում: Կարծում ենք, որ սա օրինաչափ երևույթ է ոչ միայն Շիրակի և Ջավախքի իրար մոտ գտնվելու շնորհիվ, այլև այն պատճառով, որ XIX դարի վերջում հայկական երկու գավառներում էլ հայտնի աշխարհաքաղաքական գործընթացների պատճառով գերիշխող դարձավ Կարին-Էրզրումի բանահյուսական տարրը:

Ա.Բրուտյանը պարեղանակները գրառել է հիմնականում Ալեքսանդրապոլում, հայկական ձայնանիշերով: Վերջինս հնարավորություն էր տալիս շատ արագ, հընթացքս նվազին գրի առնել երաժշտական տեքստը: Ակնհայտ է, որ նա հատկապես կարևորել է մի շարք պարեղանակների տարբերակային հատկանիշներն ու կատարողական անհատական նրբերանգները: Օրինակ «Էրզրումի թաք պար»-ի տակ նա գրառել է հետևյալը. «Պիտի գրել ուստա Խաչատուրից»:⁷ Ժողովածուի խմբագիր Մ.Բրուտյանն իրավացիորեն նկատել է, որ «հավանաբար, օրինակը չի բավարարել Ա.Բրուտյանին և նա ուստա Խաչատուրի օգնությամբ այն ստուգելու կամ մեկ այլ տարբերակ գրառելու կարիք է ունեցել»:⁸

Գրառված պարեղանակներն ըստ ժանրային պատկանելության հետևյալ խմբերն են կազմում.

ա. Ծիսական պարեր

Թարս պարեր⁹ - 155, 156, 172, 173 արագ, Դուգ պարեր - 161, 166 վեր-վեր, 194, 195, 198 կյոր, Կյոր պար - 158, Ետ ու առաջ 157 ա,բ, Հին բուլուլ-175, 176, Շավալի-178, Շախշե-բաշխե-179, Չամբար-ամի-180, Թամզարա-183 Արզրումի հայկական պար, Յայի-196, 202, 203, Ակուրի- 204, Շալախ-212, Քոչարի-213, Մշու պար-218:

բ. Կենցաղային պարեր՝

- տեղանունի նշումով – Շուվալերի 168, Էրզրումի 171, Բագվա 184, 191, Երևանի 189, 190, Ախալքալակի 160, 162, Ախալցխա 181, 186, Վարաբաղի 211, Մաստարա 210, Կողբա 201, Ուռում-պարի 174.
- կանացի անունով – Շիրին, 163, Թեշինկո 165, Նարաթ խանում 177, Կեկել 187, Գյուլամբար 216.
- կովկասյան պարեր – Ուզունդարա 192, 193, 205, Հին Միրզայի 200, Թարաքյանա 209, Թարաքյանա-Միրզայի 169.
- պարաքայլերի նշումով - Երեք ոտք 170, Տասնչորս 208.
- պարերգեր – Վարդ կոշիկս 214, Քյանդրբագ 199, 206:

Պարեղանակների այս հավաքածուն աչքի է ընկնում ազգային ուրույն նկարագրով, հայ ժողովրդական երգ-երաժշտությանը բնորոշ լադախնստոնացիոն դարձվածք-

⁶ Ժ. Խաչատրյան, Ջավախքի հայ ժողովրդական պարերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ.7, Եր., 1975:

⁷ Ա. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 219:

⁸ Նույնը:

⁹ Պարեղանակների անվանումները բնագրային են, դրանց հաջորդող թվային նշումներն այդ պարերի հերթական համարներն են ժողովածուում:

ներով, նվագարանային երաժշտությանը հարազատ մետրառիթմական հարուստ պատկերներով:

Ծիսական պարերը կատարվել են խմբերով՝ կլոր կամ աղեղնաձև շարքով: Դրանք ունեցել են և՛ պարզ և՛ բարդ պարաձևեր: Օրինակ՝ բարդ պարաձևերով կլոր պարերի շարքից է Շտ ու առաջ պարը, որի մասին Ժ.Խաչատրյանը գրում է, որ իր տարբեր տեսակներով այն տարածված է «Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում: ...Այն պարում են թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում: Քաղաքներում կատարում են դանդաղ ու հանդիսավոր, գյուղերում՝ արագ ու թռիչքներով: Միրված պար է, կատարում են միայն տղամարդիկ /հետագայում՝ կանայք և/: Հնում պարը կատարել են հատուկ օրերի և միայն ծածկի տակ՝ շինություններում: Դրսում արգելվել է պարել: Ներկայումս պարում են ամեն տեղ, ցանկացած ժամանակ /այսինքն՝ հարսանիքներին, տոնախմբություններին ու պարերեկույթներին»:¹⁰ Յուրահատուկ է պարի անվանումը, որն իրականում նշանակում է ձախ և աջ: Սակայն առաջին պարաքայլը սկսվում է աջ ոտքից: Պարն ավարտվում է դարձյալ աջ ուղղությամբ կատարվող շարժումով, ինչը յուրահատուկ հմայական նշանակություն է ունեցել՝ մերժելով պարային գործողությունը ձախ ոտքով անցանկալի ավարտը:

Ծիսական պարերը քաղաքային մշակութային մթնոլորտում յուրօրինակ փոխակերպումներ են կրել: Ըստ Հ.Պիկիչյանի, դրանցից շատերն ընդգրկվել են հայոց համբարական արարողակարգերում: Բարեկենդանի և Չատկի տոնական խմբույթներում կատարվել են հատուկ ծիսական պարեր, որոնց խորհրդապաշտական հենքում արհեստավոր վարպետի աշխատանքի օրհնությունն էր, ինչպես նաև արարչագործական կարգի վերահաստատումը «փրկ հայոց տիեզերաբանական պատկերացումների պարային արտահայտություն»:¹¹

Ա.Բրուտյանի գրառումներում կան մի քանի Թարս պարեր: Հետաքրքիր է, որ ժողովածուն սկսվում է հենց այս պարի երկու տարբերակներով, ինչը սրանց հանդեպ առանձնահատուկ ուշադրության մասին է խոսում: Հայտնի է այս պարատեսակի հնագույն ծագումն ու արտահայտչական խորհրդավորությունը՝ սգալու, չար ուժերին մոլորեցնելու, այլևայլ դժբախտություններից ու անհաջողություններից խուսափելու ծիսական նշանակությամբ:

Առաջին պարն ունի երկմաս կառուցվածք, երկուսն էլ ծավալվում են հիպոդորիական-եռլական միևնույն ց տոնիկայով, փոխվում է պարի տեմպը. առաջինը՝ չափավոր-ծանր, երկրորդը՝ հորդորակ, վեր-վեր, միջակ: Պարեղանակից բնորոշ են մանր կտորակված, կետագծային ռիթմապատկերների պարբերականությունն ու նուրբ զարդեկեցները:

Մեզ անչափ հետաքրքրեց նմանատիպ մի պարի նկարագրություն, որը հանդիպում ենք Ժ.Խաչատրյանի վերոնշյալ աշխատության մեջ: Դա Կարծախում Վ.Տեր-Մինասյանից գրառած դեպի ձախ գնացող պարերից ամենամաքողականն է՝ ըստ պարագետի բնորոշման: «Պատկանում է *Տապիսագ* պարերի խմբին: Կատարվում է Վոդ զարդելով: Ըստ Տեր-Մինասյանի, պարը կատարել են տարբեր սեռի ու հասակի համագյուղացիներ, հազվադեպ: Պարը միշտ ունեցել է *Պարբաշի* և *Պարի պոչ*: Բռնել են *ումուզ-ումուզի*»:¹² Նկարագրության շարունակությունը լիովին համապատասխան

¹⁰ Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 59:

¹¹ Հ. Պիկիչյան, Պարը հայոց համբարական արարողակարգում, Ծիսական պարը հայոց մեջ, գիտաժողովի նյութեր, Եր., 2002, էջ 101:

¹² Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 54:

նում է Ա.Բրուտյանի գրառած պարին. «Պարն ունի երկու մաս. առաջինում տեմպը դանդաղ է, երկրորդում՝ արագ: Ռիթմը երկու մասերում էլ հավասարաչափ է»:¹³

Այնուհետև և Ժ.Խաչատրյանը բերում է պարաքայլերի ամբողջ համալիրը: Ցավոք նա էլ չի գրառել պարեղանակը: Սակայն վերջում պարագետը կատարում է մեզ համար անչափ կարևոր դիտարկում. «Գրեթե նույն պարային քայլերով *թարս պար* Լեոնիականից գրանցել է բանահավաք Ն.Նիկողոսյանը:¹⁴ Մա հաստատումն է այն հարցի, որ պարը տարածված է եղել նաև հարևան շրջաններում, կամ հավանաբար այս կողմերում տարածվել է Կարնոհայության գաղթի միջոցով»:¹⁵

Կարծում ենք բանահավաքչական տարրեր նյութերի համադրումը հնարավորություն կընձեռի վերականգնելու վերոնշյալ պարերի հնարավորինս ամբողջական նկարագիրը՝ տեղային հատկանիշներով: «Միևնույն պարատեսակը, - նշել է Վ.Բրդյանը, - որքան էլ ընդհանրացվել և համազգային ճանաչում է ստացել, այնուամենայնիվ պահպանել է ազգագրական տվյալ շրջանի յուրահատկությունները»:¹⁶

Ա.Բրուտյանի գրառումներում, ինչպես վկայում են վերնագրերը ավելի մեծ թիվ են կազմում կենտ /թաք/ կամ զույգ պարերը, որոնց պարաքայլերն աչքի են ընկել հնարավոր ազատությանը և կատարողական անկաշկանդությամբ: Դրանց պարեղանակներն ունեն փոքր ձայնածավալ, նվագարանային ազատ իմպրովիզացիոն բնույթի զարգացումներ: Ըստ Գ.Լևոնյանի, դրանցից շատերը սազանդարների մտահղացումներն են եղել, որոնք, օրինակ՝ նվիրվել են կանանց ու հետո էլ հիշվել նրանց անուններով:¹⁷

Ա.Բրուտյանի շիրակյան գրառումները ավանդական պարային մշակույթի անզուգական ընտրանի են, որի համակողմանի ուսումնասիրությունն առջևում է:

ШИРАКСКИЕ ТАНЦЕВАЛЬНЫЕ МЕЛОДИИ В ЗАПИСЯХ А.БРУТЯНА

___ Резюме ___

___ А. Арутюнян ___

Традиционный танец - важнейшая составная в фольклоре Ширака. К сожалению, двигательный текст этих танцев в свое время не был зафиксирован, и до нас дошли только танцевальные мелодии. Около 63 танцевальных мелодий и наигрышей сохранилось в записях видного фольклориста конца 19-го века Аршака Брутяна, который собирал фольклорные материалы в основном в Александрополе.

В сообщении сделана попытка типологической характеристики этих танцев, которые нотированы тщательно и многовариантно. В основном представлены круговые обрядовые и индивидуальные бытовые танцы, названия которых встречаются также в фольклоре джавахкских (т.е. каринских) армян.

¹³ Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 54:

¹⁴ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության սեկտորի արխիվ, Անհատ բանահավաքներ, գ. III, N3, Ն. Նիկողոսյան, «Շուրջպարի ձևեր»:

¹⁵ Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 54:

¹⁶ Վ. Բրդյան, Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 182:

¹⁷ Ժ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 76:

ՇԻՐԱԿԻ ԱՐԴԻ ԱՐՎԵՍՏՆԵՐԸ

(ըստ 2012թ. իրականացված դիտանցման)

Շիրակը Հայաստանի պատմազգագրական այն եզակի մարզերից է, որի բնակչության տնտեսական կենցաղում դարեր շարունակ երկրագործության ու անասնապահության կողքին կարևոր տեղ են գրավել տնայնագործությունն ու արհեստները: Դա պայմանավորված էր նախ արհեստաշատ Գյումրի /Ալեքսանդրապոլ-Լենինական/ քաղաքի գոյությամբ, ինչպես նաև մարզի ռազմավարական դիրքով: Հայաստանի թերևս ոչ մի պատմազգագրական շրջանում, առավել ևս քաղաքում, ավանդական արհեստներն այդպես երկարակյաց ու պահպանողական չեղան, ինչպես Շիրակում, որտեղ ավանդության ինչն ու ժամանակակիցը գուգահեռ, գոյատևելով, ինչպես նաև համաձուլվելով, նոր որակներ ծնեցին:

Աղետալի երկրաշարժը, որը մարդկանց զրկեց կենսապայմաններից, սպասանցումը շուկայական հարաբերություններին, որը խորացրեց սոցիալական հակասությունները և քաղաքական բարդ իրադրությունը, որում հայտնվեց հանրապետությունը, ծանր հետևանքներ ունեցան Շիրակի բնակչության համար: Ինչ-որ ձևով գոյատևելու համար շիրակցիների մեծ մասը վերադարձավ դեպի ավանդական տնտեսաձևերը՝ զբաղվելով «պապենական» արհեստներով:¹ Անկախ պետականության ստեղծումով նոր հեռանկարներ բացվեցին ավանդական արհեստների զարգացման համար: Պետությունը խթանում էր արհեստների ու տնայնագործության աճն ու բազմացումը՝ տրամադրելով վարկեր, օգնելով արհեստավորական արտադրանքի իրացմանը, համարելով դրանք ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններից դուրս գալու միջոցներից մեկը:

XX դարավերջին և XXI դարասկզբին ավանդական արհեստների և տնայնագործական զբաղմունքների մեջ կատարված փոփոխությունները վերհանելու, ավանդական մշակույթի պահպանվածության աստիճանը գրանցելու, արժեքները փաստաթղթավորելու նպատակով 2012թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին Շիրակի մարզում իրականացվեց դիտանցում /նոնիտորինգ/:² Դիտանցման աշխատանքների ընթացքում կատարվեց մարզում առկա արհեստների սկզբնական ուսումնասիրում՝ գրանցում, նկարագրում, փաստաթղթավորում: Ստորև ներկայացվում են դիտանցման արդյունքները, որոնք համադրվել են XIX դ. վերջին առկա նյութերի և տվյալ խնդրին առնչվող պատմազգագրական գրականության մեջ լուսաբանված տվյալներին:³ Վերոհիշյալ նյութերի նախնական վերլուծությունը թույլ տվեց ամրագրել և բացահայտել մի շարք կարևոր խնդիրներ.

ա) Շիրակի մարզում և Գյումրի քաղաքում գործող ավանդական արհեստների պահպանվածության գրանցման արդյունքում ստեղծվեց արհեստների և տնայնագործական մակարդակի զբաղմունքների ցուցակ, ինչպես նաև արհեստավորների

¹ Գ. Աղանյան, Գ. Բազեյան, Տնային տնտեսությունները Շիրակի բնակչության արդի կենցաղում, ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտականաշխատություններ», հ. V, Գյումրի, 2002, էջ 71:

² Դիտանցումն իրականացվել է ՀՀ մշակույթի նախարարության «Հնվի. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

³ Դիտանցման ընթացքում հավաքած բոլոր նյութերը գտնվում են Հնվի. Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոնում և ՀՀ մշակույթի նախարարությունում:

տվյալների ու նրանց աշխատանքների համապարփակ բազա, որոնց հիման վրա կազմվել է համապատասխան մանրամասն քարտեզ (տե՛ս տախտակ 1):

բ) Գիտանցումը լույս սփռեց արհեստների զարգացման գործընթացի ու դրա արդյունքում կատարված փոփոխությունների, մասնավորապես նախորդ դարում և մեր օրերում ավանդական արհեստների ներսում կատարված փոխակերպումների, մասնագիտական վերաորակավորումների, ինչպես նաև որպես դրանց արդյունք հանդիսացող նոր արհեստագործական ճյուղերի առաջացման խնդրի վրա:

գ) Բացահայտվեցին տվյալ ժամանակահատվածում պահպանված արհեստների հարատևման պատճառները, որոնք պայմանավորված են տարբեր ժամանակահատվածներին բնորոշ տնտեսական և սոցիալական պայմանների թելադրությամբ առաջացած պահանջարկով (օր. ՀՀ-ում էներգետիկ ճգնաժամի տարիներին թիթեղագործական և վառարանագործական արտադրանքի նկատմամբ առաջացած մեծ պահանջարկը և որպես հետևանք՝ այդ արհեստների համատարած վերածնությունը):

դ) Արհեստավորների սեռատարիքային խմբերի, կանանց և տղամարդկանց ներգրավվածության տարածամասնակյա և համաժամանակյա (խոսքը վերաբերում է տնայնագործական զբաղմունքների ավանդական և ժամանակակից եղանակներին) համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ արհեստների սեռային բաժանման մեջ էական փոփոխություններ չեն կատարվել:

ե) Հաշվի առնելով տնայնագործական արտադրության ձևերի և դրանց տեխնոլոգիական առանձնահատկությունների գրանցումը, նաև նոր զբաղմունքների (տիկնիկագործություն, մաքրամե, գորելենագործություն և այլն) առանձնահատկությունները, որոնք հիմնականում դրսեկ ազդեցությունների և միջնակութային հաղորդակցության հետևանք են/ հնարավորություն տվեց հաստատագրել ձեռքի աշխատանքի ու ավանդական աշխատանքային պահպանումը մասնակի ձևափոխություններով, որոնք կապված են էլեկտրական էներգիայի ու որոշ նոր սարքավորումների կիրառման հետ:

զ) Գեղարվեստական արհեստներում ավանդական զարդանախշերի ու նորամուծությունների հարաբերակցության ուսումնասիրությունը բացահայտել մի շարք էական փոփոխություններ, որոնք կապված են բնակչության արժեհամակարգի փոփոխության, նոր մշակութային համակարգի առաջացման ու օտարամուտ այլ երևույթների հետ:

Ինչպես վերը նշվեց, Շիրակի արհեստագործական մշակույթի հիմնական կրողը և բազմազանությունն ապահովողը ի սկզբանե Ալեքսանդրապոլ-Լենինական-Գյումրի քաղաքն էր, որը մեր օրերում ևս պահպանել է ավանդական զբաղմունքների մի մասը: XIX-XXդդ. քաղաքային արհեստների մեջ առանձնանում էին հետևյալ մեծ ճյուղերը կամ «մայր արհեստները». *շինարարական արհեստներ* (քարտաշ-որմնադրություն, աղբյուրաշինություն, ծեփագործություն, ներկարարություն և այլն), *մետաղամշակություն* (երկաթագործություն, զինագործություն, ոսկերիչ-արծաթագործություն, պղնձագործություն, ձուլագործություն և այլն), *փայտամշակություն* (հյուսնատաղձագործություն, կահագործություն, տակառագործություն, տախտակագործություն և այլն), *ոստայնակություն* (ասեղնագործություն, ժանեկագործություն, կտավագործություն, գորգագործություն և կարպետագործություն, պարանագործություն, զգրարություն և այլն), *սննդի արտադրություն* (հացթուխություն, հրուշակեղենի արտադրություն, մսագործություն, զարեջրագործություն, օղեթորում և այլն), կաշեգործություն, օճառագործություն, ներկելու և դաջելու հետ կապված արհեստներ և այլն: Յուրաքանչյուր մայր արհեստ, ինչպես ընդունված էր հայկական բոլոր նշանավոր արհեստավորական քաղաքներում, տրոհվել էր խիստ մասնագիտացված ճյուղերի (օրի-

նակ՝ երկաթագործության մեջ առանձնացել էին բուն դարբինները, փականագործները, խառատները, անասունի և կոշիկի պայտեր պատրաստողները, պայտարները, երկաթե օղեր պատրաստողները, անվագործները, քիթեղագործները, ձուլողները և այլք. ոսկերչության մեջ՝ արծաթագործները, ոսկերիչները, սևադասպատողները, ցանցկեն թելքաշ արծաթագործները և այլք. զինագործության մեջ՝ դանակագործները, հրացանագործները, սրեր և դաշույններ պատրաստողները, խզակոթ շինողները և այլք. դերձակության մեջ՝ տեղական և եվրոպական տարազ կարողները):⁴

Դեռևս XIX դ. երկրորդ կեսին Ռուսական կայսրությունում տեղի ունեցող խոշոր տնտեսական փոփոխությունները, սոցիալական-քաղաքական վայրիվերումները և հատկապես կապիտալիստական հարաբերությունների բուռն զարգացման արդյունքում արդյունաբերության հսկայական աճը անդրադարձան հայոց ավանդական արհեստագործության տարբեր ճյուղերի վրա: Եվ դեռևս հիշյալ ժամանակաշրջանում արդեն անկման միտումներ էին նկատվում հայոց ավանդական տնայնագործության և արհեստների մեջ:⁵

Մեր դիտանցման արդյունքում ստացված նյութերի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Գյումրիում ներկա դրությամբ պահպանվել են հիմնական մայր արհեստները և դեռևս նախորդ դարի կեսերից ասպարեզից դուրս են եկել դրանցում գոյություն ունեցած բազմաթիվ ճյուղավորումները: Համեմատության և պատկերավորության համար ստորև բերվող աղյուսակում ներկայացնում ենք ավանդական և 2012թ. դրությամբ առկա արհեստները, ինչպես նաև նորաբանություններ համարվող զբաղմունքները:

Ալեքսանդրապոլ-Գյումրու արհեստների ցանկ

<i>№</i>	<i>Արհեստները 19-րդ դ. վերջին</i>	<i>Արհեստները 2012թ.</i>
1	Աղբյուր կառուցողներ	չկա
2	Աղիքից լար պատրաստողներ	չկա
3	Աղյուսագործներ	չկա
4	Ապակեգործներ (ապակի գցողներ)	ապակի գցողներ
5	Անվագործ դարբիններ	չկա
6	Ասեղնագործողներ	ասեղնագործողներ
7	Ատաղձագործներ	ատաղձագործներ
8	Արծաթագործներ	արծաթագործներ
9	Բամբակ գցողներ	չկա
10	Բրուտներ	խեցեգործ
11	Գամ կամ մեխեր պատրաստողներ	չկա
12	Գզարներ	չկա
13	Գլխարկ կարողներ	գլխարկ կարողներ
14	Դաշույն և թուր պատրաստողներ	չկա
15	Դանակ պատրաստողներ	չկա
16	Դարբիններ	դարբիններ
17	Դեղին մետաղ ձուլողներ	չկա
18	Դերձակներ (ասիական)	չկա
19	Դերձակներ (եվրոպական)	դերձակներ
20	Երկաթե օղեր և շղթաներ պատրաստողներ	չկա

⁴ Գ. Աղայան, *Երկրագործությունը, արհեստները և համբարությունները, Գյումրի. Քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2012, էջ 275-276:*

⁵ Նույնի, *Ավանդական արհեստների փոխակերպումները Ալեքսանդրապոլ-Լենինականում (XIXդ. երկրորդ կես-XXդ. առաջին կես), ԳԱԱ ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», հ. IX, Գյումրի, 2006, էջ 47:*

21	Երկարաճիտք կոշիկ կարողներ	չկա
22	Զինագործներ (հրացանագործներ)	չկա
23	Զոլավոր (մետաքսե) կտոր գործողներ	չկա
24	Թաղիքագործներ	թաղիքագործներ
25	Թամբագործներ	չկա
26	Թամբի փայտե կմախքը պատրաստողներ	չկա
27	Թամբի (ավանակի փալանի)խտտե մասը պատրաստողներ	չկա
28	Թել ոլորողներ	չկա
29	Թել ներկողներ	չկա
30	Թիթեղագործներ	թիթեղագործներ
31	Թոնիք շինողներ	չկա
32	Ժանյակ պատրաստողներ	ժանյակ պատրաստողներ
33	Խաղաղորդներ (դաբաղողներ)	չկա
34	Լար (կաշվից) պատրաստողներ	չկա
35	Խավով կտոր գործողներ	չկա
36	Ծաղկողներ	չկա
37	Ծեփագործներ	ծեփագործներ
38	Ծխամորճ պատրաստողներ	չկա
39	Կազմարարներ	չկա
40	Կարմիր գույնով ներկողներ	չկա
41	Կապույտ գույնով ներկողներ	չկա
42	Կոշկակարներ	կոշկակարներ
43	Կիսակոշիկ կարողներ	չկա
44	Կոմիդրագործներ	չկա
45	Կոշիկի պայտ պատրաստողներ	չկա
46	Կտավագործներ	չկա
47	Հասարակ մետաղից զարդ պատրաստողներ	չկա
48	Համետագործներ	չկա
49	Հին աման հալողներ	չկա
50	Հնակարկատներ	հնակարկատներ
51	Հողաթափ կարողներ	հողաթափ կարողներ
52	Հյուսններ	հյուսններ
53	Հրացանի կայծքար և ձգան պատրաստողներ	չկա
54	Հրացանափող պատրաստողներ	չկա
55	Հրացանի խզակոթ պատրաստողներ	չկա
56	Ճախարակագործներ	ճախարակագործ/չարխըջի/
57	Մագագործներ կամ այծի մագ մանողներ	չկա
58	Մագից պարաններ գործողներ	չկա
59	Մաշկակարներ	չկա
60	Մետաքսագործներ	չկա
61	Մուշտակ կարողներ	չկա
62	Նալ (պայտ) պատրաստողներ	չկա
63	Նուրբ բրդյա գործվածք պատրաստողներ	չկա
64	Ոսկերիչներ	ոսկերիչներ
65	Ոսկեթելից տրեզ պատրաստողներ	չկա
66	Ոսկեթել բանվածք անողներ	չկա
67	Որմնաղիքներ	որմնաղիքներ
68	Չիթ դաջողներ	չկա
69	Պայտարներ	չկա

70	Պղինձ (կաթսա) պատրաստողներ	պղնձագործ /մուշուրբա սարքող/
71	Պղնձագործ-անագապատողներ	չկա
72	Ջուլիակներ	չկա
73	Մայլի անիվ պատրաստողներ	չկա
74	Մանրագործներ	չկա
75	Վառարան պատրաստողներ	քիթեղագործներ
76	Վերնագգեստ (բրդյա) կարողներ	չկա
77	Տախտակ ձևողներ	չկա
78	Տրեխ կարողներ	չկա
79	Փականագործներ	դարբիններ
80	Փայտի թամբ պատրաստողներ	չկա
81	Քարտաշներ	քարտաշներ
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
1	Գորգագործություն	
2	Գորելենագործություն	
3	Տիկնիկագործություն	
4	Մաքրամե	
5	Խաչքարագործություն	
6	Կահույքագործներ	
7	Կաշվի գեղարվեստական մշակում	
8	Հուլունքագործություն	
9	Մետաղի գեղարվեստական դրվագում	
10	Փայտի գեղարվեստական փորագրություն	

Աղյուսակը թույլ է տալիս ակնառու տեսնել մեկ ու կես հարյուրամյակում քաղաքային արհեստների մեջ կատարված փոփոխությունները: Բնակչության կյանքի փոփոխությունները, կենցաղավարման նոր ձևերը, արդյունաբերական ձեռնարկությունների առկայությունն ու արտադրանքի մատչելիությունը և բազում այլ գործոններ տնտեսությունից դուրս են մղել նախկինում բարձր զարգացած շատ արհեստներ: Պահպանվել են այն արհեստները, որոնց արտադրանքի պահանջարկը այսօր էլ մեծ է ինչպես քաղաքի, այնպես էլ մարզի գյուղական բնակչության մեջ: Այժմ փորձենք ներկայացնել դրանք առանձին-առանձին:

Դարբնությունը կարծես նոր վերելք է ապրում: Ուրախսալի է այն, որ արհեստով զբաղվողների գերակշիռ մասը դրա ժառանգական կրողն է, որ գերազանցապես ներկայացնում է Գյումրու տոհմիկ երկաթագործների՝ Պապոյանների, Մնոյանների, Մարտիրոսյանների, Գևորգյանների ընտանիքները: Հատկանշական է, որ արհեստով զբաղվում են եղբայրներն իրենց որդիների, հորեղբորորդիների հետ: Քանի որ դարբնությունը պահանջում է անհրաժեշտ տարածք, ուստի նրանք բոլորն էլ ունեն արհեստանոցներ, որոնք գտնվում են կա՛ն տներին կից, կա՛ն այլ վայրում՝ առանձին հասցեով: Դրանք, մեկ-երկու բացառությամբ, իրենց պապական արհեստանոցներն են: Գյումրու դարբինները հիմնականում պահպանել են մաս ավանդական տեխնիկատեխնոլոգիական հնարքներն ու հմտությունները, սակայն կիրառում են մաս ժամանակակից որոշ նորամուծություններ, մասնավորապես էլեկտրական օդամղիչներ (փուքսի փոխարեն), մեխանիկական մամլիչ-մուրճ (մեծ կռանի փոխարեն): Միայն Մնոյաններն են, որոնք շարունակում են աշխատել մեծավ մասամբ ավանդական տեխնիկատեխնոլոգիական միջոցների ու հնարքների կիրառմամբ: Մարտիրոսյան ընտանիքից վարպետ Գագիկը փորձում է իր գիտելիքները փոխանցել մաս ուրիշների, այսինքն՝ պահում է աշակերտներ, որոնք առայժմ աշխատում են իր արհեստանոցում: Հատկա-

պես գովելի է այն փաստը, որ Գագիկ Մարտիրոսյանը, կարևորելով ու արժևորելով հարազատ քաղաքի արհեստավորական ավանդույթներն ու դրանք հաջորդ սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը, ստեղծում է ուսումնական կենտրոն, ուր, բացի դարբնությունից ծրագրել է իրականացնել փայտամշակության, խեցեգործության, գեղարվեստական գործվածքի ուսուցում:

Բավականին մեծ է նաև դարբինների պատրաստած իրերի տեսականին՝ աշխատանքային գործիքներից սկսած մինչև մեծածավալ դարպասներ, ջահեր, բազրիքների, պատուհանների ճաղավանդակներ, կենցաղային ու դեկորատիվ-կիրառական այլ առարկաներ, որոնք հիմնականում պատրաստվում են պատվերով: Այսօր այդ գործերում նկատելի է նաև գեղարվեստական ձևավորումների բազմազանությունը, որը մեծ պահանջարկ ունի բնակչության հատկապես հարուստ խավերի մեջ:

Դարբինների նշված ընտանիքների անդամներից շատերը գտնվում էին հանրապետությունից դուրս: Պարզվում է, որ մեր վարպետները պահանջված են նաև այլ հանրապետություններում, մասնավորապես Ռուսաստանում:

Պղնձագործությունն այսօր ներկայանում է մի քանի անհատների գործունեությամբ, որոնցից հիշատակության է արժանի Ժորա Ժամակոչյանը, քանի որ նա ևս ժառանգական արհեստի կրող է (հայրը նշանավոր մուշուրբա պատրաստող Սուրեն Ժամակոչյանն է եղել). պատրաստում է Գյումրվա ավանդական պղնձյա ջրաման /մուշուրբա/ հին՝ «պապենական» եղանակով: Արհեստին տիրապետում է նաև որդին, սակայն հիմնականում վարպետ Ժորան է ավելի շատ աշխատում: Այս իրի նկատմամբ ևս վերջերս մեծացել է հետաքրքրությունը, քանի որ այն համարվում է նաև Գյումրու ավանդական կենցաղին բնորոշ առարկա ու հաճախ պատվիրվում է ինչպես օտարազգի, այնպես էլ տեղի հյուրերին նվիրելու համար:

Պղնձագործության մյուս ճյուղը, որ այսօր առկա է Շիրակում, մետաղի գեղարվեստական դրվագումն է, որ բնակչության մեջ հայտնի է ռուսերեն *չեկանկա* բառով: Սրա կրողները փոքրաթիվ վարպետներ են, որոնք աշխատում են կա՛ն իրենց համար, կա՛ն շատ փոքր քանակի արտադրանք տալով, քանի որ դրա պահանջարկը, ցավոք, քիչ է:

Ոսկերչությունն ու *արծաթագործությունը* ևս, ինչպես դարբնությունը այսօր կարևոր տեղ են գրավում քաղաքային արհեստների մեջ, և դրանով զբաղվողների թիվը համեմատաբար մեծ է: Սակայն, ցավոք, նրանցից միայն երկուսն են, որ արհեստի ժառանգական կրողներ են՝ Աշոտ Տարախչյանը և Յուլյա Կոչտոյանը: Ընդ որում, նրանցից Յուլյա Կոչտոյանի համար դա հիմնական աշխատանք չէ, այլ կողմնակի զբաղմունք: Վերջինս, քանի որ պահել է իր պապի աշխատանքային գործիքներն ու կաղապարները միայն պատվերի դեպքում պատրաստում է Գյումրվա ավանդական զարդեր՝ ապարանջաններ, գոտիներ, մատանիներ ու ականջօղեր: Ցավոք, շատ սուղ են տվյալները մյուս ոսկերիչների մասին, սակայն կարելի է փաստել, որ նրանց աշխատանքներում գերակշռում է արդի պահանջներին համապատասխանող, ոչ ավանդական, նորաձև, դրսից ներմուծված զարդերի պատրաստումը (հիմնականում ոսկյա շղթաներ): Անհատական աշխատանքներ ստեղծող վարպետներն աշխատում են միայն արծաթով ու որոշակի պատվերներով:

Արհեստների մյուս խումբը կազմում է փայտի մշակման հետ կապված արհեստները, այդ թվում *հյուսն-ատաղձագործությունը*, *կահույքագործությունն* ու *փայտի գեղարվեստական փորագրությունը*: Այս արհեստներից միայն ատաղձագործների մեջ են հանդիպում ժառանգական արհեստը կրողներ: Նրանցից հիշատակության է արժանի Գուրգեն Պետրոսյանը, որը տոհմիկ ճախարակագործների (չարխրջի) ընտանիքից է: Վերջինս այսօր էլ շարունակում է աշխատել իր հոր արհեստանոցում ու

օգտագործել նրա գործիքները: Բարձրակարգ վարպետ է Գուրգենը, որը սրբորեն պահում է ավանդական տեխնոլոգիական բոլոր հնարքները և պատրաստում կատարյալ իրեր՝ ընդհուպ մինչև նրբատաշ բաժակներ:

Ավելի մեծ թիվ են կազմում կահույքագործները, քանի որ մարզում և հատկապես Գյումրիում կան բազմաթիվ արհեստանոցներ: Դեռևս XIX-XXդդ. այեքայոցի, կարմիր փայտով աշխատող կահագործների փառքը դուրս էր եկել քաղաքի և գավառի շրջանակներից: Օգտագործելով Մարիդամիշի հայտնի անտառների սամշիդ փայտատեսակը՝ նրանք ստեղծում էին արվեստի իրական նմուշներ հանդիսացող զգեստապահարաններ, զգրոցներ, կոմոդներ, հայելու շրջանակներ և այլն, որոնք զարդարում էին քաղաքային բնակարանի ներսույթը: Հիշյալ կահագործ վարպետները շարունակեցին պարապել իրենց արհեստով մաս XXդ. երկրորդ կեսին՝ առավելապես օգտագործելով ընկուզենու փայտը, որից պատրաստված կահույքը բավական լայն տարածում ուներ մինչև գործարանային մամլաթեփով և ֆաներայով պատրաստված տեղական և արտասահմանյան կահույքի ներմուծումը տեղացիների կենցաղ: Մեր օրերում կարծես նկատվում են փայտի կահույքի նկատմամբ պահանջարկի մեծացում և կահագործության ավանդական եղանակների վերածնունդ: Ելնելով վերոհիշյալից՝ մեր կազմած ցուցակում ընդգրկվել են միայն այն վարպետները, որոնք աշխատում են փայտով (մնացածները օգտագործում են մոբորյա նյութեր) և կահույքը հավաքում են ձեռքով: Մրանք, բնականաբար, փոքր թիվ են կազմում, սակայն ստեղծում են հետաքրքիր աշխատանքներ: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ պատրաստվող կահույքը ևս, քանի որ արվում է պատվերով ու համապատասխանում է պատվիրատուի ճաշակին, միշտ չէ, որ կրկնում է ավանդական տեսականին և պարունակում է ժամանակակից դիզայնի տարրեր: Կահույքի արհեստանոցներում են աշխատում մասնաշխատողները, որոնք դուր ու լուսամուտ են պատրաստում: Նրանց թիվը ևս փոքր է, քանի որ այսօր բնակչության մեջ առավել մեծ պահանջարկ ունեն մետաղապլաստե դռներն ու պատուհանները:

Ավանդական կահույքն ու բնակարանի ավանդական ներսույթը շատ ճաշակով ներկայացված է միայն դարբին Գագիկ Մարտիրոսյանի «Շռանկյունի» կոչվող կենտրոնի ազգային ուտեստը համտեսելու համար առանձնացված հատվածում, որը ավանդականի ու արդիականի հաջողված համադրություն է:

Փայտի գեղարվեստական փորագրությունը նորամուտ արհեստներից է, որը կարելի է նույնիսկ արհեստ չհամարել, այլ արվեստ: Դեկորատիվ-կիրառական արվեստի այս ճյուղը՝ որպես առանձին միավոր, Շիրակում և Գյումրիում չի հիշատակվել, ուստի բացակայում է մաս վերը ներկայացված աղյուսակում որպես առանձին արհեստ: Դա չի նշանակում, որ նման վարպետներ չեն եղել առաջ, այլ այն, որ դրանով զբաղվել են այլ մասնագետներ (փորագրիչներ): Ինչ վերաբերում է ցուցակագրված վարպետներին, ապա նրանք միջին ու երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ են, որոնց մի մասը ինքնուս է, մյուսը սովորել է Գյումրու (մախկին Լենինական) գեղարվեստատեխնիկական ուսումնարանում, որը մարզի ժողովրդական արվեստի տարբեր ճյուղերի զարգացման գործում էական դեր է ունեցել ու այժմ էլ ունի: Հատկանշական է, որ փայտի գեղարվեստական փորագրության ուսուցում է իրականացվում այսօր ոչ միայն ուսումնարանում, այլև կրթական այլ հաստատություններում, մասնավորապես «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում: Դա նշանակում է, որ կիրառական արվեստի այս ճյուղը զարգացման նոր հեռանկարներ ունի:

Փայտի գեղարվեստական փորագրության աշխատանքները հիմնականում դեկորատիվ նշանակության իրեր են՝ խաչքարի կրկնօրինակներ, տարբեր չափերի ու ռճավորումների խաչեր, ազգային թեմաներով հարթաքանդակներ, թեմատիկ բոլորա-

քանդակներ և բազմաբնույթ տարրեր իրեր, որոնք արված են որպես հուշանվեր վաճառքի համար կամ ուղղակի որպես անհատական ստեղծագործության դրսևորում: Այդ առումով հատկապես հետաքրքիր են Հայկ Տոնոյանի աշխատանքները, որոնք բարձրակարգ ստեղծագործություններ են և ընդգրկում են ինչպես մեծերին, այնպես էլ մանուկներին վերաբերող թեմաներ: Փայտի փորագրության վարպետները, որպես կանոն, առանձին արհեստանոցներ կա՛ն չունեն, կա՛ն դրանք տեղակայված են իրենց տան որևէ անկյունում:

Շիրակի մարզի արհեստների մեջ հնագույն ժամանակներից շատ տարածված են *շինարարական արհեստները*, որով նրանք հայտնի էին նաև տարածաշրջանից դուրս: Այս արհեստները, որոնք առանձին ճյուղավորումներով ներկայացնում են ինչպես բուն շինարարության հետ կապված արհեստները՝ քարտաշությունը, պատշարությունը, որմնադրությունը, ծեփագործությունը, այնպես էլ շենքի արտաքին հարդարման հետ կապված քարի գեղարվեստական փորագրությունը, այսօր էլ շարունակում են գերակայել: Սովորաբար քարտաշները տիրապետել են նաև գեղարվեստական փորագրության հմտություններին: Ալեքսանդրապոլ քաղաքի նորակառույց շենքերի գեղարվեստական հարդարումն այն հիմքն է, որի վրա զարգացել է ժամանակակից քարտաշությունն ու փորագրությունը: Իր էությանը շինարարական արհեստները շրջիկ են՝ այսինքն՝ դրանք չեն պահանջում կոնկրետ տարածք (արհեստանոց), ինչը պարտադիր է այլ արհեստների համար: Դա է պատճառը, որ արհեստավորները հնուց անտի պատվել են երկրով մեկ՝ պատվերներ կատարելու համար: Այսօր էլ, ինչպես խորհրդային տարիներին, նման վարպետները մեծավ մասամբ աշխատում են իրենց բնակավայրերից դուրս, հատկապես Ռուսաստանում:

Ինչ վերաբերում է Գյումրու վարպետներին, ապա նրանց մի մասն է քաղաքում աշխատում՝ հիմնականում մասնավոր պատվերներ կատարելով: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում նաև փորագրողները, որոնց աշխատանքը կարելի է տեսնել Գյումրու վերջին տասնամյակում կառուցված շենքերի ճակտոններին, քիվերին ու այլ հատվածներում:

Շիրակի մարզի քարագործության մեջ նոր երևույթ է *խաչքարագործությունը*, որը մեր օրերում մեծ տարածում է գտել: Դա պայմանավորված է ազգային արժեքների նկատմամբ նոր պահանջով՝ հատկապես երկրաշարժից հետո, երբ խաչքարը դարձավ հուշարձանի ամենաընդունված ու սիրված ձևը (կապված է նաև խաչքարը որպես գերեզմանաքար դնելու մերօրյա սովորույթի հետ): Դիտանցման նյութերը վկայում են արվեստ-արհեստի այս ճյուղի տարածվածությունը ոչ միայն քաղաքում, այլև գյուղերում, ինչը դրական երևույթ է:

Արհեստների մյուս խումբը կազմում է գեղարվեստական գործվածքը՝ *ասեղնագործությունը, ժանեկագործությունը, հուլունքագործությունը, գորգագործությունը, կարպետագործությունը, գորելենը, մաքրամեն*: Մրանք բոլորն էլ դեկորատիվ-կիրառական արվեստն են ներկայացնում, սակայն գորելենն ու մաքրամեն խորհրդային տարիներին են մուտք գործել կենցաղ: Վերը բերված աղյուսակում ընդգրկված են միայն ասեղնագործությունն ու ժանեկագործությունը, քանի որ դրանք Շիրակի մարզում և հատկապես Գյումրիում ավանդաբար շատ տարածված ու զարգացած արհեստներ են եղել: XIX դարավերջին և XX դարասկզբին քաղաքում հայտնի վարպետներին ճանաչում էին անվանական: Արվեստի այս ձևերը, ինչպես ցույց են տալիս դիտանցման նյութերը, որոշ փոփոխություն են կրել. պակասել են դրանցով զբաղվողները, քչացել է տեսականին, փոխվել է գեղագարդման համակարգը:

Գորգագործությունն ու կարպետագործությունը բացակայում են աղյուսակում, քանի որ դրանք տնայնագործական բնույթ էին կրում ու ավելի տարածված էին գյուղե-

րում, քան քաղաքում (իսկ ցուցակը վերաբերում է քաղաքին): Այդ պատճառով դրանք ներկայացվել են նորամուտ արհեստների ցանկում գորելենի ու մաքրամեի հետ, չնայած որ, ինչպես ասվեց, Շիրակում ունեն վաղնջական արմատներ: Ցավոք, այսօր գորգագործ-կարպետագործ վարպետների թիվը սակավ է, իսկ գյուղերում իսպառ բացակայում է, քանի որ այդ արհեստն այլևս պահանջարկ չունի: Քաղաքում աշխատողները իրենց հմտությունները ձեռք են բերել ժամանակին քաղաքում գործող Հայգորգի մասնաճյուղ հանդիսացող գորգագործական ֆաբրիկայում աշխատելու տարիներին: Այսօր նրանք գործում են փոքր չափերի դեկորատիվ գորգեր ու կարպետներ՝ ավանդական տեխնիկայով ու զարդանախշերով, որոնք վաճառում են հուշանվերների սալոնում: Ձեռագործ գորգի պահանջարկի պակասը, սակայն չի խանգարում, որ Գյումրու երկու կրթական հաստատությունում՝ «Ընտանիք» կենտրոնում ու Ազգային գեղագիտության կենտրոնում երեխաներին սովորեցնեն այս արհեստները:


Կիրառական արվեստի նորամուտ երկու ձևից (գորելեն ու մաքրամե) մեծ տարածում է ստացել գորելենը (խոսքը վերաբերում է ասեղով արված տեխնիկային), ինչը բացատրվում է նրանով, որ այն համեմատաբար հեշտ կատարվող է և արագ յուրացվող: Երեխաները հատկապես սիրով են աշխատում այս տեխնիկայով ու պատրաստում տարբեր թեմաներով դեկորատիվ աշխատանքներ, որոնք, բնականաբար, թեմատիկ առումով հաճախ հեռու են ազգայինից: Դա չի նշանակում, որ բացակայում են հայրենասիրական թեմաներով գործերը, սակայն դրանք մեծ թիվ չեն կազմում:

Նորամուտ արհեստների մեջ շատ հետաքրքիր է կաշվի գեղարվեստական մշակումը: Կաշեգործությունը նոր արհեստ չէ, սակայն այս դեպքում խոսքը գնում է արդեն մշակված կաշվի գեղարվեստական մշակման մասին, որն իրավամբ նոր երևույթ է: Արհեստը ներկայացնող վարպետը՝ Հմայակ Նիկոլյանն իր որդու հետ պատրաստում է դեկորատիվ տարբեր իրեր՝ գրքի կազմեր, դրամապանակներ, ակնոցի ու բջջային հեռախոսի պատյաններ, պատից կախելու թեմատիկ աշխատանքներ՝ հասարակության տարբեր խավերի ճաշակին համապատասխան: Մեծ մասամբ դրանք աստվածաշնչյան թեմաներով են արված, սակայն կան նաև ազգային թեմաներով առանձին գործեր: Այս արհեստը նա ինքնուրույն է սովորել՝ կարդալով համապատասխան գրականություն:

Ժամանակակից դեկորատիվ-կիրառական արհեստների շարքում, անշուշտ, որպես նորաբանություն կարելի է համարել նաև տիկնիկագործությունը: Հայկական ավանդական տիկնիկ-պուպրիկները պատրաստվել են տնայնագործական եղանակով հիմնականում կանանց կողմից, որպես խաղալիք կամ որոշակի տոնածխական գործառույթ ունեցող պարագաներ: Մեր օրերում տիկնիկների պատրաստումը բարձրացել է պրոֆեսիոնալ աստիճանի, իսկ տիկնիկները չունեն նախկին տոնածխական և հավատալիքային գործառույթներ: Դրանք պատրաստվում են գեղարվեստական սալոններում վաճառվելու նպատակով, և մի մասը ներկայացնում է որոշակի թեմատիկա. օր. սիրված դերասան Սհեր Մկրտչյանի մարմնավորած տարբեր դերերի ոճավորված պատկերներ, հաճախ նաև ազգային տարագ հիշեցնող պուպրիկներ:

Շիրակի և ի մասնավորի Գյումրու արհեստների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ չնայած բոլոր փոփոխություններին, արհեստների բազմաթիվ ճյուղերի վերափոխումներին՝ այս տարածաշրջանում մայր արհեստներից շատերը պահպանվել են և պետական ու հասարակական որոշակի աջակցության շնորհիվ կարող են զարգացման նոր մակարդակ գրանցել՝ հնարավորություն տալով նաև լուծելու սոցիալական բազմաթիվ խնդիրներ:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ (2012Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ)



РЕМЕСЛА ШИРАКА**(по материалам мониторинга 2012г.)****___ Резюме ___****___ К. Базеян ___**

В статье обобщены данные, собранные в Ширакском марзе, касающиеся положения дел в сфере ремесел и кустарных промыслов. Результаты мониторинга показывают, что в некогда богатом ремеслами Шираке, и особенно в Гюмри, сохранились в основном традиционные отрасли ремесел: металлообработка, камнетесение, деревообработка, рукоделие и др. Вместе с этим появились новые, до недавнего времени не характерные для региона, виды ремесел, которые вошли в обиход благодаря существованию в Гюмри профтехнических училищ художественного направления. Автор вкратце описывает положение дел в традиционных и новоявленных ремеслах и производит сравнительный анализ с помощью соответствующей таблицы. К статье прилагается карта распространения ремесел в Ширакском марзе.

Հասմիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՎԱՐԴԱՎԱՌՅԱՆ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԸ

(համառոտ նկարագիր)

Ուխտագնացությունը հոգևոր-բարեպաշտական սովորույթ է: Ուխտագնացությանը հավատացյալ քրիստոնյան հաղորդակցվում է Աստծուն ակնկալելով ամենատարբեր իղձերի իրականացում, երախտագիտություն է հայտնում Աստծուն կամ պարզապես իր խոնարհումն է բերում նվիրական սրբավայրերին և նորոգում իր ուխտն Աստծու հետ:

Ուխտագնացության երևույթը ձևավորվել է առաջին դարում, երբ քրիստոնյաներն այցելել են Երուսաղեմ՝ տեսնելու Քրիստոսի կյանքի հետ կապված սրբավայրերը՝ Բեթղեհեմը, Գողգոթան, Հիսուսի գերեզմանը ևն¹:

Հայոց աշխարհը հարուստ է ուխտավայրերով, որոնք ընդհանուր առմամբ կարելի է տիպաբանել հետևյալ կերպ. կանոնական սրբավայրեր և սրբություններ, որոնք ի սպաս են դրվել Հայ եկեղեցու եկեղեցաշինական ավանդույթներին հետևողությանը և սրբազորված են, ինչպես՝ վանք, եկեղեցի, մատուռ, խաչքար, և երկրորդ խումբը՝ ոչ կանոնական՝ ժողովրդի կողմից սրբացված շինություններ, առարկաներ, վայրեր՝ Թուխ մանուկ, սրբազան բովանդակության գրվածքներ, առարկաներ, ծառ, աղբյուր, հնավայր և այլն:

Մույնով ներկայացված են^{2*} Շիրակի պատմաազգագրական մարզի (ՊԱՄ)³ վարդավառյան, ինչպես նաև այն ուխտավայրերը, որոնք մարդաշատ են լինում նաև Վարդավառին. Վանք, եկեղեցի. Հառիճավանք⁴, Մարմաշենի վանք⁵, Սբ Աստվածածին կամ Յոթվերք եկեղեցի⁶: Մատուռներ. Դալթաղչի Սբ Հովհաննես⁷, Նորաշենի Սբ Հովհաննես⁸, Բասենի Սբ Ոսկան⁹: Թուխ մանուկ. Չաղա կամ Սբ Գրիգոր Լուսավորիչ¹⁰,

¹ Ուխտ, «Քրիստոնյան Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 1032:

² Դաշտային ազգագրական նյութերը (ԴԱՆ) գրառվել են 2012-ին Շիրակի մարզի Վահրամաբերդ, Կապս, Բասեն (Ախուրյանի նախկին վարչական շրջան), Հառիճ, Փանիկ, Լուսակերտ, Լեռնակերտ (Արթիկի նախկին վարչական շրջան), Սառնաղբյուր (Անիի նախկին վարչական շրջան), Արագածոտնի մարզի Նորաշեն (Արագածի նախկին վարչական շրջան) գյուղերից:

* Խորին շնորհակալություն ենք հայտնում մասնագիտությամբ աստվածաբան և բանասեր Արմինե Պողոսյանին, ով աջակցել է ԴԱՆ-ի գրառման աշխատանքներին:

³ Շիրակի ՊԱՄ-ի մեջ մտնում են Աշոցքի (Լուկասյանի), Ախուրյանի, Սպիտակի, Արթիկի, Անիի վարչատարածքային շրջանները և Գյումրի (Կումայրի, Ալեքսանդրապոլ, Լենինական) քաղաքը: Տե՛ս Դ. Վարդումյան, Հայաստանի հիմնական պատմաազգագրական մարզերի ընդհանուր բնութագրումը (XIX-XXրդ.), «Պատմա-բանասիրական հանդես», 2004, № 2, Եր., էջ 57:

⁴ Ադ. Մխիթարեան, Փշրանք Շիրակի ամբարներից, ԲԱԺ, հ. 1, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, Ռ-ՅԾ-1901, էջ 163: Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Հառիճ), էջ 7, 8, 9, 10:

⁵ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Վահրամաբերդ), էջ 18:

⁶ Կ. Բազեյան. Գ. Աղանյան, Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները գյումրեցիների տոնածիսական վարքագծում, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Եր., 2011, էջ 80:

⁷ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Կապս), էջ 17:

⁸ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Փանիկ, Հառիճ, Նորաշեն) էջ 3, 5, 9, 33:

Նորաշենի Սբ Հովհաննեսը ներկայումս գտնվում է Արագածոտնի մարզի Արագածի նախկին վարչական շրջանի Նորաշեն գյուղի մոտ, իսկ Դալթաղչի Սբ Հովհաննեսը՝ Լոռու մարզի Սպիտակի նախկին վարչական շրջանի Հարթագյուղում: Նշված վարչական շրջանները Շիրակի հետ ունեն հետևյալ պատմական ընդհանրությունները. Սպիտակը մաս է կազմել Շիրակի ՊԱՄ-ի (տե՛ս Դ. Վարդումյան, նշվ. աշխ., էջ 57), իսկ 1849թ. վարչական նոր բաժանմամբ Երևանի նահանգի մաս կազմող Ալեքսանդրապոլի գավառի կազմում ընդգրկվել են Աշոցքի, Ախուրյանի, Անիի, Արթիկի, Սպիտակի, Արագածի և Գուգարքի նախկին շրջանները (տե՛ս

Սբ Գևորգ¹¹: Աղբյուրներ. Ջերմուկ¹², Կաթնաղբյուր¹³, Հարսնասարի տակ գտնվող Լուսաղբյուր¹⁴: Տան սուրբ. Վահրամաբերդի Կարմիր Ավետարան¹⁵: Համալիր սրբատեղի-ուխտավայր. Թոփառվա Ճակ քար¹⁶, Ղազանլվա մատուռ կամ Ղալաղուլի Ղազանչի¹⁷: Գյուղի ուխտավայրերն են արևմտյան եզրին գտնվող տեղական նշանակության խոյաձև աղբյուրը, 7-րդ դարի մի եկեղեցի¹⁸ և Վանք եկեղեցին¹⁹:

1. Վանք և եկեղեցի

Հատիճավանքը կամ Ղփչաղը²⁰ գտնվում է Ծիրակի մարզի Հատիճ գյուղում: Վարդավառյան ավանդական գլխավոր ուխտատեղիներից է՝ ոչ միայն տեղական, այլև մարզային նշանակության: 7-13-րդ դարերի վանական այս համալիրը,²¹ հոգևոր և կրթամշակութային խոշոր կենտրոն լինելուց զատ, նաև մեծահռչակ ուխտավայր է, մասնավորաբար 19-րդ դարի երկրորդ քառորդից սկսած, երբ այստեղ է հանգրվանել հրաշագործ «Յոթվերք» սրբապատկերը: Այդ մասին հիշատակում է Ալիշանը. «... Յետ այնր ասի Մարգսի ուրուք երիցու բնակեալ աստ և ջնջեալ զմասն մի արձանագրութեանցն, և դարձեալ ամայի մնացեալ, մինչև ի գալ գաղթականին Կարուց (1829-36), որոց առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոս Խաժակն ի Հոռոմոսի վանաց, այսր փոխադրեաց զմիաբանսն և նորոգեաց զտեղիս, ուր եկն և Պօղոս Ջալաղեան առաջնորդն վանաց Բասենոյ, բերեալ ընդ իւր զհրաշագործ պատկերն Աստուածածնի, որով ուխտատեղի եղև Հատիճ»²²: Ա. վրդ. Մխիթարյանցը հավելում է. «...ի սակս հրաշագործ պատկերին անդր լինելոյ, լինի և մենաստան Հատիճոյ հռչակավոր ուխտատեղի ողջոյն վիճակին Ծիրակայ՝ ունելով զամն ողջոյն զմեծագումար նուէրս ջերմեռանդութեան ժողովրդոց»²³:

Հ.Մարգսյան, Ալեքսանդրապոլի գավառի էթնոաշխարհագրական բնութագիրը (19-րդ դարի վերջ), ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 1., Գյումրի, 1998, էջ 142): Վարչական միավորումից զատ, Ծիրակը և Արագածոտնն ունեն նաև բնակչության արևմտահայ զանգված, քանի որ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանից 1830-ականներին հայերի հոծ զանգվածներ գաղթեցին Արևելյան Հայաստան և հաստատվեցին նաև Ծիրակում և Արագածոտնում (տես՝ Գ.Վարդույան, նշվ. աշխ., էջ 56): Հետևաբար ներկայիս Ծիրակի մարզին սահմանակից Հարթազյուղ և Նորաշեն գյուղերի բնակչությունը լեզվամշակութային բազում ընդհանրություններ ունի Ծիրակի մարզի բնակչության հետ: Ըստ այդմ՝ օրինաչափ է նաև ընդհանուր սրբավայր-ուխտատեղի ունենալու հանգամանքը, ինչպես օրինակ՝ Նորաշենի Սբ Հովհաննեսը:

⁹ Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Բասեն), էջ 22:

¹⁰ Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Սառնաղբյուր), էջ 25:

¹¹ Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Կապս), էջ 15, 16:

¹² Խորին շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ Գրիգոր Աղանյանին՝ տվյալը հայտնելու համար:

¹³ Հ.Աբրահամյան, ԳԱՆ (Լեռնակերտ) էջ 2, Սառնաղբյուր, էջ 24:

¹⁴ Հ.Աբրահամյան, ԳԱՆ (Փանիկ), էջ 3:

¹⁵ Կ.Բազեյան, Գ. Աղանյան, նշվ. աշխ., էջ 81: Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Վահրամաբերդ), էջ 18:

¹⁶ Ա. Պողոսյան, ԳԱՆ (Փանիկ), էջ 6: Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Վահրամաբերդ), էջ 18:

¹⁷ Հ.Աբրահամյան, ԳԱՆ (Փանիկ), էջ 3:

¹⁸ Պետական ցուցակ ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Ծիրակի մարզ, Հավելված ՀՀ կառավարության 2004 թ. սեպտեմբերի 9-ի № 1270-Ն որոշման, էջ 72-73:

¹⁹ ՀՀ մարզերի աշխարհագրական օբյեկտների անվանումները, Ծիրակի մարզ, www.cadastre.am, էջ 42:

²⁰ Հատիճ գյուղը նախկինում կոչվել է Ղփչաղ (տես՝ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», 3, Կ-Ն, Եր., 1991, էջ 363): Հավանաբար գյուղի անվանումն էլ փոխանցվել է վանքին:

²¹ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1948, էջ 135:

²² Ղ. Ալիշան, Ծիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ-Ս. Ղազար, 1881, էջ 163:

²³ Ա. վրդ. Մխիթարեանց, Պատմութիւն մենաստանին Հատիճոյ ի Ծիրակ, Տփլիս, 1856, էջ 37:

Ժողովրդական ավանդությունը ևս խոսում է Հառիճավանքում սրբապատկերի պահվելու և Վարդավառին այնտեղ ուխտի գնալու մասին. «Մեկ տարին Վարդառինն զնացինք Ղիչաղ ուխտ. չունքի «Եօթվիրաց պատկերքի» օթևանն է»²⁴:

Ա. վրդ. Մխթարյանը նշում է, որ սրբապատկերը հանդիսավորապես դրվել է վանական համալիրի Սբ Աստվածածին եկեղեցու հարավային կողմում՝ կամարավոր պատուհանի վրա. «ի հարաւակողմանն դասու՝ գոյ աւագանաճև պատուհան կամարաւոր, ուր բազմեցուցանեն զարդիս զեօթն վերաց պատկեր սուրբ Աստուածածնի»²⁵:

Վերը նշվածից տեսնում ենք, որ սրբապատկերը Հառիճ է բերվել Բասենից: Խոսելով այս մասին՝ Էփրիկյանը հավելում է, որ «ի Հայս բերուած է Գրիգոր Մագիստրոսէն և երկար ժամանակ մնացած Հասանգալէի Բասենու կամ Կարմիր վանքի մէջ»²⁶: Բասենի եկեղեցին հայտնի է ոչ միայն Բասենու վանք, Կարմիր վանք, Հասանկալայի վանք, այլև Աստվածածնա վանք անվամբ (գտնվում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Բասեն գավառում և եղել է Բասենի եպիսկոպոսանիստը), որը, ըստ ավանդության, կառուցվել է 11-րդ դարում Գրիգոր Մագիստրոսի կողմից, սակայն հիշատակությունների վրա հիմնվելով՝ վերագրվում է 7-8-րդ դդ.²⁷: Այսինքն՝ հավանական է, որ Գրիգոր Մագիստրոսը սրբապատկերը բերել է Հայաստան, զետեղել իր կառուցած կամ արդեն գոյություն ունեցող Բասենի Հասանկալայի կամ Սբ Աստվածածին վանքում, որտեղից էլ հետագայում այն տարվել է Հառիճ, իսկ այդտեղից վերջնականապես հաստատվել է Գյումրու Սբ Աստվածածին կամ Յոթվերք եկեղեցում:

Հետագայում Ղ. Ալիշանը գրում է. «Եկեղեցին Սբ Աստուածածնի [խոսքը Գյումրու Սբ Աստվածածին եկեղեցու մասին է - Հ. Ա.] նշանաւոր ուխտատեղի համարեալ է վասն Եօթն-խոցից անուանեալ պատկերին, զոր համարին նկարեալ ի Ղուկայ աւետարանչէ և բերեալ ի Հայս ի Գրիգորէ Մագիստրոսէ»²⁸: Ինչպես տեսանք, նշյալ վկայության մեջ Ալիշանը մեջբերում է նաև սրբապատկերի ստեղծման ավանդությունը: Ա. Մխիթարեանը ևս ակնարկում է այդ ավանդությունը. «...զիրաշագործ պատկեր Եօթն վերաց անուանեալ Աստուածածնի, նկարեալ, որպէս աւանդութեամբ ասի, Ղուկասու աւետարանչէ»²⁹:

«Յոթվերք» սրբապատկերի հրաշագործ զորության նկատմամբ ժողովրդի ունեցած հավատն այնքան մեծ է եղել, որ 1831թ. Ներսես Աշտարակեցին այն տարել է Էջմիածին՝ տեղացիներին երաշտից փրկելու: Այնկալիքն արդարացվել է: Տեսնելով, որ սրբապատկերի վերադարձը երկարաձգվում է, ալեքսանդրապոլցիների մի խումբ զնացել է Էջմիածին և 1852թ. այն ստիպողաբար հետ բերել Գյումրի, ուր մինչ օրս հանգրվանում է³⁰:

«Յոթվերք»-ը Գյումրու Սբ Աստվածածին տեղափոխելուց հետո ևս Հառիճավանքը շարունակում է մնալ Շիրակի ամենանշանավոր ուխտավայրերից մեկը, մասնավորաբար Վարդավառի տոնին: Վարդավառյան ուխտավայր լինելու հանգամանքը հավանաբար բացատրվում է նաև նրանով, որ վանքի մերձակա տարածքները հարմարավետ են բացօթյա տոնախմբություն կազմակերպելու համար:

Խորհրդային և անկախության տարիներին ևս Վարդավառին նվիրական իղձերի կատարման ակնկալիքով Հառիճավանք են գալիս հարևան գյուղերից, ինչպես նաև Հայաստանի տարբեր բնակավայրերից ազգականներին հյուր եկած հայրորդիներ: Տե-

²⁴ Աղ. Մխիթարեան, նշվ. աշխ., էջ 163:

²⁵ Ա. վրդ. Մխիթարեան, նշվ. աշխ., էջ 54:

²⁶ Ս. Էփրիկեան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1902, էջ 42:

²⁷ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 1 Ա-Դ, Եր., 1956, էջ 348:

²⁸ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 155:

²⁹ Ա. վրդ. Մխիթարեան, նշվ. աշխ., էջ 44:

³⁰ Գյումրի. Քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2012, էջ 172:

դացիների բնորոշմամբ. «Վարդևորին սաղ աշխարհն էստեղ է գալիս»³¹: Եթե խորհրդային տարիներին վանքի բակում ներկայացված էր լինում ավանդական ուխտագնացության ողջ համալիրը՝ գյուղի մի ծայրից դեպի-գուռնայի ուղեկցությամբ դեպի վանք գնացող ուխտավորների խմբեր, բացօթյա խնջույքներ, մատաղ, մանրավաճառների կողմից կազմակերպվող առևտուր, փահլևան, որը համալրվում էր գյուղացիների կողմից հրավիրված երգչախմբի և պարի խմբի տոնական մթնոլորտը թեժացնող կատարումներով, ապա անկախության տարիներին մանսորինակ խնջույքներն անցկացվում են վանքի սահմաններից դուրս՝ մոտակա կանաչապատ տարածքներում, իսկ վանք գնում են ուխտ անելու և աղոթելու նպատակով:

Մարմաշենի վանքը (գտնվում է Մարմաշեն և Վահրամաբերդ գյուղերի մջջնամասում, վերջինից 2կմ հարավ-արևմուտք) Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցին պատկանող 10-11-րդ դդ. (988-1029թթ.) հոյակերտ տաճարներից է³²: Վահրամ Պահլավունու կառուցած այս վանական համալիրը, թեև կիսախոնարհ, մշտապես բազում ուխտավորներ է ունենում: Այն նաև հանրապետական նշանակության վարդավառյան ուխտավայր է: Վահրամաբերդում պատմում են, որ «խորհրդային տարիներին Վարդևորի օրը երիտասարդ աղջիկներն առավոտյան մանիներ երգելով, պարելով գնացել են ուխտավայր, *քիտներն* արել են, մոմ վառել: «Մինչև ուխտ չանեին, բերանները բան չէին դնի», - հիշում է բանասացը»³³: Ուխտակատարության համար կարևոր է եղել նաև ոտքով գնալը:

Հայ Առաքելական Եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդանիստ *Գյումրու Սբ Մարիամ Աստվածածին* կամ ժողովրդական անվանմամբ՝ *Յոթվերք եկեղեցին* (կառուցման հավանական թվականը՝ 1882-1887³⁴) կառուցվել է նախկին փայտաշեն եկեղեցու տեղում Գևորգ V Տփիսիսեցի Սուրենյանց կաթողիկոսի՝ Ալեքսանդրապոլի թեմակալ առաջնորդության տարիներին³⁵: Հռչակված է համանուն «Յոթվերք» սրբապատկերով: Ինչպես վերը նշվեց, երկարատև դեգերումներից հետո այն բերվել է Տիրամոր անունը կրող այս եկեղեցի, որը կառուցվել է հրաշագործ սրբապատկերը հանգրվանելու նպատակով: Եկեղեցին ուխտավորներով լեցուն է նաև Վարդավառին. «Աստվածածնի մատաղ շատ էին անում թե՛ գյումրեցիները և թե՛ շրջակա գյուղերից, Ախալքալակից եկող ուխտավորները: Վարդևորին շրջակա գյուղերից, հատկապես Ախալքալակից և նրա շրջաններից, գալիս էին Գյումրի, Աստվածածին ուխտի, Գյումրուց էլ գնում էին Գալթախչի՝ սուրբ Օհաննես, Թովհառլի գյուղի մոտ»³⁶:

2. Մատուռներ

Շիրակցիները (մասնավորաբար վերը նշված գյուղերի բնակիչները), 19-20-րդ դարերում գաղթելով Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից, իրենց հետ բերել են նաև բնօրրանի հոգևոր մշակույթի շատ արժեքներ: Հայրենի սրբավայրեր այցելելու և պատմական հայրենիքի հետ ուխտը նորոգելու լավագույն առիթ է եղել յոթնամյա պահքից հետո Մշո Սբ Կարապետ, ի մասնավորի Հովհաննես Սկրտչի մատուռ-գերեզմանին ուխտի գնալը: Ցեղասպանությունից հետո պատմական այս սրբավայր այցելելու հնարավորությունից զրկվել են, սակայն Վարդավառին Սուրբ Հովհաննեսի անունը կրող սրբավայրեր գնալու սովորությոնը պահանջվել է: Թերևս նաև այսպես կարելի է բացատրել այն իրողությունը, որ վարդավառյան ամենամեծ ուխտավայրերը

³¹ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Հառիճ), էջ 7:

³² Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Եր., 1992, էջ 241:

³³ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Վահրամաբերդ), էջ 18:

³⁴ Գյումրիի. քաղաքը և մարդիկ, էջ 171:

³⁵ Նույնը:

³⁶ Կ. Բազեյան, Գր. Աղանյան, նշվ. աշխ., էջ 80:

սուրբ Հովհաննեսի անվամբ սրբավայրերն են՝ Ղաթաղչի և Նորաշենի Սբ Հովհաննես մատուռները:

Ղաթաղչիի Սբ Հովհաննես մատուռը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Սալիտակի նախկին վարչական շրջանի Հարթագյուղ գյուղում, որի նախկին անվանումներից են Արտագյուղը, Ղաթաղչին³⁷: Այստեղից էլ ժողովրդի մեջ հայտնի է որպես Ղաթաղչիի Սբ Հովհաննես:

Խորհրդային իշխանության տարիներին՝ 1970-ականներին, տեղական իշխանությունների կողմից մատուռը պայթեցվել է, որպեսզի ժողովուրդն այնտեղ չգնա, սակայն հավատացյալները, գիշերով շինանյութ բարձրացնելով, վերականգնել են: Այժմ այնտեղ 15-20 խաչքար կա: Ավարտելով այս պատմությունը՝ բանասացն ամփոփեց. «Աստված ասավ, որ դուք իմ տունն եք ավերել, ես էլ ձեզ կավերեմ»³⁸:

Գյումրեցիներն այս սրբավայր գալիս էին հատկապես Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնին³⁹: Վարդավառին այս սրբավայր եկել են ողջ Շիրակից, ինչպես նաև Հայաստանի տարբեր բնակավայրերից⁴⁰:

Ղաթաղչիի Սբ Հովհաննեսին դիմել են զանազան խնդրանքներով: Բժշկության ակնկալիքով այստեղ են բերել մասնավորաբար ընկնափորություն ունեցող երեխաներին: Սրբավայրի քյաղակների (վերջիններս ի ծնե խելագար կամ մարմնական արատ ունեցող մարդիկ էին, որոնք ապրում էին նշանավոր սրբավայրերի մերձակայքում և ժողովրդի կողմից ընկալվում էին որպես «Աստծու մարդիկ») համար նվերներ են բերել և որպես վարձատրություն՝ տվել գուշակության և սրբի թելադրանքն իրենց հայտնելու դիմաց⁴¹:

*Սբ Հովհաննես մատուռը*⁴² գտնվում է Շարայի լեռան վրա (2505մ), որը լեռնագագաթ է ՀՀ Արագած լեռնազանգվածի և Փամբակի լեռնաշրջանի միջև, Արթիկի նախկին վարչական շրջանի Գեղանիստ գյուղից հյուսիս-արևելք⁴³: Լեռան անվանումներից են՝ Գուգաթ, Կուգաթ, Դուղաթ, Դուղաթ Մեծ, Սուրբ Հովհաննես: Արագածոտնի մարզի Արագածի նախկին վարչական շրջանի Նորաշեն գյուղի դաշտերի մոտ է⁴⁴, այդ իսկ պատճառով ժողովրդի մեջ հայտնի է Նորաշենի Սբ Հովհաննես անվամբ: Վարդավառին այստեղ ուխտի են գալիս Փանիկից⁴⁵, Արևշատից, Գեղաձորից, Բերքառատից, Հառիճից⁴⁶, Նորաշենից, Մեծ Մանթաշից, Փոքր Մանթաշից, Գյումրուց⁴⁷: Թվարկված բնակավայրերի ժողովուրդը սրբավայրի հիմնադրման մասին որևէ պատմություն չի հիշում:

Սարի ստորոտում է գտնվում *Մաղարա* կոչվող քարանձավը⁴⁸: Մերձակա ընդարձակ տարածքները հայտնի են «Վարդառի դուրան» անվամբ, որոնց շրջակայքում վարդավառյան տոնական օրն անցկացվում է Սբ Հովհաննեսում ուխտը կատարելուց հետո⁴⁹:

³⁷ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 3, Կ-Ն, էջ 386:

³⁸ Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Կասպ), 2012, էջ 17-18:

³⁹ Կ. Բազեյան. Գ. Աղանյան, նշվ. աշխ., էջ 84:

⁴⁰ Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Հառիճ, Վահրամաբերդ), էջ 9, 18: Ա. Պողոսյան (Նորաշեն), էջ 33:

⁴¹ Կ. Բազեյան. Գ. Աղանյան, նշվ. աշխ., էջ 84-85:

⁴² Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Նորաշեն) էջ 28, 31:

⁴³ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 4, Ն-Վ, Եր., 1998, էջ 87:

⁴⁴ ՀՀ մարզերի աշխարհագրական օբյեկտների անվանումները. Շիրակի մարզ, էջ 7:

⁴⁵ Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Փանիկ), էջ 3, 5, 6:

⁴⁶ Նույնի՝ ԳԱՆ (Հառիճ), էջ 9:

⁴⁷ Նույնի՝ ԳԱՆ (Նորաշեն), էջ 29:

⁴⁸ «Մաղարա»-ն բարբառային բառ է և նշանակում է քարայր, քարանձավ: Տես «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Եր., 1974, էջ 468:

⁴⁹ Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Նորաշեն), էջ 30:

Ավանդագրույց. Տարիներ առաջ մի գյուղացի սրբավայրի շրջակայքում տրակտորով աշխատելիս մրսել է: Տաքանալու համար «վանքի» (Սբ Հովհաննեսի) դուռը հանել և այրել է: Պատիժը չի ուշացել. մինչ նստած տաքանալիս է եղել, տրակտորն անջատված վիճակում հետ է ընթացել, իսկ գյուղացին տակն է ընկել և մահացել⁵⁰:

3. Թուխ մանուկ

Չաղա կամ Սբ Գրիգոր Լուսավորիչ. Չաղա կամ Սբ Գրիգոր Լուսավորիչ ճգնարանը (ժողովրդական անվանում) կամ ուխտատեղին⁵¹ գտնվում է Սառնաղբյուր (Մոզուքու) գյուղի հյուսիսային ծայրին՝ ժայռի մեջ: Պաշտոնական անվանումը՝ Անձավաջուր⁵²: «Արդի հայերենի բացատրական բառարան»-ը *զաղա* բառն ստուգաբանում է իբրև գավառական բառ՝ *քարայր*, *քարանձավ* նշանակությամբ⁵³: Այս բացատրությունը սրբավայրի տիպական նկարագրությունն է, քանի որ այն գտնվում է քարայրի մեջ: Շիրակում Չաղա անունով հայտնի այլ քարանձավներ ևս կան (Չիթհանքով, Հայրենյաց, Գետափ գյուղերում)⁵⁴: Ենթադրելի է, որ զաղա-քարայր բառից էլ առաջացել է սրբավայրի Չաղա անվանումը:

Ուխտատեղի-սրբավայրը հայտնի է նաև Սբ Գրիգոր Լուսավորիչ անվամբ. ըստ ժողովրդի մեջ տարածված զրույցների՝ սուրբն այստեղ ճգնել է (տես՝ «Ավանդագրույցներ»):

Ուխտավայրը ներքուստ եռամաս է: Մուտքից բացվում է աղոթասրահը, որից աջ մշտապես ջրավազանն է, որտեղից ոչ միայն ջուր են խմում, այլև հիվանդները լողանում են: Հիմնական սրահին կից ձախակողմյան սրահ կա, որը, ըստ ավանդության, սրբի նշխարն ամփոփող սրբատեղի-գերեզմանն է, իսկ նշխարների վրա հիշատակի քար է դրված: Այդ սրահի մուտքը փակ է: Ուխտավորներին հազվադեպ են թույլ տալիս ներս մտնել, այն էլ՝ սրբավայրի պատասխանատուի ուղեկցությամբ: Բանն այն է, որ սրբի գերեզմանը համարվող այդ սրահում գտնվում է գյուղին ջուր մատակարարող աղբյուրի ակունքը: Հետևաբար այն փակ է պահվում, որպեսզի ջրի ակունքը գերծ մնա աղոտոտումներից, որոնք կարող են վնասակար լինել բնակչության համար:

Սրբավայրի մուտքը փակելու նպատակով 1954թ. գյուղացիների նախաձեռնությամբ քարե պատ է կառուցվել և փայտե դուռ դրվել⁵⁵: Պատի մեջ անբացված սպիտակ մարմարե քարի վրա նշված է հուշարձանի հերթական համարը՝ 186, իսկ դռան կողքին՝ քարի վրա, փորագրված է կառուցման թվականը՝ 1954:

Սրբավայրի ներսում կան երկու հարյուրի հասնող սրբապատկերներ, խաչքարեր, եկեղեցիների մանրակերտեր, հոգևոր բնույթի գրքույկներ, որոնք ուխտավորների կողմից բերվել են տարբեր ժամանակներում: Կան նաև ութ աշտանակներ և զանձանակ⁵⁶:

Սբ Գրիգոր Լուսավորիչ սրբավայր առավելաբար ուխտի են գալիս նաև Վարդավառին ինչպես Գյումրուց, մերձակա գյուղերից՝ Լեռնակերտից, Մարալիկից, Քարակերտից, Լուսակերտից, Լանջիկից, Սառնաղբյուրից⁵⁷, Հայաստանի տարբեր վայ-

⁵⁰ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Նորաշեն), էջ 33:

⁵¹ Ըստ Ստ. Մելիք-Բախչյանի «Հայոց պաշտամունքային վայրերը» գրքի՝ ուխտատեղի: Տես՝ Ստ. Մելիք-Բախչյան, Հայոց պաշտամունքային վայրերը, Եր., 2009, էջ 122: Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 4, Ն-Վ, Եր., 1998, էջ 502:

⁵² ՀՀ մարզերի աշխարհագրական օբյեկտների անվանումները. Շիրակի մարզ, էջ 12:

⁵³ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 360:

⁵⁴ ՀՀ մարզերի աշխարհագրական օբյեկտների անվանումները. Շիրակի մարզ, էջ 11:

⁵⁵ Սրբավայրի պատը կառուցել են մասնագիտությամբ պատշար Մանուկ Մանուկյանը (Տժվժիկի Մանուկ), Վիլեն Դարբինյանը, Տաճատ Մկրտչյանը: Տես՝ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Սառնաղբյուր), էջ 26:

⁵⁶ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Սառնաղբյուր), էջ 22-24:

⁵⁷ Նույն տեղում, էջ 2, 24:

րերից, այնպես էլ արտերկրից (օրինակ՝ Վրաստանից): Մինչև 70-ական թվականները սրբավայրում Վարդավառն ավելի ճոխ է նշվել: Ինչպես պատմում է բանասացներից մեկը. «...շրջակայքում տասը տեղ գոռնա-դեղ նվազող երաժիշտների խմբեր են եղել»: Հեռուներից եկողները գալիս են կա՛ն մի օր առաջ, կա՛ն մույն օրը:

Պատահում է, որ սրբավայրի ջրերով բժշկված մարդիկ որոշ ժամանակ անց առողջացած կամ ուխտի զավակների հետ վերադառնում են՝ սրբի հետ ուխտը նորոգելու նպատակով: Ասում են, որ հիվանդություն ունեցողները երեք անգամ պետք է գան, լվացվեն սրբավայրի ջրերով, խմեն, որպեսզի առողջանան:

Մառնադրյուրցիները Սբ Գրիգոր Լուսավորիչ սրբավայրի մասին հետաքրքիր ավանդազրույցներ են պատմում, որոնք փոխանցվել են սերնդեսերունդ: Դեպքերից շատերին բանասացներն ակամատես են եղել:

Ավանդազրույց 1. Տրդատ արքայի հալածանքներից հետո սուրբ Գրիգոր Լուսավորիչն այստեղ է պատսպարվել: Ոմանք ասում են, որ Տրդատ արքային բժշկելուց հետո (որի մի ականջը խոզակերպ է թողել) է սուրբը եկել այստեղ: Նրա մահից հետո մասունքները պիտվել են տարբեր վայրերում, իսկ ձեռքն ամփոփվել է Ջաղայում⁵⁸:

Ավանդազրույց 2. Գյուղացիները պատմում են, որ Ջաղայում պահվում է սուրբ Գրիգոր Լուսավորչի թևը կամ այլ մասունք⁵⁹:

Ավանդազրույց 3. Երբ Սրինբ հանել են Խոր Վիրապից, նա եկել է այստեղ՝ ճգնելու: Տեսնելով, որ ջուր չկա՝ սուրբն Աստծուց խնդրել է՝ ասելով. «Աստված ջան, թեկուզ մի կաթ, արցունքի չափ ջուր տաս»: Սրբի խնդրանքով այդտեղից սկսել է ջուր բխել⁶⁰:

Ավանդազրույց 4. Պատմում են, որ Գրիգոր Լուսավորիչը Մառնադրյուրում է ճգնել: Լուսավորչի գործքամբ սրբավայրի ջուրը բուժիչ հատկություն ունի: Օգտակար է հատկապես մաշկային հիվանդություններ՝ ալերգիա, քուս, ունեցողների համար: Ջաղայի բուժիչ ջրերի օգնությանն են դիմում նաև այլ հիվանդություններ ունեցող մարդիկ, ինչպես նաև անգավակ կանայք: Հավատում են, որ սրբին ի սրտե ուղղված խնդրանքը կատարվում է⁶¹:

Սբ Գևորգը գտնվում է Կաղամախուտ (ժողովրդական անվանումը՝ Կամխուտ, 2108մ) լեռնագագաթի վրա, որը Շիրակի լեռնաշղթայի արևմտյան մասում է՝ Ախուրյանի և Ամասիայի նախկին վարչական շրջանների սահմանագլխին, Ջրածոր գյուղից հարավ-արևելք⁶², Կապս գյուղի մերձակայքում:

Սբ Գևորգը կիսակառույց շինություն է: Այն կառուցվել է ուխտավորների կողմից, որոնցից յուրաքանչյուրը մի քար է ավելացրել, դրել մի սրբապատկեր: Այդ իսկ պատճառով գյուղացիները չեն հիշում կառուցման հստակ ժամանակ: Սարի ժողովրդական անվանումներն են՝ Սուրբ Գևորգ, Սուրբ սար: Մատուռը որևէ պատասխանատու անձի կողմից չի պահպանվում⁶³:

Վարդերի օրն ավանդաբար Սբ Գևորգ սրբավայր են գալիս Ջրածորից, Արեգնադեմից (նախկին Ամասիայի վարչական շրջան), Հովունուց, Մարմաշենից, Վահրամաբերդից (նախկին Ախուրյանի վարչական շրջան)⁶⁴:

Ավանդազրույց 1. Սարի վրա գտնվող այս շինությունն ուխտավորներն են կառուցել՝ ժամանակի ընթացքում մի-մի քար ավելացնելով: Ասում են, որ Աստված սրբե-

⁵⁸ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Հառիճ), էջ 8:

⁵⁹ Նույնի՝ ԴԱՆ (Մառնադրյուր), էջ 25:

⁶⁰ Ա. Պողոսյան, ԴԱՆ (Մառնադրյուր), էջ 27:

⁶¹ Հ. Աբրահամյան, ԴԱՆ (Մառնադրյուր), էջ 25:

⁶² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 2, Դ-Կ, Եր., 1988, էջ 907, 920:

⁶³ Հ. Աբրահամյան, ԴԱՆ, (Կապս) էջ 15, 17:

⁶⁴ Ա. Պողոսյան, ԴԱՆ, (Կապս) էջ 11:

րին բարձր տեղ է դնում, որպեսզի ժողովուրդն իր համար տանջվի՝ բարձունքը հաղթահարելով, ինչպես ինքն է ժողովրդի համար տանջվել⁶⁵:

Ավանդազրույց 2. Ասում են, որ այդ սարն առաջինը Սբ Գևորգն է բարձրացել, փայտե խաչ դրել, այդ իսկ պատճառով սարը նրա անունով են կոչում⁶⁶:

4. Աղբյուր

Ջերմուկ. Ինչպես վերը նշվեց, Ջերմուկը գտնվում է Մեծ Մեպասար (նախկին անվանումը՝ Շիթեփե, Աշոցքի նախկին վարչական շրջան) և Կրասար (նախկին անվանումը՝ Կուրտբուլաղ, Դուկասյանի նախկին վարչական շրջան) գյուղերի միջև, որտեղ միախառնվում են Ախուրյանը և Աշոցք գետակը. հարևանությամբ հանքային տաք աղբյուր է բխում: Հավանական է, որ Ջերմուկ անվանումը կապված է նախկին Աշոցքի վարչական շրջանում գտնվող Մեծ Մեպասար գյուղի նախկին Ջերմուկ անվան հետ⁶⁷: 1873 թվականին այստեղ գյումրեցի Ստեփանոս Անանիկյանը եռակամար, սև և կարմիր քարերով, 50 ոտնաչափ երկարությամբ և 6մ լայնությամբ կամուրջ է կառուցել՝ ուղևորների համար կից սենյակով, և վրան թողել է արձանագրություն. «Շնորհօքն ամենագորին Աստուծոյ շինեցաւ կամուրջս յինքնակալութեան Աղեքսանդր Երկրորդի օգոստոսիս կայսեր Ռուսաց, արդեամբ եւ ծախսիք Ստեփաննոսի Անանիկեանց, ի յիշատակ հոգւոյ փրկութեան իւրոյ կենակցին Գայիանեայ, եղբօրն Կարապետի եւ կենակցին Հռիփսիմեայ եւ ծնողաց նոցին. եւս առաւել վերակացուին շինութեանս Գրիգորի Ռափայելեանց»⁶⁸:

Դեռևս ավանդական շրջանում Վարդավառին այստեղ են եկել և հանրնդիանուր մեծ տոնախմբության մասնակցել Շիրակի հյուսիսային գյուղերից, ինչպես նաև յայլաներ գնացած սարվորները: 1860-ականներին՝ վարդավառյան հերթական տոնախմբության ժամանակ, առաքելական դավանորդ աղջկա և կաթոլիկ դավանորդ տղայի միջև երկուստեք համաձայնությամբ առևանգմամբ ամուսնություն է տեղի ունեցել⁶⁹:

Սառնաղբյուրցիները Վարդավառին գնում են նաև գյուղի հարևանությամբ գտնվող *Կաթնաղբյուր* (Կաթնովաղբյուր⁷⁰, պաշտոնական անվանումը՝ Կաթնով⁷¹): Կաթնաղբյուրը գյուղացիների շրջանում հայտնի է նաև Կապուտ ջուր անվամբ, քանի որ աղբյուրի ջուրը կապույտ երանգ ունի: Ասում են, որ Կաթնաղբյուրի ջուրն օգտակար է հատկապես մաշկային հիվանդություններ ունեցողների համար: Տեղանքը հարմարավետ է բացօթյա տոնական խնջույքներ կազմակերպելու համար⁷²:

Հարսնասարը (պաշտոնական անվանումը՝ Հարսնաքար, նախկին անվանումը՝ Գյալինկայա) լեռնագագաթ է Փամբակի լեռնաշղթայի արևմտյան հատվածում, Ախուրյանի նախկին վարչական շրջանի Ջրառատ գյուղից հյուսիս-արևելք: Բարձրությունը 2491մ է⁷³: Պատմում են, որ երբ թուրքերը հարձակվել են, գյուղի երիտասարդ հարսներն այդ սարից իրենց ներքև են գցել՝ թշնամու ձեռքից ազատվելու համար: Այդտեղից էլ առաջացել է սարի անունը: Ստորոտում լուսաղբյուրն է, ուր քարի տակից ջուր է հոսում: Այստեղ գնում են տարբեր առիթներով, հատկապես՝ Վարդավառին⁷⁴:

⁶⁵ Հ. Աբրահամյան, ԴԱՆ, (Կապս) էջ 17:

⁶⁶ Նույն տեղում, էջ 15:

⁶⁷ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 4, Ն-Վ, էջ 402:

⁶⁸ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 145-146:

⁶⁹ Խորին շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ Գրիգոր Աղանյանին՝ սույն նյութը տրամադրելու համար:

⁷⁰ Հ. Աբրահամյան, ԴԱՆ, (Սառնաղբյուր), էջ 21:

⁷¹ ՀՀ մարզերի աշխարհագրական օբյեկտների անվանումները. Շիրակի մարզ, էջ 13:

⁷² Հ. Աբրահամյան, ԴԱՆ, (Սառնաղբյուր), էջ 22:

⁷³ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 3, Կ-Ն, էջ 391:

⁷⁴ Հ. Աբրահամյան, ԴԱՆ, (Փանիկ), էջ 4:

Տան սուրբ

«Ղալիջվա Ավետարան»⁷⁵ կամ «Կարմիր Ավետարան»⁷⁶ անունով հայտնի այս Ավետարանը Վահրամաբերդ գյուղի տեղական նշանակության սուրբ է և դասվում է Շիրակում լայն տարածում գտած Տան սրբերի շարքին: Վերջիններս հիմնականում սրբազան գործառույթ ունեցող իրերն են, առավելաբար՝ սրբազան բովանդակության գրվածքներ, որոնց ժողովրդի կողմից վերագրվում են հրաշագործ հատկություններ⁷⁷:

Համալիր սրբատեղի-ուխտավայր

Թոփառվա կամ Ծակ քար սրբավայր ուխտատեղին գտնվում է Ախուրյանի տարածաշրջանի Հացիկ գյուղի մոտ⁷⁸: Մինչև 1949թ. Հացիկ գյուղը կոչվել է Թոփառ, Թոփառլի, Թոփառլու⁷⁹, Թափառլի, Թեփերլի, Թոփարլի, Թոփարլու⁸⁰, հավանաբար այդ իսկ պատճառով սրբավայրը հայտնի է նաև Թոփառլի Սուրբ անվամբ:

Թոփառլուն բազմաբաղադրիչ ուխտավայր է: Ծակ քարից գատ, այնտեղ կա հայտնի Թոխ մանուկ, ուշ շրջանում կառուցված մատուռ, երազանքի ծառ, որի վրա մարմնի հիվանդ մասին առնչվող հագուստի կտոր են կապում⁸¹:

Ղազանվա մատուռ կամ Ղայղուլի Ղազանչի ուխտի են գնում Փանիկից⁸²: Ղազանչին կամ Ղայղուլի Ղազանչին գյուղ է Ղուկասյանի նախկին վարչական շրջանում: Ջրառատ է, այստեղից բխում են հարդառատ աղբյուրներ: 1960-ական թթ. նախկին տեղից մի քանի հարյուր-մ տեղափոխվել է դեպի հյուսիս-արևելք⁸³: Գյուղի ուխտավայրերն են արևմտյան եզրին գտնվող տեղական նշանակության խոյածև աղբյուրը, 7-րդ դարի մի եկեղեցի⁸⁴ և Վանք եկեղեցի⁸⁵:

Նշյալներից Հառիճավանքը, Մարմաշենը, Յոթվերքը, Ղալթաղչիի Սբ Հովհաննեսը, Չաղան կամ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, Նորաշենի Սբ Հովհաննեսը հանրապետական նշանակության ուխտավայրեր են: Ջերմուկը, Թոփառվա կամ Ծակ քարը, Ղազանվա մատուռ կամ Ղայղուլի Ղազանչին, Կաթնաղբյուրը մարզային, իսկ Հարսնասարի տակ գտնվող Լուսաղբյուրը, Վահրամաբերդի Կարմիր Ավետարանը, Բասենի Սբ Հովհաննեսը տեղական նշանակության ուխտավայրեր են:

Սյուժետային համանման ավանդություն է հիշատակված Վայքի լեռնաշղթայի արևմտյան հատվածում՝ Գնիշիկ գյուղից մոտ 10կմ հր-արլ գտնվող Հարսնասար գագաթի մասին: Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 3, Կ-Ն, էջ 391:

⁷⁵ Կ. Բազեյան. Գ. Աղանյան, նշվ. աշխ., էջ 81:

Ղալիջվանը կամ Ներքին Ղանիջան Վահրամաբերդ գյուղի նախկին անվանումն է: Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 3, Կ-Ն, էջ 507:

⁷⁶ Հ. Աբրահամյան, ԳԱՆ (Կապս), էջ 18:

⁷⁷ Մմբատ արեղա Պողոսյան, «Տան սրբերը» Շիրակում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական յոթերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2007, էջ 157:

⁷⁸ Հ. Աբրահամյան, ԳԱՆ, (Վահրամաբերդ), էջ 18:

⁷⁹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 2, Դ-Կ, էջ 482:

⁸⁰ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 3, Կ-Ն, էջ 395:

⁸¹ Ա. Պողոսյան, ԳԱՆ, (Փանիկ), էջ 6:

⁸² Երևանի նահանգի Ալեքսանդրապոլ գավառի հյուսիսում եղել է Ղայղուլի անունով երկու գյուղ: Նրանցից մեկը վերանվանվել Ղազանչի, մյուսը՝ Հարթագյուղ: Հարավում՝ Արթիկի նախկին վարչական շրջանում ևս Ղազանչի անունով գյուղ է եղել, որը հետագայում վերանվանվել է Մեղրաշեն: Տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», 3, Կ-Ն, էջ 497: Հետևաբար ենթադրելի է, որ ժողովրդական խոսքում տարբերակելու համար հյուսիսի Ղազանչին անվանել են Ղայղուլի Ղազանչի:

⁸³ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, 3, Կ-Ն, էջ 497:

⁸⁴ Պետական ցուցակ ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Շիրակի մարզ, Հավելված ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1270-Ն որոշման, էջ 72-73:

⁸⁵ ՀՀ մարզերի աշխարհագրական օբյեկտների անվանումները, Շիրակ, էջ 42:

Այսպիսով, դիտարկելով վերը թվարկված հիմնական ուխտավայր-սրբատեղիները և տոնակատարության վայրերը՝ տեսանելի է, որ վերջիններս ընդգրկում են Շիրակի ՊԱՄ-ը՝ սփռված լինելով հյուսիսից մինչև հարավ (Ջերմուկից (Մեծ Մեպասար-Կրասար), մինչև Ջաղա կամ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ [Սառնադրյուր]) և արևելքից մինչև արևմուտք (Մարմաշենից մինչև Գալթաղչի (Հարթագյուղ) և Սբ Հովհաննես [Նորաշեն]): Ըստ այդմ՝ յուրաքանչյուր սրբավայր հիմնական է տվյալ շրջանի բնակչության համար:

Սրբավայրերը ոչ միայն տեղական, այլև հանրապետական նշանակության են, տիպային առումով՝ զանազան: Ընդ որում՝ սրբավայրի մեծահամրավ լինելը պայմանավորված է ոչ թե վերջինիս արտաքին ճոխությամբ, այլ նրան վերագրվող հրաշագործ զորությամբ, մասնավորաբար՝ բժշկելու և զավակ պարգևելու: Նման զորություն վերագրվում է առավելաբար այն սրբավայրերին, որոնք ամփոփում են սրբի մասունք (ըստ տեղացիների պատկերացումների) (ինչպես՝ Ջաղան կամ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը) կամ սրբին վերաբերող առարկա (ինչպես՝ Սուրբ Աստվածածինն պատկերող «Յոթ վերք» սրբապատկերը):

МЕСТА ПАЛОМНИЧЕСТВА ВАРДАВАРА В ШИРАКЕ (краткий очерк)

___ Резюме ___

___ А. Абрамян ___

На основе библиографических первоисточников и полевых этнографических материалов в настоящей статье представлены вардаварские паломнические места: монастыри, церкви, часовни, “Тух манук”, родники, священные паломнические комплексы (общее число 13) историко-этнографической области (ИЭО) Ширака начиная с конца 19-ого века до наших дней. О существовании большинства представленных вардаварских священо-паломнических мест (Мармашенский монастырь, часовни св. Ованес - село Калтахчи (Артагюх), св. Ованес - село Норашен, св. Геворг - село Капс, Джермук, Арснасар, Топарли или Цак Кар) говорится впервые. Перечисленные основные священо-паломнические места и места проведения праздников охватывают ИЭО Ширака от севера до юга (от Джермука (Мец Сепасар-Красар) до Заха или св. Григорий Просветитель [Сарнахпюр]) и от востока до запада (от Мармашена до Калтахчи и св. Оганес [Норашен]), по сути имея республиканское или местное значение.

ԿԱԹՆԵՂԵՆ ՈՒՏԵՍՏԸ ՇԻՐԱԿՈՒՄ XX ԴԱՐԻ II ԿԵՍԻՆ

Յուրաքանչյուր ժողովրդի կենսապահովման համակարգում կարևորագույն տեղ է գրավում ուտեստը, որը կազմում է մարդու առաջին, անհրաժեշտ և ամենօրյա պահանջմունքը: Ազգային ավանդական ուտեստի համակարգը ձևավորվել է դեռևս վաղնջական ժամանակներում և կրում է հայոց հիմնական տնտեսական զբաղմունքների՝ երկրագործության և անասնապահության ազդեցությունը:

Հայոց ավանդական սննդի համակարգում տեսակարար մեծ կշիռ ունեն կաթնամթերքի օգտագործումը: Ընդունված էր որպես ձմռան պաշար մսի, ալյուրի, կարտոֆիլի և այլնի հետ զուգահեռ մթերել նաև կաթնաթթվային մթերքներ: Ամենատարածվածը մածունն էր, որը մերում էին ինքնամերմամբ գոյացած մերանով¹: Մածնից պատրաստում էին տարատեսակ ուտելիքներ, սպաս, սպուր և այլն:

Հայոց կաթնատնտեսության առանձնահատկություններից էր կաթի անթափում մշակումը, երբ արդյունքում ստացված բոլոր մթերքները ևս գործածվում էին սննդի մեջ՝ ենթարկվելով երկրորդային մշակման: Հայ տանտիկիները մեծ վարպետությամբ կարողանում էին պատրաստել մածուն, քամած մածուն, չորթան, կաթնաշոռ, կաթի սեր, կարագ²: Շիրակում լայն տարածում ունեին կաթնամթերքով պատրաստվող կերակուրները, որոնցից շատերը ներկայումս հազվադեպ են պատրաստվում, ինչպիսիք են դրումով, բրնձով կաթով ճաշը, ձավարով կաթով ճաշը, սիրեխով կաթով ճաշը, չորթանը և այլն: Իսահակյան գյուղում կաթի շիճուկով կաթնաշոռ էին հանում, որին ավելացնում էին եռացրած կաթը և շաղախում: Վերջում լցնում էին առանձին ամանների մեջ և առավոտները խմում որպես նախաճաշի բաղկացուցիչ մաս:

Կաթնեղեն կերակուրների մեջ առանձնանում է կաթնովը կամ կաթով սպուրը, որը պատրաստում էին բրնձով ու շաքարավազով: Երբ կերակուրը եփվում էր, այն լցնում էին առանձին ամանների (թաս) մեջ, վրան թանգիվ քաշում, թողնում, որ սառչեր, հետո նոր ուտում էին: Կաթնովի վրա սեր էր բռնում, ինչը կերակուրն ավելի ցանկալի ու գրավիչ էր դարձնում: Այժմ կաթնովին ավելացնում են նաև դարչին, որը յուրահատուկ համ ու հոտ է տալիս կերակրին: Ընդգծենք, որ այն՝ որպես ավանդական կերակուր, մեր օրերում այնքան էլ տարածում չունի: Ըստ հավաքված նյութերի՝ այժմ կաթնովը սոցիալապես ապահովված ընտանիքներում գրեթե չի պատրաստվում, իսկ տնտեսապես վատ պայմաններ ունեցողներն էլ դժվարանում են այն պատրաստել: Մածունի փոխարեն շատ են օգտագործել չորթանը, որից պատրաստված ճաշին նաև քյալագոշ են անվանել³: Խնոցին հարել են, թանը հավաքել, լցրել մեծ ամանի մեջ, թողել, որ թթվի: Եփելուց հետո քամել են, առանձին ամանների մեջ լցրել: Ստացված մածնից պատրաստել են փոքր գնդիկներ, շարել, որ չորանա (չոր թան): Երբ այն պատրաստ է եղել, պահել են ձմեռվա պաշար: Չորթանից սպուր են պատրաստել, և որպես թան օգտագործել, ճաշերի վրա ավելացրել: Մարալիկում պանրի լոռով գնդիկներ են պատրաստել, չորացրել, օգտագործելու ժամանակ թրջել են ջրով կամ կաթով, ավելացրել տապակած կարտոֆիլի, ձավարով սոխով փլավի վրա ու կերել: Հիմա չորթանը դուրս է եկել գործածությունից, քանի որ ներկայիս սերունդը մոռացել է պատ-

¹ Տե՛ս Հայկական խոհանոց, Եր., 1963, էջ 29:

² Ռ. Ծատուրյան, Հայոց ավանդական տոնական ուտեստը, Եր., 2011, էջ 16:

³ Օ. Հարոյան, Դաշտային ազգագրական նյութեր /այսուհետ՝ ԴԱՆ/, գյուղ Չորի Սարիսար, Լեռնագյուղ, 2011, տեսք 2:

րաստման եղանակը, իսկ ուլքեր հիշում են, նշում են, որ չորքանի պատրաստումը մեծ հմտություն է պահանջում: Մածունը հիմա ևս անպակաս է գյուղացու տանից: Սրան զուգահեռ օգտագործվում են գործարանային արտադրության մածնատեսակները: Առողջարար է համարվում հատկապես «Նարինե» մածունը: Վերջինս կարևոր բուժական հատկություն ունի աղետամոքսային հիվանդությունների դեպքում: Ընդունված էր ուտելիս մածնի մեջ նաև մուրաբա (հատկապես կեռաս) կամ չամիչ լցնել: Այս սովորությունը պահպանվում է նաև մեր օրերում: Կարելի է օգտագործել նաև քամած մածունը: Գրեթե նույն ձևով գյումրեցիներից ոմանք պատրաստել են «գուրբիան»: Այն քամած մածնի, չամիչի, մեղրի, նաև ընկույզի համասեռ զանգված է⁴:

Տարածված ավանդական կերակրատեսակներից էր կարտոֆիլով կաթով պյուրեն, որը պատրաստել են հետևյալ կերպ. կարտոֆիլը մաքրել են, կտրատել ու կաթով եփել: Երբ կաթը եփվելով պակասել է, կարտոֆիլն անմիջապես տրորել են, աղ լցրել, կարագ դրել և կերել: Չմռան ամիսներին շատ են օգտագործել ձավարով և փոխիհնդով խաշիլ, որոնք կերել են հիմնականում կաթով: Խաշիլը լցնում էին մեծ ամանների մեջ, մեջտեղը յուղ դնում, իսկ կողքերից կաթ լցնում և ուտում: Մածուն օգտագործում էին հիմնականում երեկոյան, որպեսզի հանգիստ քնեին, ինչպես նաև ավելացնում էին ձավարով տոլմայի վրա (գյուղ Յողամարգ), իսկ Կրասարում տոլման ընդունված էր ուտել սոխեռածով: Կաթը կերել են նաև բրդած: Յողամարգցիները խնկոշը ևս պատրաստում էին կաթով (սովորական փոխհնդով զնդիկները): Չմռան սիրված կերակուրներից էին չորթանով ճաշը (քյալագոշ), թանով սպասը կամ սպուրը, որը Լեռնագյուղում պատրաստում էին ցորենով, եփում էին թոնիրում՝ կավե պոտուկներում: Լեռնականում սպասը պատրաստել են նաև նռան հատիկներով: Սպասը եփելուց հետո ավելացնում էին նախապես մաքրված նռան հատիկները (ըստ ապուրի չափի՝ ավելացնում էին մեկ կամ երկու նոռ): Ընդունված էր սպասը պատրաստել նաև բազուկով կամ դմիով:

Գյուղերում սովորություն է եղել ձմեռվա պաշար հավաքելու համար կաթով խաբ ու խազ անել: Հավաքվում էին մի քանի ընտանիքներ, որոշում հերթականությունը, կաթի չափը և ըստ հերթի՝ վերցնում իրենց հասանելիք կաթը: Ներկայումս խաբ ու խազ անում են հիմնականում սոցիալապես անապահով գյուղացիները, հատկապես եթե անասունների գլխաքանակը քիչ է (2-3 կով), որպեսզի կարողանան ձմեռվա համար յուղ ու պանիր պատրաստել: Ունևոր գյուղացիները կաթը հիմնականում տալիս են գործարանին: Մեքենան ամեն օր գալիս է, կաթը հավաքում: Տանտիկիկները կաթից ստանում են տարբեր մթերքներ՝ պանիր, չորթան, մածուն, կարագ, հումսեր:

Հայոց ուտեստի մշակույթում հացին զուգահեռ առանցքային դեր էր վերապահված նաև պանիրին, ինչի մասին վկայում են բազմաթիվ ժողովրդական ասացվածքներ՝ «Հաց ու պանիր, կեր ու բանիր», «Պանիր հաց՝ սիրտդ բաց»: Սեղանին հաց ու պանրի ամկայությունը նվազագույն անհրաժեշտ սնունդն էր: Պանիր պատրաստում էին կովի, ոչխարի, այծի կաթից: Պատրաստում էին պանրի տարբեր տեսակներ՝ չեչիլ, լոռ, մոթալ (հորած անքաշ պանիրն էր, որը կտրտած լցնում էին կարասի մեջ (Կրասար), ճիվիլ (Լեռնակերտ), ճիլ (Հառիճ, Փարոս), հուսակ (Փոքր Մանթաշ): Իսահակյանում չեչիլը ոչխարի տիկերում են դրել, որը նախապես աղել են, դրել բանկաների կամ կավե պոտուկների մեջ: Դրանք թարս էին դարձնում, բայց բերանը մի քիչ թեք, որպեսզի շիճուկը թափվեր: Հետևաբար պանիրը շատ համեղ էր ստացվում: Այստեղ անքաշ պանիր քիչ են օգտագործել: Մինչև այժմ էլ հատուկ պահանջարկ ունի չեչիլ պանիրը

⁴ Օ. Հարոյան, ԴԱՆ, ք. Գյումրի, 2012, Տեսք 1:

(կանաչ): Ընդունված է ձմռան համար այն պահել կճուճներում, բերանը փակել, որ լավ կանաչի: Պանրով պատրաստում են մակ պանրիսա՝ գլուխ սոխով, լավաշով:

Ջավախքում ընդունված էր պատրաստել կաթով, ձավարով, թարմ կաղամբով ճաշ: Կաղամբն սկզբում շոգեխաշել են տխտեածի հետ, ապա ավելացրել ձավարը, հետո առատ կաթ՝ այնքան, որ կաղամբը ծածկվի, ու եփել են: Այստեղ բանջարը ևս ընդունված էր եփել կաթով: Լայն տարածում ունեւր մակ կտրած ապուրը: Թաթար բորանու խմորը («շաղվում» էին ձվով ու կաթով) կտրտում էին ինչպես էրիշտան: Սկզբից թանն էին եփում (կամ մածունը), ապա կտրտած խմորը յուղի մեջ տապակում էին («ժարիտ» անում) ու լցնում եփած թանի մեջ: Վերջում ավելացնում էին «տխառած»՝ տխտեած ու համեն: Բաշգյուղում լայն տարածում ունեւր կաթով տակով ապուրը (ճակնդեղ): Միրված ու տարածված կերակուրներից էր մակ թանով ապսը: Այն հիմնականում պատրաստում էին թանով, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ մակ մածնով, չորթանով, երբեմն էլ թթվասերով⁵: Նոր ծնած կովի կաթից դալ էին պատրաստում: Այն բնակչության կողմից սիրված և սպասված ուտելիք է համարվում, որը կարող են վայելել տարին մեկ անգամ: Ինչպես պատմում է բանասաց Յողիկ Նավոյանը, դալի պատրաստումը մեծ վարպետություն է պահանջում: Հավաքում են նոր ծնած կովի 3 «ժում» անգամվա կաթը, որին ավելացնում են խիժ, լավ խառնում և դնում թոնիորը՝ եփվելու: Մրան մակ բրինձ (10-15 հատ) են ավելացրել, որ ծակոտիներ ունենա: Լավ եփվելուց հետո կաթը դառնում էր դալ, առանձնանում էր շիճուկը: Դալն այսօր էլ ուտում են շաքարավազով կամ առանց դրա: Ընդունված է բաժին հանել բարեկան - դրկիցներին⁶:

Կաթից պատրաստված կերակուրները մեր օրերում ևս մեծ պահանջարկ ունեն: Չմայած որոշ կերակուրներ՝ կաթով պյուրեն, կաթով ձավարով ճաշը, չորթանը և այլն ներկայումս գրեթե դուրս են եկել գործածությունից, այնուամենայնիվ կաթնեղենը այսօր էլ կազմում է շիրակցիների սննդակարգի հիմնական բաղադրիչը:

МОЛОЧНАЯ ПИЩА ШИРАКА ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 20-го ВЕКА

____ *Резюме* _____


____ *Օ. Արոյն* _____

В данной статье подробно описаны особенности приготовления пищи из молочно-кислых продуктов на территории Ширакского региона во второй половине 20 века. Хотя некоторые кушанья в настоящее время вышли из перечня блюда, например молочное пюре, тыквенно-молочное блюдо, а приготовление других сводится к минимуму, Ширакский регион выделяется употреблением еды на молочной основе, славится особым приготовлением сыров и такой их разновидностью, как сыр “чечил”.

⁵ Օ. Հարոյան, ԴԱՆ, գյուղ Կառնուտ, 2010, Տեսք 2:

⁶ Նույնը:

«Գիտական աշխատություններ» /ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն; խմբ. Ս.Հայրապետյան.-Եր.: Գիտություն, 2012, Հատոր 14,-186 էջ:



Լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի XIV հատորը՝ 12 հրատ. մամուլ ծավալով, պրոֆեսոր Ս.Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ:

Հատորում ընդգրկված են 23 հոդվածներ, հրապարակումներ և հաղորդումներ հայագիտության և հումանիտար այլ գիտությունների ոլորտներից:

Որպես ձևավորված ավանդույթ՝ ժողովածուում կարևոր տեղ են զբաղեցնում Շիրակի պատմամշակութային ժառանգությանը նվիրված հոդվածները: Հնագիտությունը ներկայացվել է Լ.Եզանյանի «Մեծ Մեպասարի վիշապը» հոդվածով և Ըստ Լ.Եզանյանի՝ Մեծ Մեպասարի պեղումներով փաստված է, որ սարի գագաթը

դիտվել է իբրև պաշտամունքային հնագույն կառույցների համար անհրաժեշտ մայսապայմանները բավարարող տարածք՝ աստվածայինի հետ կապվող տարրերով:

2011թ. շարունակվել են Հայկաձորի ուշուրարտական հուշարձանախմբի պեղումները, որոնց արդյունքում պեղավայրն ընդլայնվել է, և հայտնաբերվել են մեծաքանակ նոր պեղածո նյութեր՝ հատկապես բեկորային խեցեղեն, քարից և ոսկորից աշխատանքային գործիքներ և այլն: Այդ մասին է Հ.Խաչատրյանի «Հայկաձորի ամրոց-բնակավայրի 2011թ. պեղումները» հաղորդումը:

Պատմագիտական գրականության մեջ XIXդ. և XX դարասկզբի արևմտահայության պարբերաբար կրկնվող վերաբնակեցումների, ըստ բնակության նոր վայրերի նորեկների տեղաբաշխման, Արևելյան Հայաստանի բնակչության էթնոկրոնական պատկերի վրա ներգաղթի թողած ազդեցության, ինչպես նաև այս հարցում ռուսական իշխանությունների ունեցած դերակատարության կարևոր հարցերն են արծարծվել Ա.Հայրապետյանի «Արևմտահայության տեղաշարժի հարցը XIXդ. երկրորդ կեսի և XX դարասկզբի ցարիզմի Արևելյան Հայաստանում վարած գաղութային քաղաքականության համատեքստում դիտարկվել են Ալեքսանդրապոլի գավառի վիճակագրական տվյալները՝ 1852-1910 թթ. կտրվածքով:

«Ալեքսանդրապոլի գավառը Երևանի նահանգապետի հաշվետվություններում» հրապարակման մեջ Ա.Ակոպովն ընթերցողի ուշադրությանն է ներկայացրել ժողովրդագրական հիմնախնդիրներին վերաբերող նորահայտ փաստաթղթեր, որոնք ուշագրավ տեղեկություններ են պարունակում 1870-ական թթ. Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի վերաբերյալ:

Գ.Այվազյանի «Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցը 1830-1880-ական թթ.»

հողվածը նվիրված է կրթական ինքնատիպ այս հաստատության կառուցվածքին, գործունեությանն ու քաղաքի մշակութային կյանքում ունեցած դերակատարությանը: Ըստ փաստավավերագրերի՝ նշված ժամանակահատվածում դպրոցը ոչ միայն չէր սահմանափակվում կրթական և դաստիարակչական խնդիրների լուծմամբ, այլև դարձել էր ազգային ազատագրական շարժման կենտրոն:

Ալեքսանդրասպուլում հայտնի երաժշտական-հասարակական գործիչ Արշակ Բրուտյանի կյանքին ու գործունեությանն է անդրադարձել Հ.Հարությունյանը «Ա. Բրուտյանն ու Շիրակի երաժշտական կյանքը» հոդվածում: Բազմաշնորհ, մեծաքանակ այս գործիչն անջնջելի հետք է թողել Ալեքսանդրասպուլի մշակութային կյանքում նախ որպես գործուն երաժիշտ-մանկավարժ, ապա նաև՝ բանահավաք և խմբավար:

Գյումրեցիների տոնաձիսական կյանքում ժողովրդական քրիստոնեության դրսևորումներին են անդրադարձել Կ.Բազեյանն ու Գ.Աղանյանը: «Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները գյումրեցիների տոնաձիսական վարքում» հոդվածում հանգամանորեն ներկայացված են հայ ժողովրդի, այդ թվում նաև շիրակցիների տոնաձիսական կյանքում կարևոր նշանակություն ունեցող ուխտագնացությունները, որոնք, պահպանվելով նույնիսկ խորհրդային աստվածամերժ գաղափարախոսության պայմաններում, շարունակվում են առայսօր:

Ս.Հայրապետյանի «Խոսվածքի երեկն ու այսօրը» հոդվածում քննության են ենթարկվել հայերենի «կը» ճյուղի ամենաազդեցիկ ու խոշոր Կարևո բարբառի խոսվածքներից մեկի՝ Գյումրու խոսակցական լեզվին բնորոշ արդի իրողությունները: Նշվում է, որ ընդհանուր օրինաչափություններով Կարևո բարբառին հարազատ մնալով հանդերձ, հատկապես խորհրդային պատմության վերջին տասնամյակներից սկսած, Գյումրու խոսվածքը գերազանցապես զրական լեզվի ազդեցությամբ

մի շարք իրողություններով նկատելիորեն հեռացել է բարբառից՝ ավելի մոտենալով արդի զրական լեզվին:

Ադոբքը և հոգեթերապիան՝ որպես հոգեկան ճգնաժամից դուրս գալու կարևոր գործոններ են դիտարկվել Կ.Սահակյանի և Ռ.Հովհաննիսյանի հոդվածում: Ըստ հոդվածագիրների՝ վերապրումի գործընթացն ուղղվում է հոգեվերականգնման, զգայական հավասարակշռման, սրանով հանդերձ անձնային որակների բարձրացմանն ու հոգու դիմամիկային:

Ժողովրդական սնահավատական գրույցներում հանդիպող չար ոգիներից սատանային է անդրադարձել Հ.Գալստյանը և իր հոդվածում և ներկայացրել է սատանա-ոգու գործառույթներն այդ գրույցներում: Մարդը, չկարողանալով բացատրել բնության այս կամ այն երևույթը, երևակայության մեջ ստեղծել է զանազան ոգիներ, նախապաշարմունքներ, սկսել է հետևել դրանց, վախենալ, զգուշանալ դրանցից, հավատալ, սրբացնել և այլն: Աստիճանաբար ճանաչողության սահմանների ընդարձակման հետ մեկտեղ պակասում են նաև սնահավատական գրույցները:

Գյումրեցիների՝ 20-րդ դարի երկրորդ կեսի Պահոց ուտեստին է անդրադարձել Օ.Հարոյանը՝ նշելով, որ հայ ժողովրդի ավանդական կենցաղի այս կարևորագույն ծիսահամալիրներից մեկը համակողմանի նկարագրության և ներկայացման է արժանի:

1926-1959թթ. Շիրակում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացներին է անդրադարձել Ա.Բոյաջյանը: Վարչատարածքային սահմանների որոշ փոփոխություններով պայմանավորված, 1920-50-ական թթ. Հայկական ԽՍՀ-ում անցկացված համամիութենական հինգ մարդահամարների արդյունքների և այլ վավերագրերի տվյալների համաձայն, Շիրակի բնակչության թվի աճը և ծնելիության մակարդակը 1920-30-ական թթ. միշտ էլ բարձր են եղել, իսկ 1940-50-ական թթ.,

պայմանավորված Հայրենական պատերազմով, իսկ ավելի ուշ՝ նաև արագընթաց ուրբանիզացմամբ, ծնելիության գործակիցն աստիճանաբար նվազել է:

Հայոց պատմության հնագույն և միջնադարյան շրջաններին են առնչվում Ս.Պետրոսյանի «Հայ-շումերական առասպելաբանական աղերսների շուրջ» և Ա.Ակոպովի «Դավիթ Կյուրապաղատի ժառանգության հարցը 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի առաջին քառորդին» հոդվածները:

Հատորում ծավալուն տեղ են գրավել նաև գրականագիտական, լեզվաբանական և արվեստաբանական տարբեր թեմաներ արծարծող հետևյալ հրապարակումները. Ս.Մելքոնյանի անչափ հետաքրքիր «Նարեկացիական ճառագումներ Թումանյանական աշխարհում» հոդվածն ու «Հ.Թումանյանի քնարերգության մի մութ կետի լուսաբանման փորձ» արժեքավոր հաղորդումը, Հ.Զաքյանի «Բայաճանցումը՝ կրկնասեռության չեզոքացման գործոն», Լ.Աթանեսյանի «Վ.Խաչատրյանի ստեղծագործական աշխարհը», Ա.Մարգարյանի «Երվանդ Քոչարի փարիզյան շրջանը»:

Մեթոդական խնդիրներ են արծարծված Ն.Հայրապետյանի «Անզլերենի ուսուցիչների մեթոդական պատրաստվածության հարցի շուրջ» հոդվածում:

«Գիտական աշխատություններ»-ի 14-րդ հատորում տպագրված նյութերն ընդգրկում են համառոտ ռուսերեն և անգլերեն ամփոփումներ: Ժողովածուն ավարտվում է «Գիտական լրատու» բաժնի ուշագրավ նյութերով:



Հանդիպումներ Արցախում

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը 2012 թվականից ձեռնամուխ է եղել իրականացնելու հեռանկարային ծրագիր Շուշի քաղաքի պատմության քանդաբանի և Ստեփանա-

կերտի պետական համալսարանի հայագիտական կենտրոնի հետ՝ մեր կողմից առաջարկվող «Ալեքսանդրասյուլ-Շուշի քաղաքային մշակույթի աղերսներ» թեմայի շրջանակներում՝ ելնելով մեր ժողովրդի կյանքում վերոհիշյալ քաղաքների՝ որպես XIX դարավերջին և XX դարակզրին Անդրկովկասի երկու հայաշատ կենտրոնների ունեցած տնտեսական, քաղաքական, մշակութային և հասարակական դերի կարևորությունից և ակնհայտ ընդհանրություններից: Վերոհիշյալ ծրագիրը միտված է նաև Արցախի հետ գիտական կապերի հաստատմանն ու սերտացմանը:



Թեմայի իրականացման առաջնահերթությունները ճշտելու, համատեղ ուսումնասիրության հեռանկարային պլանի և նախատեսվող միջոցառումների ծրագրի մշակման, ինչպես նաև պատմական, ազգագրական, բանագիտական բնույթի նյութերի նախնական հավաքման նպատակով 2012թ. հոկտեմբերի 12-14-ին Լեռնային Ղարաբաղ այցելեցին Կենտրոնի մի խումբ գիտաշխատողներ: Նրանք եղան Արցախի պետական համալսարանի հայագիտական կենտրոնում, հանդիպեցին համալսարանի ղեկավար Ս. Դադամյանի, հայագիտական կենտրոնի գիտաշխատողներ Վ.Սաֆարյանի, Ն.Վարդանյանի, համալսարանի բանասիրական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Այստեղ քննարկվեցին հայագիտության բուհական մի շարք հիմնախնդիրներ, որոնք վերաբերում էին Արցախի համալսարանում հայագիտու-

թյան առանձին ոլորտների ընդգրկվածու-
թյանը, դրանց համապատասխան գիտա-
մեթոդական փորձի փոխանակմանը: Կա-
րևորվեց գիտական թեմատիկ շրջանակ-
ներում «Շիրակ-Արցախ» պատմամշակու-
թային ժառանգության աղերսներին առնչ-
վող նյութերի ընդգրկումը:

ՇՀՀ կենտրոնի գիտաշխատողնե-
րը Ստեփանակերտում այցելեցին նաև
Արցախի երկրագիտական թանգարան:
Այստեղ կայացավ հանդիպում թանգարա-
նի տնօրեն Մ.Բալայանի և գիտաշխա-
տողների հետ: Արծարծվեցին հայագի-
տական, թանգարանագիտական այն հար-
ցերն ու խնդիրները, որոնք արդիական
բնույթ են կրում ինչպես Շիրակի, այնպես
էլ Արցախի հոգևոր ու նյութական մշա-
կույթի բացառիկ հետաքրքրություն ներ-
կայացնող մմշմների հավաքման ու պահ-
պանման, գիտական մշակման գործըն-
թացներում:

Առավել ծավալուն աշխատանք
կատարվեց Շուշի քաղաքում, որտեղ կա-
յացան հանդիպումներ քաղաքապետա-
րանում (քաղաքապետ Վ. Ավագիմյանի
հետ), Շուշիի շրջանի պատմական միջա-
վայրի պահպանության ծառայության
բաժնում (պետ՝ Սվետլանա Մարտիրոս-
յան), Շուշի քաղաքի պատմության թան-
գարանում (տնօրեն՝ Աշոտ Հարություն-
յան):



Այստեղ թանգարանի տնօրենի և գիտաշ-
խատողների հետ քննարկվեցին և նա-
խանշվեցին «Ալեքսանդրապոլ-Շուշի. քա-
ղաքային մշակույթի աղերսներ» հեռան-
կարային թեմատիկ ծրագրի նախնական

ուրվագծերը: Նախ հստակվեցին ուսում-
նասիրվող նյութի թեմատիկ շրջանակ-
ները. պատմական ակնարկներ՝ նվիրված
19-րդ դարի վերջին և 20-ի սկզբին երկու
քաղաքների պատմական զարգացման
վրա տարածաշրջանում ծավալված աշ-
խարհաքաղաքական գործընթացների
ազդեցությանը, ճարտարապետություն,
ազգագրական հետազոտություններ՝ բա-
նահյուսություն, արհեստներ, քաղաքային
կենցաղ, ժողովրդական երգ-երաժշտու-
թյուն, պրոֆեսիոնալ երաժշտարվեստ,
անհատ կատարողներ, կոմպոզիտորներ,
թատրոն և կրթություն:

Հանդիպումներին զուգընթաց Կենտրոնի
գիտաշխատողներն այցելեցին նաև Ար-
ցախի պատմահնագիտական վայրեր:


ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի և Արցախի գիտա-
կան համագործակցության հիմքը դրվեց:



2012թ. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի և Հա-
յաստանի ազգային արխիվի գիտական
խորհուրդների որոշմամբ հրատարակվել է
«Արևմտահայ գաղթականությունը Ալեք-
սանդրապոլի գավառում 1914-1922թթ.»
փաստաթղթերի ժողովածուն: Այն կազմել
է կենտրոնի գիտաշխատող, պատմաբան
Կարինե Ալեքսանյանը: Ժողովածուի խմ-
բագիրն է պատմական գիտությունների
դոկտոր Անատունի Վիրաբյանը:

Այս հրատարակությանը առաջին
անգամ գիտական շրջանառության մեջ են
դրվում Ալեքսանդրապոլի գավառում 1914-
1922թթ. հաստատված արևմտահայ գաղ-
թականության դրությանը վերաբերող 217
արխիվային փաստաթուղթ:

Ալեքսանդրապոլի գավառը, լինե-
լով ճանապարհային հանգուցակետ և
սահմանամերձ շրջան, իր վրա է կրել հա-
մազգային մեծ արհավիրքի ողջ ծանրու-
թյունը՝ ասպատան դառնալով Մեծ եղեռ-
նից մազապործ տասնյակ հազարավոր
գաղթականների համար:



512 էջից բաղկացած ժողովածուն ընդգրկել է բացառապես Հայաստանի ազգային արխիվի փաստաթղթերը, որոնց գերակշիռ մասը հրատարակվում է առաջին անգամ, բնագրի լեզվով:

«Ժողովածուն վկայում է մեր ժողովրդի կենսունակության, փյունիկի պես հատնելու կարողության մասին, ամրա-

պնդում չսպասած կյանքերն ապրելու և այլևս երբեք գաղթական չդառնալու վճռականությանը», -կարդում ենք Կ.Ալեքսանյանի ծավալուն առաջաբանում:

Թեմատիկ առումով ժողովածուն բաղկացած է 4 բաժիններից, որոնցում փաստաթղթերը դասակարգված են ժամանակագրական կարգով: Չեկուցագրեր, պաշտոնական գրություններ, տեղեկագրեր, խնդրագրեր, պայմանագրեր, հոդվածներ, հեռագրեր գաղթականական կոմիտեի ժողովների 26 արձանագրություններ, որբանոցների ծառայողների անվանացուցակ, Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության որոշումներ և այլն: Փաստաթղթերի նման բազմազանությունը, ինչպես նաև արժեքավոր լուսանկարները (օգտագործվել է Մ.Քելեչյանի լուսանկարների հավաքածուն) ավելի են արժևորում գիրքը:

Ժողովածուի գիտատեղեկատու համակարգը ներկայացված է ծանոթագրություններով, անձնանունների և տեղանունների ցանկերով: Այն նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

S U M M A R Y

S.Petrosyan. THE KINGDOM OF XENOPHONIAN “INDOS” AND THE CUNEIFORM ETIUNI. The kingdom of “Indos” mentioned in “Cyropaedia” has located not in the remote India but in the Armenian highland, in the area of cuneiform Etiuni. Apparently, Xenophon informs us that 1. the other inhabitants of the Armenian highland-the Armens and Khaldays knew the way getting there, 2. the Khaldays as mercenaries have served in the army of the Armens and Indos as well. The “Indians” of the Indos kingdom have been the saspeys of the XVIII satrapy and their tribal and Indos name have the same meaning. On the latter’s basis is the Armenian *նւն/հնւն* “which means “seed, grain” and which is one of the forms of *ըն-ի/* or *ըն-ի/հն-ի*.

L.Eganyan. HEAD SACRIFICE IN EARLY BRONZE AGED METS SEPASAR. Cut heads of wolves were discovered during the researches in the early bronze aged temples of Mets Sepasar which have been found in the temples as a means of sacrifice. In another part of the temple there has been discovered a skull of a small child. Other bones of skeleton of wolves and children have not been found. The archaeological materials show that the sacrifices were made as an attribute of rituals, and for the native Indo-Europeans the human sacrifice was not all the same and the amputation of head from the body had a special place. Such kind of attitude towards the head of a human being or an animal is the characteristic feature of many Indo-European people. The fact that especially this part of the body deserved great attention, proves this part’s main place in the beliefs of Indo-European tribes, by which in the III BC millenium Mets Sepasar was besieged.

L.Petrosyan. THE MAIN TRIAD DEITIES OF ERVANDID AND ARTASHESID DYNASTIES IN ARMENIA. The triple of the deities being at the head of the Hellenistic pagan mythology in the Old Armenia was also endowed with social functions. During the reign of the Ervanduni dynasty the thunderer Aramazd was the patron of the military estate, Mother Goddess- the producer’s and Vahagn, the God of the Sun- the patron of the priestly estate. Though Artashes the first (189-160 B.C.) let Aramazd be the mythology’s main god, the military functions were withdrawn and delivered them to his dynastic God Vahagn, who, thus, became the patron of the military and the God of War. Artashes the first united the Ashtishat village to his domen where the idol of Vahagn was put. Till that time the village belonged to the Vahuni priest family which also together with it got deprived of the position of the main priest.

S.Petrosyan. THE HISTORICAL AND MYTHOLOGICAL IN THE LEGEND OF VARDGES MANUK. In the heart of the Co- Indo-European mythology such deity as the Indo-Iranian Apam-Napat (literal: “the son of the waters”, the child of the waters”, as well as the deity of the ancient Armenian images came into being. In the Akhurian river basin he* was called *Ahur (“a son of the water”), in the basin of Lake Sevan *Uedur, and near Mt. Aragats it was called Vardges. The latter has been the prototype of the epic Vardges-Manuk. The component Vard in the name of Vardges (<*Vard-ges) is the same as the corresponding components of the names of Shaghvard(<*Shagh-Vard) stream of the Qasakh river and Vardavar holiday (<*Vard-a-var). On their bases is the word *vard- <*uadr- with the Indo-European origin which means “water, river”.

L.Eganyan. INTERPRETATION OF SYMBOLS ON THE PITCHER OF KURO-ARAKSIAN CULTURE. Studying of symbols and signs on a ritual crucian from excavation of a sanctuary of the early bronze age Mets Sepasar and comparison of an archaeological material to Indo-European beliefs and rituals specify the following. The stylized images of a dragon, birds, and arieses on a ritual crucian - display of belief connected with rituals which were made in the spring and symbolized the end of Old year and the coming of a new one. Each idea is expressed with a symbol.

I. Avagyan. ADMINISTRATIVE DIVISION OF SHIRAK IN VIII-VICC. UNTIL BC. The article touches upon the issues concerning the administrative division and location of historical Shirak in VIII-VI before BC. , the part of which was the “Land” of Eriachy with its adjacent territories. In

this period the map of “Administrative division of Shirak in was first created on which the “Lands” of Eriachy, Kuliani, Kuriani, Gulutachi, Anishterga, Ashtuchini have been marked as parts of Eriachy confederation, as well as the “Land” of Ishkigulu as a part of Lusha confederation.

H. Panosyan. THE DEMOGRAPHIC MOVEMENT OF TUMAN-E IN NAKHICHEVAN OF MAHALS AZAT-JIRANI AND DARASHAMB (the first half of the XVII century). In the beginning of the XVIIth century the province of Nakhichevan was one of the Armenian homogeneous regions, where the Armenians were the vast majority. In the province of Nakhichevan there were 40000 population (Armenian people). There were obvious changes in the number of Armenian population and in their ethnic description in the beginning of the XVIIth century. It was conditioned by the violent migration of Shah Abbas I, during which 69 residents of Nakhichevan deported the Armenians and more than 160000 people were sent to Persia.

In the first half of the XVIIth century the number of the Armenian population in the province of Nakhichevan decreased in the course of the Persian-Turkish collisions. Hundreds of residents were reduced to ruins and emptied.

Despite of the violent migration and changes in the number of the Armenian people, there were not any serious ethnic changes, the majority of the population in the province of Nakhichevan were Armenians.

K. Aleksanyan. THE INTERRELATION OF STATE POWER OF THE REPUBLIC OF ARMENIA AND SELF-GOVERNMENT INSTITUTIONS OF ALEKSANDRAPOL (1918-1920). The article deals with the study of the introduction of local authorities in the Republic of Armenia. The interrelations of the central and local authorities of Aleksandrapol are presented in the work. We came to the conclusion that the struggle for competences being one of the peculiarities of RA political system, created great obstacles for the realization of state governing system and in general for the country’s development.

A. Hayrapetyan. THOUGHTS AROUND THE ARMENIAN-TURKISH CONTRACT IN ALEKSANDRAPOL. On December 2, at the dawn of 3, 1920 a severe contract was signed which highlighted the results of the Turkish-Armenian war. On being obliged by forces, it has been considered inadmissible and valid from the international contract right standpoint. Hence, there can’t be a source for the international right and can’t bring obligations to any of the contract signers. Before and after the signing of documents, the Armenian side periodically has informed about it to the international society.

However, despite its legal bases, the contract has had a great influence on the further relationships of the Armenian-Russo-Turkish sides and first of all on the contracts of Moscow and Kars.

A. Boyajyan. THE STATE OF AGRICULTURE IN THE PROVINCE OF ALEKSANDRAPOL- LENINAKAN (At the end of the XIX and in the first half of the XX century). For more than forty years the state of agriculture in Aleksandrapol-Leninakan province has for many times undergone changes, conditioned by the change of the socio-economic and political activities. The agricultural reforms have had an active influence on the social structure of the rural population. Before the establishment of the Soviet Orders, the province’s peasantry had used the land on a tenancy basis. The collectivization had radically changed the agricultural state in our province. The collective farms took the place of small ones. The collectivization contributed to the agriculture’s mechanization, to the excess of manpower.

K. Sahakyan, R. Hovhannissyan. NATIONAL IDEAS AND BELIEFS CONCERNING BREAD. The bread lavash is the exceptional element of none material cultural heritage of the Armenian people that has been regularly preserved and widely spread not only in Armenia but also out of its borders, especially in the countries where the representatives of the Armenian people live. The peculiarity of lavash is that it is not only a type of bread for Armenians but also an important cultural element of feast-ritual and cult significance which has its firm place in bridal and burial rites,

in ritual ceremonies of traditional holidays and in beliefs. With its multifunctional essence even today lavash is the expression of the national identity.

L. Kirakosyan. NEOLOGISMS IN THE LANGUAGE OF POLITICAL PR. It is obvious that the social, economic, cultural and other processes have a direct influence on the changes of the word stock which occur in the given stage of the language development. First of all, the word stock is filled due to loan words. During the last decade, the Armenian language has been enriched with thousands of new words. The investigation of the word-formation models reveals the opportunities of the Armenian language word formation. The investigated material primarily presents the social and political terminology, the source of which is the Armenian press. There are also used materials from "A dictionary of neologisms of the modern Armenian language" of S. Eloyan / Yerevan, 2002/.

A. Sargsyan. THE STYLISTIC VALUE OF BARBARISMS IN THE WORKS OF Z. KHALAPYAN. As far as borrowed words would be unacceptable, deniable for literary language, however, in the art of speech, particularly in the works of H. Khalapyan, they play an important role. As the experience shows, the author always uses this stylistic technique properly. Borrowed words are important in the description of types, in the creation of a necessary situation. With their help, the author creates a unique form of expression, solves different stylistic and artistic issues.

S. Zaqaryan. THE USAGE OF SYNONYMS IN THE COLLECTION OF "THE BOOK OF THE WAY" AFTER YEGHISHE CHARENTS. The work touches upon the stylistic means of synonyms and synonymic words, their stylistic expressiveness, their abundance in the Armenian language and the variety of the ways of formation.

The article deals with the study of the manifestation of synonyms beyond the usage – in the lexical sphere (coexisting) and in the usage –in the verbal sphere (individual).

In order to prove the above mentioned things, the examples have been taken from the work "The Book of the Way" of Yeghishe Charents .

The role of synonyms in speech-in usage is given in detail:

- . to keep the speech away from being monotonous,
- . to strengthen the expressiveness of the speech,
- . the joint use of the synonyms,
- . to endow the speech with inner variety,
- . the joint use of words having various literary and folk expressive colouring.

G.Khachikyan. AVETIS AHARONYAN'S LIFE AND HIS CREATIVE ACTIVITY. The article is devoted to the study of a popular writer A. Aharonyan's thematic works, which because of his political views and activity are not appreciated properly in the Soviet years, as well as some ideological and artistic peculiarities of many genres. The main extracts of his biography are also presented in the article. The efforts of Aharonyan both as a writer and a political figure are underlined which in the first decades of the XXth century were applied to be useful for his people either in political life or in literature. His valuable works with various genres are also mentioned in the article. The article also touches upon the issues which contain his works' pen names.

A.Sahakyan. THE PECULIARITIES OF INTELLECT MAP IN THE SPHERE OF MANAGEMENT. A mind map is a graphical way to represent ideas and concepts. It is a visual thinking tool that helps structuring information, helping you to better analyze, comprehend, synthesize, recall and generate new ideas.

Just as in every great idea, its power lies in its simplicity.

In a mind map, as opposed to traditional note taking or a linear text, information is structured in a way that resembles much more closely how your brain actually works. Since

it is an activity that is both analytical and artistic, it engages your brain in a much, much richer way, helping in all its cognitive functions.

We use mind maps for note taking, brainstorming (individually or in groups), problem solving, studying and memorization, planning, researching and consolidating information from multiple sources, presenting information, gaining insight on complex subjects, jogging your creativity.

A. Akopov. WESTERN SHIRAK IN THE REPORTS OF THE GENERAL-GOVERNOR OF KARS (1890s.). After the Treaty of Berlin (1878), in territories departed Russia was created two regions - Batumi and Kars. The structure of the first included Adjara and the Old Armenian region-Kgharjk. Kars region includes the districts of Kars, Ardahan, Kakhizvan and Olti. Publishing documents provide interesting information on the history of Western Shirak, which in 1890s was the part of Shuragel and Agbaba sites of the Kars district. The "most loyal" reports of Kars General-Governor remains fairly extensive information on ethno-demographic, religious and confessional picture of Western Shirak. The reports have been filed with statements from various statistical data, which may be of interest for both specialists - historians, and for a wide range of readers. The submitted documents are compiled from the Fund 12 of The Central State History Archive of Georgia.

G. Ayvazyan. THE ACTIVITY OF ALEKSANDRAPOL BRANCH OF "THE ARMENIAN CHARITABLE COMPANY OF THE CAUCASUS" IN 1884-1899. The branch of Aleksandrapol of "Caucasian Armenian Charity Union" was founded in 1884, but in fact it began to function on October 19, 1890. Having humanitarian, elucidative purposes and national ideas on its basis, the company united its round the Aleksandrapolian teachers, commercials, intellectuals and workmen.

The financial means of the branch were supported by the membership dues and various strata of the society. The branch met the requirements of the poor schoolchildren who studied in various schools of Aleksandrapol and Tiflis, it provided medical and financial aid to the poor and the West-Armenian migratives. A girls' handicraft school is opened, to the excess opened by its efforts.

After the establishment of the company's new charter, by which its competences were limited, all the branches are closed, among them the branch of Aleksandrapol.

L. Athanesyan. ARTIST SUSANNA MKRTCHYAN. The article touches upon the creative talent of Susanna Mkrtychyan towards in all spheres of art: painting, graphics, landscape painting, soft sculpture, etc. She fascinates with her sincerity, with the mastery of colours while creating landscapes, still lives, portraits. "Gyumri, my Love" series is about the everyday life of Gyumri: its colours, traditions which turned into rituals.

Her landscape paintings are the product of the artist's impatient character and experimental mind.

The artist will continue her work and do her best to attract the viewers with her new creations.

H. Harutyunyan. SHIRAK DANCE TUNES IN THE NOTES OF A. BRUTYAN. The traditional dance – is the most important component of Shirak's folklore. Unfortunately, the leading text of these dances wasn't recorded in the fullness of time, that's preserved as dance tunes. In the notes of the end of 19th century prominent Arshak Brutyan recorded about 63 dance tunes and folk tunes and collected folk songs mainly typical to Alexandrapol.

The work attempts to reveal the typological characteristics of these dances which are carefully notated and multivariated. Mainly represented by the circular ritual and individual household dances, they are the same in the folklore of Javahk's (i.e. Karin) Armenians.

K. Bazeyan. SHIRAK'S MODERN TRADES (ACCORDING TO THE OBSERVATIONS MADE IN 2012). The article deals with the study of trades in Shirak region. For many centuries the occupation of farming, cattle rising has been important. First of all it was conditioned by the existence of Gyumri as well as by the region's strategic position. The article shows that the trades existing in

Shirak were long-lasting and conservative where the traditional and the modern ways merged and created new qualities. The author makes a parallel study by introducing tables based on traditional and new emerging trades. The article presents the list of trades in Shirak region.

H. Abrahamyan. SHIRAK'S VARDAVARIAN SACRED PLACES (SHORT DESCRIPTION). Thus, on observing the above mentioned main sacred places and the places of celebration, it is obvious that the latter include Shirak HER being spread from north to the south (from Jermuk (Mets Sepasar-Krasar) to Zagha or St. Gregory the Illuminator (Sarnaghbyur) and from east to west (from Marmashen to Ghaltaghchi (Hartagyugh) and St. Hovhannes (Norashen).

Hence, each sacred place is permanent for the population of the given region. The sacred places are not only of local but also of republican significance and from typical standpoint they are various. And the sacred place's popularity is not conditioned by the latter's physical splendour, but by the mysterious power, in particular it is for cure and for childbirth gift. Especially the sacred places are important which contain some sacred elements (Zaghan or St Gregory the Illuminator) or an object relating to holy places (the icon "Yot Verq" which describes St Astvacacin)

O. Haroyan. MEALS CONTAINING MILK IN SHIRAK IN THE 2nd HALF OF THE XXth CENTURY. In the article the peculiarities of dairy meal in the food system of the Shirak region people in the 2nd half of the XXth century is presented.

Although some of the dairy meals are out of the use /milk puree, pumpkin milk soup, milk groats soup, chortan etc. However, Shirak region is distinguished by the meals prepared with milk, as well as making unique taste cheese/ chechil/.

In Shirak region we have also one food and dairy production factory "Igit" LLC.

Բ ն վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Հ ն դ վ ա ծ ն ե թ

<i>Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ</i> Քսենոփոնյան «Հնդիկ»-ի թագավորությունը և սեպագրային էթիմոնին	5
<i>Լարիսա ԵԳԱՆՅԱՆ</i> Գլխի զոհաբերությունը վաղբրոնզիդարյան Մեծ Սեպասարում	13
<i>Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ</i> Դիցական գլխավոր եռյակը Երվանդական և Արտաշիսյան Հայաստանում	21
<i>Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ</i> Պատմականն ու առասպելաբանականը Վարդգես Մանուկի ավանդազրույցում	27
<i>Լարիսա ԵԳԱՆՅԱՆ</i> Քուռարաքսյան մի կարասի զարդագոտու սիմվոլիկայի շուրջ	32
<i>Ինգա ԱՎԱԳՅԱՆ</i> Շիրակի վարչական բաժանումը Ք.ա. VIII-VI դդ.....	39
<i>Հրաչյա ՓԱՆՈՍՅԱՆ</i> Ժողովրդագրական տեղաշարժերը Թուման-ե Նախիջևանի Ազատ-Ջիրանի ու Դարաշամբի մահալներում (XVII դ. առաջին կես)	48
<i>Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ</i> ՀՀ պետական իշխանության և Ալեքսանդրապոլի ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները 1918-1920թթ.	57
<i>Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ</i> Մտորումներ Ալեքսանդրապոլի հայ-թուրքական պայմանագրի շուրջ	63
<i>Արտաշես ԲՈՅԱԶՅԱՆ</i> Գյուղատնտեսության դրությունն Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառում XIXդ. վերջին և XXդ. առաջին կես.....	69
<i>Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ, Ռոզա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</i> Հացին առնչվող ժողովրդական պատկերացումներ և հավատալիքներ.....	79
<i>Լիլիթ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ</i> Նորաբանությունները քաղաքական PR-ի լեզվում.....	87
<i>Ալլա ՄԱՐԳՍՅԱՆ</i> Օտարաբանությունների ոճական արժեքը Չ.Խալափյանի ստեղծագործություններում	93
<i>Մուսաննա ՉԱԶԱՐՅԱՆ</i> Հոմանիչ բառերի կիրառությունը Եղ. Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ	99
<i>Գագիկ ԽԱՉԻԿՅԱՆ</i> Ավետիս Ահարոնյանի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	110
<i>Անի ՍԱՀԱԿՅԱՆ</i> Ինտելեկտ քարտեզի կիրառման առանձնահատկությունները կառավարման ոլորտում	116

Հրապարակումներ և հաղորդումներ

Արկաղի ԱԿՈՊՈՎ

Արևմտյան Շիրակը Կարսի գեներալ-նահանգապետի ղեկուցագրերում
(1890-ականներ)121

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ

«Կովկասի հայոց բարեգործական ընկերության» Ալեքսանդրապոլի
մասնաճյուղի գործունեությունը 1884-1899թթ.132

Լատրա ԱԹԱՆԵՍՅԱՆ

Մուսաննա Մկրտչյան արվեստագետը139

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Շիրակյան պարեղանակները Ա. Բրուտյանի գրառումներում143

Կարինե ԲԱԶԵՅԱՆ

Շիրակի արդի արհեստները (ըստ 2012թ. իրականացված դիտանցման)148

Հասմիկ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Շիրակի վարդավառյան ուխտավայրերը (համառոտ նկարագիր)159

Օաննա ՀԱՐՈՅԱՆ

Կաթնեղեն ուտեստը Շիրակում 20–րդ դարի 2-րդ կեսին169

Լրատու172

Ամփոփում (անգլերեն)177

С о д е р ж а н и е

С т а т ь и

<i>Саргис ПЕТРОСЯН</i> Ксенофонтовское “Царство Индоса” и клинописная страна Этиуни.....	5
<i>Лариса ЕГАНЯН</i> Жертвоприношение головы в раннебронзовом Мец Сепасаре.....	13
<i>Лусине ПЕТРОСЯН</i> Главная Божественная Триада Ервандидской и Арташесидской Армении	21
<i>Саргис ПЕТРОСЯН</i> Об историческом и мифологическом в легенде Вардгес-Манука	27
<i>Лариса ЕГАНЯН</i> Об интерпретации символики одного караса Куро-аракской культуры	32
<i>Инга АВАГЯН</i> Административное деление Ширака в VIII-VI вв. до р.Х.	39
<i>Грачи ПАНОСЯН</i> Демографические движения Азат-Джиранской и Дарашамбской магалах Туман-е Нахичевана (первая половина XVII века)	48
<i>Карине АЛЕКСАНИЯН</i> Взаимоотношения государственной власти РА и органов самоуправления Александрополя в 1918-1920 гг.....	57
<i>Армен АЙРАПЕТАН</i> Размышления об Александропольском армяно-турецком договоре	63
<i>Арташес БОЯДЖЯН</i> Состояние сельского хозяйства Александрополь-Ленинаканского уезда в конце XIX и в начале XX вв.	69
<i>Карине СААКЯН, РОЗА ОГАНИСЯН</i> Народные представления и верования, относящиеся к хлебу.....	79
<i>Лилит КИРАКОСЯН</i> Неологизмы в языке политической PR	87
<i>Алла САРГСЯН</i> Стилистическая значимость варваризмов в произведениях Э. Халапяна.....	93
<i>Сусанна ЗАКАРЯН</i> Использование синонимов в сборнике Ег. Чаренца.....	99
<i>Гагик ХАЧИКЯН</i> Жизнь и общая характеристика творчества Аветиса Агароняна	110
<i>Ани СААКЯН</i> Особенности применения интеллект- карты в сфере управления	116

П у б л и к а ц и и и с о о б щ е н и я

Аркадий АКОПОВ

Западный Ширак в отчетах Карсского генерал-губернатора (1890-ые гг.)121

Геворг АЙВАЗЯН

Деятельность Александропольского отделения “Кавказского армянского благотворительного общества” в 1884-1899гг.132

Лаура АТАНЕСЯН

Художник Сусанна Мкртчян139

Асмик АРУТЮНЯН

Ширакские танцевальные мелодии в записях А.Брутяна.....143

Карине БАЗЕЯН

Ремесла Ширака (по материалам мониторинга 2012г.)148

Асмик АБРААМЯН

Места паломничества Вардавара в Шираке (краткий очерк)159

Оанна АРОЯН

Молочная пища Ширака во второй половине 20-го века169

Информация.....172

Резюме (на английском).....177

Contents

Articles

<i>Sargis PETROSYAN</i> The kingdom of Xenophonian “Indos” and the cuneiform Etiumi	5
<i>Larisa EGANYAN</i> Head sacrifice in early bronze aged Mets Sepasar.....	13
<i>Lusine PETROSYAN</i> The main triad deities of Ervandid and Artashesid dynasties in Armenia	21
<i>Sargis PETROSYAN.</i> The historical and mythological in the legend of Vardges Manuk.....	27
<i>Larisa EGANYAN</i> Interpretation of symbols on the pitcher of Kuro-Araksian culture.....	32
<i>Inga AVAGYAN</i> Administrative division of Shirak in VIII-VI BC	39
<i>Hrachya PANOSYAN</i> Demographic movement of Tuman-e in the Nakhichevan of mahals Azat-jirani and Darashamb (the first half of the XVII century)	48
<i>Karine ALEKSANYAN</i> The interrelation of state power of the Republic of Armenia and self-government institutions of Aleksandrapol (1918-1920).....	57
<i>Armen HAYRAPETYAN</i> Thoughts around the Armenian-Turkish Contract in Aleksandrapol	63
<i>Artashes BOYAJYAN</i> The state of agriculture in the province of Aleksandrapol- Leninakan (At the end of the XIX century and in the first half of the XX century)	69
<i>Karine SAHAKYAN, Roza HOVHANNISSYAN</i> National ideas and beliefs concerning bread	79
<i>Lilit KIRAKOSYAN.</i> Neologisms in the language of political PR.....	87
<i>Alla SARGSYAN</i> The stylistic value of barbarisms in the works of Z. Khalapyan	93
<i>Susanna ZAQARYAN</i> The usage of synonyms in the collection of “The Book of the Way” after Yeghishe Charents.....	99
<i>Gagik KHACHIKYAN</i> Avetis Aharonyan’s life and his creative activity.....	110
<i>Ani SAHAKYAN</i> The peculiarities of intellect map in the sphere of management.....	116

Publications and Reports

<i>Arkadi AKOPOV</i> Western Shirak in the reports of the general-governor of Kars (1890s.).....	121
<i>Gevorg AYVAZYAN</i> The activity of Aleksandrapol branch of “the Armenian charitable company of the Caucasus” in 1884-1899.....	132
<i>Laura ATHANESYAN</i> Artist Susanna Mkrtchyan.....	139
<i>Hasmik HARUTYUNYAN</i> Shirak dance tunes in the notes of A.Brutyan.....	143
<i>Karine BAZEYAN</i> Shirak’s modern trades (according to the observations made in 2012)	148
<i>Hasmik ABRAHAMYAN</i> Shirak’s vardavarian sacred places (short description)	159
<i>Oanna HAROYAN</i> Meals containing milk in Shirak in the 2 nd half of the XX th century.....	169
<i>Scientific information</i>	172
<i>Summary (in English)</i>	177